ΘΕΟΦΑΝΟΥΣ ΑΜΑΡΤΩΛΟΥ
ΜΟΝΑΧΟΥ ΚΑΙ ΗΓΟΥΜΕΝΟΥ
ΤΟΥ ΑΓΡΟΥ ΚΑΙ ΟΜΟΛΟΓΗΤΟΥ
ΧΡΟΝΟΓΡΑΦΙΑ ΕΤΩΝ ΦΚΗ΄

ԹԵՈՓԱՆԵՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻ՝
ՄԵՂԱՊԱՐՏ ՎԱՆԱԿԱՆԻ
ԵՎ ԱԳՐՈՍԻ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀՈՐ
528 ՏԱՐՎԱ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՈՓԱՆԵՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԻ՝ ՄԵԳԱՊԱՐՏ ՎԱՆԱԿԱՆԻ ԵՎ ԱԳՐՈՍԻ ՎԱՆՔԻ[1] ՎԱՆԱՀՈՐ 528 ՏԱՐՎԱ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴԻՈԿԼԵՏԻԱՆՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱՆԻՑ[2] ՄԻՆՉԵՎ ՄԻՔԱՅԵԼԻ[3] ԵՎ ՆՐԱ ՈՐԴԻ ԹԵՈՓԻԼԱԿՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ, ԱՅՆ Է՝ ԱՇԽԱՐՀԻ 5777 ԹՎԱԿԱՆԻՑ, ՄԻՆՉԵՎ 6305 ԹՎԱԿԱՆԸ՝ ԸՍՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՎՈՑ, ԻՍԿ ԸՍՏ ՀՌՈՄԱՅԵՑՎՈՑ՝ 6331 ԹՎԱԿԱՆԸ[4]

Ամենաերանելի աբբա Գեորգիոսը[5], որ Կոստանդնուպոլսի սրբազնագույն պատրիարք Տարասիոսի[6] սինկելլոսն[7] էլ եղավ, դարգացած, բազմագետ, մեծաթիվ ժամանակագիրներ, պատմիչներ ընթերցած ու ճշգրտորեն հետազոտած մի մարդ, Ադամից մինչև քրիստոնյաների հալածիչ հռոմայեցիների կայսր Դիոկլետիանոսն ընկած շրջանի վերաբերյալ մի համառոտ ու ճշմարտապատում ժամանակագրություն շարադրեց։ Նա մանրազնին հետազոտությամբ ճշգրտեց թվականները, հարթեցրեց և ուղղեց նրանց միջև առկա հակասությունները և, ինչպես ոչ ոք իրենից առաջ, տվեց բոլոր ժողովուրդների հին թագավորների ժամանակի ու գործունեության պատմությունը, ինչպես և, իր ուժերի ներածի սահմաններում, մեծ ու տիեզերական աթոռների քահանայապետների (ես նկատի ունեմ Հռոմի, Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի եկեղեցիները ուղղափառորեն հովվածների, ինչպես և հերձվածող քահանայապետների կողմից եկեղեցին ավաղակաբար վարածների) պատմությունն ու ճշգրիտ ժամանակը։ Բայց քանի որ նրա վախճանը վրա հասավ և նա չկարողացավ ավարտին հասցնել իր գործը, ինչպես ասացինք, նա շարադրեց մինչև Դիոկլետիանոսն ընկած շրջանը, և թողնելով երկրային կյանքը, ուղղափառ դավանանքով գնաց Տիրոջ մոտ, նա մեզ, որպես հարազատ ընկերոջ, թողեց իր շարադրած գիրքը և մեզ առիթ տվեց պակասը լրացնելու։ Իսկ մենք, որ քաջատեղյակ էինք մեր սեփական տգիտության, ինչպես և գործի դժվարության, հրաժարվում էինք այդ բանն անել՝ որպես մեր

ուժերից վեր։ Բայց քանի որ նա թախանձագին խնդրեց մեզ չզլանալ և անկատար չթողնել գործը, մենք ստիպված անդրադարձանք դրան։ Ահա մենք, նրա խնդրանքին հլու հնազանդ, ոչ սովորական ջանքեր գործադրելով, ձեռնարկեցինք մեր կարողություններից վեր գործին։ Մենք ևս բազում գրքեր որոնեցինք և մեր կարողությունների սահմաններում հետազոտելով շարադրեցինք Դիոկլետիանոսից մինչև Միքայելի ու նրա որդի Թեոփիլակտոսի թագավորությունը՝ կայսրերի, պատրիարքների, նրանց գործերի մասին ճշգրտապատում սույն ժամանակագրությունը։ Մենք մեզանից ոչինչ չհորինեցինք, այլ նյութը քաղեցինք բացարձակապես անցյալի պատմիչներից ու լոգոգրաֆներից, դեպքերը շարադրեցինք ըստ յուրաքանչյուրի տեղի ունեցած ժամանակի, առանց շփոթության, որպեսզի ընթերցողներն իմանան, թե տվյալ դեպքը՝ պատերազմական, եկեղեցական, քաղաքական, ժողովրդական և այլն, տվյալ կայսեր թագավորության ո՞ր տարում տեղի ունեցավ։ Ես կարծում եմ, որ հների գործերն իմանալը ընթերցողների համար շատ օգտակար է և եթե մեկը մեր սույն երկասիրության մեջ որևէ պիտանի բան գտնի, թող պատշաճ գոհությունը աստծուն մատուցի, իսկ մեզ՝ տգետներիս ու մեղապարտներիս համար Տիրոջ աղոթի։ Իսկ եթե որևէ պակասություն հայտնաբերի, թող այն վերագրի մեր տգիտության ու թշվառ մտքի անկատարության և ներողամիտ լինի՝ հանուն Տիրոջ, քանզի աստծուն սիրելի է այն, ինչ արվում է կարողության սահմաններում...[8]

[A. M. 6095]

Աշխարհի արարչագործության 6095 թ.

Քրիստոսի մարդեղության 595 թ.

Հռոմայեցիների Փոկաս կայսեր 7-ամյա թագավորության 1-ին տարին[9]

Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 15-րդ տարին[10]

Կոստանդնուպոլսի Կիրիակոս պատրիարքի 11-ամյա աթոռակալության 9-րդ տարին[11]

Երուսաղեմի Իսահակ պատրիարքի 8-ամյա աթոռակալության 3-րդ տարին[12]

Ալեքսանդրիայի Եվլոգիոս պատրիարքի 27-ամյա աթոռակալության 24-րդ տարին[13]

Անտիոքի Անաստասիոս պատրիարքի 9-ամյա աթոռակալության 3-րդ տարին[14]

Այդ տարվա նոյեմբեր ամսին՝ ինդիկտիոնի[15] 6-րդ տարին Փոկաս բռնակալը տիրանալով գահին, կոտորեց, ինչպես վերևում ասվեց[16],

Մավրիկիոսին[17]՝ իր հինգ արու զավակների հետ, հրամայեց նրանց գլուխները բաղում օրեր ցուցադրվեն Տրիբունալիոնի Կամպոսում[18]։ Քաղաքացիները գնում էին դիտելու այդ գլուխները, մինչև որ նեխեցին։ Մահապատժի ենթարկվեցին նաև Մավրիկիոսի եղբայր Պետրոսը և բաղում ուրիշներ։ Իսկ Մավրիկիոսի որդի Թեոդոսիոսի մասին լուր տարածվեց, թե նրան հաջողվել է փախուստի դիմել ու փրկվել։ Պարսից Խոսրով արքան[19] օժանդակում էր նման համբավի տարածմանը և տեսակ-տեսակ սուտ լուրեր տարածում, որ իբր Թեոդոսիոսը իր մոտ է գտնվում, որ ինքը հետամտում է, որ նա տիրանա հռոմայեցիների թագավորությանը[20]։ Խոսրովն ուզում էր ահա այդ խարդախ ճանապարհով տիրանալ հռոմայեցիների թագավորությանը[21], մի բան, որ բազմիցս պարզ դարձավ, հատկապես այն բանից, որ նա վայրապար պատերազմներ էր սկսում և հռոմեական երկրում սարսափելի ավերածություններ գործում։ Երբ Փոկասը դեսպան Բիլիոսին Խոսրովի մոտ ուղարկեց, վերջինս ձերբակալեց նրան և բանտարկեց այն հաշվով, որ նա այլևս հռոմեական երկիր չվերադառնա[22], իսկ Փոկասին էլ վիրավորական պատասխան գրեց։ Փոկաս բռնակալը կայսրուհի՝ Կոստանդինային[23] երեք դստերով հանդերձ «Լևոնի» կոչվող մասնավոր բնակարանում տնային կալանքի ենթարկեց։

Ալեքսանդրիա քաղաքում մի բարեպաշտ գեղագիր կևս գիշերին հսկումից տուն վերադառնալիս տեսնում է արձանները պատվանդանի վրայից տապալված։ Այդ արձանները բարձրաձայն ասում էին, թե Մավրիկիոսը իր զավակներով հանդերձ սպանվել է, մի խոսքով այն ամենը, ինչ տեղի ունեցավ Բյուզանդիոնում։ Առավոտյան նա գնաց ու տեսածն ու լսածը պատմեց ավգուստալիոսին[24], որը պատվիրեց նրան այդ մասին ոչ ոքի չասել։ Նա իր համար նշեց երևույթի ճշգրիտ օրը և սպասում էր տեսնել, թե ինչ է դա նշանակում։ Ինն օր անց սուրհանդակ ժամանեց, բերելով Մավրիկիոսի մահապատժի մասին լուրը։ Դրանից հետո ավգուստալիոսը ժողովրդին հրապարակեց դևերի կանխագուշակումը։

Հռոմայեցիների նախկին զորավար Նարսեսը բռնակալի դեմ ապստամբություն բարձրացրեց և գրավեց Եդեսիան[25]։ Փոկասը զորավար Գերմանոսին գրավոր կարգադրեց պաշարել Եդեսիան։ Նարսեսն իր հերթին պարսից Խոսրով արքային նամակ է գրում՝ կոչ անելով զորահավաք կազմակերպի և հռոմայեցիներին պատերազմ հայտարարի։ Փոկասն իր եղբայր Դոմենցիոլոսին մագիստրոսի[26] պատվաստիճանը շնորհեց, իսկ Պրիսկոսին նշանակեց էքսկուբիտորների կոմես[27]։

[A. M. 6096]

[Հռոմայեցիների Փոկաս կայսեր] 2-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 16-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կիրիակոս պատրիարքի] 10-րդ տարին

[Երուսաղեմի Իսահակ պատրիարքի] 4-րդ տարին

[Ալեքսանդրիայի Եվլոգիոս պատրիարքի] 25-րդ տարին

[Անտիոքի Անաստասիոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարվա դեկտեմբեր ամսին՝ ինդիկտիոնի 7-րդ տարին, Փոկասը թափորով մասնակցեց տոնակատարություններին և ժողովրդին բազում դրամ բաշխեց[28]։ Իսկ պարսից Խոսրով արքան մեծաթիվ զորք հավաքելով, հռոմայեցիների դեմ ուղարկեց։ Գերմանոսն այդ լուրն առնելով ցնցվեց, բայց ստիպված պատերազմի բռնվեց։ Գերմանոսն այդ պատերազմում վիրավորվեց, թիկնապահները նրան Կոստանդինե[29] հասցրին։ Հռոմայեցիները պարտություն կրեցին։ Տասնմեկ օր անց Գերմանոսը վախճանվեց։ Փոկասը խաքանին[30] վճարվող պախտն[31] ավելացնելով և ենթադրելով, որ այդ ճանապարհով ապահովել է ավարների ցեղի շեղոքությունը, զորքերը Եվրոպայից Ասիա տեղափոխեց, դրանց մի մասը պարսիկների դեմ ուղարկեց, իսկ մյուսը՝ իր մեծամեծ, ներքինի Լեոնտիոսի գլխավորությամբ Նարսեսի՝ Եդեսիան պաշարելու։ Խոսրովը զորքեր գումարելով, շարժվում է Դարայի վրա[32]։ Նարսեսը Եդեսիայից դուրս գալով, ապաստանում է Հիերապոլսում[33]։ Խոսրովի ու հռոմայեցիների բախումը տեղի ունեցավ Արքսամունում[34]։ Խոսրովը փղերով բերդ սարքելով, նախահարձակ է լինում և մեծ հաղթանակ տանում, նա բազում հռոմայեցիների գերի է վերցնում ու սրի քաշում, որից հետո զինված ուժերը թողնելով Զոնգոեսին[35], վերադառնում է իր երկիրը։ Փոկասը, իմանալով կատարվածի մասին, Լեոնտիոսի վրա գազազեց և նրան երկաթե ձեռնակապանքների մեջ առած Բյուզանդիոն բերեց, նրա փոխարեն զորավար նշանակելով իր զարմիկ Դոմենցիոլոսին, որին կուրապաղատի պատվաստիճանը[36] շնորհեց։

[A. M. 6097]

[Հռոմայեցիների Փոկաս կայսեր] 3-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 17-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կիրիակոս պատրիարքի] 11-րդ տարին

[Երուսաղեմի Իսահակ պատրիարքի] 5-րդ տարին

[Ալեքսանդրիայի Եվլոգիոս պատրիարքի] 26-րդ տարին

[Անտիոքի Անաստասիոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին Խոսրովը Կարդարիգանին[37] ու Ռումիազանին[38] ուղարկեց, ովքեր հռոմայեցիների բազում քաղաքներ առան։ Դոմենցիոլոսը Նարսեսին պատվո խոսք տալով և բազում երդումներով վստահեցնելով, կայսեր մոտ ուղարկեց, որը, սակայն, խոսքի տերը չեղավ և Նարսեսին ողջակեզ արեց[39]։ Դա հռոմայեցիներին խիստ տխրեցրեց, քանզի պարսիկները Նարսեսից շատ էին սարսափում, այն աստիճան, որ պարսից երեխաները Նարսեսի անունը լսելով դող էին ընկնում, իսկ պարսիկներին՝ խիստ ուրախացրեց։

[A. M. 6098]

Կոստանդնուպոլսի պատրիարք Թովմաս[40]։ Աթոռակալեց երեք տարի։

[Հռոմայեցիների Փոկաս կայսեր] 4-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 18-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Թովմաս պատրիարքի] 1-ին տարին

[Երուսաղեմի Իսահակ պատրիարքի] 6-րդ տարին

[Ալեքսանդրիայի Եվլոգիոս պատրիարքի] 27-րդ տարին

[Անտիոքի Անաստասիոս պատրիարքի]. 6-րդ տարին

Այդ տարին մի ներքինի սքոլաստիկոս[41], պալատի փառավոր մարդկանցից մեկի՝ թագին տիրանալու մտադրություն ունեցող պատրիկ[42] Գերմանոսի խորհրդով կես գիշերին առնելով տիրուհի Կոստանդինային և վերջինիս երեք դստերին, ապաստանում է Մեծ եկեղեցում[43]։ Քաղաքում մեծ տակնուվրայություն եղավ։ Պրասինոսները[44] կոխլիասում[45] հավաքվելով, Կոստանդինային էին վատաբանում։ Գերմանոսը պրասինոսների դեմարքոսին[46] մեկ տաղանդ[47] ոսկի ուղարկեց՝ նրանց գործակցությունն աղերսելով, բայց դեմոսի ղեկավարությունը մերժեց։ Բոնակալն իր մարդկանց եկեղեցի ուղարկեց՝ կանանց այնտեղից դուրս հանելու համար, բայց Կիրիակոս պատրիարքն ընդդիմացավ բոնակալին, թույլ չտվեց կանանց բռնությամբ տաճարից դուրս հանել։ Ստանալով Փոկասի երդումը, որ նրանց վատություն չի անի, կանայք սուրբ տաճարից դուրս բերվեցին և վանքում արգելափակվեցին։ Փոկասը Գերմանոսին հոգևորական խուզելով[48], տնային կալանքի ենթարկեց։ Այն ժամանակ Փիլիպպիկոսն էլ հոգևորական խուզվեց[49] և հաստատվեց Խրիսուպոլսում[50], իր կառուցած վանքում։ Իսկ պարսիկներն այդ տարին գրավեցին Դարան, ողջ Միջագետքն ու Ասորիքը և անթիվ անհամար գերիներ տարան։ Կիրիակոս պատրիարքի վախճանվելու առթիվ նրա փոխարեն հոկտեմբերի 11-ին պատրիարք է

ձեռնադրվում նույն եկեղեցու սարկավագ ու սակելլարիոս[51] Թովման։

[A. M. 6099]

Աշխարհի արարչագործության 6099 թ.	Քրիստոսի մարդեղության 599 թ.	Հռոմայեցիների Փոկաս կայսեր 7-ամյա թագավորության 5-րդ տարին
Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 19-րդ տարին	Կոստանդնուպոլսի Թովմաս պատրիարքի 3-ամյա աթոռակալության 2-րդ տարին	Երուսաղեմի Իսահակ պատրիարքի 8-ամյա աթոռակալության 7-րդ տարին
Ալեքսանդրիայի Թեոդորոս պատրիարքի 2-ամյա աթոռակալության 1-ին տարին[52]		Անտիոքի Անաստասիոս պատրիարքի 9-ամյա աթոռակալության 7-րդ տարին

Այդ տարին Փոկաս բռնակալը իր դուստր Դոմենցիային կնության տվեց էքսկուբիտորների կոմես պատրիկ Պրիսկոսին։ Հարսանյաց հանդեսը տեղի ունեցավ Մարինեի պալատում[53], որից հետո կայսեր հրամանով ձիարշավական մրցումներ կազմակերպվեցին։ Երկու կողմերի[54] դեմարքոսները Տետրակիոնում[55] կայսերական լավրատոնի[56] կողքին կանգնեցրին Պրիսկոսի և Դոմենցիայի լավրատոնները։ Կայսրը, տեսնելով դա, զայրացավ, հրամայեց իր մոտ բերեն դեմարքոսներ Թեոփանեսին ու Պամփիլոսին, որոնց ստամայում[57] մերկ կանգնեցնելուց հետո, հրամայեց ներքինացնել։ Միաժամանակ նա նրանց մոտ իր պրոտոկուրսորին[58] ուղարկեց իմանալու՝ ո՞ւմ թույլտվությամբ այդ բանն արեցին։ Նրանք պատասխանեցին, թե այդ բանը ընդունված կարգի համաձայն գրամմիստներն[59] արեցին։ Դեմոսն ու ամբոխները գոչում էին. «Շատ տարիներ ապրի մարդասեր տերը»։ Երբ գրամմիստներին հարցրին, ինչո՞ւ այդպես վարվեցին, նրանք պատասխանեցին. «Բոլորը նրանց կայսեր զավակներ հորջորջեցին, մենք էլ ինքնաբերաբար այդպես վարվեցինք»։ Պրիսկոսը կայսեր զայրույթից վախեցել էր։ Փոկասն ընդառաջ գնաց ամբոխների կոչին՝ նրանց նկատմամբ մարդասեր լինելու։ Այդ օրվանից Պրիսկոսը Փոկասի դեմ ոխ կապեց և նրա հանդեպ անկեղծ չէր։ Պետրոնիա անունով մի կին լինում է Կոստանդինա թագուհու մոտ, որպեսզի վերջինիս ու Գերմանոսի միջև կապի դեր խաղա։ Մավրիկիոսի որդի Թեոդոսիոսի կենդանի լինելու համքավը

գնալով ծավալվեց և այդ առթիվ Կոստանդինան և Գերմանոսը հուսադրվեցին։ Բայց ամբարիշտ Պետրոնիան այդ ամենի մասին բռնակալին տեղյակ պահեց, որը Կոստանդինային հանձնեց էպարքոս[60] Թեոպոմպոսին խոշտանգելու։ Խոշտանգումների տակ նա խոստովանեց, որ իրենց ասածին տեղյակ էր Ռոմանոս պատրիկը։ Վերջինս ձերբակալվեց և քննության ժամանակ խոստովանեց, որ բռնակալի դեմ նյութված դավադրության այլ գործակիցներ էլ ունի։ Ձերբակալվեց նաև Արևելքի էպարքոս[61] Թեոդորոսը, որին բռնակալը արջառաջիլների հարվածների տակ սպանեց, էլպիդիոսի ձեռքերն ու ոտքերը կտրեց, իսկ մարմինը կրակը գցեց[62], Ռոմանոսին գլխատեց, Կոստանդինային երեք դստերով հանդերձ սրի քաշեց Եվտրոպիոսի մոլոսում[63], այնտեղ, որտեղ մահապատժի էր ենթարկվել Մավրիկիոսը, Գերմանոսին և վերջինիս դստեր Պրոտե կղզում[64] սրակոտոր արեց, նմանապես և Հովհաննեսին, Ցիտասին[65], Պատրիկիոսին, սուբադիուբայի[66] աստիճանն ունեցող Թեոդոսիոսին, Անդրեաս Սկոմբրոսին և Հորմիզդի թղթապահ[67] Դավթին։

Նույն տարին պարսիկները անցնելով Եփրատը, գերեվարեցին ողջ Ասորիքը, Պաղեստինն ու Փյունիկեն, հռոմայեցիներից հսկայական ավար ձեռք բերեցին։

[A. M. 6100]

Աշխարհի արարչագործության 6100 թ.	Քրիստոսի մարդեղության 600 թ.	Հռոմայեցիների Փոկաս կայսեր 7-ամյա թագավորության 6-րդ տարին
Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 20-րդ տարին	Կոստանդնուպոլսի Թոմաս պատրիարքի 3-ամյա սթոռակալության 3-րդ տարին	Երուսաղեմի Իսահակ պատրիարքի 8-ամյա աթոռակալության 8-րդ տարին
Ալեքսանդրիայի Թեոդորոս պատրիարքի 2-ամյա աթոռակալության 2-րդ տարին		Անտիոքի Անաստասիոս պատրիարքի 9-ամյա աթոռակալության 8-րդ տարին

Այդ տարին Պրիսկոսը, չկարողանալով տանել Փոկասի չարագործությունները[68] և նրա կողմից այդքան անմեղ մարդկանց ոչնչացումը, Աֆրիկայի զորավար Հերակլիոս պատրիկին նամակ գրեց, որպեսզի նա իր որդի Հերակլիոսին և [հայր Հերակլիոսի] փոխզորավար Գրիգորաս[69] պատրիկի որդի Նիկետասին ուղարկի ընդդեմ Փոկաս բռնա-

կալի, քանզի տեղեկացել էր, որ Աֆրիկայում Փոկասի դեմ ապստամբություն է նյութվում, որի առթիվ Աֆրիկայի նավերի առաքումը կանգնեցրել էին[70]։ Փոկասը Մավրիկիոսի ողջ գերդաստանը, Թրակիայի զորավար Կոմենտիոլոսին և բազում այլ մարդկանց մահապատժի ենթարկեց։ Այդ ընթացքում մահ տարաժամ էլ եղավ և ամեն տեսակի միջատների խուժում։ Պարսիկները Կարդարիգանի գլխավորությամբ արշավանքի դուրս եկան և գրավեցին Հայաստանն[71] ու Կապադովկիան, մարտ տվեցին ու փախուստի մատնեցին հռոմայեցիների զորքերը, գրավեցին Գալատիան ու Պափլագոնիան, հասան Քաղկեդոն, չնայելով և ոչ մի տարիք։ Ահա այնպես եղավ, որ մայրաքաղաքից դուրս հռոմայեցիներին պարսիկներն էին տանջում, իսկ մայրաքաղաքում նրանցից ավելի դաժան էր վարվում Փոկասը՝ սպանելով ու շրջելով։

[Ա. Մ. 6101]

Կոստանդնուպոլսի Սերգիոս[72] պատրիարք։ Աթոռակալեց 29 տարի։ Երուսաղեմի Զաքարիա[73] պատրիարք։ Աթոռակալեց 22 տարի։ Ալեքսանդրիայի Հովհաննես[74] պատրիարք։ Աթոռակալեց 10 տարի։

[Աշխարհի արարչագործության] 6101 թ.

[Քրիստոսի մարդեղության] 601 թ.

[Հռոմայեցիների Փոկաս կայսեր] 7-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 21-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 1-ին տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 1-ին տարին

[Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 1-ին տարին

[Անտիոքի Անաստասիոս պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարին Անտիոքի հրեաները քրիստոնյաների դեմ խռովություն բարձրացրին, Անտիոքի մեծ պատրիարք Անաստասիոսին սրախողխող արեցին և նրա սեռական օրգանները կտրելով, բերանը դրեցին, որից հետո մարմինը քարշ տվեցին Մեսե պողոտայով։ Նրանք սպանեցին նաև բազում մեծատունների, որոնց դիակները կրակի տվեցին[75]։ Փոկասը Բոնոսոսին Արևելքի կոմես նշանակելով, իսկ Կոտտանասին՝ ստրատելատ[76], [հրեաների] դեմ ուղարկեց, բայց նրանք չէին կարողանում ճնշել նրանց խռովությունը։ Այնուհետև զորքեր հավաքելով, հարձակվեցին հրեաների վրա, նրանցից շատերին կոտորեցին, խեղեցին ու քաղաքից արտաքսեցին։ Փոկասը ձիարշավական մրցումներ կազմա-

կերպեց, որտեղ պրասինոսները նրա գլխին լուտանքներ թափեցին, թե՝ «Դարձյալ հարբեցիր, դարձյալ հիմարացար»։ Փոկասի կարգադրությամբ քաղաքի էպարքոս Կոզմասը շատերի ձեռքն ու ոտքը կտրեց, դրանք Սֆենդոնեում[77] կախեց, ուրիշներին գլխատեց, իսկ ոմանց էլ պարկերի մեջ գցելով ծովը նետեց ու ջրահեղձ արեց։ Դրա վրա պրասինոսները ժողովվելով, կրակի տվեցին Պրետորիոնը[78], Սեկրետոնը[79], սկրինիաներն[80] ու բանտերը։ Բանտարկյալները փախուստի դիմեցին։ Փոկասը գաղազած պրասինոսներին զրկեց քաղաքական գործունեություն վարելու իրավունքից։ Իսկ Աֆրիկայի զորավար Հերակլիոսը[81] սենատի պահանջով իր որդի Հերակլիոսին ռազմանավերով Փոկաս բռնակալի դեմ ուղարկեց։ Այդպես վարվեց և նրա փոխզորավար Գրիգորասը, որն իր որդի Նիկետասին ցամաքով ուղարկեց։ Պայմանն այն էր, որ ով առաջինը հաղթի բռնակալին, ինքն էլ թագավորի[82]։

Այդ տարի սարսափելի ձմեռ արեց, այն աստիճան, որ ծովը սառցակալեց և բաղում ձկներ ոչնչացան։ Այն ժամանակ Փոկասը հրամայեց որսի ժամանակ նետահար անեն Մակրոբիոս սկրիբոնին[83], նրա մարմինը կախեն Հեբդոմոնում[84] գտնվող Թեոդոսիանոսների աշտարակում[85] այն նիզակից, որով մարզվում են տիրոնները[86], որպես իր դեմ նյութված դավադրության կողմնակից։ Էպարքոս[87] Թեոդորոս Կապադովկացին, զինանոցի պետ Էլպիդիոսը և ուրիշներ որոշել էին ձիարշավական մրցումների ժամանակ սպանել Փոկասին։ Պրետորյան էպարքոս Թեոդորոսը նրանց ճաշկերույթի էր հրավիրել և աստիճանաբար հայտնել իր նպատակը։ Դիպվածով ճաշկերույթին ներկա էր նաև լարգիտիոնների կոմես[88] Անաստասիոսը, որի ընթացքում Թեոդորոսը սեղանակիցներին տեղյակ պահեց դավադրության մանրամասնություններին։ Անաստասիոսը այնտեղ գտնվելու համար ղղջաց, բայց չարտահայտվեց, լուռ մնաց։ Էլպիդիոսը պնդում էր իր ասածի վրա. «Ուզո՞ւմ եք ձիարշավական մրցումների ժամանակ իր գահին բազմած Փոկասին բռնեմ, նրա աչքերը հանեմ ու սպանեմ»։ Նա [դավակիցներին] խոստանում էր զենքով ապահովել։ Սակայն Անաստասիոսը դավադրության նախապատրաստության մասին Փոկասին տեղյակ պահեց, որը հրամայեց քննության ենթարկել էպարքոսին, Էլպիդիոսին և դավադրությանը տեղյակ բոլոր իշխանավորներին։ Նրանք խոստովանեցին նյութված դավադրության մասին, այդ թվում և այն, որ ուզում էին Թեոդորոսին կայսր հռչակել։ Փոկասը հրամայեց Թեոդորոսին, Էլպիդիոսին, Անաստասիոսին և բոլոր նրանց, ովքեր տեղյակ էին նրա ծրագրած դավադրությանը, գլխատել։

[A. M. 6102]

Աշխարհի արարչագործության 6102 թ.	Քրիստոսի մարդեղության 602 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 1-ին տարին[89]	Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 22-րդ տարին	Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 2-րդ տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 2-րդ տարին	Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի 10-ամյա աթոռակալության 2-րդ տարին

Այդ տարին, հոկտեմբեր ամսի 4-ին, երկուշաբթի օրը, ինդիկտիոնի 14-րդ տարին, Աֆրիկայից տեղ հասավ Հերակլիոսը՝ զրահապատ կամրջակով[90] նավերով, որոնք իրենց կայմերին ունեին փոքր աշտարակներ[91] և աստվածամոր պատկերներ, (ինչպես այդ մասին գրում է Գեորգ Պիսիդացին)[92], ինչպես և Աֆրիկայից ու Մավրիտանիայից[93] հավաքագրված բազում զորք, նմանապես և պատրիկ Գրիգորասի որդի Նիկետասը՝ Ալեքսանդրիայում և Պենտապոլսում[94] հավաքագրված մեծաթիվ հետևակազորով։ Հերակլիոսը ամեն ինչի մասին տեղյակ էր պահել Հռոգաս Աֆրոսի դուստր Եվդոկիային, որն այն ժամանակ Եպիփանիայի՝ Հերակլիոսի մոր հետ Կոստանդնուպոլսում էր գտնվում։ Փոկասը, լսելով, որ Հերակլիոսի մայրը քաղաքում է գտնվում, ինչպես և Հերակլիոսի նշանած Եվդոկիան, ձերբակալեց նրանց և արգելափակեց Նոր ապաշխարության կոչվող տերունական վանքում[95]։ Հերակլիոսը, հասնելով Աբիդոս[96], հանդիպեց Աբիդոսի կոմես Թեոդորոսին և նրան հարցուփորձ անելով տեղեկացավ Կոստանդնուպոլսում տիրող կացության մասին։ Փոկասը իր եղբայր մագիստրոս Դոմենցիոլոսին Երկար պարիսպները հսկելու ուղարկեց։ Մագիստրոսը, իմանալով Հերակլիոսի Աբիդոս հասնելու մասին, պարիսպների պահպանության գործը լքելով, մտավ Կոստանդնուպոլիս։ Հերակլիոսը Աբիդոսում ընդունեց Փոկասի աքսորած բոլոր իշխաններին և նրանց հետ բարձրացավ Հերակլիա[97]։ Իսկ Կիզիկոսի մետրոպոլիտ Ստեփանոսը Արտակի[98] սուրբ Աստվածածնի եկեղեցուց մի թաց վերցնելով, տարավ Հերակլիոսին, ով Կոստանդնուպոլիս հասնելով, Սոֆիայի[99] նավահանգստում խարիսխ գցեց։ Հերակլիոսը Քրիստոսի օգնությամբ մարտում հաղթում է Փոկաս բռնակալին, որին դեմոսները ձերբակալելով, սպանում են՝ Բո-

յիոնում[100] հրակեզ անում։ Հերակլիոսը, մտնելով արքունիք, պալատի սուրբ Ստեփանոսի աղոթարանում թագադրվեց ձեռամբ Սերգիոս պատրիարքի[101]։ Նույն օրը ավգուստա[102] թագադրվեց և [Հերակլիոսի] նշանած Եվդոկիան։ Սերգիոս պատրիարքի կողմից նրանք երկուսն էլ ստացան նաև ամուսնական պսակներ, որով միևնույն օրը Հերակլիոսը ինքնակալ դարձավ և փեսայացավ։ Մայիս ամսին պարսիկներն արշավեցին Ասորիքի վրա, գրավեցին Ապամիան և Եդեսիան[103] ու հասան մինչև Անտիոք[104]։ Նրանց ընդդիմակայած հռոմայեցիները պարտություն կրեցին, բովանդակ զորքը կորավ, շատ քչերին հաջողվեց փրկվել։ Նույն ինդիկտիոնի հուլիս ամսի 7-ին Հերակլիոսը Եվդոկիայից դուստր ունեցավ՝ Եպիփանիային, որն օգոստոս ամսի 15-ին Վլախեռնայում[105] մկրտվեց ձեռամբ Սերգիոս պատրիարքի։

[A. M. 6103]

Աշխարհի արարչագործության 6103 թ.

Քրիստոսի մարդեղության 603 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 2-րդ տարին

Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 23-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի 10-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Այդ տարին պարսիկները գրավեցին Կապադովկիայի Կեսարիան, որտեղ բազում բյուր բնակիչների գերի վերցրին։ Հերակլիոս կայսրը հռոմայեցիների պետության գործերը գտավ անմխիթար վիճակում։ Եվրոպան ավարներն էին ամայացրել, բովանդակ Ասիան ավերակ էին դարձրել պարսիկները, քաղաքների բնակչությունը գերի վերցրել, հռոմայեցիների զորքերը պատերազմներում ոչնչացրել։ Տեսնելով դա, կայսրը չգիտեր ինչ անի։ Նա հետաքրքրվեց, բանակում կա՞ն արդյոք նրանցից, ովքեր Փոկասի հետ արշավել էին Մավրիկիոսի դեմ՝ վերջինիս թագավորության օրոք, և բոլոր բանակաթեմերում[106] միայն երկու հոգի գտնվեց։

Նույն տարվա մայիսի 3-ին, ինդիկտիոնի 15-րդ տարին, կայսրը Եվդոկիայից որդի ունեցավ, Հերակլիոս Փոքրին, որին կոչում էին նաև

Նոր Կոստանդին։ Օգոստոս ամսի 14-ին, նույն ինդիկտիոնի 15-րդ տարին, ավգուստա Եվդոկիան վախճանվեց[107]։

[A. M. 6104]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 3-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 24-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 4-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 4-րդ տարին

[Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարվա հոկտեմբեր ամսի 4-ին, ինդիկտիոնի առաջին տարին, Հերակլիոսի դուստր Եպիփանիան պալատի սուրբ Ստեփանոսի աղոթարանում ավգուստա թագադրվեց՝ ձեռամբ Սերգիոս պատրիարքի։ Իսկ ինդիկտիոնի նույն առաջին տարվա դեկտեմբերի 25-ին Հերակլիոսի որդի Հերակլիոսը, որ և Կոստանդին Կրտսեր[108], թագադրվեց[109] ձեռամբ Սերգիոս պատրիարքի։

Նույն տարին սարակինոսները Ասորիքի վրա արշավեցին և բազում վայրեր ավարառելով վերադարձան։

[A. M. 6105]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 4-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 25-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 5-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 5-րդ տարին

[Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին պարսիկները Դամասկոսն առան և բազում ժողովուրդ գերեվարեցին։ Հերակլիոս կայսրը Խոսրովին դեսպաններ ուղարկեց, կոչ արեց դադարեցնել անողորմ արյունահեղությունը, որոշել հարկերի չափը և պախտ[110] ստանալ։ Բայց Խոսրովը դեսպաններին ձեռնունայն ետ ուղարկեց, նրանց հետ բանակցություններ չվարեց, քանզի հույս ուներ, որ իրեն կհաջողվի ամբողջությամբ նվաճել հռոմայեցիների տերությունը։ Նույն տարին Հերակլիոսը Մարտինայի[111] հետ ամուսնացավ և նրան ավգուստա հռչակեց։ Թագադրությունը տեղի ունեցավ Ավգուստեսում[112], ձեռամբ Սերգիոս պատրիարքի։

[A. M. 6106]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 5-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 26-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի]՝ 6-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 6-րդ տարին

[Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարին պարսիկները պատերազմով գրավեցին Հորդանանը, Պաղեստինը և սուրբ քաղաքը[113], որի բնակիչներից շատերին, ինչպես ասում են ոմանք, ինն բյուր հոգու, հրեաների ձեռքով կոտորեցին։ Հրեաները յուրաքանչյուրն իր կարողության համեմատ քրիստոնյաներ էին գնում և նրանց սպանում։ [Իսկ պարսիկները] իրենց հերթին Երուսաղեմի Զաքարիա պատրիարքին, [Քրիստոսի] պատվական ու կենարար խաչափայտը, բազում գերիների տարան Պարսկաստան[114]։

Նույն տարին կայսրը Մարտինայից որդի ունեցավ՝ մյուս Կոստանդին, որը Վլախեռնայի [պալատում] մկրտվեց ձեռամբ Սերգիոս պատրիարքի։

[A. M. 6107]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 6-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 27-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 7-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 7-րդ տարին

[Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարին պարսիկներն առան բովանդակ Եգիպտոսը, Ալեքսանդրիան, Լիբիան՝ մինչև Եթովպիա և բազում գերիներով, ավարով ու դրամով վերադարձան։ Նրանց չհաջողվեց գրավել Քաղկեդոնը[115] և պաշարման համար զորամաս թողնելով, հեռացան։

[A. M. 6108]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 7-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 28-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 8-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 8-րդ տարին

[Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարին պարսիկները հարձակվեցին Քաղկեդոնի վրա և գրոհով առան այն[116]։ Նույն տարվա հունվարի 1-ին, ինդիկտիոնի 5-րդ տարին, Հերակլիոսի որդի Կոստանդին Կրտսերը, որ և Հերակլիոսի որդի Հերակլիոս, կոնսուլ[117] հռչակվեց։ [Կայսրը] նրա եղբոր՝ Կոստանդին Փոքրին, որ Հերակլիոսից ու Մարտինայից էր ծնվել, կեսար[118] հռչակեց։

[A. M. 6109]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 8-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 29-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 9-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 9-րդ տարին

[Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարին Հերակլիոսը Խոսրովին՝ Պարսկաստան դարձյալ դեսպաններ ուղարկեց՝ խաղաղություն առաջարկելով։ Խոսրովը նրանց կրկին ետ ուղարկեց, ասելով. «Ես ձեզ չեմ խնայելու, քանի չեք ուրացել խաչյալին[119], որին աստված եք համարում, և չեք երկրպագել արեգակին»։

[A. M. 6110]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 9-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 30-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 10-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 10-րդ տարին

[Ալեքսանդրիայի Հովհաննես պատրիարքի] 10-րդ տարին

Այդ տարին ավարները Թրակիայի վրա արշավեցին։ Հերակլիոսը նրանց մոտ դեսպաններ ուղարկեց՝ խաղաղություն առաջարկելով։ Խաքանը[120] հանձն առավ և կայսրն իր բոլոր թիկնապահներով, բազում և թանկարժեք նվերներով երկար պարսից դուրս եկավ խաքանին ընդունելու, քանզի նրանից հաշտություն կնքելու երաշխիքներ էր ստացել։ Բայց այդ բարբարոսը, դրժելով խոստումն ու երդումները, հանկարծակի շարամտորեն կայսեր վրա ուղղվեց[121]։ Կայսրը, անակնկալից ապշած, փախուստի դիմելով, քաղաք վերադարձավ։ Բարբարոսը, ձեռք գցելով կայսերական գույքն ու թիկնապահներին, բոլոր նրանց, ում կարողացավ բռնել, վերադարձավ, Թրակիայի բազում շրջաններ

ավարի առնելով, քանզի նրանց բնակիչները խաղաղության հույսով օրորված, անակնկալի հանդիպեցին։

[A. M. 6111]

Աշխարհի արարչագործության 6111 թ.

Քրիստոսի ծարդեղության 611 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 10-րդ տարին

Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 31-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 1-ին տարին122

Այդ տարին Հերակլիոսը ավարների խաքանին դեսպաններ ուղարկեց, պարսավեց նրա անօրեն քայլը և խաղաղություն կնքելու կոչ արեց, քանզի նպատակ ունենալով արշավել Պարսկաստանի վրա, ուզում էր խաքանի հետ հաշտություն կնքել։ Խաքանը կայսեր սիրալիրությունից ազդված հայտնեց, թե զղջացել է և խոստացավ խաղաղություն հաստատել։ Դեսպանները հաշտություն կնքելով, խաղաղությամբ վերադարձան։

Նույն տարին պարսիկները գրոհով առան Գալատիայի Անկյուրան։

[A. M. 6112]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 11-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 32-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 12-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 12-րդ տարին

[Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարին Խոսրովը ծանրացրեց իր լուծը հպատակների վրա՝ արյունահեղությամբ ու [ծանր] հարկապահանջությամբ։ Հաղթանակից գլխապտույտ ստացած, նա չէր կարողանում հանգիստ մնալ։ Այն ժամանակ Հերակլիոսը ասուծո հանդեպ նախաձախնդրությամբ լցված և (ինչպես իրեն էր թվում), ավարների հետ խաղաղություն հաստա-

տած, Եվրոպայի զորքերը Ասիա տեղափոխեց, վճռելով աստծո օգնությամբ Պարսկաստանի վրա արշավել։

[A. M. 6113]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 12-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 33-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 13-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 13-րդ տարին

[Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարվա ապրիլ ամսի 4-ին, ինդիկտիոնի 10-րդ տարին, Հերակլիոս կայսրը Զատկի տոնը[123] տոնելով, երկուշաբթի երեկոյան անհապաղ Պարսկաստանի վրա շարժվեց[124]։ Միջոցների պակաս զգալով, նա պարտքով վերցրեց եկեղեցիների դրամները, նաև Մեծ եկեղեցու բազմականթեղ ջահերը և պաշտամունքային այլ սպասներ, որոնցից ոսկե և արծաթե բազում դրամ կտրեց։ Իր որդուն նա թողեց Կոստանդնուպոլսում՝ Սերգիոս պատրիարքի խնամքի տակ, կարգադրեց, որպեսզի նա, պատրիարքը, խոհեմ, շատ խելացի ու փորձառու մի մարդու՝ Բոնոսոս պատրիկի հետ կառավարեն գործերը։ Նա դիմեց նաև ավարների խաքանին, խնդրելով սատար կանգնի Հռոմայեցիներին՝ ըստ կնքված բարեկամական դաշնագրի[125], որին և իր որդու խնամակալ նշանակեց։ Մայրաքաղաքից դուրս գալով և նավելով, նա հասավ Պյուլե[126] կոչվող տեղը, այնտեղից՝ զորքերի համախմբման վայրերը[127], գումարեց տեղական զորքերը և նրանց կազմը համալրեց նոր զորքերով[128], ապա սկսեց նրանց ռազմավարություն սովորեցնել. զորքը երկուսի բաժանելով, նա նրանց միմյանց դեմ անարյուն մարտեր էր մղել տալիս, սովորեցնում պատերազմական ուռաներ գոչել, պատերազմական երգեր երգել, որպեսզի երբ իսկական մարտի բռնվեն, չշփոթվեն, այլ, կարծես խաղի, արիաբար դիմեն թշնամու վրա։ Կայսրը վերցնելով Քրիստոսի անձեռակերտ պատկերը[129], պատկերը արարչին ամենայն բանին աստծո, ով առանց նկարելու կենդանագրեց, ով անսերմ ծնունդ առավ, և այդ աստվածագիր պատկերին ապավինելով պայքարի դիմեց, զինվորներին հավաստիացնելով, որ մինչև մահ նրանց հետ է մարտնչելու, վերաբերվելու է նրանց ինչպես իր հարազատ զավակներին։ Նա կամենում էր տիրել ոչ թե վախ սփռելով, այլ սեր։ Զինվորներին գտնելով շատ անհոգ ու անարի, անկարգ ու անկազմակերպ, երկրի

բազում շրջաններում ցրված, սեղմ ժամկետում բոլորին մի տեղ կենտրոնացրեց։ Բոլորը միահամուռ կերպով կայսեր հզորությունն ու քաջությունը փառաբանեցին։ Իսկ նա սրտապնդում էր նրանց հետևյալ խոսքերով. «Ո՜վ եղբայրներ ու որդիներ, տեսնում եք ինչպես ոսոխներն աստծո մեր երկիրը ոտնատակ արեցին, քաղաքները՝ անապատ, կրակի տվեցին եկեղեցիները։ Անարյուն զոհաբերության սեղանները[130] ոճրագործների հեղած արյամբ ողողվեցին, անառականոցի վերածվեցին մարմնական կրքերին օտար եկեղեցիները»։ Ապա դարձյալ երկու մասի բաժանելով զորքը, նրանց զորավարժություններ անել տվեց։ Շարքի էին կանգնած փողահարներ ու վահանակիրների փաղանգներ, զրահակիր մարտիկներ։ Երբ տագմաները լիակատար պատրաստության մեջ էին, կայսրը հրամայեց հարձակվեն միմյանց վրա։ Տեղի ունեցան ուժեղ բախումներ ու ընդհարումներ, կարծես իսկական պատերազմ լիներ։ Տեսնելու բան էր սահմռկեցուցիչ, բայց անվտանգ այդ տեսարանը, անարյուն ջարդը, այն, թե ինչ ձևերով նախքան իսկական ճակատամարտը յուրաքանչյուրը այդ անվտանգ կոտորածից փորձ ձեռք բերեց, ապագայում ավելի վստահ լինելու համար։ Կայսրն ահա այդպես զինելով բոլորին, կոչ արեց անօրինություններ չգործել, սատար կանգնել արդարության։ Հասնելով Հայաստանի շրջանները, նա հրամայեց ընտիր զինվորների շտապեն առաջ. պարսիկներին դաշնակից սարակինոսների[131] բազում ձիավորներ որոշել էին գաղտագողի կայսեր վրա հարձակվել, բայց վերջինիս հրամանով առաջ գնացած զինվորները հանդիպելով նրանց, գերի վերցրին նրանց զորավարին և շղթայակապ Հերակլիոսի մոտ բերեցին, իսկ մնացածներին հետապընդելով, շատերին կոտորեցին։ Երբ ձմեռը վրա հասավ, կայսրը շրջվեց դեպի Պոնտոսի կլիման[132] և բարբարոսները, կարծելով, որ նա մտադիր է ձմեռել այնտեղ, որոշեցին նրան օղակել։ Բայց կայսրը պարսիկներից ծածուկ թևանցելով ներխուժեց Պարսկաստան[133]։ Լսելով նրա անակնկալ ներխուժման մասին, բարբարոսները մտածմունքի մեջ ընկան։ Պարսից զորավար Շահր Վարազը[134] իր զորքի գլուխն անցած եկավ Կիլիկիա, նպատակ ունենալով Ռոմանիա ոտք դնելով, ստիպի կայսեր վերադառնալ, բայց երկյուղ կրելով, որ կայսրը կարող է հանկարծ Հայաստանի վրայով Պարսկաստան ներխուժել և այն տակնուվրա անել, չգիտեր ինչ նախաձեռնի։ Նա ստիպված հետևեց հռոմեական բանակին, մտադիր լինելով մի անլուսին գիշեր հարձակվել ու գողանալ պատերազմը[135], բայց քանի որ լիալուսին էր, հրաժարվեց ծրագրից և իր համար սուրբ համարվող լուսնին հայհոյեց։ Դրա վրա լուսինը այդ գիշեր խա-

վարեց[136], սակայն Շահր Վարազը վախեցավ կայսեր վրա հարձակվել, նա այծյամի պես լեռ բարձրացավ և բարձրից դիտեց հռոմայեցիների ճարտար և իմաստուն ռազմարվեստը։ Կայսրը համոզվելով նրա վեհերոտության, բանակեց հանգստյան համար պատշաճ տեղում և նրան գրգռում էր մարտի։ Պարսիկները ծածուկ կերպով հաճախ լեռից ցած էին իջնում և մասնակի ընդհարվում, բայց ամեն տեսակետից հռոմայեցիներն էին գերազանցում։ Զորքը տեսնելով, թե ինչպես կայսրն առաջինն էր նետվում թշնամու դեմ և քաջաբար մարտնչում, գնալով արիությամբ էր լցվում։ Մի փոքր առաջ դասալիք եղած մի պարսիկ ծառայության էր մտել կայսեր բանակում։ Ահա նա փախել էր պարսիկների մոտ, հավատացած լինելով, որ նրանք կոչնչացնեն հռոմայեցիների բանակը։ Բայց տեսնելով նրանց վեհերոտությունը, տասը օր անց կայսեր մոտ եկավ և ճշգրտորեն պատմեց բարբարոսների թուլամորթության մասին։ Իսկ Շահր Վարազը այլևս չուզենալով լեռան վրա ժամավաճառ լինել, ստիպված մարտի դիմեց[137]։ Նա իր զորքը երեք մասի բաժանելով, վաղ առավոտյան, դեռ արևը չծագած, հանկարծակի իջավ ցած՝ մարտի պատրաստ։ Կայսրը այդ բանին նախօրոք տեղյակ, իր զորքը նույնպես երեք մասի բաժանած, առաջնորդեց մարտի։ Արևը ծագեց կայսեր թիկունքում, նրա ճառագայթները խանգարում էին պարսիկների տեսողությանը, ճառագայթներ, որոնց պարսիկները երկրպագում են որպես աստված[138]։ Կայսրը ձևացրեց, որ զորքով փախուստի է դիմում։ Պարսիկները խախտելով իրենց փաղանգները, ընկան հռոմայեցիների ետևից, կարծելով, որ հալածում են նրանց, բայց հռոմայեցիները շրջվելով և քաջաբար մարտնչելով, նրանց փախուստի մատնեցին, շատերին կոտորեցին, մինչև լեռը հալածական արեցին, խորխորատներն ու դժվարանցանելի տեղեր գցեցին ու բնաջնջեցին։ Պարսիկները խորխորատներում այծյամների պես էին ցատկոտում։ Հռոմայեցիները բազմաթիվ գերիներ ձեռք բերեցին, գրավեցին պարսիկների ճամբարը ողջ ունեցվածքով հանդերձ, ապա բարձրացնելով ձեռքերը, աստծուն գոհություն հայտնեցին, ջանասիրությամբ աղոթեցին լավ ռազմավարած կայսեր համար։ Նրանք, ովքեր անցյալում չէին համարձակվում պարսիկների բարձրացրած փոշուն անգամ նայել, այժմ ավար էին վերցնում կատարյալ հանդերձանքով նրանց վրանները։ Ո՞վ կսպասեր, որ պարսիկ անչափ աննկուն ժողովուրդը հռոմայեցիներին թիկունք ցույց կտա։ Զորքը զորավարի[139] գլխավորությամբ Հայաստանում թողնելով ձմեռելու, կայսրը վերադարձավ Բյուզանդիոն[140]։

[A. M. 6114]

Աշխարհի արարչագործության 6114 թ.

Քրիստոսի մարդեղության 614 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 13-րդ տարին

Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 35-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 14-րդ տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 14-րդ տարին

Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 4-րդ տարին

Այդ տարվա մարտ ամսի 15-ին, ինդիկտիոնի 11-րդ տարին, Հերակլիոս կայսրը, մայրաքաղաքից դուրս գալով, փութանակի Հայաստան հասավ, իսկ պարսից Խոսրով արքան Շահր Վարազին իր զորքով ուղարկեց հռոմայեցիների երկիրը ներխուժելու։ Հերակլիոսը Խոսրովին հաշտություն կնքելու կոչով նամակ գրեց, հակառակ դեպքում սպառնում էր իր զորքով ներխուժել Պարսկաստան։ Բայց Խոսրովը ո՛չ հաշտություն էր կնքում, ո՛չ էլ հավատ ընծայում, որ Հերակլիոսը կհամարձակվի Պարսկաստանին մոտենալ։ Կայսրը ապրիլ ամսի քսանին ներխուժեց Պարսկաստան։ Խոսրովը, իմանալով այդ մասին, հրամայեց Շահր Վարազին վերադառնալ, իսկ ինքը Պարսկաստանից գումարելով իր զորքերը և հանձնելով Շահենին[141], հրամայեց նրան փութանակի միանալ Շահր Վարազին և շարժվել ընդդեմ կայսեր։ Իսկ Հերակլիոսը, ժողովելով իր զորքը, սրտապնդեց այն խրախուսիչ խոսքերով. «Իմ եղբայրներ, մեր գիտակցության մեջ ունենալով աստծո երկյուղը, մաքառենք վրեժխնդիր լինել աստծուն հասցված անարգության համար։ Արիանանք քրիստոնյաներին բազում չարիք պատճառած թշնամիների դեմ, խնայենք հռոմայեցիների անկախ պետությունը և ընդդիմակայենք շարամտորեն զենք կապած թշնամուն, լցվենք վախը սպանող հավատքով[142], նկատի ունենանք, որ պարսից երկրում ենք գտնվում և փախուստը շատ վտանգավոր է։ Վրեժխնդիր լինենք կույսերի պղծման համար, նայելով մեր խեղանդամ դարձած զինվորներին, կարեկցենք նրանց։ Վտանգն անհատույց չէ, նա հավիտենական կյանք է պարգևում[143]։ Կանգնենք արիաբար և տեր աստվածը մեզ սատար կկանգնի, նա կոչնչացնի մեր թշնամիներին»։ Կայսրը բազում նման հորդորներով սրտապնդեց զինվորներին, որոնցից մեկը բոլորի անունից պատասխանեց նրան. «Սեր-

տապնդեցի՛ր մեզ, տե՛ր, քո հորդորող խոսքերով, այդ խոսքերը սրեցի՛ն մեր սրերը և հոգի՛ փչեցին նրանց։ Քո խոսքերով մեզ թեավորեցի՛ր։ Մենք կարմրում ենք, տեսնելով, թե ինչպես ես դու դեպի մարտ մեզ առաջնորդում։ Մենք կանսանք քո բոլոր հրամաններին»։ Կայսրը զորքի գլուխն անցած, փութանակի խորագույն Պարսկաստան[144] խուժեց, կրակի տալով քաղաքներն ու գյուղերը։ Այստեղ էլ մի սարսափելի հրաշք կատարվեց. ամառ ժամանակ զով քամի փչեց, որ հռոմայեցի զինվորներին ապշեցրեց ու հուսադրեց։ Հերակլիոսը լսելով, որ Խոսրովը քառասուն հազարանոց զորքով Գանձակ[145] քաղաքում է գտնվում, դիմեց նրա դեմ։ Նախապես նա իրեն ենթակա սարակինոսներից[146] ոմանց ուղարկեց առաջ, որոնք հանդիպելով Խոսրովի վիգլային, մի մասին կոտորեցին, մյուսին էլ՝ իրենց զորավարի հետ միասին շղթայակապ կայսեր բերեցին։ Խոսրովն իմանալով այդ մասին, լքելով քաղաքն ու զորքը, դիմեց փախուստի։ Հերակլիոսը հետապնդեց նրան, հասածին սրի քաշեց, իսկ մնացածները փախուստի դիմելով, ցիրուցան եղան։ Կայսրը գրավեց Գանձակ քաղաքը[147], որի արվարձաններում իր զինվորներին հանգիստ տվեց։ Կայսեր կողմն անցած պարսիկներն ասում էին, որ Խոսրովը փախուստի դիմելով, այդ շրջանում եղած ամեն ինչ կրակի տվեց։ Նա եկավ արևելքում գտնվող Թեբարմայիս[148] քաղաքը, որտեղ էին գտնվում Հրո տաճարը, լյուդացոց թագավոր Կրեսոսի գանձերը, ինչպես նաև ածուխների մոլորությունը[149], որոնք առնելով շարժվեց դեպի Դաստակերտ[150]։ Իսկ կայսրը Գանձակից դուրս գալով, հասնում է Թեբարմայիս, մտնում քաղաք և կրակի տալիս Հրո տաճարը[151]։ Ողջ քաղաքը մոխիր դարձնելով, նա հետապնդում էր Խոսրովին Մարաց երկրի կապաններում։ Խոսրովն այդպիսի մի դժվարանցանելի վայրից մյուսն էր գնում։ Հերակլիոսը հետապնդելով նրան, բազում քաղաքներ ու գյուղեր առավ[152]։ Երբ ձմեռը վրա հասավ, նա մտածում էր իր զորքով ո՞ւր ձըմեռելու։ Ոմանք խորհուրդ տվեցին Ալբանիայում[153] ձմեռել, ուրիշները՝ Խոսրովի վրա շարժվել։ Կայսրը հրամայեց զորքին երեք օր սրբվել[154], իսկ ինքը, ընթերցելով աստծո ավետարանները, գտավ, որ կարելի է Ալբանիայում ձմեռել։ Նա իսկույն վերադարձավ և շարժվեց դեպի Ալբանիա։ Նա իր հետ էր տանում բազում պարսիկ ռազմագերիների, բայց և անվերջ հարձակումների ենթարկվում պարսից զորքերի կողմից, սակայն աստծո օգնությամբ նա բոլորին հաղթեց։ Ճանապարհին վրա հասավ սաստիկ ձմեռն ու սառնամանիքը։ Հասնելով Ալբանիա, նա իրեն հատուկ գթասրտությամբ ողորմեց և կապանքներից ազատեց իր գերի վերցրած հիսուն հազար ռազմագերիներին, նրանց հանդեպ հոգատարություն

ցուցաբերեց, հանգիստ տվեց, և բոլորը արտասվալից մաղթում էին նրան Պարսկաստանի փրկիչը դառնալ, բնաջնջելով տիեզերակործան Խոսրովին։

[A. M. 6115]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 14-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 36-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 15-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 15-րդ տարին

[Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին պարսից Խոսրով արքան զորավար նշանակեց Շահրաբզականին[155], գործունյա, բայց շատ ամբարտավան մի մարդու։ Նրան տալով Խոսրովական և Պերոզական[156] կոչվող զորքերը, ուղարկեց Ալբանիա՝ Հերակլիոսի դեմ։ Նրանք անցնելով Ալբանիայի սահմանները, չհամարձակվեցին կայսեր դեմ բացահայտ մարտի դուրս գալ, այլ բռնեցին Պարսկաստան տանող կիրճերը, մտադիր լինելով նրան ծուղակը գցել։ Բայց Հերակլիոսը գարնանը Ալբանիայից շարժվեց դեպի Պարսկաստան, ճիշտ է, ավելի երկար, բայց պարենաշատ հարթավայրերով։ Շահրաբզականը շարժվեց նեղ,բայց կարճ ճանապարհով, նպատակ ունենալով հասնել կայսեր, նախքան նա ոտք կդներ պարսից երկիրը։ Հերակլիոսը հորդորում էր իր զինվորներին, ասելով. «Իմացե՛ք, եղբայրներ, որ պարսից զորքը դեգերելով դժվարանցանելի վայրերում, հոգնեցնում, ուժասպառ է անում ձիերին։ Եկեք մենք փութանք մեծ արագությամբ հասնել Խոսրովին, որպեսզի անակնկալ կերպով խուժելով նրա վրա, խուճապի մատնենք»։ Զորքը, սակայն, դեմ էր դրան, հատկապես դաշնակից լազերը, աբազգներն ու իբերները։ Սա դառնում է փորձանքների պատճառ, քանզի այդ միջոցին վրա հասավ և Շահր Վարազը այն զորքով, որին Խոսրովը կատարելապես զինել էր և Հայաստանի վրայով Հերակլիոսի դեմ ուղարկել։ Իսկ Շահրաբզականը կրնկակոխ հետապընդում էր Հերակլիոսին, բայց կռվի չէր բռնվում, սպասելով միանալ Շահր Վարազին և ապա մարտի մեջ մտնել։ Հռոմայեցիները իմանալով Շահր Վարազի հարձակման մասին, վեհերոտեցին և ընկնելով կայսեր ոտքերը, արտասվալից ներողություն խնդրեցին իրենց անխոհեմ անհնազանդության համար։ Նրանք համոզվեցին, թե ինչքան վատ բան է, երբ ծառան չի ենթարկվում տիրոջ կարգադրություններին, և ասացին. «Մեզ ոչ մեկնիր, տեր, քանի թշվառականներս չենք կորչել։ Մենք կկատա-

րենք քո բոլոր հրամանները»։ Դրա վրա կայսրը փութաց Շահրաբղականի վրա խուժել, քանի նա դեռ չէր միացել Շահր Վարազի զորքին, և բազում անգամ, գիշեր ու ցերեկ, նրա վրա հարձակումներ գործելով, ահաբեկեց։ Երկուսին էլ[157] ետևում թողնելով, նա փութանակի Խոսրովի վրա շարժվեց։ Հռոմայեցիներից երկու զինվոր դասալիք լինելով, անցնում են պարսիկների կողմը և հավատացնում նրանց, որ հռոմայեցիները վախից են փախչում։ Լուր էլ ստացվեց, թե պարսից զորավար Շահենը մի այլ զորքով շտապում է օգնության։ Շահր Վարազն ու Շահրաբղականը իմանալով այդ մասին, ջանացին Հերակլիոսի հետ կռվի բռնվել նախքան Շահենը տեղ կհասներ, որպեսզի հաղթանակի փառքը նա իրեն չվերագրի։ Նրանք հավատ ընծայելով նաև դասալիքների ասածին, շարժվեցին Հերակլիոսի վրա, և մոտենալով, նրան բանակեցին, վճռելով վաղ առավոտյան բախվել։ Իսկ Հերակլիոսը երեկոյան ճամփա ընկավ և ամբողջ գիշեր ընթացավ։ Հեռանալով նրանցից, նա խոտառատ մի դաշտ գտավ, որտեղ և ճամբարեց։ Բարբարոսները, կարծելով, որ հռոմայեցիները երկյուղից են փախչում, խառնիճաղանջ կերպով շտապեցին հասնել նրանց։ Հերակլիոսը ընդդիմակայեց և կռվի բռնվեց։ Նա ապավինեց մի ծառախիտ բլրի վրա, այնտեղ ժողովեց իր զինվորներին և աստծո օգնությամբ բարբարոսներին փախուստի մատնեց, հետապընդեց կիրճերով և շատ-շատերին կոտորեց։ Ընկավ և Շահրաբղականը՝ թիկունքին սրի հարված ստանալով։ Մարտի ընթացքում իր զորքով վրա հասավ Շահենը, որին ևս կայսրը փախուստի մատնեց, նրանցից շատերին կոտորեց, իսկ մնացածներին ցիրուցան արեց, գրավեց նաև նրանց տուլդոնը[158]։ Շահր Վարազը միացավ Շահենին, հավաքեց վերապրած բարբարոսներին, մտադիր լինելով դարձյալ դիմել Հերակլիոսի վրա[159]։ Կայսրը շարժվեց դժվարամատչելի, քարքարոտ և դժվարանցանելի Սյունիք[160] երկրի վրայով, իսկ բարբարոսները հետապնդում էին նրան։ Լաղերը և աբազգները երկյուղից դրդված հրաժարվեցին հռոմայեցիների հետ ունեցած դաշնակցությունից և գնացին իրենց երկիրը։ Դա ուրախացրեց Շահենին և նա Շահր Վարազի հետ եռանդագին շարժվեց Հերակլիոսի վրա։ Կայսրը հավաքեց զորքը, հորդորեց, սրտապնդեց այն, ասելով. «Եղբայրնե՛ր, թշնամու մեծաթվությունը թող ձեզ չվհատեցնի, քանզի եթե աստված կամենա, մեկդ հազարին փախուստի կմատնի։ Զոհ բերենք մեզ հանուն մեր եղբայրների փրկության, արժանանանք մարտիրոսական պսակին, ապագան էլ մեզ կփառաբանի, իսկ աստված՝ կհատուցի»։ Ահա այսպիսի և նման այլ բազում հորդորներով նա զինվորներին սրտապնդեց, պատրաստակամ մարտի հանեց։ Ախոյաններն իրար

դեմ, շատ մոտիկ հեռավորության վրա կանգնած, առավոտից մինչև երեկո մարտի չդիմեցին։ Երբ վրա հասավ երեկոն, կայսրը ճամփա ընկավ, իսկ բարբարոսները դարձյալ հետապնդում էին նրան։ Պարսիկները, ցանկանալով նրա առաջը կտրել, այլ ճանապարհով գնացին, բայց ընկան տղմուտների մեջ, մոլորվեցին և մեծ վտանգի ենթարկվեցին։ Իսկ կայսրը նրանցից առաջ մտավ Պարսկահայաստանի[161] սահմանները։ Այն պատճառով, որ այդ երկիրը գտնվում էր պարսիկների տիրապետության ներքո, շատերը Շահր Վարազին միացան, որով նրա զորքը ստվարացավ։ Բայց երբ վրա հասավ ձմեռը, նրան միացած այդ բազմությունը ցրվեց իր տեղերը՝ տներում դադար առնելու։ Հերակլիոսը, իմանալով դա, որոշեց գիշերով գողանալ պատերազմը[162]։ Սառնամանիք էր, Շահր Վարազը ոչինչ չէր կասկածում, և Հերակլիոսը, ընտրելով տոկուն ձիեր, զինելով ամենաքաջ զինվորներին և նրանց երկու մասի բաժանելով, մեկին հրամայեց առջևից գնալ՝ ընդդեմ Շահր Վարազի, իսկ ինքը մյուս մասով հետևեց նրանց։ Նրանք գիշեր ժամանակ փութանակի գնացին և գիշերվա իններորդ ժամին հասան Սալվանոն[163] վայրը։ Պարսիկներն այստեղ էին գտնվում։ Իմանալով հարձակման մասին, նրանք ոտքի կանգնեցին և հարձակվեցին հռոմայեցիների վրա։ Վերջիններս բոլորին կոտորեցին, միայն մեկ հոգի փրկվեց, որը և Շահր Վարազին տեղեկացրեց կատարվածի մասին։ Շահր Վարազը տեղից վեր կացավ, ձին հեծավ և մերկ ու բոբիկ փախուստի դիմելով փրկվեց։ Սրա կանանց, պարսից ծաղիկը համարվող նշանավոր իշխանների, սատրապների և ընտիր զինվորների, որոնք տների տանիքները բարձրացած մարտ էին մղում, Հերակլիոսը կրակով հաղթահարեց՝ ոմանց կոտորեց, ոմանց ողջակեզ արեց, ուրիշներին էլ գերի վերցրեց։ Քիչ էր մնացել Շահր Վարազից բացի ոչ ոք չփրկվի։ Զեռք գցեցին նաև Շահր Վարազի զենքերը՝ ոսկե վահան, դաշույն և նիզակ, թանկագին քարերով ագուցված ոսկե գոտի և կոշիկներ[164]։ Այդ բոլորն առնելով, կայսրը շարժվեց գյուղերում ցիր ու ցան եղած պարսիկների վրա, որոնք, իմանալով Շահր Վարազի փախուստի մասին, իրենք ևս քառատրոփ փախուստի դիմեցին։ Կայսրը հետապնդեց նրանց և շատերին կոտորեց ու գերեվարեց։ Մնացածները խայտառակ կերպով Պարսկաստան վերադարձան։ Կայսրը ժողովեց իր զինվորներին և ուրախությամբ ձմեռեց այդ վայրերում։

[A. M. 6116]

Աշխարհի արարչագործության 6116 թ.

Քրիստոսի մարդեղության 616 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 15-րդ տարին

Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 37-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 16-րդ տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 16-րդ տարին

Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 6-րդ տարին։

Այդ տարվա մարտ ամսի 1-ին Հերակլիոս կայսրը, գումարելով իր զորքը, մտածում էր որ ճանապարհով շարժվի. նրա առաջ երկու ճանապարհ կար, երկուսն էլ նեղ ու դժվարանցանելի։ Մեկը տանում էր դեպի Տարանտա[165], մյուսը՝ ասորոց երկիրը[166]։ Տարանտա տանող ճանապարհը համեմատաբար լավն էր, բայց ամեն տեսակի պարենից զուրկ։ Մյուսը, որ Տավրոսի վրայով տանում է դեպի Ասորիք, լի էր ամեն տեսակ պարենով։ Ահա բոլորը նախընտրություն են տալիս այս ճանապարհին, հակառակ որ ավելի զառիթափ էր և ձյան հաստ շերտով ծածկված։ Մեծ դժվարությամբ կտրելով այդ ճանապարհը, յոթերորդ օրը հասնում են Տիգրիս գետը, որն անցնելով, ժամանում են Մարտիրոպոլիս և Ամիդ։ Այստեղ զինվորներն ու գերիները հանգստանում են։ Այստեղից կայսրը հնարավորություն ունեցավ նաև Բյուզանդիոն նամակ ուղարկել և տեղեկացնել իր դրության մասին և քաղաքը ցնծությամբ լցնել։ Իսկ Շահր Վարազը, հավաքելով իր ցիրուցան եղած զորքը, շարժվեց Հերակլիոսի դեմ։ Կայսրը ընտիր զինվորների մի ջոկատ առանձնացնելով, ուղարկեց կլեյսուրները հսկելու, իսկ ինքը գնաց արևելյան կողմում գտնվող լեռնանցքները՝ Շահր Վարազին դիմադրավելու։ Անցնելով Նիմֆիոս[167] գետը, կայսրը հասավ Եփրատին, այն տեղը, որտեղ գտնվում էր պարաններով հյուսածո և նավակներից պատրաստված կամուրջը։ Բայց Շահր Վարազը քանդելով կամրջի պարանները, կամուրջը մի ափից մյուսն էր տեղափոխել։ Երբ կայսրը հասավ և հնարավորություն չունեցավ կամրջից օգտվել, նա գետանց գտավ մի այլ տեղում։ Մարտ ամսին, առանց որևէ վտանգի և անսպասելի անցնելով գետը, հասավ Սամոսատ։ Դարձյալ անցնելով Տավրոսը, նա ժամանեց Գերմանիկիա[168], ապա

Ագանայի[169] վրայով եկավ Սարոս[170] գետը։ Շահր Վարազը նույն տեղից վերստին կապեց կամուրջը և առանց որևէ խոչընդոտի հանդիպելու անցավ Եփրատը և հետապնդեց կայսեր։ Վերջինս, անցնելով Սարոսի կամուրջը, զորքի և ձիերի հանգստյան համար հարմար վայր գտավ, ուր բանակեց և նրանց հանգիստ տվեց։ Շահր Վարազը բռնեց դիմացի կողմը, բայց տեսնելով, որ կամուրջը և նրան պաշտպանող աշտարակները հռոմայեցիների ձեռքն են անցել, որոշեց ճամբարել։ Բազմաթիվ հռոմայեցիներ անկանոն վազում էին կամրջի վրայով և հարձակումներ գործելով մեծ վնաս հասցնում պարսիկներին։ Կայսրն արգելեց նրանց անկազմակերպ հարձակումներ գործել, քանզի դա հնարավորություն կտար թշնամուն լինել կամրջի վրա և անցնել այն։ Բայց զինվորները չլսեցին կայսեր։ Շահր Վարազը դիմեց խորամանկության։ Նա ձևացրեց, որ փախուստի է դիմում և այդ կերպ բաղում հռոմայեցիների, հակառակ կայսեր կարգադրության, դրդեց իր ետևից ընկնեն։ Շահր Վարազը ետ դառնալով, հալածեց նրանց և ում որ կամրջից դուրս գտավ, կոտորեց։ Նրանք ահա այդպես պատժվեցին իրենց անհնազանդության համար։ Կայսրը, տեսնելով, որ բարբարոսները հետապնդելով տարված վերացրել են իրենց մարտաշարքը, որ նրանք արդեն կոտորում են աշտարակներում գտնվող բաղում հռոմայեցիների, նրանց վրա շտապեց։ Կամրջի մեջտեղում աժդահա մի մարդ կայսեր հանդիպեց և վրան հարձակվեց, բայց կայսրը հարվածեց նրան և գետի հոսանքի մեջ շպրտեց։ Բարբարոսները, տեսնելով նրա նապալումը, փախուստի դիմեցին, բայց կամրջի նեղության պատճառով սկսեցին իրենց գետը գցել, կարծես գորտ լինեին։ Ոմանք սրախողխող էին լինում, իսկ բարբարոսների մեծ մասը, որ գետի ափին էր կուտակվել, դիմադրում էր, նետեր արձակում, չէր թույլ տալիս հռոմայեցիներին անցնել։ Կայսրն արիաբար անցնելով կամուրջը, իր փոքրաթիվ թիկնապահներով մարտնչում էր ինչպես գերմարդ, մի բան, որ ապշեցրեց անգամ Շահր Վարազին, որը դիմելով իր մոտ կանգնած Կոզմաս անունով մի հռոմայեցի դասալիքի և հավատուրացի[171], ասաց. «Տեսնո՞ւմ ես կայսեր[172], ո՜ Կոզմաս, ինչպես է նա քաջաբար մարտնչում, այսքան բազմության դեմ միայնակ կռվում և ինչպես դարբնոցի սալ հարվածներից աներեր մնում»։ Հերակլիոսը մյուս զինվորներից ջոկվում էր իր կայսերական երկարավիզ կոշիկներով։ Նա այս մարտում բաղում հարվածներ ստացավ, բայց դրանցից և ոչ մեկը մահացու չէր։ Մարտը շարունակվեց ամբողջ օրը և միայն երեկոյան մարտնչողներն իրարից հեռացան։ Շահր Վարազը երկյուղով լցված, գիշերով նահանջեց, իսկ կայսրը, հավաքելով իր զինվորներին,

շարժվեց դեպի Սեբաստիա քաղաքը, անցավ Ալիս գետը և բովանդակ ձմեռն այդ վայրում անցկացրեց։ Խոսրովը մոլեգնած հրաման տվեց պարսից տիրապետության տակ գտնվող բոլոր եկեղեցիների գանձերը հավաքել։ Նա կայսեր վատություն արած լինելու համար ստիպում էր քրիստոնյաներին ընդունել Նեստորի դավանանքը[173]։

[A. M. 6117]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 16-րդ տարին

[Պարսից Խոսրով արքայի] 38-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 17-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 17-րդ տարին

[Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարին պարսից Խոսրով արքան նոր զորակոչ արեց, զինվորագրեց և՛ օտարականներին, և՛ քաղաքացիներին, և՛ ստրուկներին՝ ծագումն ուշադրության չառնելով։ Այս նորակոչիկներին նա հանձնեց զորավար Շահենին, Շահր Վարազի փաղանգից էլ ընտրելով հիսուն հազար հոգու, միացրեց դրան։ Այդ զինվորներին նա անվանեց «ոսկենիզակավորներ», և կայսեր դեմ ուղարկեց։ Իսկ Շահր Վարազին նրա մնացած զորքով Կոստանդնուպոլսի վրա ուղարկեց, որպեսզի Արևմուտքի հոների (սրանց ավարներ են կոչում), բուլղարների[174], սկլավների[175] և գեպեդների[176] դաշնակցությամբ, շարժվեն քաղաքի վրա և այն օղակեն։ Կայսրը, իմանալով այդ մասին, իր զորքը երեք մասի բաժանեց, մի մասն ուղարկեց քաղաքի պաշտպանության[177], երկրորդը, հանձնելով իր եղբոր՝ Թեոդորոսին, հրամայեց մարտնչել Շահենի դեմ, իսկ երրորդ մասն էլ ինքը վերցնելով, շարժվեց դեպի Լազիկա, որտեղ նա դաշնակցելու կոչ արեց Արևելքի Թուրքերին[178], որոնց խազարներ[179] են անվանում։ Շահենը նորակոչիկներով հասավ կայսեր եղբայր Թեոդորոսին և պատրաստվեց մարտի։ Աստված՝ փառաբանյալ Աստվածածնի միջնորդությամբ սատար կանգնեց. մարտի ժամանակ բարբարոսների վրա անսպասելիորեն կարկուտ տեղաց և նրանցից շատերին բախեց, իսկ հռոմայեցիների զորաշարքի տեղում պարզ եղանակ էր։ Հռոմայեցիները պարսիկներին պարտության մատնեցին և շատ-շատերի կոտորեցին։ Խոսրովը, իմանալով այդ մասին, զայրացավ Շահենի դեմ, որը բազում ապրումներից հիվանդացավ .ու վախճանվեց։ Խոսրովի հրամանով ազով զմրսած նրա մարմինը արքայի մոտ բերեցին, որն այն բազում անարգանքների են-

Թարկեց։ Խազարները, խաքանից[180] հետո երկրորդ մարդը համարվող իրենց զորավար Զիեբելի[181] գլխավորությամբ, կոտրելով Կասպից դռները, ներխուժեցին Պարսկաստան, Ատրպատական[182] երկիրը։ Նրանք իրենց ճանապարհին հանդիպածը պարսկին գերեվարում էին, քաղաքներն ու գյուղերը հրի մատնում։ Կայսրն իր հերթին Լազիկայից դուրս գալով, միացավ նրանց։ Զիեբելը, տեսնելով կայսեր, նրա մոտ փութաց, համբուրեց նրա պարանոցը, երկրպագեց նրան՝ Տփղիս[183] քաղաքում գտնվող պարսիկների աչքի առաջ։ Թուրքերի ողջ զորքը երեսն ի վայր գետին ընկնելով, օտար ժողովուրդներին հատուկ ձևով մեծարեց նրան, նմանապես և նրանց հրամանատարները, որոնք բարձրանալով ժայռերի վրա, նույն կերպ երկրպագեցին։ Զիեբելը կայսեր մոտ բերեց աղվամազը նոր բուսած իր որդուն[184]։ Նա բավականություն էր ստանում կայսեր խոսքերից, հիանում նրա արտաքինի և խոհեմության վրա։ Զիեբելը, որպես դաշնակից, քառասուն հազար քաջ զինվորներ ընտրելով և հանձնելով կայսեր, իր երկիրը վերադարձավ։ Կայսրը, առնելով նրանց, շարժվեց Խոսրովի վրա։ Շահր Վարազը Քաղկեդոնի վրա հարձակվեց, իսկ ավարները քաղաքին[185] մոտեցան Թրակիայից, բազում քաղաքավեր մեքենաներ գործի դրեցին, Խատրոս[186] գետից միակտուր նավակներով[187] անթիվ անհամար քանակությամբ ժողովուրդ բերեցին և լցվեցին Եղջյուրի ծոցում[188], վճռելով գրոհով առնել քաղաքը։ Թեև տասը օր նրանք ցամաքից ու ծովից պաշարման մեջ առան քաղաքը, այդուհանդերձ աստծո զորությամբ ու սատարով, անբիծ և կույս Աստվածամոր միջնորդությամբ, պարտություն կրեցին։ Նրանք ցամաքում և ծովում բազում զոհեր տալով, խայտառակ կերպով իրենց տեղերը վերադարձան։ Բայց Շահր Վարազը, որ Քաղկեդոնի մոտ էր կանգնած, չգնաց, ձմեռեց տեղում, ավարառելով ու թալանելով Պերատիկա[189] շրջաններն ու նրանց քաղաքները։

[A. M. 6118]

Աշխարհի արարչագործության 6118 թ.

Քրիստոսի մարդեղության 618 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 17-րդ տարին

Պարսից Խոսրով արքայի 39-ամյա թագավորության 39-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 18-րդ տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 18-րդ տարին

Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 8-րդ տարին

Այդ տարվա սեպտեմբեր ամսին Հերակլիոսը թուրքերի[190] հետ միասին ներխուժեց Պարսկաստան։ Այդ բանն անակնկալի բերեց Խոսրովին, քանզի արշավանքը տեղի ունեցավ ձմեռ ժամանակ։ Սակայն թուրքերը խիստ ձմռան և պարսիկների անվերջ հարձակումների պատճառով չկարողացան կայսեր հետ միասին տոկալ և կամաց-կամաց սկսեցին հեռանալ և ի վերջո բոլորն էլ լքելով նրան, վերադարձան։ Կայսրը, դիմելով իր զինվորներին, ասաց. «Եղբայրներ, իմացե՛ք, որ ոչ ոք չի ցանկանում դաշնակցել մեզ, այլ միայն աստված և նրան անսերմ ծընած մայրը, ցույց տալու համար իր զորությունը։ Փրկությունը զորքի կամ զենքերի քանակի մեջ չէ, այլ աստծո ողորմածությանն ապավինելու մեջ, նրան ապավինողներին է նա օգնության հասնում»։ Խոսրովը, հավաքելով իր բոլոր զորքերը և նրանց զորավար կարգելով Հրազատեսին[191], մի շատ ռազմունակ և քաջ մարդու, Հերակլիոսի դեմ ուղարկեց։ Իսկ կայսրը, Պարսկաստանի քաղաքներն ու գյուղերը կրակի էր տալիս, սրի քաշում գերի ընկած պարսիկներին։ Ինդիկտիոնի 15-րդ տարվա հոկտեմբեր ամսի 9-ին նա հասավ Խամաեթա[192] վայրը, ուր զինվորներին մեկ շաբաթ հանգիստ տվեց։ Հրազատեսը, գալով Գանձակ, անցավ նրա թիկունքը և հետապնդում էր հռոմայեցիներին, որոնք իրենց ճանապարհին հանդիպած պարենը սպառում էին, թողնելով սոված շան պես հետևող Հրազատեսին բավարարվի կայսեր թողած փշրանքներով։ Կերը չգտնելու պատճառով նրա ձիերից շատերը սատակեցին։ Դեկտեմբեր ամսի 1-ին կայսրը հասավ Մեծ Զաբ[193] կոչվող գետը և անցնելով այն, բանակեց Նինվե[194] քաղաքի մոտ։ Հրազատեսը, հետապնդելով նրան, նույնպես հասավ գետանցը։ Այդ տեղից երեք մղոն ցածր տեղում նա մի այլ գետանց գտավ ու անցավ։ Կայսրը նրա դեմ վահան ստրատելատի[195] գլխավորությամբ փոքրաթիվ, բայց ընտիր զինվորների ուղարկեց։ Վահանը պարսից մի ջոկատի հանդիպեց, որի հրամանատարին սպանելով, կայսեր բերեց նրա գլուխն ու զուտ ոսկուց պատրաստված սուրը։ Նա շատերին սպանեց, իսկ 26 հոգու գերի վերցրեց, այդ թվում և Հրազատեսի սուսերակրին, որը կայսեր հայտնեց, թե Հրազատեսը Խոսրովի հրամանով պետք է իր, Հերակլիոսի, դեմ կռվի, որ արքան երեք հազար զինվոր է ուղարկել նրան, որոնք սակայն դեռ տեղ չեն հասել։ Կայսրը, իմանալով դա, տուլդոնը առաջ ուղարկեց, իսկ ինքը ետևից գնաց, մտածելով մարտ տալու հարմար տեղ գտնել՝ նախքան երեք հազար հոգին կմիանային Հրազատեսին։ Մարտի հարմար մի դաշտ գտնելով, նա հրամայեց զորքին շարքի կանգնել։ Հրազատեսը ևս տեղ հասնելով, զորքը դասավորեց երեք սեպի ձևով և շարժվեց կայսեր դեմ։ Ճակատամարտը

տեղի ունեցավ դեկտեմբեր ամսի 12-ին, շաբաթ օրը։ Առաջինը մարտի նետվեց կայսրը և հանդիպելով պարսից մի հրամանատարի, աստծո զորությամբ և Աստվածածնի օգնությամբ գետին տապալեց։ Վերջինիս հետ մարտի նետվողները դիմեցին փախուստի։ Կայսրը մի ուրիշին էլ հանդիպելով, նրան ևս գետին տապալեց։ Մի երրորդն էլ վրա հասավ, նիզակով խոցեց, վիրավորեց կայսեր շրթունքը[196], բայց կայսրը նրան էլ սպանեց։ Հնչեցին պատերազմական փողերը, երկու կողմերը բախվեցին միմյանց, մարտը սաստիկ բորբոքվեց, պարսիկ հետևակայինները նիզակով խոցեցին ազդրը կայսեր ֆալբաս նժույգի, որի անունը Դորկոն էր։ Նա իր դնչին թրի բազմաթիվ հարվածներ էլ ստացավ, բայց որովհետև կաշվե զրահներով էր պաշտպանված, չվնասվեց։ Մարտում սպանվեց Հրազատեսը, պարսից երեք տուրմարխ[197], գրեթե բոլոր սպաները և զինվորների մեծ մասը։ Հռոմայեցիներից սպանվեցին հիսուն հոգի, մեծ թիվ էին կազմում վիրավորները, բայց նրանցից միայն տասը հոգի վախճանվեցին։ Ճակատամարտը տևեց առավոտից մինչև ժամը 11-ը[198]։ Հռոմայեցիները տիրացան պարսիկների 28 դրոշների, չհաշված ջարդվածները։ Դիակապտելով ընկածներին, առան նրանց զրահները, սաղավարտները և բոլոր զենքերը։ Հակառակորդները գտնվում էին իրարից երկու նետընկեց հեռավորության վրա. [Թշնամին] փախուստի չէր դիմել։ Հռոմայեցի զինվորները գիշերը ջրեցին ու կերակրեցին իրենց ձիերին, իսկ պարսից ձիավորները մինչև գիշերվա ժամը յոթը[199] մնացին սպանված պարսիկների դիակների մոտ։ Գիշերվա ժամը ութին նրանք երկյուղից դրդված վերադարձան իրենց զորքի մոտ և նրա հետ միասին գընացին բանակեցին մի շատ ապառաժ լեռան ստորոտում։ [Հռոմայեցիների] ձեռքն անցան զուտ ոսկուց պատրաստված սրեր, ոսկեզօծ գոտիներ, մարգարիտներ, նաև Հրազատեսի ամբողջությամբ ոսկե վահանը, որի վրա կար 120 դամ, նրա զուտ ոսկե զրահը, բերեցին նրա սկարամանգիոնը[200], գլուխը, ապարանջանները, ամբողջությամբ ոսկե նրա թամբը։ Գերի վերցվեց պարսիկներին ենթակա իբերների իշխան Բարսամուսեսը[201]։ Ոչ ոք չի հիշում պարսիկների և հռոմայեցիների միջև տեղի ունեցած նման ճակատամարտ, քանզի ամբողջ օրը նա դադար չունեցավ։ Հաղթեցին հռոմայեցիները։ Դա տեղի ունեցավ միայն ու միայն աստուծո օգնությամբ։ Կայսրը, գոտեպնդելով զորքը, Խոսրովի վրա շարժվեց, նպատակ ունենալով նրան ահաբեկել ու ստիպել ետ կանչի Բյուզանդիոնը [պաշարող][202] Շահր վարազին։ Դեկտեմբեր ամսի քսանմեկին կայսրն իմացավ, որ Հրազատեսի վերապրած զինվորները միացան Խոսրովի ուղարկած երեք հազար հոգուն և գրավելով Նինվեն, շտա-

պում են իր՝ետևից։ Կայսրը, անցնելով Մեծ Զաբ գետը, տուրմարխ Գեորգին հազար զինվորներով փութանակի ուղարկեց գրավելու Փոքր Զաբի[203] կամուրջները, նախքան այդ մասին Խոսրովն իմանա։ Գեորգը 48 մղոն անցնելով, գիշեր ժամանակ գրավեց Փոքր Զաբի չորս կամուրջները, գերի վերցրեց բերդերում հանդիպած պարսիկներին, իսկ դեկտեմբեր ամսի քսաներեքին կայսրը տեղ հասնելով ու անցնելով կամուրջների վրայով, ճամբարեց Իեզդեմի[204] ապարանքներում։ Նա զինվորներին ու ձիերին հանգիստ տվեց, այնտեղ նշեց Քրիստոսի ծննդյան տոնը[205], Խոսրովն իմանալով, որ հռոմայեցիները գրավել են Փոքր Զաբի կամուրջները, Հրազատեսի պարսկական զորքին հրամայեց մեծ ճիգ գործադրի և կայսրից շուտ հասնի իրեն։ Նրանք հապճեպ գետանցելով Փոքր Զաբը, այլ ճանապարհով կայսրից առաջ անցան և շարժվեցին առաջ։ Կայսրը գրավեց Դեզերիդան[206] կոչվող ապարանքը, որն ավերեց, կրակի տվեց, իսկ պարսիկները, անցնելով Տորնա[207] գետի կամուրջը, բանակեցին։ Կայսրը գրավեց Խոսրովի մի ուրիշ՝ Ռուսա[208] կոչվող ապարանքը, որը ևս ավերակ դարձրեց։ Նա երկյուղում էր, որ թշնամիներն ուզում են իրեն մարտ տալ Տորնա գետի կամրջի վրա, սակայն նրանք տեսնելով կայսեր, թողեցին կամուրջն ու հեռացան։ Կայսրն առանց որևէ խոչընդոտի անցավ կամուրջը և գրավեց Բեկլալ[209] կոչվող մի այլ ապարանք, որտեղ Խոսրովը ձիարշավարան էր կառուցել, որը ևս կայսրն ավերեց։ Պարսից զորքում ծառայող հայերից ոմանք գիշերով եկան կայսեր մոտ և հայտնեցին, թե «Խոսրովը փղերով և անձնական զորքով բանակած է Դաստակերտ[210] կոչվող ապարանքից հինգ մղոն հեռավորության վրա գտնվող Բարասրոթ[211] կոչվող վայրում, որ նա կարգադրել է զորքն այնտեղ կենտրոնանա, որպեսզի քեզ մարտ տան, քանզի այնտեղով հոսում է դժվարանցանելի մի գետ, որի կամուրջը նեղ է, այդ տեղում կան շարժման համար արգելքներ ստեղծող բնակարաններ, ճահճացած գետակներ»։ Կայսրը, խորհրդակցելով հրամանատարների և զինվորների հետ, մնաց Բեկլալ ապարանքում, նա այնտեղ, ցանկապատի մեջ գտավ երեք հարյուր բտած թռչուններ, մի այլ ցանկապատում մոտ հինգ հարյուր բտած վիթեր, մի ուրիշում՝ հարյուր բտած վայրի էշ։ Այդ բոլորը նա զինվորներին նվիրեց։ Հունվարի մեկը նրանք այնտեղ նշեցին, քանզի գտան անհամար քանակությամբ ոչխարներ, խոզեր, արջառներ։ Ողջ զորքն ըմբոշխնեց ու հանգստացավ, փառավորեց աստծուն։ Զեռք գցելով այդ անասուններին արածացնողներին, նրանք նրանցից ճշգրիտ իմացան, որ Խոսրովը, տեղեկանալով կայսեր Տորնա գետի կամուրջն անցնելու մասին, դեկտեմբեր ամսի քսաներեքին

փութանակի հեռացել է Դաստակերտի ապարանքից, շտապելով դեպի Կտեսիփոն[212], նախօրոք արքունիքում եղած ամբողջ գանձերը բարձելով իր սպասարկության համար առանձնացված փղերի, ուղտերի և ջորիների վրա։ Նա գրեց նաև Հրաղատեսի զինվորներին, որ մտնեն այդ ապարանքը, իշխանավորների տները և ինչ որ գտնեն տանեն։ Կայսրը զորքի կեսը Դաստակերտ ուղարկեց, իսկ ինքն այլ ճանապարհով շարժվեց դեպի մի այլ ապարանք, որ Բեբդարխ[213] է կոչվում։ Զինվորներն այդ ևս ավերակ դարձնելով ու կրակի տալով, աստծուն գոհություն հայտնեցին, որ Աստվածածնի միջնորդությամբ նման հրաշքներ գործեց։ Քանզի ո՞վ կհուսար, որ Խոսրովը հռոմայեցիների կայսեր առաջ Դաստակերտի ապարանքից փախուստի կդիմի և կգնա Կտեսիփոն, նա, ով 24 տարի չէր կամեցել տեսնել Կտեսիփոնի երեսը և իր արքունիքը Դաստակերտում էր հաստատել։ Հռոմայեցի զինվորները Դաստակերտի ապարանքում հռոմեական երեք հարյուր դրոշ գտան, որոնց պարսիկները տիրացել էին տարբեր ժամանակներում։ Նրանք այնտեղ գտան նաև լքված այլևայլ իրեր, բաղում ալոե[214], ալոեի յոթանասուն-ութսուն լիտր[215] ծանրությամբ փայտ, շատ մետաքս, պղպեղ, կերպասից[216] անհաշիվ հանդերձներ, շաքար, կոճապղպեղ և այլ շատ բան։ Ոմանք ձեռք բերեցին նաև արծաթ, հսկայական քանակությամբ բարձրորակ մաքուր մետաքսից հանդերձներ, ասեղնագործ գորգեր և օթոցներ, որոնք սակայն ծանր լինելու պատճառով կրակը գցեցին։ Նրանք կրակի տվեցին նաև Խոսրովի տաղավարներն ու վրանները, որոնք նա բանակելիս կանգնեցնում էր դաշտում, ինչպես նաև նրա բազմաթիվ արձանները։ Նույն այն ապարանքում զինվորները գտան անհամար ջայլամներ, վիթեր, վայրի էշեր, սիրամարգեր և փասիաններ, նրա որսատեղում՝ վիթխարի առյուծներ ու վագրեր։ Պարսիկների կողմից գերված բազմաթիվ ռազմագերիներ՝ եդեսացիներ ու ալեքսանդրացիներ, ինչպես և այլ քաղաքներից կայսեր մոտ ապավինեցին։ Կայսրը Դաստակերտում նշեց նաև Մկրտության տոնը[217], բերկրացրեց, հանգիստ տվեց զինվորներին ու ձիերին։ Նա քանդեց, գետնին հավասարեցրեց Խոսրովի ապարանքները՝ անգին, հրաշալի ու ապշեցուցիչ շինություններ, որպեսզի Խոսրովն իմանա, թե ինչպիսի ցավ էր նա պատճառում հռոմայեցիներին, երբ ամայացնում, կրակի էր տալիս նրանց քաղաքները։ Գերվածների մեջ կային նաև ապարանքի բազմաթիվ սպասավորներ որոնք այն հարցին, թե Խոսրովը Դաստակերտից ե՞րբ հեռացավ, պատասխանեցին, թե «ձեր գալուց 9 օր առաջ։ Ձեր գալու լուրն առնելով, նա ապարանքին մոտիկ գտնվող քաղաքի պարսպի վրա գաղտնի կերպով անցք բացեց, նրա, ապա պարտեզների միջով ին-

քը, կինը և երեխաները ծածկաբար դուրս եկան, որպեսզի քաղաքում իրարանցում չլինի»։ Այդ մասին ոչ իր զինվորներն իմացան, ոչ էլ հրամանատարները, մինչև որ նա կտրեց անցավ հինգ մղոն տարածություն։ Ահա դրանից հետո նա հայտնեց, որ զինվորներն իր ետևից գան Կտեսիփոն։ Նա, ով գալու ժամանակ չէր կարողանում օրական հինգ մղոն կտրել, փախչելիս 25 մղոն էր անցնում։ Մինչ այդ իրար չճանաչող նրա կանայք ու երեխաները իրար հրմշտելով, խառնիճաղանջ փախուստի դիմեցին։ Երբ գիշերը վրա հասավ, Խոսրովը մի խեղճ ու կրակ գյուղացու տունը մտավ գիշերելու, հազիվ կարողանալով դռնից ներս անցնել։ Վերջն այդ դուռը Հերակլիոսը տեսնելով՝ ապշեց[218]։ Երեք օրում Խոսրովը հասավ Կտեսիփոն։ 24 տարի առաջ, երբ Փոկաս կայսեր ժամանակ Խոսրովը Դարան էր պաշարում, գուշակներից ու աստղագուշակներից պատգամ էր ստացել, թե հենց այն պահին, երբ Կտեսիփոն վերադառնա, նա սպանվելու է։ Եվ նա, ով չէր ուզում Դաստակերտից դեպի Կտեսիփոն մեկ մղոն գնալ, ստիպված փախուստի դիմեց այնտեղ, բայց չխիզախեց մնալ, Տիգրիս գետի նավակամուրջն անցնելով, նա գնաց մյուս ափում գտնվող՝ մեր կողմից Սելևկիա[219], իսկ պարսիկների կողմից Վեհ Արտաշիր կոչվող քաղաքը, ուր բերեց և ողջ գանձերը։ Նա այնտեղ մնաց իր կնոջ Շիրինի[220], իր երեք այլ կանանց և դուստրերի հետ։ Մնացած կանանց և երեխաների մեծ մասը նա ուղարկեց 40 մղոն դեպի արևելք գտնվող մի ամրացված վայր։ Պարսիկներից ոմանք Խոսրովի առաջ Շահր Վարազին հռոմեասիրության մեջ[221] զրպարտեցին և այն բանում, թե նա շարախոսում է իր հացեին։ Խոսրովն իր սպաթարին նամակով Քաղկեդոն ուղարկեց՝ Շահր Վարազի հրամանատար Կարդարիգանի մոտ, կարգադրելով նրան սպանել Շահր Վարազին, ապա վերցնել պարսից զորքը և շտապել Պարսկաստան՝ օգնության։ Նամակաբերը, սակայն, Գալատիայում ընկնում է հռոմայեցիների ձեռքը, որոնք պարսիկներից թաքուն նրան բերում են Բյուզանդիոն և հանձնում կայսեր որդուն։ Վերջինս նամակաբերից իրերին տեղյակ դառնալով, անհապաղ իր մոտ է հրավիրում Շահր Վարազին։ Նա եկավ ու ներկայացավ կայսեր [որդուն], որը նրան հանձնեց Կարդարիգանին հասցեագրված նամակը, ծանոթացրեց նամակաբերին։ Ընթերցելով նամակը և իրականությանը տեղյակ դառնալով, նա տեղն ու տեղը զիջեց և կայսեր որդու և պատրիարքի հետ հաշտություն կնքեց։ Նա կեղծեց Խոսրովի նամակի բովանդակությունը, իր անվան կողքին ավելացրեց 400 այլ սատրապների, հազարապետների և հարյուրապետների անունները, որոնք պետք է սպանվեին, և վարպետորեն կնիքը տեղը դնելով, հրավիրեց հրամանատարներին և հենց իրեն՝

Կարգարիդանին ու ընթերցելով նամակը, վերջինիս ասաց. «Համաձա՞յն ես այդ կատարել»։ Հրամանատարները գազազած գահընկեց հայտարարեցին Խոսրովին և կայսեր [որդու] հետ հաշտություն կնքեցին։ Միմյանց հետ խորհրդակցելով, նրանք վճռեցին Քաղկեդոնից հեռանալ ու առանց ավարառելու իրենց երկիրը գնալ։ Հերակլիոսը նամակ գրեց Խոսրովին. «Թեև հալածում եմ քեզ, բայց խաղաղություն եմ տենչում։ Իմ ցանկությամբ չէ, որ հրի եմ մատնում Պարսկաստանը, դու ես ինձ դրան ստիպել։ Արդ, գցենք զենքերը և հաշտություն կնքենք, հանգեցնենք կրակը, քանի նա ամեն ինչ չի ճարակել»։ Խոսրովը մերժեց և դա ավելի բորբոքեց պարսից ժողովրդի ատելությունը նրա դեմ։ Խոսրովը զինակոչեց իր իշխանավորների բոլոր սպասավորներին, իր և իր կանանց ծառաներին և զինելով ամենքին ուղարկեց միանալու Հրազատեսի զորքին և կանգ առնելու Նարվաս[222] գետի ափին՝ Կտեսիփոնից 12 մղոն հեռավորության վրա։ Նրանց կարգադրեց երբ կայսրը գետն անցնի, ոչնչացնեն կամուրջն ու նավակամուրջը։ Կայսրը հունվար ամսի յոթին Դաստակերտից դուրս գալով, երեք օր հետո բանակեց Նարվա գետից 12 մղոն հեռու, որի ափին էր գտնվում պարսից զորքը, այդ թվում և երկու հարյուր փիղ։ Կայսրը Արմենիակների[223] տուրմարխ Գեորգիոսին կարգադրեց գնալ մինչև գետը և իմանալ, ունի՞ արդյոք Նարվան գետանց։ Տեսնելով, որ [պարսիկները] կտրել են կամուրջները, որ Նարվան գետանց չունի, նա կայսեր մոտ վերադարձավ։ Կայսրը շարժվեց, եկավ Սիազուրոն[224], ամբողջ փետրվար ամիսը գյուղերն ու քաղաքները կրակի տալով։ Իսկ մարտ ամսին նա եկավ Բարզան կոչվող գյուղը, ուր մնաց յոթ օր։ [Այստեղից] նա զորավար Մժեժին[225] ավարառության ուղարկեց։ Վերջինիս կողմն անցավ Շահր Վարազի բանակում հազարապետի աստիճանն ունեցող Վշնասպ Ասպադը[226] ուրիշ հինգ հոգու հետ, որոնցից երեքը կոմեսներ էին, իսկ երկուսը՝ սպաներ։ Մժեժը ահա սրանց բերեց կայսեր։ Այս Վշնասպ Ասպադը շատ կարևոր տեղեկություններ տվեց կայսեր, թե «Երբ Խոսրովը Դաստակերտից փախավ դեպի Կտեսիփոն և Սելևկիա, նա թանչով հիվանդացավ, որ նա ցանկացավ Մարդանշահին[227], Շիրինից ծնված որդուն արքա թագադրել, և որ երբ վերստին անցավ գետը, նա իր հետ բերեց Մարդանշահին, Շիրինին և վերջինից մյուս որդի Շահրիյարին[228], իսկ իր անդրանիկ որդի Շերոյեին, վերջինիս եղբայրներին, նրա կանանց թողեց գետի այն կողմը։ Շերոյէն, իմանալով, որ Խոսրովն ուզում է Մարդանշահին թագադրել, ցնցվեց։ Նա Վշնասպ Ասպադի մոտ իր կաթնեղբորն ուղարկեց ասելու, թե «Եկ գետիայն կողմը, որ հանդիպենք»։ Բայց Վշնասպ Ասպադը Խոսրովի երկյուղից չհամարձակվեց

գետն անցնել և հայտնեց նրան, թե «ինչ որ վճռել ես գրավոր հայտնիր ինձ քո կաթնեղբոր միջոցով»։ Շերոյեն գրեց նրան, թե «Դու գիտես, որ պարսից տերությունը վատթար Խոսրովի պատճառով կործանվեց, նա ուզում է Մարդանշահին թագադրել, արհամարհելով ինձ՝ իր անդրանիկ որդուն։ Եթե դու համոզես զինվորներին ինձ ընդունեն, ես կբարձրացնեմ նրանց ոռճիկները, հաշտություն կկնքեմ հռոմայեցիների կայսեր և թուրքերի[229] հետ, և մենք լավ կապրենք։ Դու և քո զինվորները ջանացեք, որ ես թագավորեմ, ես բոլորիդ առաջ կքաշեմ և կհատուցեմ հատկապես քեզ»[230]։ Ես [Շերոյեի] կաթնեղբոր միջոցով հայտնեցի նրան, թե «Իմ ուժերի ներածի չափով՝ կաշխատեմ զորքին համոզել և ջանք կթափեմ»։ Ես 22 կոմեսների հետ խոսեցի և համոզեցի նրանց, ինչպես և այլ բազում հրամանատարների և զինվորների։ Այդ մասին ես հայտնեցի Շերոյեին, որն ինձ կարգադրեց վերցնեմ երիտասարդ տաքսատոսների[231] և մարտ ամսի 23-ին հանդիպեմ նրան Տիգրիս գետի նավակամրջակի վրա, որպեսզի նրա հետ զորքով շարժվենք Խոսրովի վրա։ Նա ասաց նաև, որ Շերոյեի հետ են Շահր Վարազի երկու որդիներն էլ, նաև Յազդեմի[232] որդին և բազում իշխանազուններ, Արամի որդին, բոլորն էլ ընտրանի։ Արդ, եթե հաջողվի սպանել Խոսրովին, լավ, բայց եթե անհաջողության մատնվեն, ապա բոլորը Շերոյեի հետ կհարեն կայսեր։ Նա է ինձ քո մոտ ուղարկել, տեր, քանզի նա պատկառանք է տածում հռոմայեցիների թագավորության հանդեպ, թագավորություն, որը ժամանակին փրկեց Խոսրովին, որպեսզի նա այժմ հռոմայեցիների գլխին բազում փորձանքներ բերի։ Կայսրը, աչքի առաջ ունենալով նրա ապերախտությունը, իրավունք ունի ինձ էլ չհավատալու։ Կայսրը նրան ետ դեպի Շերոյեն ուղարկեց հաղորդելու, որ նա բացի բանտերի դռները և այնտեղ արգելափակված հռոմայեցիներին դուրս հանի, նրանց զինի և Խոսրովի վրա շարժվի։ Շերոյեն հնազանդվեց կայսեր և բանտարկյալներին ազատելով, հարձակվեց հայրասպան [իր] հոր՝ Խոսրովի վրա։ Վերջինս փորձեց փախուստի դիմել, բայց ապարդյուն։ Նրան ձերբակալեցին, թևերը մեջքին ամուր երկաթե կապանքների մեջ առան, ոտքերին ու վզին սուզակապարներ կախեցին և առաջնորդեցին խավարի տունը, որը նա նոր էր կառուցել և ամրացրել՝ դանձատան վերածելու։ Նրան շատ քիչ հաց էին տալիս ու ջուր, սովամահ անում, համաձայն Շերոյեի կարգադրության. «Թող իզուր տեղ կուտակած ոսկին ուտի, որի սիրույն շատերին սովամահ արեց, աշխարհն ամայացրեց»։ Նրա մոտ նա սատրապներին էր ուղարկում, որպեսզի գլխին թուք ու լուտանք թափեն։ Ապա բերել տվեց նրա որդի Մարդանշահին, որին Խոսրովն

ուզում էր թագադրել և նրա աչքի առաջ սրի քաշեց։ Նրա աչքի առաջ կոտորեցին նրա բոլոր մյուս զավակներին։ Շերոյեն Խոսրովի մոտ ուղարկեց վերջինիս բոլոր թշնամիներին՝ նրան գանահարելու, գլխին թուք ու լուտանք թափելու։ Դա հինգ օր տևեց, որից հետո Շերոյեի հրամանով նրան նետահար արեցին։ Եվ այդպես, դանդաղորեն նա չարաչար ավանդեց իր չար հոգին[233]։ Դրանից հետո Շերոյեն Հերակլիոսին նամակով ավետեց[234] պիղծ Խոսրովի սպանության մասին, նրա հետ կայուն խաղաղություն կնքեց[235], վերադարձրեց զնդաններում գտնվող բոլոր քրիստոնյաներին, Պարսկաստանում գտնվող բոլոր ռազմագերիներին, այդ թվում և Զաքարիա պատրիարքին։ Նա վերադարձրեց նաև Շահր Վարազի կողմից Երուսաղեմի գրավման ժամանակ այնտեղից տարված [Քրիստոսի] պատվական ու կենարար խաչափայտը։

[A. M. 6119]

Պարսից արքա Շերոյե[236]։ Թագավորեց մեկ տարի։

[Աշխարհի արարչագործության] 6119 թ.

[Քրիստոսի մարդեղության] 619 թ.

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 18-րդ տարին

[Պարսից Շերոյե արքայի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 19-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 19-րդ տարին

[Աղեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարին երբ պարսիկների և հռոմայեցիների միջև հաշտություն կնքվեց, կայսրն իր եղբայր Թեոդորոսին նամակներով և Շերոյե արքայի պաշտոնյաներով ուղարկեց, որպեսզի Եդեսիայում, Պաղեստինում, Երուսաղեմում և հռոմայեցիների այլ քաղաքներում գտնվող պարսիկներին հռոմայեցիների երկրի միջով հաշտ ու խաղաղ և անվնաս անցկացնեն Պարսկաստան։ Այսպիսով կայսրը Պարսկաստանի դեմ վեց տարի պատերազմ մղելուց հետո, 7-րդ տարին հաշտություն կնքեց և մեծ ուրախությամբ Կոստանդնուպոլիս վերադարձավ[237]։ Դրա մեջ ինչ-որ խորհուրդ կար. աստված վեց օրվա մեջ համայն աշխարհն արարչագործելուց հետո, յոթերորդ օրը հանգստյան օր կոչեց։ Ահա նույն ձևով և Հերակլիոսը, վեց տարի բազում խոնջանքների միջով անցնելով, յոթերորդ տարին խաղաղությամբ ու բերկրանքով քաղաք վերադարձավ ու

հանգստացավ։ Քաղաքի բնակչությունը նրա գալստյան լուրն առնելով, բոլորը միասին տենչանքով լի, ձիթենու ճյուղեր բռնած, ջահերով, պատրիարքով, [Հերակլիոսի] որդի Կոստանդին կայսրով[238] դուրս եկան Հիերիա[239]՝ Հերակլիոսին ընդառաջ, փառաբանելով նրան բերկրալից ու արտասվալից։ Նրա որդին մոտեցավ [Հերակլիոսին] և երկրպագեց։ Նրանք գրկախառնվեցին ու հողը արցունքներով ցողեցին։ Համայն ժողովուրդը տեսնելով դա, աստծուն գոհություն հայտնեց։ Ահա կայսեր այդպես դիմավորելով, բերկրալից մտան քաղաք։

[A. M. 6120]

Պարսից արքա Արտաշիր[240]։ *Թագավորեց յոթ ամիս։*

[Աշխարհի արարչագործության] 6120 թ.

[Քրիստոսի մարդեղության] 620 թ.

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 19-րդ տարին

[Պարսից Արտաշիր արքայի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 20-րդ տարին

[Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի] 20-րդ տարին

[Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 10-րդ տարին

Այդ տարվա գարնանը կայսրը Թագավորանիստ քաղաքից դուրս գալով, պատվական ու կենարար խաչափայտով գնաց Երուսաղեմ՝ աստծուն գոհություն հայտնելու։ Երբ հասավ Տիբերիաս, քրիստոնյաները նրա առաջ ոմն Բենիամինի ամբաստանեցին, թե նա իրենց նեղում է։ Շատ հարուստ լինելով կայսեր և նրա զորքը նա ընդունեց։ Կայսրը պարսավեց նրան. «Ինչո՞ւ ես ճնշում քրիստոնյաներին»։ Նա պատասխանեց. «Որովհետև նրանք իմ հավատքի թշնամիներն են»։ Նա հրեա էր։ Կայսրը խրատեց նրան, հորդորեց ու մկրտեց քրիստոնյա Եվստաթիոս Նեապոլսեցու տանը։ Նա էլ էր կայսեր ընդունել։ Մտնելով Երուսաղեմ, կայսրը Զաքարիա պատրիարքին վերահաստատեց իր աթոռին, սեփական տեղում ամփոփեց պատվական ու կենարար խաչափայտը և աստծուն բազում գոհություն հայտնեց։ Ապա հրեաներին սուրբ քաղաքից արտաքսեց, կարգադրեց, որ նրանք լինեն քաղաքից երեք մղոնից ոչ պակաս հեռավորության վրա[241]։ Գալով Եդեսիա, ուղղափառներին հանձնեց եկեղեցին, որը Խոսրովի ժամանակներից սկսած նեստորականների ձեռքն էր անցել։ Հիերապոլսում նա իմացավ, որ պարսից արքա Շերո-

յեն վախճանվել է, որ պարսից գահին տիրացել է նրա որդի Արտաշիրը։ Սա իշխեց 7 ամիս, Շահր Վարազը նրա դեմ ապստամբեց և սպանելով, պարսից վրա թագավորեց 2 ամիս[242]։ Պարսիկներն սպանեցին նրան և արքա հռչակեցին Բորանեին[243], Խոսրովի դստեր, որ պարսից վրա իշխեց 7 ամիս։ Սրան հաջորդեց Որմիզդը[224], սարակինոսները նրան քշեցին, որով պարսից թագավորությունն անցավ արաբների ձեռքը և այդպես է մինչև օրս։

[A. M. 6121]

Աշխարհի արարչագործության 6121 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 20-րդ տարին

Պարսից Որմիզդ արքայի 11-ամյա թագավորության 1-ին տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 21-րդ տարին

Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Քրիստոսի մարդեղության 621 թ.

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 21-րդ տարին

Այդ տարին, Հերակլիոս կայսեր Հիերապոլսում եղած ժամանակ, նրա մոտ եկավ Հակոբիկների[245] պատրիարք Աթանասիոսը, մի զարհուրելի, չարագործ մարդ, ասորիների բնածին նենգությամբ լի։ Հավատքի հարցերի շուրջ նա կայսեր հետ բանավեճի բռնվեց։ Հերակլիոսը խոստացավ նրան Անտիոքի պատրիարք նշանակել, եթե ընդունի Քաղկեդոնի ժողովը։ Նա երկերեսանիորեն ընդունեց, խոստովանեց Քրիստոսի երկու, իրար միացած բնությունները։ Նա հարցրեց կայսեր [Քրիստոսի] ներգործության և կամքի մասին՝ ինչպես պետք է խոստովանել ի Քրիստոս՝ երկա՞կ, թե՞ միակ։ Կայսրը հարցին անտեղյակ, գրեց Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքին, հրավիրեց նաև Փասիսի Կյուրոս եպիսկոպոսին և նրան հարցուփորձ անելով գտավ, որ նա համակարծիք է Սերգիոսին՝ [Քրիստոս] մեկ կամք[246] և մեկ ներգործություն ունի։ Սերգիոսը, լինելով ծագումով ասորի, հակոբիկ ծնողների որդի, խոստովանեց և գրեց Քրիստոսի մեջ առկա մեկ բնական կամքի և մեկ ներգործության մասին։ Կայսրը երկուսի կարծիքը համեմատելով տեսավ, որ Աթանասիոսն էլ համախոհ է նրանց։ Վերջինս գտնում էր, որ եթե ներգործությունը մեկ է, ապա բնությունն էլ մեկ կլինի։ Կայսրն

իմանալով նրանց հայեցակետը, նամակ է գրում Հռոմի Հովհաննես պապին[247] և տեղեկացնում այդ երկուսի կարծիքների մասին։ Վերջինս մերժեց նրանց հերձվածը։ Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի վախճանման առթիվ Ալեքսանդրիա որպես պատրիարք է ուղարկվում Կյուրոսը, որը միանալով Փարանի Թեոդորոս եպիսկոպոսին[248], գլուխ բերեց այդ խախուտ միությունը, խոստովանելով ի Քրիստոս միայն մեկ բնական ներգործություն։ Սրանց նման ընթացքի պատճառով Քաղկեդոնի ժողովն[249] ու ընդհանրական եկեղեցին մեծ նախատինք ապրեցին. հակոբիկներն ու թեոդոսիանոսները պարծենում էին, ասելով. «Ոչ թե մենք միաբանեցինք Քաղկեդոնին, այլ ավելի շուտ Քաղկեդոնը միաբանեց մեզ։ Քրիստոսի մեկ ներգործություն խոստովանելով, դրանով իսկ նա մեկ բնություն խոստովանեց»։ Այդ ընթացքում Երուսաղեմի պատրիարք է ձեռնադրվում Սոփրոնիոսը[250], որն իրեն ենթակա եպիսկոպոսների ժողով գումարելով, նզովեց միակամության դավանանքը և ժողովական փաստաթղթերը Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքին և Հռոմի Հովհաննես պապին ուղարկեց։ Հերակլիոսը, լսելով այդ մասին, ամոթահար եղավ, նա թեև չցանկացավ չեղյալ հայտարարել իր կարգադրությունները, բայց ի վիճակի էլ չէր տանել նախատինքը։ Այն ժամանակ, կարծելով, թե ինչ-որ մի մեծ բան է անում, հրապարակում է այսպես կոչված էդիկտը, որի համաձայն չպետք է խոստովանել ի Քրիստոս ո՛չ մեկ, և ո՛չ էլ երկու ներգործություն[251]։ Սեբերիանոսները[252], ծանոթանալով դրան, ընդհանրական եկեղեցին ծաղր ու ծանակի ենթարկեցին, ասելով. «Նախկինում Նեստորի[253] ուսմունքը դավանող քաղկեդոնականները խելքի եկան, ճշմարտությանը վերադարձան և մեզ միացան, Քրիստոսի մեկ ներգործության հետ մեկ բնություն խոստովանեցին, բայց այժմ, ոտնահարելով ճշմարտությունը, մեկից էլ, մյուսից էլ զրկվեցին և այժմ խոստովանում են ի Քրիստոս ո՛չ մեկ, և ո՛չ էլ երկու բնություն»։ Սերգիոսի մահից հետո Կոստանդնուպոլսի աթոռին նստեց Պյուրոսը[254], որն ամբարշտաբար հաստատեց Սերգիոսի և Կյուրոսի դավանանքը։ Երբ Հերակլիոսը վախճանվեց և թագավորեց նրա որդի Կոստանդինը, Պյուրոսը Մարտինեի[255] հետ միասին թունավորեցին [կայսեր]։ Թագավորում է Մարտինեի որդի Հերակլեոնասը[256]։ Բայց սենատը և քաղաքը Պյուրոսին, Մարտինեին և վերջինիս որդուն որպես ամբարիշտների արտաքսեցին քաղաքից։ Թագավորում է Կոստասը[257], Կոստանդնի որդին, իսկ Կոստանդնուպոլսի պատրիարք է ձեռնադրվում Պավղոսը[258], նա էլ հերձվածող։ Հռոմի Հովհաննես պապը եպիսկոպոսների ժողով գումարելով, նզովեց միակամականների հերձվածը։ Ժողով գումարելով միաբնակ-

ներին այդպես նզովեցին նաև Աֆրիկայի, Բյուզակիոնի, Նումիդիայի և Մավրիտանիայի մի շարք եպիսկոպոսներ։ Հռոմի Հովհաննես պապի ննջումից հետո նրա փոխարեն պապ է ձեռնադրվում Թեոդորոսը[259]։ Իսկ Պյուրոսը գալով Աֆրիկա, հանդիպում է ամենասուրբ Մաքսիմոս աբբային, որը մեծ հարգանք էր վայելում մենակյացի իր վսեմ գործունեությամբ, նաև տեղի աստվածակիր եպիսկոպոսներին, որոնք նրան նախատելուց և համոզելուց հետո, Հռոմ, Թեոդորոս պապի մոտ ուղարկեցին։ Պյուրոսը պապին հանձնեց իր ուղղափառությունը հաստատող գիրը, որից հետո ընդունվեց նրանից։ Բայց հեռանալով Հռոմից և գալով Ռավեննա, շան նման իր փսխածին դարձավ[260]։ Թեոդորոս պապը, տեղեկանալով այդ մասին, գերագույն առաքյալ Պետրոսի գերեզմանի մոտ եկեղեցական ժողով գումարեց։ Նա սուրբ բաժակը խնդրեց, թանաքի մեջ Քրիստոսի կենարար արյունից[261] կաթեցրեց և իր ձեռքով ստորագրեց Պյուրոսի և նրա համախոհների կարգալույծ լինելը։ Պյուրոսի Կոստանդնուպոլիս վերադառնալուց և Պավղոսի մահից հետո հանդուգն այլադավանները Պյուրոսին դարձյալ հաստատեցին Կոստանդնուպոլսի աթոռին։ Թեոդորոս պապի մահից հետո Հռոմի պապ է ձեռնադրվում սրբազնագույն Մարտինոսը[262]։ Մաքսիմոսն Աֆրիկայից Հռոմ ժամանելով, գրգռեց Մարտինոս պապի նախանձախնդրությունը. հարյուր հիսուն եպիսկոպոսների ժողով գումարվեց, որտեղ նզովեցին Սերգիոսին, Պյուրոսին, Կյուրոսին և Պավղոսին, հաստատեցին և հրապարակեցին Քրիստոսի մեր աստուծո երկու կամք և երկու ներգործություն ունենալու [ուսմունքը]՝ Հերակլիոսի թոռ Կոստաս կայսեր թագավորության 9-րդ և ինդիկտիոնի 8-րդ տարում։ [Կայսրը] տեղեկանալով այդ մասին, գազազեց, սուրբ Մարտինոսին և Մաքսիմոսին Կոստանդնուպոլիս բերել տվեց և խոշտանգելուց հետո խերսոն և նրա շրջաններն աքսորեց։ Նա պատժեց նաև արևմտական բազում եպիսկոպոսների։ Մարտինոսի աքսորվելուց հետո Հռոմի պապ է ձեռնադրվում Ագաթոնը[263], որն աստվածային նախանձախնդրությամբ դրդված, նա էլ սուրբ ժողով գումարեց, մերժեց միակամականների հերձվածը և հաստատեց [Քրիստոսի] երկու կամքի և երկու ներգործության մասին ուսմունքը։ Ահա երբ կայսրերի և ամբարիշտ հոգևորականների կողմից եկեղեցին այդպես ալեկոծվում էր, հանդես եկավ հռչակավոր անապատական Ամալիկը, խարազանելով մեզ՝ քրիստոնյաներիս. հռոմեական զորքն առաջին անգամ լինելով սարսափելի պարտություն կրեց, ես նկատի ունեմ Գաբիթայի և Յարմուկի[264] [դեպքերը] և Դաթեսմոնի արյունահեղությունը, որին հաջորդեց Պաղեստինի Կեսարիայի[265] և Երուսաղեմի

առումը, Եգիպտոսի կործանումը ապա [կայսրության] միջերկրյա շրջանների և կղզիների, ողջ Ռոմանիայի գերեվարումը, Փյունիկեում հռոմեական զորքի ու նավատորմիղի կատարյալ կործանումը, քրիստոնյա բոլոր ժողովուրդների և երկրների ամայացումը, մի բան, որ դադարեց միայն եկեղեցին հալածողի չարաչար սպանմամբ Սիկիլիայում[266]։

[A. M. 6122]

Աշխարհի արարչագործության 6122 թ.

Քրիստոսի մարդեղության 622 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 21-րդ տարին

Արաբների առաջնորդ Մոհամմեդի իշխանության 9-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 22-րդ տարին

Երուսաղեմի Զաքարիա պատրիարքի 22-ամյա աթոռակալության 22-րդ տարին

Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 12-րդ տարին

Այդ տարին վախճանվեց սարակինոսների առաջնորդ և սուտ մարգարե Մոհամմեդը, հաջորդ նշանակելով իր ազգական Աբու Բաքրին[267]։ Նույն տարին նրա համբավը տարածվեց։ Բոլորը սարսափի մեջ էին։ Մոլորյալ հրեաները նրա հանդես գալու սկզբում կարծում էին, որ հենց սա է, որ կա իրենց սպասած օծյալը, նրանց երևելիներից ոմանք անգամ մոտը գնացին և ընդունեցին նրա կրոնը՝ հրաժարվելով աստվածատես Մովսեսի կրոնից։ Այդ բանն անողները տասը հոգի էին և հետն եղան մինչև նրա սպանությունը։ Երբ տեսան, որ նա ուզտի միս է ուտում, համոզվեցին, որ իրենց կարծածը չէ և չգիտեին ինչպես վարվել. թշվառականները, վախենալով հրաժարվել նրա կրոնից, սովորեցնում էին մեր՝ քրիստոնյաներիս դեմ անօրինություններ գործել։ Բայց շարունակում էին մնալ նրա հետ։ Ես անհրաժեշտ եմ գտնում պատմել սրա ծագման մասին։ Նա սերում էր Աբրահամի որդի Իսմայիլի՝ շատ նշանավոր մի ցեղից։ Սրանց բոլորի հայրն է համարվում Իսմայիլից սերած Նիզարոսը[268], որն ունենում է երկու որդի՝ Մունզարոսին և Ռաբիային[269]։ Մունզարոսը ծնավ Կուրասոսին, Կայսոսին, Թեմիմեին, Ասադոսին[270] և այլ անհայտ դավակներ։ Սրանք բոլորը վրանաբնակ էին և ապրում էին Մադիանիտ անապատում[271], զբաղվելով անասնապահու-

թյամբ։ Ավելի խորքերում[272] ապրում են այլ՝ Իեկտանի ցեղին պատկանող [արաբներ], որոնք կոչվում են Ամանիտներ[273], այսինքն՝ Հոմերիտներ[274]։ Սրանցից ոմանք ուղտերով վաճառականությամբ էին զբաղվում։ Վերոհիշյալ Մոհամմեդը, լինելով աղքատ ու որբ, որոշում է իր ազգական Խադիգա[275] անունով մի կնոջ վարձով ծառայել որպես ուղտապան և Եգիպտոսում ու Պաղեստինում վաճառականություն անել։ Մի փոքր անց նա հանդգնեց սողոսկել այդ այրի կնոջ մոտ և նրան կնության առնել, տիրանալով նրա ուղտերին և ունեցվածքին։ Գալով Պաղեստին, նա շփման մեջ մտավ հրեաների և քրիստոնյաների հետ, ծանոթացավ նրանց սուրբ գրքերին։ Նա ընկնավորությամբ հիվանդացավ[276]։ Նրա կինը, իմանալով այդ մասին, շատ տխրեց, որ ինքը լինելով ազնվական, կապվեց մի մարդու հետ որը բավական չէ աղքատ էր, այլև ընկնավոր։ Մոհամմեդը փորձում է նրան հաճոյանալ, ասելով. «Ես տեսիլքի մեջ Գաբրիել կոչվող հրեշտակին եմ տեսնում և չկարողանալով նրա տեսքին դիմանալ, ուշաթափվում, ընկնում եմ»։ Կինը մի ծանոթ վանական ուներ[277], որն իր վատության պատճառով աքսորվել էր և այնտեղ էր ապրում։ Ահա սրան նա ամեն ինչ տեղեկացրեց, տվեց և հրեշտակի անունը։ Վանականն, ուզենալով նրան իրազեկ դարձնել, ասաց. «Նա ճշմարիտ է, հրավի բոլոր մարգարեներին հենց այդ հրեշտակն է ուղարկվում»։ Առաջինն այդ կինն եղավ ահա, ով ականջ կախեց և հավատաց սուտ աբբայի խոսքին, և ցեղակից այլ կանանց հայտնեց, որ Մոհամմեդը մարգարե է։ Համբավը կանանց շրջանից մուտք գործեց տղամարդկանց շրջանը, նախ և առաջ Աբու Բաքրին, որին և Մոհամմեդը իրեն հաջորդ նշանակեց։ Սրա հերձվածն ի վերջո զենքի ուժով տարածվեց Էթրիբոսի[278] շրջաններում։ Սկզբում հերձվածը տասը տարի ծավալվեց ընդհատակում, զենքի ուժով նույնպես տասը տարի, իսկ բացահայտ՝ ինն։ Մոհամմեդն իր հետևորդներին վարդապետեց, թե թշնամուն սպանողը կամ թշնամուց սպանվողը դրախտ է գնում[279]։ Իսկ դրախտը նրա ասելով ուտել-խմելու, կանանց հետ հարաբերվելու տեղ է, որ այնտեղ կանգինու, մեղրի և կաթի գետեր, իսկ կանայք այստեղի կանանց նման չեն, ուրիշ բան են, խառնակությունն ու հաճույքն էլ՝ երկարատև[280]։ Անվայել ու հիմար այլ բաներ էլ էր նա ասում, ինչպես և այն, թե պետք է միմյանց կարեկցել և օգնել անարդարության զոհերին։

Նույն տարին, ինդիկտիոնի չորրորդ տարին, նոյեմբեր ամսի յոթին, արևելքում Հերակլիոսին որդի ծնվեց՝ Դավիթը։ Նույն օրը ծնվեց նաև Հերակլիոսը, Մեծ Հերակլիոսի որդի Փոքր Հերակլիոսի (որ և Կոստանդին էր կոչվում), որդին։ Նա մկրտվեց Վլախեռնայում, ինդիկտիոնի

հինգերորդ տարին, նոյեմբեր ամսի երեքին, ձեռամբ Սերգիոս պատրիարքի։

[Ա. Մ. 6123]

Արաբների առաջնորդ Աբու Բաքր։ Իշխեց երեք տարի։ Երուսաղեմի Մոդեստոս պատրիարք[281]։ Աթոռակալեց երկու տարի։

[Աշխարհի արարչագործության] 6123 թ.

[Քրիստոսի մարդեղության] 623 թ.

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 22-րդ տարին

[Արաբների Աբու Բաքր առաջնորդի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 23-րդ տարին

[Երուսաղեմի Մոդեստոս պատրիարքի] 1-ին տարին

[Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի] 13-րդ տարին

Այդ տարին պարսիկները ապստամբեցին և պատերազմեցին միմյանց դեմ։ Այդ ժամանակները հնդիկների թագավորը Հերակլիոսին՝ պարսիկներին հաղթելու առթիվ շնորհավորանքներ ուղարկեց, մեծ քանակությամբ մարգարիտներ և թանկագին քարեր։ Մի փոքր առաջ վախճանվել էր Մոհամմեդը։ Նա չորս ամիրաներ էր նշանակել՝ պատերազմելու քրիստոնյա արաբների[282] դեմ։ Նրանք, մտադիր լինելով հարձակվել Մուխեոն գյուղում գտնվող [քրիստոնյա] արաբների վրա, վերջիններիս զոհամատուցման օրը, հասան ու կանգ առան այդ գյուղի դիմաց։ Գյուղում էր գտնվում Թեոդորոս վիկարիոսը[283], որն այդ մասին տեղեկացավ իր վարձկան ոմն կորասենից[284], անունը Կուտաբա[285]։ Հավաքելով անապատի բոլոր կայազորների զինվորներին և սարակինոսից իմանալով իրենց վրա հարձակվելու ճշգրիտ օրն ու ժամը, վիկարիոսը նախահարձակ է լինում Մոթուս կոչվող գյուղում և սպանում երեք ամիրաների և նրանց մեծաթիվ զինվորների։ Մի ամիրա միայն փրկվեց, խալեդը, որին կոչում էին «Սուրն աստուծո»[286]։ Այս շրջանի արաբներից ոմանք կայսրերի կողմից փոքր ռոճիկներ էին ստանում՝ պահպանելու համար անապատի անցումները։ Ահա հենց այս ժամանակ ինչ-որ ներքինի եկավ զինվորների ռոճիկները վճարելու։ Արաբներն էլ եկան սովորության համաձայն իրենց ռոճիկները ստանալու, բայց ներքինին վռնդեց նրանց, ասելով. «Տերը[287] հպիվ է կարողանում զինվորների ռոճիկը տալ, ո՞րտեղից տա այս շներին»։ Արաբները նեղացած գնացին իրենց ցեղակիցների մոտ և նրանց առաջնորդեցին անապատի անցումը

համարվող անչափ հարուստ Գազայի[288] շրջանը, Սինա լեռան սահմաններում։

[A. M. 6124]

Աշխարհի արարչագործության 6124 թ.

Քրիստոսի մարդեղության 624 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 23-րդ տարին

Արաբների առաջնորդ Աբու Բաքրի 3-ամյա իշխանության 2-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 24-րդ տարին

Երուսաղեմի Մոդեստոս պատրիարքի 2-ամյա աթոռակալության 2-րդ տարին

Ալեքսանդրիայի Գեորգ պատրիարքի 14-ամյա աթոռակալության 14-րդ տարին

Այդ տարին Աբու Բաքրը չորս զորավարներ ուղարկեց, որոնք, ինչպես վերևում ասացի, արաբների ուղեկցությամբ եկան և գրավեցին Հիրան[289] և Գազայի[290] ողջ շրջանը։ Պաղեստինի Կեսարիա քաղաքից փոքրաթիվ զինվորներով հազիվ տեղ հասած Սերգիոսը մարտի բռնվեց և առաջինն էլ սպանվեց իր երեք հարյուր զինվորներով հանդերձ։ Արաբները փայլուն հաղթանակ տարած, բազում գերիներով ու ավարով վերադարձան։

Նույն տարին Պաղեստինում երկրաշարժ եղավ, երկնքի հարավային մասում դոկիտես[291] կոչվող աստղն երևաց։ Նա արաբների տիրակալությունն էր կանխագուշակում։ Աստղը երևաց 30 օր, հարավից հասնելով Հյուսիս։ Նա սրաձև էր։

[A. M. 6125]

Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարք[292]։ Աթոռակալեց 3 տարի։ Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարք[293]։ Աթոռակալեց 10 տարի։

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 24-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբու Բաքրի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 25-րդ տարին

[Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարքի] 1-ին տարին

[Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարին վախճանվեց Աբու Բաքրը, ամիրայանալով երկու և կես տարի։ Իշխանությունն անցավ Օմարին[294], որն Արաբիա զորք ուղարկելով[295] գրավեց Բոստրա քաղաքը[296] և այլ քաղաքներ։ Նրանք հասան մինչև Գաբիթա[297]։ Սրանց դեմ դուրս եկավ Հերակլիոս կայսեր եղբայր Թեոդորոսը, որը պարտություն կրելով եկավ կայսեր մոտ Եդեսիա[298]։ Կայսրը զորավար նշանակեց մի ուրիշի՝ Վահանին, իսկ Թեոդորոս սակելլարիոսին հռոմեական զորքով արաբների դեմ ուղարկեց։ Հասնելով Եմեսա[299], նա բազում սարակինոսների հանդիպեց, նրանց ջարդ տվեց՝ իրենց ամիրայով հանդերձ[300], իսկ կենդանի մնացածներին հալածական արեց մինչև Դամասկոս։ Այնտեղից նա գնաց բանակեց Բարդանեսիոն գետի ափին։ Իսկ Հերակլիոսը հուսահատ, թողնելով Ասորիքը, Երուսաղեմից առավ պատվական խաչափայտը և գնաց Կոստանդնուպոլիս, Վահանին և Թեոդորոս սակելլարիոսին հրամայելով Դամասկոսից շրջվել դեպի Եմեսա։ Նրանք 40 հազար զորք ունեին և հալածեցին արաբներին Եմեսայից մինչև Դամասկոս։

[A. M. 6126]

Աշխարհի արարչագործության 6126 թ.

Քրիստոսի մարդեղության 626 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 25-րդ տարին

Արաբների առաջնորդ Օմարի 12-ամյա իշխանության 1-ին տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 26-րդ տարին

Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարքի 3-ամյա աթոռակալության 2-րդ տարին

Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 2-րդ տարին

Այդ տարին արաբները անհամար զորքով Արաբիայի վրա[301] արշավեցին, Դամասկոսի շրջանները։ Վահանը, իմանալով այդ մասին, դիմեց կայսերական սակելլարիոսին, որպեսզի նա իր զորքով շտապի իրեն օգնության, քանզի արաբները մեծաթիվ էին։ Սակելլարիոսը եկավ Վահանի մոտ։ Եմեսայից դուրս գալով, նրանք հանդիպում են արաբներին և հենց առաջին օրը, որը երեքշաբթի էր, Լոռս ամսի[302] քսաներեքին, մարտի բռնվում։ Սակելլարիոսի զորքը պարտություն է կրում։ Վահանի զորքերն ապստամբություն բարձրացնելով, Վահանին կայսր են

հռչակում, իսկ Հերակլիոսին՝ գահընկեց հայտարարում։ Դրա վրա սակելլարիոսի զինվորները թողեցին հեռացան, իսկ սարակինոսները հարմար առիթ գտնելով, մարտ են տալիս։ Հռոմայեցիների դեմ հարավային քամի փչեց, նրա բարձրացրած փոշին թույլ չտվեց իրենց թշնամիներին դիմադրել և ահա դրա պատճառով նրանք պարտվեցին, փախուստի դիմեցին դեպի Յարմուկ[303] գետի կիրճերը, ուր և գլխովին ոչնչացան։ Երկու զորավարների գլխավորած զորքը 40 հազար հոգի էին։ Այստեղ սարակինոսները փայլուն հաղթանակ տանելով, շարժվեցին Դամասկոսի վրա և գրավելով այն, ինչպես և Փյունիկեի շրջանները, այնտեղ էլ հաստատվեցին։ Ապա Եգիպտոսի վրա արշավեցին։ Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքը լսելով այդ մասին, մտահոգության մեջ ընկավ։ Վախենալով նրանց ագահությունից, նա պայմանագիր կնքեց, խոստացավ, որ Եգիպտոսը նրանց տարեկան 12 բյուր դինար կվճարի, ըստ կնքված պայմանավորվածության ոսկի կվճարի։ Վճարելով երեք տարվա համար, նա Եգիպտոսը ավերածություններից փրկեց։ Կյուրոսը կայսեր առաջ ամբաստանվեց՝ Եգիպտոսի ոսկին սարակինոսներին տալու համար։ Կայսրը, զայրացած, նրան կանչեց, իսկ ավգուստալիոս նշանակեց հայազգի ոմն Մանվելի։ Երբ ժամանակը լրացավ, սարակինոսների գործակալներն եկան ոսկին ստանալու, բայց Մանվելը նրանց ձեռնունայն դուրս հանեց, ասելով. «Ես անգեն Կյուրոսը չեմ, որ ձեզ հարկ վճարեմ։ Ես զինված եմ»։ Հենց որ սրանք հեռացան, սարակինոսները Եգիպտոսի վրա հարձակվեցին, Մանվելին մարտ տվեցին և փախուստի մատնեցին։ Նա մի քանի հոգով փրկվեց Ալեքսանդրիայում։ Ահա այն ժամանակ սարակինոսները Եգիպտոսը հարկատու դարձրին։ Հերակլիոսը կատարվածին իրազեկ դառնալով, [արաբների] մոտ Կյուրոսին ուղարկեց՝ նրանց համոզելու Եգիպտոսից հեռանալ, խոստանալով հարգել նախկին համաձայնությունը։ Կյուրոսը գնալով սարակինոսների ճամբարը, արդարացավ նրանց, թե համաձայնության խախտման հարցում ինքը մեղք չունի և եթե ուզում են, ինքը նախկին համաձայնությունը երդումներով կհաստատի։ Սարակինոսները, սակայն, տեղի չտվեցին և պատրիարքին ասացին. «Կարո՞ղ ես այս հսկայական սյունը կուլ տալ»։ Նա պատասխանեց. «Հնարավոր չէ»։ Նրանք ասացին. «Մեզ համար էլ այլևս հնարավոր չէ Եգիպտոսից հեռանալ»[304]։

[A. M. 6127]

Աշխարհի արարչագործության 6127 թ.	Քրիստոսի մարդեղության 627 թ.
Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 26-րդ տարին	Արաբների առաջնորդ Օմարի 12-ամյա իշխանության 2-րդ տարին

Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի 29-ամյա աթոռակալության 27-րդ տարին	Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարքի 3-ամյա աթոռակալության 3-րդ տարին	Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Այդ տարին Օմարը[305] Պաղեստինի վրա արշավեց և երկու տարի պաշարման մեջ առնելով սուրբ քաղաքը, պայմանով տիրացավ նրան. Երուսաղեմի Սոփրոնիոս պատրիարքը համայն Պաղեստինի անձեռնմխելիության մասին հաստատագույն երաշխիքներ ստացավ[306]։ Օմարը սուրբ քաղաք մտավ ուղտի բրդից պատրաստված կեղտոտ հագուստներով և սաղայելական կեղծավորությամբ ցանկացավ տեսնել Սողոմոնի կառուցած հրեից տաճարը, մտադիր լինելով այն իր խայտառակ կրոնի աղոթատեղին դարձնել։ Սոփրոնիոսը նրան ականատես լինելով, ասաց. «Ճշմարիտ սա է Դանիել մարգարեի ասած «պղծությունն աւերածին», որ սուրբ տեղում է կանգնած»[307]։ Բարեպաշտության պաշտպանն արտասվալից ողբաց քրիստոնյաներին։ Երբ [Օմարը] տեղ հասավ, պատրիարքն առաջարկեց նրան սավան ու հանդերձներ, բայց նա մերժեց հագնել դրանք։ Պատրիարքը հազիվ կարողացավ նրան համոզել հագնել, մինչև որ լվացին նրա [կեղտոտ] հանդերձները, որից հետո Օմարը ստացածը Սոփրոնիոսին վերադարձրեց և հագավ սեփական հանդերձները։ Այդ ընթացքում վախճանվեց Սոփրոնիոսը, խոսքով ու գործով Երուսաղեմացվոց եկեղեցին անչափ զարդարողը, Հերակլիոսի և նրա համախոհ միակամայականներ Սերգիոսի և Պյուրոսի շարափառության դեմ պայքարողը։

Նույն տարին Օմարը Ասորիք ուղարկեց Իազին[308], որը համայն Ասորիքը սարակինոսներին ենթարկեց։

[A. M. 6128]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 27-րդ տարին	[Արաբների առաջնորդ Օմարի] 3-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 28-րդ տարին	[Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարին Օսրոենի կառավարիչ[309] Հովհաննեսը, մականունը Կատեաս, եկավ Խալկիս[310], Իադի մոտ և նրա հետ պայման կնքեց՝ վճարել տարեկան տասը բյուր դահեկան և այնքան ժամանակ, ինչ այդ գումարը վճարվում է նրան, ոչ խաղաղաբար, ոչ պատերազմով նա իրավունք չունենա անցնել Եփրատ գետը։ Այդ պայմանը կնքելով Հովհաննեսը վերադարձավ Եդեսիա և հավաքելով տարեկան հարկը, առաքեց Իադին։ Հերակլիոսը, լսելով այդ մասին, Հովհաննեսին համարեց մեղավոր, քանզի առանց կայսեր գիտության նա դիմեց նման քայլի։ Պաշտոնանկ անելով նրան, դատապարտեց աքսորի, իսկ նրա պաշտոնը տվեց ոմն Պտոլեմեոս ստրատելատի։

[A. M. 6129]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 28-րդ տարին

[Արաբների առաջնորդ Օմարի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Սերգիոս պատրիարքի] 29-րդ տարին

[Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին արաբները գրավեցին Անտիոքը։ Օմարը սարակինոսներին ենթակա բովանդակ երկրի՝ Եգիպտոսից մինչև Եփրատ, զորավար և ամիրա նշանակեց Մուավիային[311]։

[A. M. 6130]

Աշխարհի արարչագործության 6130 թ.

Քրիստոսի մարդեղության 630 թ.

Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր 31-ամյա թագավորության 29-րդ տարին

Արաբների առաջնորդ Օմարի 12-ամյա իշխանության 5-րդ տարին

Կոստանդնուպոլսի Պյուրոս պատրիարքի 3-ամյա աթոռակալության 1-ին տարին

Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 6-րդ տարին

Այդ տարին Իադը բովանդակ զորքն անցկացրեց Եփրատի վրայով և հասավ Եդեսիա։ Եդեսացիք բացեցին քաղաքի դարբասները, նախօրոք իրենց երկրի ապահովության, ստրատելատի և նրա հռոմայեցի զինվորների կյանքի անվտանգության մասին երաշխիքներ ստանալով։ Սարակինոսներն այնուհետև շարժվեցին Կոստանդիայի[312] վրա և պաշարելով այն, գրոհով առան, սպանելով երեք հարյուր հռոմայեցիների։ Այն-

տեղից գնացին Դարա և այն էլ գրոհով առան, շատերին կոտորեցին։ Ահա այդպես Իադը նվաճեց համայն Միջագետքը։

[A. M. 6131]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 30-րդ տարին

[Արաբների առաջնորդ Օմարի] 6-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պյուրոս պատրիարքի] 2-րդ տարին

[Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարին սարակինոսները Պարսկաստանի վրա արշավեցին և պատերազմելով պարսիկների դեմ, նրանց գլխովին պարտության մատնեցին և բոլորին հպատակեցրին։ Պարսից արքա Որմիզդը արքունիքը լքելով, փախուստի դիմեց խորին Պարսկաստան։ Սարակինոսները գերի վերցրին Որմիզդի դուստրերին՝ թագավորական ողջ կայքով հանդերձ և Օմարի մոտ բերեցին։

Այդ տարին Օմարը հրամայեց իրեն ենթակա համայն երկրում մարդահամար և հաշվառում անցկացնել։ Մարդկանց, անասունների և տունկերի հաշվառում անցկացվեց։

[A. M. 6132]

[Հռոմայեցիների Հերակլիոս կայսեր] 31-րդ տարին

[Արաբների առաջնորդ Օմարի] 7-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պյուրոս պատրիարքի] 3-րդ տարին

[Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարվա մարտ ամսին, ինդիկտիոնի տասնչորսերորդ տարին ջրգողությունից վախճանվեց Հերակլիոս կայսրը[313], թագավորելով երեսուն տարի և տասը ամիս[314]։ Նրանից հետո չորս ամիս թագավորած նրա որդի Կոստանդնին թունավորեցին իր խորթ մայր Մարտինեն և պատրիարք Պյուրոսը։ Թագավորում է Մարտինեի որդի Հերակլեոնասը իր մոր Մարտինեի հետ։

[A. M. 6133]

Հռոմայեցիների կայսր Հերակլեոնաս։ Թագավորեց 6 ամիս։
Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարք[315]։ Աթոռակալեց 12 տարի։

[Հռոմայեցիների Հերակլեոնաս կայսեր] 1-ին տարին	[Արաբների առաջնորդ Օմարի] 8-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 1-ին տարին	[Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարին Մուավիան յոթամյա պաշարումից հետո գրավեց Պաղեստինի Կեսարիան, որտեղ կոտորեց յոթ հազար հռոմայեցի։

Այդ տարին սենատը Հերակլեոնասին, նրա մայր Մարտինեին և Վալենտինոսին տապալեց[316]։ Մարտինեի լեզուն կտրեցին, Հերակլեոնասի՝ քիթը և աքսորելով նրանց, գահ բարձրացրին Կոստասին[317]՝ Կոստանդնի որդուն՝ Հերակլիոսի թոռան։ Նա թագավորեց քսանյոթ տարի։ Պյուրոսին կարգալույծ անելուց հետո, հոկտեմբեր ամսին, ինդիկտիոնի տասնհինգերորդ տարին Կոստանդնուպոլսի պատրիարք ձեռնադրվեց երեց և եկեղեցու տնտես Պավղոսը։ Նա տասներկու տարի աթոռակալեց[318]։

[A. M. 6134]

Աշխարհի արարչագործության 6134 թ.	Քրիստոսի մարդեղության 634 թ.	Հռոմայեցիների Կոստաս կայսեր 27-ամյա թագավորության 1-ին տարին
Արաբների առաջնորդ Օմարի 12-ամյա իշխանության 9-րդ տարին	Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի 12-ամյա աթոռակալության 2-րդ տարին	Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 10-րդ տարին

Այդ տարին Կոստասը գահ բարձրանալով, դիմեց սենատին ու ասաց. «Իմ հայր Կոստանդինը իր հոր և իմ պապ Հերակլիոսի օրոք վերջինիս հետ երկար թագավորեց, բայց նրա մահից հետո հույժ քիչ, քանզի իր խորթ մոր՝ Մարտինեի նախանձը բեկեց [ժողովրդի] նրա՝ Կոստանդնի հետ կապած լավագույն հույսերը, նախանձը նրան կյանքից զրկեց։ Մարտինեն այդ քայլին դիմեց Հերակլիոսից ունեցած իր ապօրինի որդու՝ Հերակլեոնասի սիրույն։ Բայց դուք ձեր աստվածահաճո որոշմամբ Մարտինեին և նրա որդուն արդար կերպով թագավորությունից հեռացրիք, որպեսզի հռոմայեցիների գահին չբազմի ամենաանօրենը։ Ձեր արտակարգ լրջախոհությամբ դուք շատ լավ գիտակցեցիք այդ։ Արդ, ես ձեզ

եմ դիմում՝ եղե՛ք բոլոր հպատակների փրկության համար իմ խորհրդականներն ու գործակիցները»։ Այդպես ասելով, նա փակեց սենատի նիստը, սենատորներին առատ նվերներ բաշխելով։

[A. M. 6135]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 3-րդ տարին

[Արաբների առաջնորդ Օմարի] 10-րդ տարին

[Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքի] 11-րդ տարին

Այդ տարին Օմարն սկսեց Երուսաղեմի տաճարի կառուցումը, բայց շենքը կանգուն չէր մնում, այլ անընդհատ փուլ էր գալիս։ Նա ուզեց պատճառն իմանալ և հրեաներն ասացին. «Քանի Զիթենյաց լեռան տաճարի վրա եղող խաչը ցած չեք առել, շենքը կանգուն չի մնա»։ Դրա վրա այնտեղից ցած առան խաչը, որով նրանց շենքը կանգուն մնաց։ Այդ առթիվ քրիստոսատյացները այլ բազում խաչեր էլ ցած առան։

[A. M. 6136]

Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարք[319]։ Աթոռակալեց 10 տարի։

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 4-րդ տարին

[Արաբների առաջնորդ Օմարի] 11-րդ տարին

[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարին Կոստասի դեմ ապստամբություն բարձրացրեց Վալենտինիանոս պատրիկը[320]։ Կայսրը [զորք] ուղարկեց, նրան սպանեց, իսկ նրա զինվորներին սիրաշահեց։ Դիոս ամսի հինգին, շաբաթվա վեցերորդ օրը, ժամը իններին արևի խավարում եղավ։

[A. M. 6137]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 5-րդ տարին

[Արաբների առաջնորդ Օմարի] 12-րդ տարին

[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարվա Դիոս ամսին[321], շաբաթվա հինգերորդ օրը, հավատուրաց մի պարսիկ սպանեց սարակինոսների առաջնորդ Օմարին. վերջինիս երկրպագելու պահին դաշույնը նրա փորը խրեց և այդպիսով կյանքից զրկեց։ Օմարն ամիրայացավ 12 տարի։ Նրան հաջորդեց իր ազգական Օթմանը, Ֆանի որդին[322]։

[A. M. 6138]

Արաբների առաջնորդ Օթման։ Իշխեց 10 տարի։

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 5-րդ տարին	[Արաբների առաջնորդ Օթմանի] 1-ին տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 6-րդ տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարին Աֆրիկայի պատրիկ Գրիգորիոսը աֆրիկացիների[323] հետ ապստամբություն բարձրացրեց։

[A. M. 6139]

Աշխարհի արարչագործության 6139 թ.	Քրիստոսի մարդեղության 639 թ.	Հռոմայեցիների Կոստաս կայսեր 27-ամյա թագավորության 6-րդ տարին
Արաբների առաջնորդ Օթմանի 10-ամյա իշխանության 2-րդ տարին	Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի 12-ամյա աթոռակալության 7-րդ տարին	Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 4-րդ տարին

Այդ տարին երկրի վրա սաստիկ քամի փչեց, որը բազում տունկեր, հսկայական ծառեր արմատախիլ արեց, գետին տապալեց սյունակյացների բազում սյուներ։ Այդ նույն տարին սարակինոսները Աֆրիկայի վրա արշավեցին և հարձակվելով ապստամբ Գրիգորիոսի վրա, փախուստի մատնեցին, նրա կողմնակիցներին կոտորեցին, իսկ Գրիգորիոսին Աֆրիկայից դուրս քշեցին։ Ապա աֆրիկացիների վրա հարկեր նշանակելով, վերադարձան։

[A. M. 6140]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 7-րդ տարին	[Արաբների առաջնորդ Օթմանի] 3-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 8-րդ տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին Մուավիան ծովով արշավեց Կիպրոսի վրա[324]։ Նա հազար յոթ հարյուր նավ ուներ։ Գրավելով Կոստանդիան[325], ողջ կղզով հանդերձ, ավարառեց այն։ Լսելով, որ Կակորիզոս կուբիկուլարիոսը[326] հռոմեական մեծաթիվ զորքով իր վրա է գալիս, նա նավարկեց Արադոսի դիմաց, ուր խարիսխ գցելով, փորձեց գրավել կղզու Կաստելլոն ավանը՝ բոլոր միջոցները[327] գործի դնելով։ Բայց արդյունքի չհասնելով, նրանց մոտ է ուղարկում ոմն Թոմարիքոս եպիսկոպոսի ահաբեկելու նրանց՝ դադարեցնել դիմադրությունը, թողնել քաղաքն ու հեռանալ կղզուց։ Բայց հենց որ եպիսկոպոսը նրանց մոտ եղավ, նրան պահեցին, Մուավիայի պահանջներին չընդառաջեցին, որը տեսնելով, որ Արադոսի պաշարումից ոչինչ չի ստացվում, վերադարձավ Դամասկոս, քանզի ձմեռը վրա էր հասել։

[A. M. 6141]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 8-րդ տարին	[Արաբների առաջնորդ Օթմանի] 4-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 9-րդ տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարին Մուավիան մեծ պատրաստություն տեսած, արշավեց ընդդեմ Արադոսի[328] և այն որոշ պայմաններով առավ։ Նրա բնակիչներին նա իրավունք տվեց բնակվել ուր որ ցանկանան, իսկ քաղաքը կրակի տվեց, նրա պարիսպները հիմնահատակ կործանեց, կղզին անապատ դարձրեց և այդ վիճակում է այն մինչև այսօր։

Նույն տարին Մարտինոս պապը Հռոմում միակամականների դեմ ժողով գումարեց[329]։

[A. M. 6142]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 9-րդ տարին	[Արաբների առաջնորդ Օթմանի] 5-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 10-րդ տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարին զորահրամանատար Բուսուրը[330] արաբներով արշավեց ընդդեմ Իսավրիայի[331], կոտորեց, շատերին գերեվարեց և հինգ հազար գերիներով վերադարձավ։ Կոստաս կայսրը ոմն Պրոկոպիոսի հաշտություն կնքելու համար Մուավիայի մոտ ուղարկեց։ Երկու տարի ժամանակով հաշտություն կնքվեց, որի համար Մուավիան Դամասկոսում պատանդ պահեց Թեոդորոսի որդի Գրիգորիոսին։

[A. M. 6143]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 10-րդ տարին	[Արաբների առաջնորդ Օթմանի] 6-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 11-րդ տարին	[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարին կայսեր դեմ ապստամբություն բարձրացրեց հայոց պատրիկ Պասագնաթեսը[332], նա Մուավիայի հետ դաշինք կնքեց և իր հարազատ որդուն պատանդ տվեց։ Կայսրը, տեղեկանալով այդ մասին, եկավ մինչև Կապադովկիայի Կեսարիան, բայց Հայաստանից հույսը կտրած, վերադարձավ։

[A. M. 6144]

Աշխարհի արարչագործության 6144 թ.	Քրիստոսի մարդեղության 644 թ.	Հռոմայեցիների Կոստաս կայսեր 27-ամյա թագավորության 11-րդ տարին
Արաբների առաջնորդ Օթմանի 10-ամյա իշխանության 7-րդ տարին	Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի 12-ամյա աթոռակալության 12-րդ տարին	Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի 10-ամյա աթոռակալության 9-րդ տարին

Այդ տարին Հելիոպոլսում[333] մեռավ Հերակլիոսի զարմիկ Գրիգորիոսը, որի զմրսված մարմինը բերվեց Կոստանդնուպոլիս։ Նույն տարին երկնքից փոշի թափվեց և մարդկանց մեծ սարսափ պատեց։

[A. M. 6145]

Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարք[334]։ Աթոռակալեց 12 տարի։

Վախճանվեց Պավղոսը, իսկ Պյուրոսը կրկին անգամ աթոռակալեց 4 ամիս և 23 օր։

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 12-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 1-ին տարին

[Արաբների առաջնորդ Օթմանի] 8-րդ տարին

[Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի] 10-րդ տարին

Այդ տարին Մուավիան գրավելով Հռոդոսը, գետին տապալեց Հռոդոսի կոլոսոսը[335] կանգնեցումից 1360 տարի անց։ Սյունը գնեց մի եդեսացի հրեա վաճառական և նրա պղինձը ինն հարյուր ուղտերի վրա բարձած տարավ։ Նույն տարին արաբների զորավար Հաբիբը[336] արշավեց Հայաստանի վրա։ Հանդիպելով հռոմայեցիների զորավար Մավրիանոսին, նրան հալածական արեց մինչև Կովկասյան լեռները, իսկ երկիրն ավարառեց։

[A. M. 6146]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 13-րդ տարին

[Արաբների առաջնորդ Օթմանի] 9-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարին Մուավիան հրամայեց մեծ տորմիղ հանդերձել, քանզի որոշել էր Կոստանդնուպոլսի վրա նավարկել։ Նախապատրաստական ողջ աշխատանքը Փյունիկեի Տրիպոլիս քաղաքում էր կատարվում։ Տրիպոլսում ապրող քրիստոսասեր երկու եղբայրներ, Բուկինատորի որդիները, տեսնելով դա, աստվածային նախանձախնդրությամբ դրդված, խուժեցին քաղաքի բանտի վրա, որտեղ արգելափակված էին բազում հռոմայեցիներ, և ջարդելով դարբասները, ազատեցին բանտարկյալներին, ապա հարձակվելով քաղաքի ամիրայի վրա, սպանեցին նրան ու նրա մարդկանց, և ողջ հանդերձանքը կրակի տալով, նավ նստան և Ռոմանիա[337] նավարկեցին։ Այդ դեպքը, սակայն, չկանգնեցրեց նրանց նա-

խապատրաստությունները։ Մուավիան անձամբ արշավեց Կապադովկիայի Կեսարիայի վրա, իսկ Աբուլաթարին նշանակեց տորմիղի կառուցման պետ։ Նա, հասնելով Լյուկիայի Փյունիքս վայրը, որտեղ գտնվում էր Կոստաս կայսրը հռոմեական նավատորմիղով, ծովամարտի է բռնվում։ Նավամարտից առաջ կայսրը երազ է տեսնում, թե ինքը Թեսաղոնիկեում է գտնվում։ Զարթնելով, նա իր երազը մի երազահանի պատմեց, որն ասաց. «Ո՜վ կայսր, երանի չքնեիր և չտեսնեիր այդ երազը, քանզի քո Թեսաղոնիկեում լինելը նշանակում է «Ուրիշին ընձեռիր հաղթանակը», ասել է հաղթանակը քո թշնամու ձեռքն է անցնում»[338]։ Կայսրը նավամարտի և ոչ մի պատրաստություն չտեսած, հռոմեական տորմիղը պատերազմի առաջնորդեց։ Մարտում հռոմայեցիները պարտվեցին, ծովի ջրին միախառնվեց հռոմայեցիների արյունը։ Կայսրը իր հանդերձներն ուրիշին հագցրեց։ Վերոհիշյալ Բուկինատորի որդին, ցատկելով կայսերական նավի մեջ և կայսեր փախցնելով, տեղափոխեց մի այլ նավ և հեղակարծորեն փրկեց նրան։ Այդ ամենաարին կայսեր նավի վրա քաջաբար մարտնչելով, շատերին ջարդ տվեց և իր կյանքը ղոհաբերեց կայսեր սիրույն։ Թշնամիները շրջապատել էին նրան, ենթադրելով, որ հենց նա է կայսրը։ Շատերին խողխողելուց հետո, թշնամիները նրան ևս սպանում են՝ կայսերական հանդերձները կրողի հետ միասին։ Կայսրն ահա փախուստի դիմելով, փրկվեց. բոլորին լքելով, նա նավեց Կոստանդնուպոլիս։

[A. M. 6147]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 14-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Օթմանի] 10-րդ տարին* | *[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 3-րդ տարին*

Այդ տարին էթրիբ-ցիք[339] սպանեցին արաբների առաջնորդ Օթմանին։ Նա ամիրայացավ տասը տարի։ Այդ առթիվ արաբների մեջ հուզումներ առաջացան. անապատում ապրողները Ալիին՝ Ալիի[340] եղբորորդուն էին ուզում, որ Մոհամմեդի փեսան էր, իսկ Ասորիքում և Եգիպտոսում ապրողները՝ Մուավիային։ Հաղթեց Մուավիան և իշխեց քսանչորս տարի։

[A. M. 6148]

Արաբների առաջնորդ Մուավիա։ Իշխեց 24 տարի։

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 15-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Մուավիայի] 1-ին տարին* | *[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 4-րդ տարին*

Այդ տարին Մուավիան Ալիի դեմ արշավեց։ Նրանք երկուսն էլ հավաքվեցին Բարբալիսոսի[341] միջև, Եփրատի մոտ գտնվող Կեսարիոնում[342]։ Մուավիայի կողմնակիցներն ավելի հզոր լինելով, տիրացան ջրին, իսկ Ալիի կողմնակիցները ծարավից տառապելով, սկսեցին դասալիք լինել։ Մուավիան, որ չէր ուզում պատերազմել, հաղթանակ տարավ առանց ջանք գործադրելու։

[A. M. 6149]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 16-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մուավիայի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարին կայսրն արշավեց Սկլավինիայի[343] դեմ, շատերին գերեվարեց և հպատակեցրեց։ Նույն տարին տեղի ունեցան և սուրբ Մաքսիմոսի[344] ու նրա աշակերտների հետ կապված դեպքերը։ Նրանք մարտնչում էին հանուն ուղղափառության՝ ընդդեմ միակամականների։ Կոստասը, չկարողանալով նրանց թեքել դեպի իր շարափառությունը, սրբի աջը և աստվածային իմաստությամբ լի և բաղմագետ լեզուն կըտրեց, քանզի նա, Մաքսիմոսը, Անաստասիոս անունը կրող իր երկու աշակերտներով նրա ամբարշտության դեմ շատ բան էին գրել։ Այդ բանը նրանք շափածո էին գրել, ուսումնասեր մարդիկ այդ մասին գիտեն։

[A. M. 6150]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 17-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մուավիայի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի Մուավիայի առաջարկությամբ Հռոմայեցիների և արաբների միջև հաշտություն կնքվեց։ Պատճառը արաբների մեջ բռնկված ապստամբությունն էր։ Հաշտության պայմանագրի համաձայն արաբները հռոմայեցիներին վճարելու էին օրական հազար դահեկան, մեկ ձի և մեկ ստրուկ[345]։ Այդ նույն տարվա Դեսիոս ամսին[346], ինդիկտիոնի երկրորդ տարին, ուժեղ երկրաշարժ էլ եղավ և ավերածություններ Պաղեստինում և Ասորիքում։

Նույն տարին Հռոմի սրբազնագույն Մարտինոս պապը, որն արիաբար մարտնչել էր հանուն ուղղափառության և խոստովանող դարձել, աքսորվեց և վախճանվեց արևելքի շրջաններում։

[A. M. 6151]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 18-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Մուավիայի] 4-րդ տարին* | *[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 7-րդ տարին*

Այդ տարին Կոստասը սպանեց իր հարազատ եղբայր Թեոդոսիոսին։ Երբ արաբները Սապֆիում[347] էին գտնվում, սպանվեց Պարսկաստանի [ամիրա] Ալին։ Այդպիսով Մուավիան դարձավ միահեծան թագավոր, հաստատվեց Դամասկոսում, որտեղ և կենտրոնացրեց դրամական գանձերը։

[A. M. 6152]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 19-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Մուավիայի] 5-րդ տարին* | *[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 8-րդ տարին*

Այդ տարի արաբական մի հերձված երևան եկավ՝ խարուրգիտ[348] կոչվողների։ Մուավիան հաղթահարեց նրանց, Պարսկաստանի [խարուրգիտներին] ստորացրեց, իսկ Ասորիքի՝ բարձրացրեց։ Առաջիններին նա կոչեց իսամիտներ, մյուսներին՝ հերակիտներ։ Իսամիտների ռոճիկը բարձրացրեց մինչև երկու հարյուր դահեկան, իսկ հերակիտների ռոճիկն իջեցրեց մինչև երեսուն դահեկան։

[A. M. 6153]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 20-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Մուավիայի] 6-րդ տարին* | *[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 9-րդ տարին*

Այդ տարի կայսրը լքելով Կոստանդնուպոլիսը, գնաց Սիկիլիայի Սիրակուսա քաղաքը, մտադիր լինելով արքունիքը Հռոմ տեղափոխել։ Նա [Կոստանդնուպոլիս] մարդ ուղարկեց իր կնոջ և երեք որդիներին՝ Կոստանդնին, Հերակլիոսին և Տիբերիոսին բերելու, բայց բյուղանդացիք չթողեցին նրանց։

[A. M. 6154]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 21-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Մուավիայի] 7-րդ տարին* | *[Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 10-րդ տարին*

Այդ տարի արաբները Ռոմանիայի վրա արշավեցին, շատերին գերեվարեցին և բազում վայրեր ամայացրին։

[A. M. 6155]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 22-րդ տարին | [Արաբների առաջնորդ Մուավիայի] 8-րդ տարին | [Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 11-րդ տարին

Այդ տարի Սիկիլիայի բնակչության մի մասը գերեվարվեց և իր ցանկությամբ Դամասկոս հաստատվեց։

[A. M. 6156]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 23-րդ տարին | [Արաբների առաջնորդ Մուավիայի] 9-րդ տարին | [Կոստանդնուպոլսի Պետրոս պատրիարքի] 12-րդ տարին

Այդ տարի պահոց շփոթում եղավ։ Խալեդի որդի Աբդեռահմանը արշավեց Ռոմանիայի վրա, այնտեղ էլ ձմեռեց։ Նա բազում շրջաններ ավարառեց։ Իսկ սկլավենները[349] սրա կողմն անցնելով, նրա հետ՝ հինգ հազար հոգի, իջան Ասորիք և հաստատվեցին Ապամիայի շրջանի Սելևկորոլոս[350] գյուղում։

[A. M. 6157]

Կոստանդնուպոլսի Թովմաս պատրիարք[351]։ Աթոռակալեց երեք տարի։

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 24-րդ տարին | [Արաբների առաջնորդ Մուավիայի] 10-րդ տարին | [Կոստանդնուպոլսի Թովմաս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Ռոմանիայի վրա արշավեց Բուսուրը, վախճանվեց Ապամիայի եպիսկոպոս Թոմարիքոսը, հրա ճարակ դարձավ Եմեսայի եպիսկոպոսը։

[A. M. 6158]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 25-րդ տարին | [Արաբների առաջնորդ Մուավիայի] 11-րդ տարին | [Կոստանդնուպոլսի Թովմաս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարին Բուսուրը դարձյալ Ռոմանիայի վրա արշավեց, ավարառեց Հեքսապոլսի[352] շրջանները, իսկ Ֆադալասն[353] այնտեղ ձմեռեց։

[A. M. 6159]

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 26-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մուավիայի] 12-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Թովմաս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի Արմենիակների զորավար Շապուհ Պարսկածինը[354] Կոստաս կայսեր դեմ ապստամբություն բարձրացրեց, նա Մուավիայի մոտ Սերգիոս ստրատելատին[355] ուղարկեց, խոստանալով Ռոմանիան ենթարկել Մուավիային, եթե վերջինս դաշնակցի իրեն՝ ընդդեմ կայսեր։ Կայսեր որդի Կոստանդինը, իմանալով այդ մասին, Մուավիայի մոտ նվերներով Անդրեաս կուբիկուլարիոսին ուղարկեց, որպեսզի նրան համոզի չանցնել ապստամբի կողմը։ Անդրեասը, գալով Դամասկոս, տեսավ, որ Սերգիոսը իրենից առաջ է տեղ հասել։ Մուավիան ձևացնում էր, թե իր համակրանքը կայսեր կողմն է։ Սերգիոսը Մուավիայի մոտ էր նստած։ Երբ ներս մտավ Անդրեասը, Սերգիոսը տեղից վեր կացավ։ Մուավիան պարսավեց Սերգիոսին, ասելով. «Ինչո՞ւ վախեցար»։ Սերգիոսը պատճառաբանեց, թե սովորությունից դրդված այդպես արեց։ Մուավիան, դիմելով Անդրեասին, հարցրեց. «Ի՞նչ ես ուզում»։ Նա պատասխանեց. «Ուզում եմ, որ դու օգնություն տաս ընդդեմ ապստամբի»։ Նա ասաց. «Ինձ համար երկուսդ էլ թշնամի եք, շատ տվողին էլ կօգնեմ»։ Անդրեասն ասաց. «Վստահ եղի՛ր, ո՛վ ամիրա, որ քեզ համար ավելի լավ է քիչ ստանալ, բայց կայսրից, քան թե շատ՝ ապստամբից։ Բայց ինչպես որ ճիշտ ես գտնում, այդպես էլ վարվիր»։ Անդրեասն այդ ասելուց հետո լռեց։ Մուավիան ասաց. «Այդ մասին կմտածեմ»։ Նա հրամայեց երկուսին էլ դուրս գան։ Մուավիան, Սերգիոսին առանձին կանչելով, ասաց. «Այլևս չխոնարհվես Անդրեասի առաջ, քանզի վախենալու պատճառ չունես»։ Հաջորդ օրը Սերգիոսը Անդրեասից առաջ գնաց և նստեց Մուավիայի մոտ։ Երբ Անդրեասը ներս մտավ, նա նախորդ օրվա նման չկանգնեց։ Անդրեասը վերից վար խոժոռ նայելով Սերգիոսին, հայհոյեց նրան ու սպառնաց. «Քանի ողջ եմ ես, քեզ ցույց կտամ իմ ով լինելը»։ Սերգիոսն ասաց. «Ես քո առաջ ոտքի չեմ կանգնի, քանզի դու ոչ տղամարդ ես, ոչ էլ կին[356]»։ Մուավին, երկուսին էլ լռեցնելով, ասաց Անդրեասին. «Համաձայնվիր տալ այնքան, ինչքան Սերգիոսը»։ «Իսկ նա ինչքա՞ն է տալիս», հարցրեց Անդրեասը։ Մուավիան ասաց. «Նա արաբներին է տալիս պետական հարկերը»։ Անդրեասն ասաց. «Ավա՜ղ քեզ, Մուավիա, որ համաձայն ես մարմինը տալ ստվերը ստանալու համար։ Ինչպես ուզում ես, այդպես էլ արա, դաշնակցիր Սերգիոսի

հետ։ Ես այդ բանը չեմ անի։ Թեև քեզ ենք դիմել, բայց ապավինում ենք աստծուն, ով քեզնից հզոր լինելով, կպաշտպանի հռոմայեցիներին, նրա վրա ենք մենք մեր հույսերը դնում»։ Ապա «Ողջ լեր» ասելով, դուրս եկավ Դամասկոսից և գնաց դեպի Մելիտենե, քանզի ապստամբը այդ տեղերում էր գտնվում, որտեղ որ Սերգիոսն էլ պետք է գնար։ Հասնելով Արաբիսոս[357], նա հանդիպեց կլեյսուրի պահապանին. նա ապստամբին չէր միացել։ Նրան նա կարգադրեց ուշադիր լինել, ձերբակալել վերադարձող Սերգիոսին և իր մոտ բերել, իսկ ինքը գնաց Ամնեսիա, սպասելով ստանալ Սերգիոսին։ Կատարվածի մասին նա տեղյակ պահեց կայսեր։ Սերգիոսը Մուավիայի հետ իր ուղած ձևով դաշինք կնքելով, նրանից Շապուհին դաշնակից օգնական բարբարոսական զորք ստացավ՝ Ֆադալասի գլխավորությամբ։ Սերգիոսը Ֆադալասից առաջ էր գնում և ուրախությամբ շտապում դեպի Շապուհը, բայց տեղ չհասած ընկավ կլեյսուրներում Անդրեասի լարած որոգայթը։ Նրան շղթայակապ Անդրեասի մոտ բերեցին։ Սերգիոսը, տեսնելով Անդրեասին, ընկավ նրա ոտքերը և գթություն աղերսեց։ Անդրեասն ասաց նրան. «Մուավիայի ներկայության իր ամոթույքով պարծեցող և ինձ ձվատ անվանող Սերգիոսը դու չե՞ս։ Այսուհետև քո ամոթույքը քեզ ոչ մի օգուտ չի տալու, այլ քո մահվան պատճառ է դառնալու»։ Այդ ասելով, նա հրաման տվեց նրա ամոթույքը կտրել, իսկ նրան՝ փայտից կախել։ Կոստանդինը իմանալով Ֆադալասի՝ Շապուհին օգնության գնալու մասին, Շապուհի դեմ Նիկեփոր պատրիկի գլխավորությամբ հռոմեական զորք ուղարկեց։ Շապուհն Անդրիանուպոլսում էր գտնվում։ Իմանալով, որ Նիկեփորն իր դեմ է գալիս, նա պատերազմի պատրաստություն տեսավ։ Օրերից մի օր, ըստ իր սովորության, նա ձի հեծած, քաղաքից դուրս էր գալիս։ Երբ մոտեցավ քաղաքի դարբասին, նա ձիուն մտրակեց։ Ձին սանձակոտոր եղավ, Շապուհի գլուխը հարեց դարբասին և նրան շարաշար սպանեց։ Ատված ահա այսպես հաղթանակը կայսեր շնորհեց։ Ֆադալասը, հասնելով Հեքսապոլիս և կատարվածի մասին իմանալով, ապշահար եղավ։ Նա Մուավիային մարդ ուղարկեց օգնություն խնդրելով, քանզի հռոմայեցիների մեջ արդեն համերաշխություն էր տիրում։ Մուավիան իր որդուն՝ Եզիդին[358], ուղարկեց, տալով մեծաքանակ բարբարոսական զորք։ Երկուսն էլ հասան Քաղկեդոն և շատերին գերեվարեցին։ Նրանք գրավեցին նաև Փոյուգիայի Ամորիոնը և հինգ հազարանոց կայազոր թողնելով այնտեղ, Ասորիք վերադարձան։ Երբ վրա հասավ ձմեռը, կայսրը նույն Անդրեաս կուբիկուլարիոսին [Ամորիոն] է ուղարկում։ Առատ ձյունից և գիշերային ժամանակից օգտվելով, Անդրեասը աստիճաններով բարձ-

բացավ պարսպի վրա, մտավ Ամորիոն և բոլոր հինգ հազար արաբներին գլխովին կոտորեց։ Նրանցից մեկ հոգի անգամ չփրկվեց։ Նույն ձմռան ժամանակ, հորդառատ անձրևների հետևանքով Եդեսիան հեղեղվեց և շատերը կորան։ Երկնքում նշան էլ երևաց։

[A. M. 6160]

Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարք[359]։ Աթոռակալեց վեց տարի։

[Աշխարհի արարչագործության] 6160 թ.

[Քրիստոսի մարդեղության] 660 թ.

[Հռոմայեցիների Կոստաս կայսեր] 27-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մուավիայի] 13-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Սիկիլիայի Սիրակուսա քաղաքի Դափնե կոչվող բաղանիքում սպանվեց Կոստաս կայսրը։ Պատճառը հետևյալն էր։ Կայսեր եղբայր Թեոդոսիոսի սպանության պատճառով[360] բյուզանդացիներն ատեցին [Կոստասին], առավել ևս այն բանի համար, որ նա ծաղր ու ծանակի ենթարկելով, Կոստանդնուպոլիս բերեց Հռոմի սրբազնագույն Մարտինոս պապին և աքսորեց Խերսոնի շրջանները, որ իմաստնագույն Մաքսիմոս խոստովանողի լեզուն ու ձեռքը կտրեց, բազում ուղղափառների խոշտանգեց, նրանց ունեցվածքը բռնագրավեց ու աքսորեց, քանզի նրանք հավանություն չէին տալիս իր հերձվածին, որ Մաքսիմոս խոստովանողի Անաստասիոս անունը կրող երկու աշակերտներին աքսորեց ու խոշտանգեց։ Ահա այդ բոլորի պատճառով ամենքը սաստիկ ատեցին նրան, և նա վախեցած ուզեց իր արքունիքը Հռոմ տեղափոխել, թագուհուն և երեք որդիներին Կոստանդնուպոլսից դուրս բերել։ Բայց դրան արգելք կանգնեցին Անդրեաս կուբիկուլարիոսը և Կոլոնիայի Թեոդորոս [պատրիկը]։ [Կոստասը] Սիկիլիայում մնաց վեց տարի և երբ գնաց վերոհիշյալ բաղանիքը, նրա հետ ներս մտավ և ոմն Անդրեաս, Տրոյիլոսի որդին, նրա սպասավորը։ Երբ Կոստասն սկսեց օճառվել, Անդրեասը վերցրեց դույլը, խփեց կայսեր գլխին և իսկույն փախավ[361]։ Դրսում գտնվողները, տեսնելով, որ կայսրը ուշանում է բաղանիքից դուրս գալ, ներս շտապեցին և կայսեր գտան մեռած։ Նրան հոգին հանձնելով, ոմն հայի՝ Մժեժին[362], բռնի կայսր հռչակեցին. նա շատ փառավոր ու գեղեցիկ տղամարդ[363] էր։ Կոստանդինը, լսելով իր հոր սպանության մասին, մեծ տորմիղով Սիկիլիա է հասնում, ձերբակալում Մը-

ժեժին և իր հորը սպանողների հետ մահապատժի ենթարկում։ Արևմուտքում կարգ ու կանոն հաստատելով, նա շտապեց Կոստանդնուպոլիս։ Նա հռոմայեցիների վրա թագավորեց իր եղբայրների՝ Տիբերիոսի և Հերակլիոսի հետ։

[A. M. 6161]

Հռոմայեցիների կայսր Կոստանդին։ Թագավորեց 17 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր][364] 1-ին տարին	[Արաբների առաջնորդ Մուավիայի] 14-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի եղբայրների հետ թագավորեց Կոստանդինը։ Սարակինոսներն արշավեցին Աֆրիկա և, ինչպես պատմում են, ութսուն հազար հոգի գերեվարեցին։ Անատոլիկոն բանակաթեմի [զինվորներն] եկան խրիսուպոլիս[365], ասելով, թե «Մենք երրորդությանն են հավատում, հետևաբար պետք է երեքին էլ թագադրենք»։ Կոստանդինը շփոթվեց, քանզի միայն ինքն էր թագադրված, իսկ նրա եղբայրները ոչ մի պատիվ չունեին։ Նա Կոլոնիայի Թեոդորոս պատրիկին ուղարկեց, որ դովելով նրանց նախաձեռնությունը, հանգստացրեց, ապա գլխավորներին առնելով քաղաք բերեց, [իբրև թե] սենատի հետ խորհրդակցելու և ցանկությունը կատարելու համար։ Կայսրը նրանց իսկույն դիմացի ափին գտնվող Սիկեում[366] կախաղան բարձրացրեց։ [Զինվորներն] այդ բանին ականատես եղած, ամոթահար ու ցավագին տուն վերադարձան։ Իսկ կայսրն իր եղբայրների քթերը կտրեց։

[A. M. 6162]

Աշխարհի արարչագործության 6162 թ. — *Քրիստոսի մարդեղության 662 թ.*

Հռոմայեցիների Կոստանդին կայսեր 17-ամյա թագավորության 2-րդ տարին	Արաբների առաջնորդ Մուավիայի 24-ամյա իշխանության 15-րդ տարին	Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի 6-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Այդ տարի սաստիկ ձմեռ արեց, մարդիկ և անասունները շատ տուժեցին։ Ֆաղալասը Կյուղիկոսում[367] ձմեռեց։

[A. M. 6163]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 3-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մուավիայի] 16-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Բուսուրն[368] արշավեց, նա շատերին գերեվարելով վերադարձավ։

[A. M. 6164]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 4-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մուավիայի] 17-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի, մարտ (Դյուատրոս) ամսին երկնքում Իրիս երևաց, բոլոր մահկանացուներին սարսափ պատեց, բոլորն ասում էին, թե աշխարհի վերջն է եկել։

Այդ տարի քրիստոսուրացները[369] մեծ տորմիղ պատրաստեցին և Կիլիկիայի ափերով նավելով, ձմեռեցին՝ Աբդելայի որդի Մոհամմեդը՝ Զմյուռնիայում, իսկ Կայսրը՝[370] Կիլիկիայում և Լյուկիայում։ Եգիպտոսում մահ տարաժամ եղավ։ [Ամիրապետը] նրանց[371] օգնության ուղարկեց մի այլ տորմիղ՝ շատ գործունյա և քաջ պատերազմող համարվող Խալե[372] ամիրայի գլխավորությամբ։ Վերոհիշյալ Կոստանդինը, իմանալով աստվածամարտների՝ դեպի Կոստանդնուպոլիս շարժվելու մասին, հրակիր կաթսաներով մեծ դիերներ[373] պատրաստեց, ինչպես և սիֆոնակիր[374] դրոմոններ, հրամայելով խարիսխ գցել Պրոկլիանեսիոնի Կեսարիոսի նավահանգստում։

[A. M. 6165]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 5-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մուավիայի] 18-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարին աստվածամարտների վերոհիշյալ տորմիղը, նավելով եկավ Թրակիայի ափերին խարիսխ գցեց՝ սկսած Հեբդոմոնի արևմտյան ծայրից, այսինքն Մագնավրա կոչվողից մինչև արևելյան՝ Կյուկլոբիոն[375] կոչվող թերակղզին։ Ամեն օր, առավոտից մինչև երեկո, Ոսկե դռան պատնեշից մինչև Կյուկլոբիոն նրանք բախվում էին միմյանց։ Եվ այդպես ապրիլ ամսից մինչև սեպտեմբեր, որից հետո [սարակինոսները] նահանջեցին. եկան Կյուզիկոս և, գրավելով այն, ձմեռեցին այն-

տեղ։ Գարնանը նրանք դարձյալ քրիստոնյաների դեմ ծովում պատերազմեցին։ Այդ բանը տևեց յոթ տարի։ [Սարակինոսները] աստծո և աստվածամոր [քրիստոնյաներին] ցուցաբերած օգնությունից խայտառակ պարտություն կրելով, բազում մարտիկներ կորցնելով և հսկայական քանակությամբ վիրավորներ ունենալով, տխուր տրտում վերադարձան։ Ճամփա ընկած աստվածասույզ տորմիղն էլ Սյուլլայոնի[376] կողմերում սաստիկ բքի ու փոթորկալի քամու հանդիպելով, ջարդուփշուր եղավ և ամբողջությամբ ոչնչացավ։ Այֆի որդի Սուֆիանը, երկրորդ եղբայրը, հռոմեական զորահրամանատարներ Ֆլորոսին, Պետրոնասին և Կիպրիանոսին մարտ տվեց։ Երեսուն հազար արաբ սպանվեց։ Հենց այդ ժամանակ Ասորիքի Հիերապոլիս քաղաքից սերող ճարտարապետ Կալլինիկոսը, անցնելով հռոմայեցիների կողմը, ծովային կրակ պատրաստեց, որով արաբների նավերը անձնակազմի հետ հանդերձ հրո ճարակ արեց։ Այդպիսով ահա հռոմայեցիները հաղթանակած վերադարձան, միաժամանակ հայտնաբերած եղան ծովային կրակը[377]։

[A. M. 6166]

Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարք[378]։ Աթոռակալեց երկու տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 6-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մուավիայի] 19-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Ֆաղալասն ու Կայիսի որդի Աբդելան Կրետեում ձմեռեցին։

[A. M. 6167]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 7-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մուավիայի] 20-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի, շաբաթ օր, երկնքում նշան երևաց։

[A. M. 6168]

Կոստանդնուպոլսի Թեոդորոս պատրիարք[379]։ Աթոռակալեց երկու տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 8-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մուավիայի] 21-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Թեոդորոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Ասորիքում և Միջագետքում մորեխի մեծ ներխուժում եղավ։

[A. M. 6169]

Աշխարհի արարչագործության 6169 թ.	Քրիստոսի մարդեղության 669 թ.

Հռոմայեցիների Կոստանդին կայսեր 17-ամյա թագավորության 9-րդ տարին	Արաբների առաջնորդ Մուավիայի 24-ամյա իշխանության 22-րդ տարին	Կոստանդնուպոլսի Թեոդորոս պատրիարքի 2-ամյա աթոռակալության 2-րդ տարին

Այդ տարի մարդայիտները[380] *մուտք գործեցին Լիբանան և տիրեցին Սև լեռից սկսած մինչև սուրբ քաղաքը։ Նրանք գրավեցին Լիբանանի բարձունքները։ Բազում ստրուկներ, գերիներ և տեղաբնիկներ նրանց մոտ ապաստան փնտրեցին։ Կարճ ժամանակվա ընթացքում նրանց թիվը բազում հազարների հասավ։ Մուավիան և նրա խորհրդականները, իմանալով այդ մասին, շատ երկյուղեցին, ենթադրելով, որ հռոմայեցիների թագավորությունն աստված է պահում։ Նա Կոստանդին կայսեր մոտ դեսպաններ ուղարկեց խաղաղություն աղերսելով, խոստանալով կայսեր վճարել տարեկան պախտ։ Կայսրն ընդունեց դեսպաններին, լսեց նրանց դիմումը և նրանց հետ Ասորիք ուղարկեց Հովհաննես պատրիկին, մականունը Պիցիգավդիս, որպես պետության հին ընտանիքից սերող*[381]*, շատ փորձառու ու խոհեմ մի մարդու, արաբների հետ գործիմացությամբ բանակցելու և հաշտություն կնքելու համար։ Երբ նա Ասորիք ժամանեց, Մուավիան ամիրաների և կորասեննների*[382] *մեծ շքախմբով նրան փառավոր ընդունելություն ցուցաբերեց։ Խաղաղության շուրջ նրանք երկար բանակցեցին և երկու կողմերն էլ համաձայնեցին երդումով հաստատված հաշտության պայմանագիր կնքել, որի համաձայն հագարացիք հռոմեական պետությանը կվճարեն տարեկան երեք հազար դահեկան պախտ, [կտան] հիսուն ռազմագերի և հիսուն ազնվացեղ ձի։ Այսպիսով հռոմայեցիների և արաբների միջև երեսուն տարի ժամանակով կայուն խաղաղություն կնքվեց։ Պայմանագրի բնագրերը երկու կողմից էլ երդումներով հաստատվելուց և փոխանակվելուց հետո, բազմիցս հիշատակված բարեհամբավ այրը*[383] *բյուր նվերներով կայսեր մոտ վերադարձավ։ Երբ այդ մասին տեղեկացան արևմտականները՝ ավարների խաքանն ու ավելի հեռուն բնակվող ռեքսերը*[384]*, էքսարքոսները*[385] *և կաստալդները*[386]*, նաև արևմուտքի ժողովուրդների գլխավորները, նվերներով դեսպաններ ուղարկեցին կայսեր և խնդրեցին սեր և խաղա-*

ղություն հաստատել։ Կայսրը նրանց խնդրանքին ընդառաջ գնաց և հաստատեց Տիրոջ խաղաղությունը։ Ե՛վ արևելքում, և՛ արևմուտքում մեծ անդորր տիրեց։

[A. M. 6170]

Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարք[387]։ Աթոռակալեց վեց տարի։

[Աշխարհի արարչագործության] 6170 թ.

[Քրիստոսի մարդեղության] 670 թ.

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 10-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մուավիայի] 23-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Միջագետքում ուժեղ երկրաշարժ եղավ, փլվեց Բատանը[388], նաև Եդեսիայի եկեղեցու գմբեթը։ Մուավիան վերականգնեց այն՝ քրիստոնյաների ջանքերով։

[A. M. 6171]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 11-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մուավիայի] 24-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարվա Արտեմիսիոս[389] ամսի 6-ին, ինդիկտիոնի 1-ին տարին վախճանվեց Մուավիան՝ սարակինոսների առաջին խորհրդականը[390]։ Նա զորավար եղավ 20, իսկ ամիրայացավ՝ 24 տարի։ Իշխեց նրա որդի Եզիդը[391]։

Այդ տարի բուլղարների ցեղը մուտք գործեց Թրակիա[392]։ Հարկավոր է խոսել Ունոգունդուր բուլղարների և Կոտրագ[393] [բուլղարների] մասին։ Եվքսինյան Պոնտոսի հյուսիսային հեռաստաններում կա Մեոտիս կոչվող լիճը[394], որի մեջ է թափվում Օվկիանոսից սարմատների երկրով հոսող խոշորագույն Ատել անունով գետը[395]։ Այդ գետի մեջ է թափվում Տանայիս գետը[396], որը սկիզբ է առնում Կովկասյան լեռներում գտնըվող Իբերական դռներից։ Տանայիսի ու Ատելի խառնվելուց հետո (նախապես հիշատակված Մեոտիս լճից վերև Ատելը երկուսի է բաժանվում), առաջանում է Կուֆիս գետը[397], որը թափվում է Պոնտական ծովի վերջում, Նեկրոպելեի մոտ[398], «խոյի մուրթ» կոչվող թերակղզում[399]։ Վերոհիշյալ լճից գետանման ծովն է։ Գետը Բոսպորի[400] և կիմմերների միջով հոսում և թափվում է Եվքսինյան Պոնտոս։ Այդ գետում որսում են մուրդուլիս կոչվող և նրա նման այլ [ձկներ]։ Խնդրո առարկա լճի

արևելյան կողմերում դեպի Ֆանագուրիա և այդտեղ բնակվող հրեաների շրջանում 100՝ բազմաթիվ ցեղեր են ապրում։ Այդ լճից դեպի Կուֆիս կոչվող գետը, (ուր որսում են բուլղարական փայլուն ձուկը), հին, Մեծ Բուլղարիան է, այնտեղ են բնակվում նաև կոտրագ կոչվողները, որոնք ևս սրանց ցեղակից են։ Արևմուտքում [վախճանված] Կոստանդնի օրոք, վերոհիշյալ Բուլղարիայի և կոտրագների տեր Կրոբատը[401] մեռավ, հինգ որդի թողնելով, որոնց և ավանդեց իրարից երբեք չբաժանվել, որպեսզի բոլորի վրա իրենք տիրեն և ուրիշ ցեղի հպատակ չդառնան։ Բայց նրա վախճանվելուց փոքր անց նրա հինգ որդիները բաժանվեցին և հեռացան իրարից՝ յուրաքանչյուրն իրեն հպատակ ժողովրդի հետ։ Անդրանիկ որդին՝ անունը Բատբայան[402], հարգելով հոր պատգամը, մնաց իր նախնյաց երկրում մինչև օրս։ Նրա երկրորդ եղբայրը, անունը Կոտրագոս, անցնելով Տանայիս գետը, ավագ եղբոր դիմաց բնակվեց։ Չորրորդ և հինգերորդ եղբայրները, անցնելով Իստրոս, այն է՝ Դանուբ գետը, մեկը գնաց Ավարիայի Պանոնիա, հպատակվեց ավարների խաքանին և իր ամբողջ զորքով մնաց այնտեղ, իսկ մյուսը, հասնելով Ռավեննայի մոտ գտնվող Պենտապոլիսը, հպատակվեց քրիստոնյա թագավորության։ Վերջապես երրորդ եղբայրը, անունը Ասպարուխ[403], անցնելով Դանուբից հյուսիս գտնվող Դանապրիս և Դանաստրիս գետերը[404], հասավ Օգլոս գետը[405] և բնակվեց այս [գետերի] ու [Դանուբի] միջև ընկած տարածության վրա, գտնելով, որ նշված տարածքը և՛ մեկ, և՛ մյուս կողմից դժվարամատչելի է և ապահով։ Առջևից նա ճահճային է, իսկ մյուս կողմերից նրան պատսպարում էին գետերը։ Այս հանգամանքը թշնամիներից մեծ ապահովություն ընձեռեց տրոհումից բավականին թուլացած այդ ցեղին։ Այս ժողովուրդն, ահա, երբ հինգ մասի էր տրոհված ու մանրացած, Բերզիլիայի[406] հեռավոր խորքերից, նախկին Սարմատիայից ասպարեզ եկավ խազարների մեծ ցեղը և տիրեց բովանդակ հեռաստանի վրա, ընդհուպ մինչև Պոնտական ծովը։ Նա իրեն հպատակեցրեց ավագ եղբայր Բատբայանին՝ Առաջին Բուլղարիայի իշխանին և մինչև օրս նրանից հարկեր է գանձում։ Կոստանդին կայսրը, տեղեկանալով, որ մի ինչ-որ կեղտոտ ու անմաքուր ցեղ հանկարծակի Դանուբից այն կողմ, մինչև Օգլոս բնակություն է հաստատել և ոտնատակ է անում ու ավարառում մերձդանուբյան տարածությունները, (խոսքը այժմ նրանց տիրած երկրի մասին է, որն այն ժամանակ գտնվում էր քրիստոնյաների ձեռքում) շատ զայրացավ։ Նա հրամայեց բանակաթեմային բոլոր [զորքերին] անցնել Թրակիա։ Նավատորմիզ պատրաստելով, նա ցամաքով ու ծո-

վով շարժվեց նրանց վրա, փորձելով ուժով վռնդել նրանց։ Նա հետևակը դուրս բերեց Օգլոս և Դանուբ գետերի միջև ընկած մայր ցամաքը, իսկ նավերին հրամայեց խարիսխ գցել մերձակա ափերին։ Բուլղարները, տեսնելով այս հսկայական, մեծաթիվ զորքը, հուսաբեկ լինելով փախան ու ապաստանեցին վերոհիշյալ ամրության մեջ։ Նրանք երեք-չորս օր չհամարձակվեցին այդ ամրությունից դուրս գալ։ Հռոմայեցիները տեղի ճահիճների պատճառով մարտ չտվեցին, իսկ պիղծ ցեղն այդ բանը թուլության նշան համարելով, գոտեպնդվեց։ Կայսրն այդ միջոցին ծանր հոգատապ ունեցավ և ստիպված հինգ դրոմոններով և իր մերձավորներով Մեսեմբրիա[407] վերադարձավ, ուր սովորաբար լոգանքներ էր ընդունում։ Նա զորավարներին ու զորքին թողեց, կարգադրելով ընդհարվել նրանց հետ, դուրս քաշել ամրությունից և կռվի բռնվել, եթե ամրությունից դուրս գան։ Հակառակ դեպքում պաշարել նրանց։ Սակայն հեծելազորայինները ենթադրելով, որ կայսրը փախել է, խուճապահար իրենք էլ փախուստի դիմեցին, թեև նրանց ոչ ոք չէր հալածում։ Բուլղարները, տեսնելով դա, հետապնդեցին նրանց, մեծ մասին սրախողխող արեցին, շատերին խոցահարեցին, քշեցին մինչև Դանուբ գետը, որն անցնելով, հասան Վառնա[408] կոչվող [վայրը]՝ Օդյուսոսի[409] մոտ գտնվող երկրամասը։ Տեսնելով վայրի ծայրաստիճան պատսպարվածությունը (թիկունքից այն Դանուբ գետով էր պաշտպանված, առջևից ու կողքից՝ կլեյսուրներով և պոնտական ծովով), տիրեցին մերձակա սլավոնական ցեղերի, այսպես կոչված յոթ տոհմերի[410] վրա, Սևերներին[411] բնակեցրին Բերեգաբ[412] կոչվող կլեյսուրից սկսած մինչև դեպի արևելք ընկած շրջանները, իսկ դեպի հարավ-արևմուտք ձգվող շրջաններում՝ մինչև Ավարիա՝[413] մնացած յոթ հարկատու ցեղերին։ Ժամանակի ընթացքում նրանք բազմացան և լկտիանալով սկսեցին հռոմեական պետությանը պատկանող ամրոցների և վայրերի վրա հարձակումներ գործել և մարդկանց գերեվարել։ Կայսրը ստիպված նրանց հետ հաշտություն կնքեց, համաձայնվեց տարեկան պախտ վճարել՝ համոթ հռոմայեցիների։ Դա կատարվեց մեր բազում մեղքերի պատճառով։ Հիրավի ապշեցուցիչ էր մոտ ու հեռու ժողովուրդների համար այն, որ և՛ արևելքում, և՛ արևմուտքում, և՛ հյուսիսում, և՛ հարավում բոլորին իրեն հպատակեցնողը, նորելուկ ու պիղծ մի ցեղից պարտվեց։ Սակայն կարծելով, որ դա քրիստոնյաների համար աստծո նախախնամությամբ տեղի ունեցավ, ավետարանի խոսքերը լսելով, խաղաղություն հաստատեց։ Նա մինչև իր վախճանը ոչ ոքի դեմ պատերազմ չմղեց, հիմնական ուշադրությունը բևեռելով իր նախապապ Հերակլիոս կայսեր և Կոստանդնուպոլսի

աթոռին անարժանորեն նստած շարափառ Սերգիոսի և Պյուրոսի՝ մեր Տիրոջ աստծո և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մեկ կամք և մեկ ներգործություն դավանողների օրոք բաժան բաժան եղած աստծո սուրբ եկեղեցիները միացնելուն։ Ամենաքրիստոնյա կայսրը, ջանալով խորտակել սրանց շարափառությունը, Կոստանդնուպոլսում 289 եպիսկոպոսների ժողով գումարեց[414], որտեղ նախկին հինգ սուրբ և տիեզերական ժողովների որոշումները հաստատեց։ Այդ նույն վեցերորդ սուրբ, ամենաճշմարիտ տիեզերական ժողովում, որը գլխավորում էին ինքը՝ ամենաբարեպաշտ Կոստանդին կայսրը և բարեպաշտ հոգևոր պետերը, հաստատվեց երկու կամքի և ներգործության մասին բարեպաշտ դավանանքը։

[A. M. 6172]

Արաբների առաջնորդ Եզիդ։ Իշխեց 3 տարի։

[Աշխարհի արարչագործության] 6172 թ.

[Քրիստոսի մարդեղության] 672 թ.

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 12-րդ տարին

[Արաբների առաջնորդ Եզիդի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի բարեպաշտ Կոստանդին կայսեր որոշմամբ Կոստանդնուպոլսում գումարվեց 289 եպիսկոպոսների և հայրերի սուրբ և տիեզերական վեցերորդ ժողովը։

[A. M. 6173]

Աշխարհի արարչագործության 6173 թ.

Քրիստոսի մարդեղության 673 թ.

Հռոմայեցիների Կոստանդին կայսեր 17-ամյա թագավորության 13-րդ տարին

Արաբների առաջնորդ Եզիդի 3-ամյա իշխանության 2-րդ տարին

Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի 6-ամյա աթոռակալության 4-րդ տարին

Այդ տարի Կոստանդինը իշխանությունից հեռացրեց իր եղբայրներ Հերակլիոսին և Տիբերիոսին, և իր որդի Հուստինիանոսի հետ միահծան թագավորեց։

[A. M. 6174]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 14-րդ տարին

[Արաբների առաջնորդ Եզիդի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Պարսկաստանի վրա բռնատիրեց խաբեբա Մուխտարը[415]։ Նա իրեն մարգարե էր անվանում։ Արաբների մեջ հուզումներ առաջացան։

[A. M. 6175]

Արաբների առաջնորդ Մրվան[416]։ Իշխեց մեկ տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 15-րդ տարին | [Արաբների առաջնորդ Մրվանի] 1-ին տարին | [Կոստանդնուպոլսի Գեորգ պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի վախճանվեց Եգիպտը։ Էքրիբի արաբներն իրար անցան, ոտքի ելան և իրենց առաջնորդ ընտրեցին Զուբերի որդի ոմն Աբդալայի[417]։ Փյունիկեի և Պաղեստինի [արաբները] հավաքվելով գալիս են Դամասկոս՝ մինչև Գաբիթա, Պաղեստինի ամիրա Հասանի[418] մոտ։ Նրանք աջակցություն ցուցաբերեցին Մրվանին և նրան առաջնորդ կարգեցին։ Նա ամիրայացավ 9 ամիս։ Նրա վախճանվելուց հետո իշխանությունը ժառանգեց նրա որդի Աբդալմելիքը[419], որն ամիրայացավ 21 և կես տարի։ Սա ձեռք դցելով ապստամբներին, մահապատժի ենթարկեց Զուբերի որդի Աբդալային և Դադախին։

[A. M. 6176]

Արաբների առաջնորդ Աբդալմելիք։ Իշխեց 22 տարի։

Կոստանդնուպոլսի Թեոդորոս պատրիարքի երկրորդ աթոռակալություն[420]։ Աթոռակալեց 3 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 16-րդ տարին | [Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 1-ին տարին | [Կոստանդնուպոլսի Թեոդորոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Ասորիքում սաստիկ սով ու մահ տարաժամ եղավ։ Աբդալմելիքը տիրեց [արաբ] ժողովրդի վրա։ Այդ պատճառով, որ մարդայիտները Լիբանանի շրջանների վրա հարձակումներ էին գործում, ժանտախտն էլ չէր վերանում, նույն Աբդալմելիքը կայսեր մոտ դեսպաններ ուղարկեց, խնդրելով նորոգել Մուավիայի օրոք կնքված հաշտությունը, հանձն առավ դարձյալ վճարել 365 հազար դահեկանը, տալ 365 ստրուկներին, ինչպես և 365 աղնվացեղ ձիեր։

[A. M. 6177]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 17-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Թեոդորոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի հանգչեց բարեպաշտ Կոստանդին կայսրը, իշխելով 17 տարի։ Թագավորեց որդին՝ Հուստինիանոսը[421]*։*

[Պետք է նշել, որ իզուր են դատարկաբանում ոմանք, ասելով, որ իբր վեցերորդ ժողովի գլխավոր կանոնները ընդունվեցին [ժողովից] չորս տարի հետո։ Ինչպես բոլոր հարցերում, այստեղ ևս նրանց կեղծիքը պարզ երևում է։ Ճշգրիտ ժամանակագրական նշումը վկայում է, որ միակամականների դեմ վեցերորդ տիեզերական սուրբ ժողովի գումարման ճիշտ թվականը Հերակլիոսի թոռ Կոստանդնի թագավորության 12-րդ տարին է, աշխարհի արարչագործության 6172 թվականը, որ դրանից հետո Կոստանդինը թագավորեց ևս 5 տարի, որի վախճանվելուց հետո տասը տարի միահեծան թագավորեց նրա որդի Հուստինիանոսը։ Հուստինիանոսի տապալումից հետո 3 տարի թագավորեց Լեոնտիոսը, Լեոնտիոսից հետո 7 տարի Տիբերիոս Ապսիմարոսը, ապա վերստին տապալված Հուստինիանոսը 6 տարի։ Քթատ Հուստինիանոս կայսեր երկրորդ թագավորության 2-րդ տարում ընդունված դեկրետում հիշատակված են այս բոլորը։ 3-րդ դեկրետի մեջ բառացի ասված է հետևյալը. «Կրկնամուսիններին, որոնք մինչև անցած հունվար ամսի 15-ը, ինդիկտիոնի անցած՝ 4-րդ տարին՝ 6199 թ. դեռևս այդ մեղքի մեջ են գտնվում և դրանից չեն ցանկանում հրաժարվել, որոշեցինք կանոնական կերպով կարգալույծ անել»։ Եվ մի քիչ հետո. «Ովքեր ձեռնադրությունից հետո նույնիսկ մեկ անգամ ապօրինի ամուսնանան, լինեն երեցներ, սարկավագներ կամ կիսասարկավագներ, նրանց կարճ ժամանակով զրկել սուրբ պաշտոն կատարելու իրավունքից և պատուհասել, որից հետո վերականգնել իրենց աստիճանին, բայց ոչ մի դեպքում առաջ չքաշել ավելի բարձր աստիճանի՝ անգամ եթե բացահայտ կերպով լուծել են իրենց ապօրինի ամուսնությունը»։ Այսպիսով, վերոբերյալ ժամանակագրական նշումից պարզ երևում է, որ տիեզերական սուրբ ժողովից մինչև այս դեկրետի հրապարակումը անցել է 27 տարի։ Կոստանդնուպոլսի տիեզերական սուրբ ժողովի ժամանակ պատրիարք էր Գեորգը, ընթանում էր նրա աթոռակալության 3-րդ տարին։ Ժողովից հետո նա աթոռակալեց ևս 3 տարի, նրանից հետո Թեոդորոսը՝ 3 տարի, Պավղոսը՝ 7 տարի, Կալլինիկոսը՝ 12 տարի և Կյուրոսը՝ 2 տարի։

Սրանից ստացվում է, որ հիշյալ պատրիարքների աթոռակալության տարիների գումարը նույնպես կազմում է 27 տարի։ Ընդունված դեկրետի ժամանակից մինչև Ֆիլիպպիկոսի առաջին տարին կազմում է 5 տարի։ Ֆիլիպպիկոսի թագավորության առաջին տարում կայացավ մոլեգին ժողովը՝ ընդդեմ վեցերորդ տիեզերական սուրբ ժողովի։ Իր պատրիարքության 6-րդ տարում Կյուրոսը կարգալույծ արվեց, Կոստանդնուպոլսի պատրիարք դարձավ Հովհաննեսը, Կրետեի մետրոպոլիտ՝ Անդրեասը, Կյուզիկոսի մետրոպոլիտ՝ Գերմանոսը, որոնք իրենց ժամանակակից բոլոր [եպիսկոպոսների] հետ նզովեցին միակամականների դեմ գումարված տիեզերական սուրբ վեցերորդ ժողովը և ստորագրեցին այդ որոշման տակ։ 3 տարի անց, երբ Հովհաննեսը վախճանվեց, Կյուզիկոսի [մետրոպոլիտ] Գերմանոսը դարձավ Կոստանդնուպոլսի պատրիարք, որը Լևոնի թագավորության 13-րդ տարին աքսորվեց։ Պատրիարք դարձավ Անաստասիոսը՝ 24 տարի, նրանից հետո Կոստանդինը՝ 12 տարի, Նիկետասը՝ 14, Պավղոսը՝ 5, Տարասիոսը՝ 21, Նիկեփորը՝ 8, Թեոդոտոսը՝ 6, Անտոնիոսը՝ 16 և Հովհաննես Լեկանոմանտիսը՝ 6 տարի և 1 ամիս]։

[A. M. 6178]

Աշխարհի արարչագործության 6178 թ.	Քրիստոսի մարդեղության 678 թ.	
Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր 10-ամյա թագավորության 1-ին տարին	Արաբների առաջնորդ Աբդալմելիքի 22-ամյա իշխանության 3-րդ տարին	Կոստանդնուպոլսի Թեոդորոս պատրիարքի 3-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Այդ տարի Աբդալմելիքը հաշտություն հաստատելու համար Հուստինիանոսի մոտ դեսպանություն ուղարկեց։ Այն կնքվեց հետևյալ պայմաններով. կայսրը լուծարքի է ենթարկում Լիբանանի մարդայիտների զորաբանակը և արգելում նրանց ներխուժումները։ Իսկ Աբդալմելիքը հռոմայեցիներին է վճարում օրական հազար դահեկան, մեկ ձի և մեկ ստրուկ։ Կիպրոսի, Հայաստանի և Իբերիայի հարկերը երկու կողմերը կիսում են հավասարապես[422]։ Կայսրը Աբդալմելիքի մոտ Պավղոս մագիստրիանոսին[423] ուղարկեց համաձայնությունն ստորագրելու։ Պայմանագիրը կնքվեց և դրա տակ դրվեցին վկաների ստորագրությունները։ Մագիստրիանոսը պատիվների արժանանալուց հետո վերադարձավ։ Կայսեր կարգադրությամբ 12 հազար մարդայիտները ետ կանչվեցին[424],

որով նա անդամահատեց հռոմեական [կայսրության] հզորությունը, քանզի Մոպսուեստիայից մինչև Զորրորդ Հայք՝ այժմ արաբների կողմից բնակեցված սահմանամերձ քաղաքները, ժամանակին, մարդայիտների արշավանքների պատճառով, անապահով էին ու անմարդաբնակ։ Արդ, [մարդայիտների] վերացման պատճառով, Ռոմանիան արաբներից սոսկալի փորձանքներ կրեց, մինչև օրս էլ կրում է։

Նույն տարին Աբդալմելիքը Պարսկաստան սուտ [մարդարե] և խռովարար Մուխտարի դեմ Մուավիայի եղբայր Զիադոսին[425] ուղարկեց, որը սպանվեց Մուխտարի կողմից։ Այդ բանը լսելով, Աբդալմելիքն եկավ Միջագետք։ Նրա դեմ Սայիդն ապստամբություն բարձրացրեց։ Աբդալմելիքը ետ եկավ, Սայիդին անձեռնմխելիության մասին երաշխիքներ տալով մտավ նրա կողմից գրավված Դամասկոսը, բայց այնուհետև սպանեց նրան։ Իսկ Հուստինիանոսը շուրջ 16 տարեկան պատանի լինելով, անխոհեմաբար էր կառավարում երկիրը։ Նա հռոմեական զորքով Հայաստան ուղարկեց Լեոնտիոս զորավարին, որն այնտեղի սարակինոսներին ջարդ տալով, երկիրն իրեն հպատակեցրեց, ինչպես նաև Իբերիան, Ալբանիան, Վրկանաց աշխարհը[426] և Մարաստանը։ Նա այդ երկրները հարկատու դարձնելով, կայսեր բազում դրամ ուղարկեց։ Աբդալմելիքը, իմանալով այդ մասին, գրավեց Կերկեսիոնը[427] և իրեն ենթարկեց Թեուպոլիսը[428]։

[A. M. 6179]

Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարք[429], Աթոռակալեց 7 տարի։

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 2-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Ասորիքում սով եղավ, որի պատճառով շատերն անցան Ռոմանիա։ Կայսրը, գալով Հայաստան, այնտեղ ընդունեց Լիբանանի մարդայիտներին։ Դրանով նա քանդեց մի պղնձե պարիսպ։ Ապա նա վերացրեց բուլղարների հետ կնքված խաղաղությունը, խարխլեց իր հոր կարգադրությունները ու հաստատած կարգ ու կանոնը։ Որոշելով հրապատակեցնել Բուլղարիան և Սկլավինիաները[430], նա հեծելազորին հրամայեց անցնել Թրակիա։

[A. M. 6180]

[Աշխարհի արարչագործության] 6180 թ.

[Քրիստոսի մարդեղության] 680 թ.

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 3-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի Հուստինիանոսն արշավեց Սկլավինիայի և Բուլղարիայի վրա և դիմադրություն ցուցաբերած բուլղարներին ետ մղեց։ Արշավելով մինչև Թեսաղոնիկե, նա սկլավների հոծ բազմություններ և՛ զենքով, և՛ խաղաղ ճանապարհով հնազանդեցնելով, Աբիդոսի վրայով տարավ բնակեցրեց Օպսիկիոնի[431] շրջանները։ Վերադարձին, կլեյսուրի նեղ տեղում բուլղարները կտրեցին նրա ճանապարհը, և նա, բազում զոհեր ու վիրավորներ տալով, հազիվ անցավ։

Նույն տարին Աբդելա Զուբերը[432] Մուխտարի դեմ ուղարկեց իր եղբայր Մուսաբոսին։ Մարտում Մուխտարը պարտություն կրելով փախուստի դիմեց Ասորիք։ Մուսաբոսը հետապնդեց նրան և հասնելով ըսպանեց։ Իսկ Աբդալմելիքը արշավելով Մուսաբոսի դեմ, պարտության է մատնում նրան ու սպանում և ողջ Պարսկաստանն իրեն հպատակեցնում։

[A. M. 6181]

Աշխարհի արարչագործության 6181 թ.

Քրիստոսի մարդեղության 681 թ.

Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր 10-ամյա թագավորության 4-րդ տարին

Արաբների առաջնորդ Աբդալմելիքի 22-ամյա իշխանության 6-րդ տարին

Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի 7-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Այդ տարի Աբդալմելիքը Մեքքա՝ Զուբեյրի[433] դեմ խագանին[434] ուղարկեց, որը և սպանեց նրան այնտեղ։ Խագանն Աբդալմելիքին հպատակեցրեց ընդդիմացող երկիրը, կրակի տվեց [Զուբեյրի] կռատունը նրանց պաշտած կուռքի հետ միասին։ Այդ պատճառով [Աբդալմելիքը] խագանին Պարսկաստանի զորավար նշանակեց։ Աբդալմելիքին հպատակվեց Պարսկաստանը, Միջագետքը և Էթրիբի մեծ Արաբիան։ Նրանց ներքեղային կռիվներն ահա այսպիսով վերջ գտան։

[A. M. 6182]

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 5-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 7-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի արաբական պետության մեջ վերջ գտան, դադարեցին բոլոր պատերազմները։ Աբդալմելիքը բոլորին իրեն հպատակեցնելով, խաղաղվեց։

[A. M. 6183]

[Հոռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 6-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 8-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Հուստինիանոսն անխոհեմաբար վերացրեց Աբդալմելիքի հետ ունեցած խաղաղությունը։ Նա ջանաց Կիպրոս կղզու [բնակչությունը] արտաղաթեցնել, բացի այդ նա չընդունեց Աբդալմելիքի նոր կտրած, նախկինում շրջանառության մեջ չեղած դրամը։ Բաղում կիպրացիներ նավարկելիս ջրասույզ եղան, հիվանդություններից կոտորվեցին, իսկ մնացածները Կիպրոս վերադարձան[435]։ Աբդալմելիքը, լսելով այդ մասին, սադայելական կեղծավորությամբ կոչ էր անում չվերացրնել խաղաղությունը, ընդունել իր դրամը[436], այնպես ինչպես արաբները, թեև շրջանառության մեջ չեն ընդունում հռոմեական դրամը, ընդունում են այն որպես քաշով մետաղ։ Արաբների նոր դրամ կտրելուց հռոմայեցիները ոչ մի վնաս չեն կրում։ Կայսրը նրա աղերսը վախի նշան համարեց, չհասկացավ, որ նրանց նպատակը մարդայիտների զորաբանակի լուծարքն էր, խաղաղությունը վերացնելու հարմար առիթի որոնումը։ Ինչ որ եղավ։ Աբդալմելիքը կարգադրեց Մեքքայի տաճարը կառուցել, որի համար ուզեց օգտագործել սուրբ Գեթսեմանիի[437] սյուները։ Գենիկոնի լոգոթետ Սերգիոսը՝ Մանսուրի որդին[438], մի շատ քրիստոսասեր, նույն այն Աբդալմելիքի շատ մտերիմ մի անձնավորություն, Պաղեստինի քրիստոնյաների առաջնորդը, ոչ պակաս քրիստոսասեր Պատրիկիոսը, մականունը Կլավսյուս, խնդրեցին այդ քայլին չդիմի, խոստացան դիմել և համոզել Հուստինիանոսին այդ սյուների փոխարեն այլ սյուներ ուղարկի։ Ինչ որ եղավ։

9—949

[A. M. 6184]

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 7-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 9-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի Հուստինիանոսը իր գաղթեցրած սկլավների մեջ ընտրություն կատարեց, 30 հազար հոգու զինվորագրեց[439], զինեց, անվանեց «արտակարգ զորք»[440] և հրամանատար նշանակեց Նեվուլոս[441] անունով մեկին։ Նրանց վրա հույս դնելով, նա արաբներին գրեց, թե չեղյալ է հայտարարում հաշտության պայմանագիրը։ Այդ «արտակարգ զորքն» առնելով, ինչպես և ողջ հեծելազորը, կայսրը շարժվեց դեպի ծովափնյա Սեբաստուպոլիսը[442]։ Արաբները ձևացնում էին, թե դեմ են խաղաղության վերացմանը, որ իրենց այդ բանին կայսրն է մղում, նրա հեղհեղուկությունը, և զինվելով, իրենք ևս եկան Սեբաստուպոլիս։ Վկայակոչելով երկուսի միջև երդումներով հաստատված պայմանագիրը, նրանք կոչ էին անում կայսեր չխախտել այն, քանզի աստված կդատի և կպատուհասի մեղավորներին։ Այն պատճառով, որ կայսրը այդ խոսքերին ականջ անգամ չկախեց, ընդհակառակը, փութաց մարտի, արաբները հաշտության պայմանագրի բնագրով [գլանափաթեթը] բացելով, դրոշակի փոխարեն երկար ձողի ծայրին կապեցին և Մոհամմեդ[443] զորավարի գլխավորությամբ հռոմայեցիների վրա հարձակվեցին ու մարտ տվեցին։ Սկզբում արաբները պարտություն էին կրում։ Մոհամմեդը հռոմայեցիների դաշնակից սկլավների զորավարի հետ գաղտնի բանակցեց, նրան ոսկեղրամով լի մի կապարճ ուղարկեց, բազում խոստումներ տալով խաբեց, համոզեց 20 հազար սկլավներով իր կողմն անցնել և դա ահա կանխորոշեց հռոմայեցիների փախուստը։ Դրա վրա Հուստինիանոսը Նիկոմեդիայի ծոցի մոտ գտնվող Լևկատե կոչվող զառիթափ և ծովափնյա վայրում նրանց մնացածներին, կանանցով և երեխաներով հանդերձ, սրակոտոր արեց[444]։

[A. M. 6185]

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 8-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 10-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի Հայաստանի պատրիկ Սմբատը[445], իմանալով հռոմայեցիների պարտության մասին, Հայաստանը արաբներին հանձնեց։ Նրանց ենթարկվեց նաև ներքին Պարսկաստանը՝ Խորասան կոչվածը, ուր

Սաբինոս անունով մի բախտախնդիր հանդես եկավ և սպանեց բազմաթիվ արաբների։ Քիչ էր մնացել, որ նա գետահեղձ աներ հենց խագանին։ Այսուհետև հագարացիները առավել ևս լկտիացած, ավարառեցին Ռոմանիան։

[A. M. 6186]

Աշխարհի արարչագործության 6186 թ.	Քրիստոսի մարդեղության 686 թ.

Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր 10-ամյա թագավորության 9-րդ տարին	Արաբների առաջնորդ Աբդալմելիքի 22-ամյա իշխանության 11-րդ տարին	Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի[446] 12-ամյա աթոռակալության 1-ին տարին

Այդ տարի, հյուսերբերբետայոս[447] ամսի 5-ին, շաբաթվա 1-ին օրը, ժամը 3-ին արևի խավարում եղավ, որով մի քանի պայծառ աստղ երևաց։Մոհամմեդը, իր հետ վերցնելով գաղթական սկլավներին՝ որպես Ռոմանիային քաջատեղյակ մարդկանց, Ռոմանիայի վրա արշավեց և բազում մարդկանց գերեվարեց։ Ասորիքում խոզերին բնաջնջեցին։ Իսկ Հուստինիանոսն զբաղված էր պալատական շենքերի կառուցմամբ։ Նա կառուցեց Հուստինիանոսի տրիկլինոն[448] կոչվածը, ինչպես և պալատի շրջապարիսպը։ Նա շինարարության պետ[449], տեր ու տիրական նշանակեց իր սակելլարիոս և ներքինապետ Ստեփանոս Պարսկին, մի շատ արյունարբու և դաժան մարդու, որն անգթորեն, առանց հապենալու ձաղկում էր բանվորներին, անգամ քարկոծում նրանց և նրանց վերակացուներին։ Երբ կայսրը [քաղաքից] բացակայում էր, այդ վայրի գազանը հանդգնեց անգամ նրա մորը՝ ավգուստա Անաստասիային կաշեփոկով մտրակահարել, կարծես նա երեխա լիներ։ Նա շատ վատ էր վերաբերվում նաև քաղաքի ողջ բնակչությանը, որի պատճառով կայսրը ատելի դարձավ։ [Կայսրը] գենիկոնի լոգոթետի[450] պաշտոնում նշանակեց ոմն աբբա, անունը Թեոդորոս, որն անցյալում անապատական էր Թրակիայի Ստենոնի[451] շրջանում։ Սա ևս սարսափելի ու շատ սանձարձակ մարդ էր, որ պետության բազում իշխանավորների, երևելի մարդկանց, ոչ միայն պաշտոնյաների, այլև քաղաքի բնակիչների, առանց պատճառի, առանց այլևայլի, տուգանում էր, կաշառք պահանջում, գրավում ունեցվածքը, պարանից կախում և հարդով մխարկում։ [Քաղաքի] էպարքոսն էլ կայսերական հրամանով բազում մարդկանց երկար ժամանակով բանտ նետեց։ Այդ բոլորը ավելի ևս բորբոքեցին ժողովրդի ատելությունն ընդդեմ կայսեր։

Կայսրը Կալլինիկոս պատրիարքից պահանջում էր, որ նա աղոթք ասի պալատի մոտ գտնվող մետրոպոլիտի սուրբ աստվածածնի եկեղեցին քանդելու համար։ Կայսրն ուզում էր եկեղեցու տեղում ջրավազան կառուցել և վենետների դեմոսի տրիբունաներ[452] կայսեր այդտեղ ընդունելու համար։ Բայց պատրիարքն ասաց. «Եկեղեցու կառուցման համար աղոթք ունենք, բայց եկեղեցի քանդելու վերաբերյալ մեզ աղոթք չեն ավանդել»։ Երբ կայսրը ճնշում գործադրեց՝ ամեն կերպ պահանջելով աղոթքը, պատրիարքն ասաց. «Փա՜ռք միշտ համբերող աստծուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»։ Այդ խոսքերը լսելով, քանդեցին եկեղեցին և ջրավազանը կառուցեցին, իսկ մետրոպոլիտի եկեղեցին շինեցին Պետրիոնում[453]։

[A. M. 6187]

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 10-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 12-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի Մոհամմեդն արշավեց Զորրորդ Հայքի վրա և բազում գերիներով վերադարձավ[454]։

Նույն տարին Հուստինիանոսը գահընկեց արվեց հետևյալ կերպ։ Նա պատրիկ և զորավար Ստեփանոսին, մականունը Ռուսիոս, հրաման էր տվել գիշերով Կոստանդնուպոլսի դեմոսին ջարդ տա[455] սկսելով պատրիարքից։ Լեոնտիոս պատրիկը, որը նախկինում Անատոլիկոն [բանակաթեմի] զորավարն էր եղել, հաջող պատերազմ մղել, նաև երեք տարի բանտ նստել, հանկարծ մեղադրվեց և ետ կանչվելով, Հելլադա [բանակաթեմի][456] զորավար նշանակվեց։ Նրան հրաման տրվեց երեք դրոմոններով նույն օրն իսկ հեռանալ քաղաքից։ Նույն գիշերը Սոֆիայի Հուլիանոսյան նավահանգստում[457], Մավրոսի[458] մոտ, նա պատրաստվում էր քաղաքից նավել և հրաժեշտ էր տալիս իր մոտ եկած ընկերներին, որոնց մեջ էին նրա մտերիմներ Կալլիստրատոսի վանքի վանական և աստղաբաշխ Պավղոսը, նախկին կլեյսուրարխ Գրիգոր Կապադովկացին, որն հետագայում վանական դարձավ և Ֆլորոսի [վանքի] վանահայր։ Երբ Լեոնտիոսը բանտում էր, նրանք շատ հաճախ էին այցելում նրան և վստահեցնում, թե նա հռոմայեցիների կայսր է դառնալու։ Լեոնտիոսն ասաց նրանց. «Դուք ինձ բանտում վստահեցնում էիք, թե կայսր կդառնամ։ Արդ, ես այժմ շարաշար հոգիս եմ ավանդելու։ Չէ՞ որ ամեն րոպե ես մահվան եմ սպասում»։ Նրանք ասացին. «Բավական է

դու չզլանաս, իսկ դա անպայման կիրականանա։ Դու միայն լսիր մեր խոսքը և հետևիր մեզ»։ Լեոնտիոսը, առնելով իր մարդկանց և ինչքան զենք որ ուներ, շատ ծածուկ պրետորիոն[459] բարձրացավ։ Նրանք թակելով դարբասն, ասացին, թե կայսրն է եկել այնտեղի ոմանց վերաբերյալ կարգադրություններ անելու։ Երբ ժամանակվա հյուպարքոսին[460] իմաց տրվեց և նա շտապ գալով բացեց դարբասները, Լեոնտիոսը բռնեց նրան, ապտակեց և ձեռքն ու ոտքը շղթայեց։ Լեոնտիոսը մտավ բանտ, կապանքներից ազատեց բազում ազնվական մարդկանց, որոնցից շատերը զինվորականներ էին՝ վեց-ութ տարի բանտարկված, և զինելով, նրանց հետ դուրս եկավ ֆորում[461], գոչելով. «Ով քրիստոնյա է, թող սուրը Սոֆիա գնա»։ Նա բոլոր ռեգիոնները[462] մարդիկ ուղարկեց, հրամայելով նույն բանը հայտարարել։ Քաղաքի բնակչությունն իրար անցած փութաց դեպի եկեղեցու ջրավազանը, իսկ ինքը իր երկու վանական ընկերների և բանտից ազատված մի քանի հայտնի մարդկանց ուղեկցությամբ բարձրացավ պատրիարքի մոտ պատրիարքարան։ Նրան ևս նա գտավ շատ շփոթված՝ Ստեփանոս Ռուսիոսի ստացած հրամանի պատճառով, համոզեց իջնել ջրավազանը և հայտարարել. «Հենց սա է Տիրոջ ծագեցրած օրը»։ Ողջ բազմությունն աղաղակեց. «Փորփրվեն Հուստինիանոսի ոսկորները»[463]։ Համայն ժողովուրդը խուժեց դեպի ձիարշավարան։ Երբ լույսը ծագեց, Հուստինիանոսին սֆենդոնեի[464] միջով բերեցին ձիարշավարան, քիթն ու լեզուն կտրեցին և խերսոն[465] աքսորեցին։ Ամբոխը ձերբակալեց գենիկոնի լոգոթետ վանական Թեոդոտոսին և սակելլարիոս Ստեփանոս Պարսկին, նրանց ոտքերը շվաններով կապեց և քարշ տվեց Մեսե պողոտայով, տարավ Ցլի հրապարակը[466] և կրակի տվեց, որից հետո Լեոնտիոսին կայսր հռչակեց[467]։

[A. M. 6188]

Հռոմայեցիների կայսր Լեոնտիոս։ Թագավորեց 3 տարի։

[Հռոմայեցիների Լեոնտիոս կայսեր] 1-ին տարին	[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 13-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի դահ բարձրացավ Լեոնտիոսը և հարևանների հետ խաղաղ մնաց։

[A. M. 6189]

[Հռոմայեցիների Լեոնտիոս կայսեր] 2-րդ տարին	[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 14-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Վալիդն[468] արշավեց Ռոմանիայի վրա և բազում գերիներով վերադարձավ։ Ապստամբեց Լազիկայի Սերգիոս պատրիկը, Բարնուկիոսի որդին, և Լազիկան արաբներին հպատակեցրեց։

[A. M. 6190]

[Աշխարհի արարչագործության] 6190 թ. *[Քրիստոսի մարդեղության] 690 թ.* *[Հռոմայեցիների Լեոնտիոս կայսեր] 3-րդ տարին*

[Արաբների առաջնորդ Արդալմելիքի] 15-րդ տարին *[Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի] 5-րդ տարին*

Այդ տարի արաբներն արշավեցին Աֆրիկայի[469] վրա, առան այն և տեղում իրենց զորքից կայազոր հաստատեցին։ Լեոնտիոսը, իմանալով այդ մասին, մի կարող մարդու, Հովհաննես պատրիկին հռոմեական ողջ նավատորմիղով այնտեղ ուղարկեց։ Հասնելով Կարթագեն, նա պատերազմով բացել տվեց այնտեղի նավահանգիստը [փակող] շղթան, թշնամիներին փախուստի մատնեց, երկրից վռնդեց և ազատագրեց Աֆրիկայի բոլոր բերդերը։ Տեղում սեփական կայազոր թողեց, կատարվածի մասին հայտնեց կայսեր և, սպասելով նրա կարգադրություններին, տեղում ձմեռեց։ Ամիրապետը[470], իմանալով այդ մասին, նրանց դեմ շատ ավելի հզոր ու մեծ նավատորմիղ ուղարկեց, մարտ տալով վերոհիշյալ Հովհաննեսին, իր նավատորմիղով հանդերձ նավահանգստից քշեց, [քաղաքը] օղակի մեջ առավ, իսկ ինքն էլ դրսում բանակեց։ Վերոհիշյալ [Հովհաննեսը] ճամփա ընկավ դեպի Ռոմանիա, կայսրից ավելի մեծ ուժ ստանալու մտադրությամբ։ Դեպի կայսրը գնալու ճանապարհին նա հասավ Կրետե։ Զորքը, սակայն, սեփական հրամանատարների ազդեցության տակ, չէր ուզում կայսեր մոտ վերադառնալ (նրան վախն ու ամոթն էր համակել) և նա վճիռ է կայացնում. կայսեր գահընկեց հայտարարում և Կորիկոսում նստող Կիբյուրեոտների [բանակաթեմի][471] դրունգար Ապսիմարոսին կայսր հռչակում՝ Տիբերիոս վերանվանելով։ Երբ Լեոնտիոսը Կոստանդնուպոլսի Նեորեսիոն[472] նավահանգիստն էր մաքրում, քաղաքում ժանտախտ բռնկվեց և չորս ամսվա ընթացքում բազում կյանքեր խլեց։ Ապսիմարոսը իր նավատորմիղով տեղ հասավ և խարիսխ գցեց Սիկեում՝ քաղաքի դիմացի ափը։ Որոշ ժամանակ քաղաքացիները չէին ուզում Լեոնտիոսին դավել, բայց դավեցին Վլախեռնայի անմարտկոց պարիսպը պահպանող դրսեցի հրա-

մանատարները, որոնց՝ սարսափելի երդումներով սուրբ սեղանից վերցրել և տվել էին ցամաքային պարսպի բանալիները։ Ահա սրանք նենգաբար հանձնեցին քաղաքը։ Ծովային հետևակը, մտնելով քաղաքացիների տները, կողոպտեց նրանց։ Ապսիմարոսը կտրեց Լեոնտիոսի քիթը և հրամայեց նրան արգելափակել Դելմատոսի վանքում[473], իսկ նրա իշխաններին ու մտերիմներին, որպես նրա հետ մինչև մահ գնալու ուխտած, գանահարեց, բռնագրավեց նրանց ունեցվածքը և աքսորեց։ Իսկ իր հարազատ եղբայր Հերակլիոսին, որպես շատ կարող մարդու, դրսի հեծելազորի գլխավոր հրամանատար նշանակելով, Կապադովկիայի և կլեյսուրների կողմերն ուղարկեց՝ թշնամիների վրա հսկելու և նրանց հետևելու։

[A. M. 6191]

Աշխարհի արարչագործության 6191 թ.	Քրիստոսի մարդեղության 691 թ.	
Հռոմայեցիների Ապսիմարոս կայսեր 7-ամյա թագավորության 1-ին տարին	Արաբների առաջնորդ Աբդալմելիքի 22-ամյա իշխանության 16-րդ տարին	Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի 12-ամյա աթոռակալության 6-րդ տարին

Այդ տարի թագավորությանը տիրացավ Ապսիմարոսը[474]։ Պարսկաստանում ապստամբություն բարձրացրեց Աբդեռահմանը, որը տիրեց երկրին և խագանին[475] այնտեղից հալածական արեց։

[A. M. 6192]

[Հռոմայեցիների Ապսիմարոս կայսեր] 2-րդ տարին	[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 17-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի սաստիկ մահ տարաժամ եղավ։ Մոհամմեդը արաբական մեծաթիվ զորքով Աբդեռահմանի դեմ արշավեց և, գրավելով Պարսկաստանը, միացավ խագանին։ Նրանք պատերազմելով Աբդեռահմանի դեմ, սպանեցին նրան և Պարսկաստանը խագանին վերադարձրին։ Իսկ հռոմայեցիներն արշավեցին Ասորիքի վրա, եկան մինչև Սամոսատ, ասպատակեցին մերձակա շրջանները, շատերին կոտորեցին, ինչպես պատմում են՝ 200 հազար արաբ։ Նրանք մեծ ավարով և բազում արաբ գերիներով վերադարձան, նրանց մեջ անչափ մեծ սարսափ տարածելով։

[A. M. 6193]

[Հռոմայեցիների Ապսիմարոս կայսեր] 3-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 18-րդ տարին* | *[Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի] 8-րդ տարին*

Այդ տարի Աբդելան[476] Ռոմանիայի վրա արշավեց, պաշարեց Տարանտան, բայց հաջողություն չունենալով, վերադարձավ ու կառուցեց Մոպսուեստիան, որտեղ և կայազոր հաստատեց։

[A. M. 6194]

[Հռոմայեցիների Ապսիմարոս կայսեր] 4-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 19-րդ տարին* | *[Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի] 9-րդ տարին*

Այդ տարի Վահանը, մականունը Հեպտադեմոն[477], Չորրորդ Հայքը արաբներին հպատակեցրեց, իսկ Ապսիմարոսը Նիկեփոր պատրիկի որդի Ֆիլիպպիկոսին, որպես թագավորելու ցնորքներով տարված, կեֆալոնիա աքսորեց։ Նա պատմում էր, թե երազում արծիվը իր գլխին ստվեր էր անում։ Կայսրը, լսելով դա, նրան իսկույն աքսորեց։

[A. M. 6195]

[Հռոմայեցիների Ապսիմարոս կայսեր] 5-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 20-րդ տարին* | *[Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի] 10-րդ տարին*

Այդ տարի հայոց նախարարները[478] սարակինոսների դեմ ապստամբեցին և Հայաստանում եղած սարակինոսներին կոտորեցին։ Նրանք հապճեպ Ապսիմարոսին դիմեցին և հռոմայեցիներին իրենց երկիրը բերեցին։ Մոհամմեդը, արշավելով նրանց դեմ, շատերին կոտորից, Հայաստանը սարակինոսներին հպատակեցրեց, իսկ հայոց մեծամեծներին մի տեղ հավաքելով, ողջակեզ արեց[479]։ Նույն այդ ժամանակ Աղաբը տասը հազարանոց զորքով Կիլիկիայի վրա արշավեց։ Կայսեր եղբայր Հերակլիոսը հանդիպելով նրանց, շատերին ջարդ տվեց, իսկ մնացածներին շղթայակապ կայսեր ուղարկեց։

[A. M. 6196]

[Հռոմայեցիների Ապսիմարոս կայսեր] 6-րդ տարին | *[Արաբների առաջնորդ Աբդալմելիքի] 21-րդ տարին* | *[Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի] 11-րդ տարին*

Այդ տարի Խունեիի որդի Եզիդը Կիլիկիայի վրա արշավեց։ Կայսեր եղբայր Հերակլիոսը պաշարեց և գրավեց Սիս բերդը[480], [Եզիդին] մարտ տվեց և սպանեց տասներկու հազար արաբ։ Հուստինիանոսը, որ Խերսոնում էր մնում, հայտարարում էր, թե ինքը վերստին է թագավորելու։ Տեղի բնակիչները, վախենալով կայսրից, որոշեցին կամ սպանել Հուստինիանոսին, կամ էլ բռնել և կայսեր ուղարկել։ Հուստինիանոսը, իմանալով դա, կարողացավ ճողոպրել և, հասնելով Դարաս[481], խնդրեց հանդիպել խազարների խաքանին[482]։ Վերջինս, իմանալով այդ մասին, Հուստինիանոսին փառք ու պատվով ընդունեց և իր հարազատ քրոջ՝ Թեոդորային[483] նրան կնության տվեց։ Փոքր անց խաքանի թույլտվությամբ նա իջավ Ֆանագուրիա[484] և Թեոդորայի հետ այնտեղ հաստատվեց։ Ապսիմարոսը, տեղեկանալով այդ մասին, դիմեց խաքանին, բազում նվերներ խոստացավ, եթե վերջինս Հուստինիանոսին կենդանի, կամ ծայրահեղ դեպքում նրա գլուխը, իրեն ուղարկի։ Խաքանը ընդառաջ գնաց նրա խնդիրքին և Հուստինիանոսի մոտ թիկնապահներ ուղարկեց, որոնք իբրև թե նրան պաշտպանելու էին իր հայրենակիցների դավերից։ Նա հանձնարարեց տեղում գտնվող իր ներկայացուցիչ Պապացիսին և Բոսպորի արխոնտ Բալգիցիսին[485]՝ իր կարգադրությունն ստանալուն պես սպանեն Հուստինիանոսին։ Խաքանի մի ծառան սակայն Թեոդորային տեղյակ պահեց, այդ մասին իմացավ և Հուստինիանոսը, որը հրավիրելով վերոհիշյալ Պապացիսին մասնավոր խոսակցության, նրան աղեղի լարով խեղդամահ արեց, ինչպես և Բոսպորի արխոնտ Բալգիցիսին։ Այնուհետև նա փութանակի Թեոդորային խազարիա ուղարկեց, իսկ ինքը Ֆանագուրիայից ծածուկ փախչելով, իջավ Տոմիս[485]։ Զկնորսական սարքին մի նավակ գտնելով, մտավ մեջը և նավարկելով Ասադի[486] ափով եկավ մինչև Խերսոնի մոտ գտնվող Սյումբոլոնը։ Նա գաղտնի մարդ ուղարկեց Խերսոն և իր մոտ կանչեց Վարազբակուրին[487], նրա եղբոր, նաև Սալիբասին, Ստեփանոսին, Մորոպավղոսին և Թեոփիլոսին։ Ահա սրանց հետ նա նավ նստեց և անցավ Խերսոնի փարոսը, ապա Նեկրոպելեն[488], Դանապրի և Դանաստրի գետաբերանը։ Փոթորկի հանդիպելով, բոլորն էլ հուսաբեկ եղան։ Հուստինիանոսի մտերիմ Միակեսն[489] ասաց նրան. «Ահա, տեր, մենք կորած ենք, փրկվելու համար աստծուն ուխտիր, որ եթե նա վերադարձնի քեզ քո թագավորությունը, դու քո և ոչ մի թշնամուց վրեժխնդիր չես լինելու»։ Նա զայրացած պատասխանեց. «Եթե նրանցից որևէ մեկին խնայեմ, թող աստված ինձ այստեղ ջրասույզ անի»։ Նա փոթորկից անվնաս դուրս գալով, մտավ Դանուբ գետը։ Նա Ստեփանոսին Բուլղարիայի տեր Տերվելիսի[490] մոտ

ուղարկեց՝ իր պապենական թագավորությանը տիրանալու համար օգնություն խնդրելու, խոստանալով նրան տալ բազում նվերներ, նաև իր դստեր՝ կնության։ Տերվելիսը նրան երդվեց կատարյալ հնազանդություն և աջակցություն, պատվով ընդունեց Հուստինիանոսին, ապա ոտքի հանեց իրեն հպատակ բուլղար և սկլավ ժողովուրդը և հաջորդ տարի զենքերն առած շարժվեցին դեպի թագավորանիստ քաղաքը։

[A. M. 6197]

Աշխարհի արարչագործության 6197 թ.

Հռոմայեցիների Ապսիմարոս կայսեր 7-ամյա թագավորության 7-րդ տարին

Քրիստոսի մարդեղության 697 թ.

Արաբների առաջնորդ Աբդալմելիքի 22-ամյա իշխանության 22-րդ տարին

Կոստանդնուպոլսի Կալլինիկոս պատրիարքի 12-ամյա աթոռակալության 12-րդ տարին

Այդ տարի մեռավ արաբների առաջնորդ Աբդալմելիքը։ Իշխեց նրա որդի Վալիդը[491]։

Նույն տարին Հուստինիանոսը Տերվելիսի և նրան դաշնակցած բուլղարների հետ հասավ թագավորանիստ քաղաքը և բանակեց Խարսիոսի դարբասից[492] սկսած մինչև Վլախեռնա։ Նրանք երեք օր դիմում էին քաղաքի բնակիչներին, բայց նրանցից հայհոյանք էին լսում, նրանց հետ խոսել անգամ չէին ուզում։ Հուստինիանոսը մի քանի հայրենակիցներով, առանց մարտ տալու, ստորգետնյա ջրմուղի միջով անցավ քաղաք և հեղաշրջման խուճապ ստեղծելով, տիրացավ քաղաքին։ Նա կարճ ժամանակով հաստատվեց Վլախեռնայի պալատում։

[A. M. 6198]

Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր երկրորդ թագավորություն[493]։ Իշխեց 6 տարի։

Արաբների առաջնորդ Վալիդ։ Իշխեց 9 տարի։

Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարք[494]։ Աթոռակալեց 6 տարի։

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 1-ին տարին

[Արաբների առաջնորդ Վալիդի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Հուստինիանոսը վերստին տիրացավ գահին, իսկ Տերվելիսին, բազում նվերներով, թագավորական սպասքներով, խաղաղու-

թյամբ ետ ուղարկեց[495]։ Ապսիմարոսը քաղաքը լքելով, փախավ Ապոլլոնիաս[496]։ Նրան հետապնդեցին, բռնեցին և Հուստինիանոսի մոտ բերեցին։ Հերակլիոսին էլ Թրակիայից շղթայակապ բերեցին, իրեն դաշնակցած բոլոր արխոնտների հետ միասին։ Հուստինիանոսը բոլորին պարսպի վրա կախեց։ Նրա կարգադրությամբ բովանդակ միջերկրյայքում[497] նրանց կողմնակիցներից շատերին բռնեցին և, մեղավոր թե անմեղ, նույնպես կոտորեցին։ Կայսրը Ապսիմարոսին և Լեոնտիոսին շղթայակապ ամբողջ քաղաքով մեկ ծանակեց։ Ձիարշավական մրցումների ժամանակ, երբ Հուստինիանոսը բազմած էր իր դահին, նրանց քարշ տվեցին և գցեցին նրա ոտքերը։ Հուստինիանոսը ոտքը դրեց նրանց պարանոցին և այդպես պահեց մինչև ձիարշավի առաջին շրջանի ավարտը։ Դեմոսը գոչեց. «Դու իժի և քարբի վրա կոխեցիր, առյուծ ու վիշապ տրորեցիր»[498]։ Հուստինիանոսը նրանց ուղարկեց Կյունեգիոն[499], ուր և գլխատեց։ Նա Կալլինիկոս պատրիարքին կուրացրեց և Հռոմ աքսորեց, պատրիարքական աթոռին նստեցրեց Ամաստրիս կղզու[500] անապատական Կյուրոսին, քանզի նա կանխագուշակել էր իր երկրորդ թագավորության մասին։ Նա անթիվ, անհամար քաղաքական ու զինվորական գործիչների կոտորեց, շատերին պարկերի մեջ գցելով ծովը նետեց և դառն մահվան արժանացրեց, ուրիշներին ճաշի կամ ընթրիքի հրավիրեց, որի ավարտից հետո ոմանց կախեց, ոմանց էլ սրակոտոր արեց։ Բոլորին մեծ սարսափ համակեց։ Այնուհետև Խազարիայից իր կնոջ բերելու համար տորմիղ ուղարկեց, բայց ճանապարհին բազում նավեր մարդկանցով հանդերձ ջրասույզ եղան։ Խաքանը, իմանալով այդ մասին, հայտնեց նրան. «Հիմար, չէի՞ր կարող կնոջդ տանելու համար երկու կամ երեք նավ ուղարկել և շոշնչացնել այդքան մարդկանց։ Գուցե կարծում ես, որ կնո՞ջդ էլ պիտի պատերազմով առնես։ Քեզ որդի է ծնվել, մարդ ուղարկիր, երկուսին էլ տար»։ Հուստինիանոսն ուղարկեց Թեոփիլակտոս կուբիկուլարիոսին և բերել տվեց Թեոդորային և նրա որդի Տիբերիոսին, որոնց թագադրեց։ Նրանք իր հետ թագավորեցին։

[A. M. 6199]

Երուսաղեմի Հովհաննես պատրիարք[501]։ Աթոռակալեց երեսուն տարի։

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 2-րդ տարին

[Արաբների առաջնորդ Վալիդի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 2-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի Թշվառական Վալիդը, քրիստոնյաների հանդեպ նախանձով տարված, հափշտակեց Դամասկոսի ամենասուրբ կաթողիկե եկեղեցին. տաճարը շատ էր գեղեցիկ։ Նա կարգադրեց պետական հաշվեմատյանները հունարեն չկազմել, այլ արաբերեն, բացառյալ թվանշանները, քանզի նրանց տառերով[502] անհնարին է գրել միանիշ, երկանիշ, եռանիշ թվեր կամ ութ ու կես, կամ երեք։ Այդ է պատճառը, որ մինչև օրս նրանք քրիստոնյա նոտարներ են պահում։

[A. M. 6200]

Աշխարհի արարչագործության 6200 թ.

Քրիստոսի մարդեղության 700 թ.

Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր 6-ամյա թագավորության 3-րդ տարին

Արաբների առաջնորդ Վալիդի 9-ամյա իշխանության 3-րդ տարին

Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի 6-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի 30-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Այդ տարի Հուստինիանոսը վերացրեց հռոմայեցիների և բուլղարների միջև կնքված հաշտության պայմանագիրը. հեծելազորը Թրակիա անցկացնելով և նավատորմիղը մարտական վիճակի բերելով, նա բուլղարների և Տերվելիսի վրա հարձակվեց։ Հասնելով Անքիալոս[503], նավատորմիղին կարգադրեց [քաղաքի] առաջ խարիսխ գցել, իսկ հեծելազորին առանց որևէ պահակության և անկեղակարծ բանակել [քաղաքից] վերև գտնվող հովիտներում։ Զորքը ոչխարների պես ցրվեց հովիտներով մեկ խոտ հավաքելու, իսկ բուլղարների հետախույզները լեռներից տեսնելով հռոմայեցիների ողորմելի կարգուկանոնը, մի տեղ հավաքվեցին, հանկարծակի գազանների պես նետվեցին և հռոմայեցիների հոտին մեծ ջարդ տվեցին, բազում գերիներ վերցրին, ձի ու զենք ձեռք

բերեցին։ Հուստինիանոսը վերապրածների հետ բերդում ապաստանեց և երեք օր դարբասները փակ պահեց։ Տեսնելով, որ բուլղարները չեն հեռանում, առաջինն ինքը կտրեց իր ձիու ջլերը, ապա հրամայեց բոլորին նույն բանն անել։ Պարիսպների վրա հաղթական նշաններ թողնելով, նա գիշեր ժամանակ ու ծածուկ հեռացավ, խայտառակ կերպով մտավ քաղաք։

[A. M. 6201]

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 4-րդ տարին

[Արաբների առաջնորդ Վալիդի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 4-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Մասլաման[504] ու Աբասը[505] Մարիանոսի կողմից Մայումայի[506] գլխավորած [արաբական] զորքի կրած ջարդից գազազած, արշավեցին Տիանայի[507] վրա, պաշարեցին այն ու ձմեռեցին այնտեղ։ Կայսրը [արաբների] դեմ կռվելու և նրանց քշելու համար զորքով և շինականների աշխարհազորով երկու զորավար ուղարկեց, Թեոդորոս Կարտերուկասին[508] և Թեոփիլակտոս Սալիբասին[509]։ Սակայն նրանց մեջ ծագած գժտության պատճառով [արաբների] դեմ կռվի ձեռնարկեցին անկազմակերպ և պարտություն կրեցին, հազարավոր մարդիկ սպանվեցին, շատերն էլ գերի ընկան։ Արաբները ձեռք գցեցին նաև սրանց տուլգոնն ու պարենը և շարունակեցին քաղաքի պաշարումը, մինչև որ գրավեցին այն։ Մինչ այդ նրանց պարենը վերջացել էր և նրանք որոշել էին հեռանալ։ Տիանա քաղաքի բնակիչները այդ բանի ականատես լինելով հուսաբեկ եղան և արաբներից անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստանալով, քաղաքից դուրս եկան դեպի արաբները, լքեցին քաղաքը, որը մինչև օրս էլ այդպես անմարդաբնակ է։ Արաբները, սակայն, իրենց խոստումը դրժեցին և նրանց անապատը քշեցին, շատերին էլ ստրկացրին։

[A. M. 6202]

[Աշխարհի արարչագործության] 6202 թ.

[Քրիստոսի մարդեղության] 702 թ.

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 5-րդ տարին

[Արաբների առաջնորդ Վալիդի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 5-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Աբասն արշավեց Ռոմանիայի վրա և բազմաթիվ գերիներով վերադարձավ։ Հելիոպոլսի շրջանում նա սկսեց Գարիսի[510] կռուցումը։

[A. M. 6203]

[Հռոմայեցիների Հուստինիանոս կայսեր] 6-րդ տարին

[Արաբների առաջնորդ Վալիդի] 6-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կյուրոս պատրիարքի] 6-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի Օթմանն արշավեց Կիլիկիայի վրա և պայմանով բազում բերդերի տիրացավ։ Դավաճանությամբ [արաբների] ձեռքն անցավ և Կամախը՝ մերձակա շրջաններով։ Հուստինիանոսը Մավրոս պատրիկին և Ստեփանոս պատրիկին, մականունը՝ Ասմիկտոս, մեծ նավատորմիղ հանդերձելով, Խերսոն ուղարկեց։ Նա ոչ էր կապել, չէր մոռացել խերսոնցիների, բոսպորցիների և մյուս կլիմաների՝ իր դեմ կատարած ոտընձգությունը։ Նավատորմիղը, որ բաղկացած էր ամեն տեսակի նավերից՝ դրոմոններից, տրիերաներից, միրիագոգներից, ձկնորսական նավերից, մինչև անգամ խելանդիոններից, հանդերձել էին քաղաքում բնակվող սենատորները, արհեստավորները, դեմոտներն ու ամեն տեսակի պաշտոնյաները։ Նրանց[511] նա ճամփու դրեց, կարգադրելով սրածել հիշյալ բերդերի ողջ բնակչությունը, ոչ ոքի կենդանի չթողնել։ Նրանց հետ ուղարկեց և Էլիաս սպաթարին, որը պետք էր Խերսոնի կառավարիչ դառնար։ Նրանք հասան Խերսոն և առանց որևէ դիմադրության տիրացան բերդերին, բոլորին սրի քաշեցին, խնայեցին միայն երեխաներին, որոնց ստրկացրին։ Խերսոնի կառավարիչ Տուդունոսին[512], որպես խաքանի տեղապահի[513], ապա դիրքով ու ծագումով առաջին քաղաքացի համար-

վող Զոյիլոսին և Խերսոնի ուրիշ քառասուն երևելիների ու մեծամեծնե-
րի՝ ընտանյոք հանդերձ շղթայակապ կայսեր ուղարկեցին, Խերսոնի այլ
յոթը հայտնի մարդկանց փայտե շամփուրի քաշելով, կրակի վրա խո-
րովեցին։ Ուրիշ քսան հոգու էլ թևերը մեջքին կապոտած, խելանդիոնի
մեջ թոկով կապեցին, ապա խելանդիոնը քարերով լցրին և ջրասույզ
արեցին։ Հուստինիանոսը կատարվածի մասին տեղեկանալով, երեխա-
ների փրկության առթիվ գաղաղեց, նա հրամայեց նրանց անհապաղ իրեն
ներկայանան։ Նավատորմիղը հոկտեմբեր ամսին ճանապարհ ընկավ և
Տավրուրա[514] կոչվող աստղի ծագելու ժամանակ բաց ծով դուրս գալով,
քիչ մնաց գլխովին ջրասույզ լիներ։ Փոթորկի զոհ գնացած մարդկանց
թիվը հաշվեցին 73 հազար հոգի։ Հուստինիանոսը, տեղեկանալով այդ
մասին, ամենևին էլ չտխրեց, ընդհակառակը, բերկրանքով լցվեց։
Հափշտակված լինելով օրեցօր սաստկացող մոլեգնությամբ, սպառնա-
լիքներով մի ուրիշ նավատորմիղ ուղարկեց, հրամայելով ամեն ինչ վա-
ռի տալ ու գետնին հավասարեցնել, մինչև անգամ «որ միզիցէ զոր-
մով»[515]։ Այդ բերդերի [բնակիչները], իմանալով դա, որոշեցին պաշտ-
պանվել, ստիպված լինելով չենթարկվել կայսեր, դիմեցին խազարիայի
խաքանին և իրենց պաշտպանության համար զորք խնդրեցին։ Այդ ըն-
թացքում գործի են անցնում նաև էլիաս սպաթարը, աքսորական Վար-
դանը[516], որն այն ժամանակ Կեֆալոնիայից ետ էր կանչվել և նավա-
տորմիղով Խերսոնում էր գտնվում։ Հուստինիանոսը, լսելով այդ մասին,
մի բանի դրոմոններով [Խերսոն] ուղարկեց գենիկոնի լոգոթետ Գեորգ
պատրիկին՝ Ասորի մականվանյալին, Հովհաննես էպարքոսին, Թրակէ-
սիոնի տուրմարխ Քրիստափորին՝ երեք հարյուր զինվորներով։ Նրանց
նա կարգադրեց, որ Տուդունոսն ու Զոյիլոսը պետք է վերահաստատվեն
Խերսոնում, խաքանին բացատրություններ տալու համար ապոկրի-
սիարիոս ուղարկեն, իսկ էլիասին ու Վարդանին իր մոտ բերեն։ Նրանք
բոլորը խարիսխ գցեցին Խերսոնում, բայց Խերսոնի բնակիչները նրանց
չընդունեցին։ Հաջորդ օրը քաղաքացիները թույլ տվեցին ներս մտնել
միայն ղեկավարներին, բայց այնուհետև նրանց ետևից փակելով դար-
բասները, գենիկոնի լոգոթետին էպարքոսի հետ միասին սրի քաշեցին,
Տուդունոսին, Զոյիլոսին և վերոհիշյալ տուրմարխին՝ երեք հարյուր զին-
վորներով խազարներին հանձնեցին, ուղարկեցին խաքանին։ Տուդունո-
սը ճանապարհին մեռավ, իսկ խազարները նրա փոխարեն տուրմարխին
և երեք հարյուր զինվորներին սպանեցին։ Այդ ընթացքում Խերսոնցի-
ները, ինչպես և մյուս բերդերի բնակիչները Հուստինիանոսին գահընկեց
հայտարարեցին, իսկ իրենց մոտ աքսորված Ֆիլիպպիկոս Վարդա-

նին կայսր հոչակեցին։ Հուստինիանոսը, իմանալով այդ մասին, էլ ավելի գազազեց, Էլիաս սպաթարի երեխաներին իրենց մոր ծոցում սրի քաշեց, իսկ այդ կնոջը ստիպեց ամուսնանալ իր հնդիկ խոհարարի հետ։ Այնուհետև մի նոր նավատորմիղ հանդերձելով, Մավրոս պատրիկի՝ Բեսոս մականվանյալի գլխավորությամբ [Խերսոն] ուղարկեց, տալով նրան բերդամարտության համար անհրաժեշտ խոյ, մեքենաներ և ամեն տեսակի քաղաքավեր միջոցներ, պատվիրելով Խերսոնի պարիսպները, ողջ քաղաքը գետնին հավասարեցնել, բնակչությունը մինչև վերջին մարդը կոտորել և իր կատարածի մասին հաճախակի զեկուցել։ Նավարկելով նա հասավ [Խերսոն], խոյի օգնությամբ քանդեց Կենտենարեսիոն, ինչպես և նրա մոտ գտնվող Սիագրոս կոչվող աշտարակները։ Երբ վրա հասան խազարները, կռիվը դադարեց։ Իսկ Վարդանը փախուստի դիմեց դեպի խաքանը։ Նավատորմիղն այսպիսով ոչնչի չհասավ և այդ իսկ պատճառով չէր համարձակվում կայսեր մոտ վերադառնալ, և ըստիպված ինքը ևս Հուստինիանոսին գահընկեց հայտարարեց, իսկ Վարդանին՝ կայսր։ Խաքանից նրանք խնդրեցին Ֆիլիպպիկոսին իրենց տալ։ Խաքանը նրանցից խոսք պահանջեց, թե Ֆիլիպպիկոսին չեն դավի, ապա և յուրաքանչյուրից՝ մեկական դահեկան։ Զինվորներն իսկույն համաձայնեցին և ստացան Ֆիլիպպիկոս կայսեր։ Երբ նավատորմիղն ուշացավ, որևէ զեկուցագիր էլ տեղ չհասավ, Հուստինիանոսը կռահելով դրա պատճառը, Օպսիկիոնի և Թրակեսիոնի [զորքի] մի մասով գնաց Սինոպ, Խերսոնում կատարվածի մասին տեղեկություններ ստանալու։ Երբ նա զննում էր պերատիկա կողմերը[517], տեսնում է դեպի քաղաք նավող տորմիղը և առյուծի պես մռնչալով, ինքն էլ շտապեց դեպի քաղաք։ Ֆիլիպպիկոսն իրենից առաջ տեղ հասնելով, գրավեց քաղաքը։ Հուստինիանոսն եկավ Դամատրիս[518] և իր մարդկանցով այնտեղ բանակեց։ Ֆիլիպպիկոսն առանց հապաղելու Մավրոս պատրիկին և Հովհաննես սպաթարին՝ մականունը Ստրութոս, Տիբերիոսի դեմ է ուղարկում, իսկ Էլիասին մի զորախմբով՝ Դամատրիս, Հուստինիանոսի դեմ, մի այլ զորախումբ էլ՝ փախուստի դիմած Վարազբակուրի։ Մավրոսը, վերոհիշյալ Ստրութոսի հետ գալով Վլախեռնա, Տիբերիոսին գտավ մի ձեռքով աստվածածնի սուրբ սեղանի սյունիկը բռնած, մյուս ձեռքով՝ պատվական [խաչա]փայտ, վզից էլ հմայիլ կախած։ Բեմից ցած նըստած էր Անաստասիան, իր հոր մայրը, որն ընկնելով Մավրոսի ոտքերին, պաղատում էր չսպանել իր թոռ Տիբերիոսին, քանզի նա ոչ մի վատ բան չի գործել։ Այդ միջոցին, երբ [Անաստասիան] նրա ոտքերն էր գրկած և արտասվալից աղերսում էր, Ստրութոսը բեմ բարձրացավ և

բռնի քաշեց Տիբերիոսին։ Նրանից նա վերցրեց պատվական [խաչա]-փայտը, դրեց սուրբ սեղանին, հմայիլն էլ իր վզից կախեց։ Տղային տարան Կալլինիկեի վերին կողքի դռնով, մերկացրին և գետին փռելով ոչխարի պես մորթեցին, ապա կարգադրեցին նրա մարմինն այսպես կոչված Պավլինեի Սրբոց Անարծաթից տաճարում թաղել[519]։ Ձերբակալվեց և Օպսիկիոնի կոմես Վարազբակուր պրոտոպատրիկը, որը նույնպես մահապատժի ենթարկվեց։ Իսկ Էլիասն իր զինվորներով բարձրացավ Դամատրիս և բանակցությունների մեջ մտավ այնտեղ գտնվող զորքի հետ։ Երբ Հուստինիանոսի զինվորները նրանից անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստացան, գլխովին լքեցին Հուստինիանոսին և փախան։ Նրան մենակ թողնելով, Ֆիլիպպիկոսի կողմն անցան։ Վերոհիշյալ Էլիաս սպաթարը գաղտագաղտի, հարձակվեց [Հուստինիանոսի] վրա, բռնեց նրան վզից և իր գոտուց կապած դաշույնով նրա գլուխը կտրեց, ապա այն Ռոմանոս սպաթարի միջոցով Ֆիլիպպիկոսին առաքեց, որը նույն սպաթարի միջոցով արևմուտք ուղարկեց, մինչև Հռոմ։ Նախքան Ֆիլիպպիկոսի թագավորելը, Կալլիստրատոսի վանքի անապատական մի հերետիկոս գուշակ, գնալով Ֆիլիպպիկոսի մոտ ասել էր. «Դու կայսր կդառնաս»։ Նա ցնցվեց, իսկ անապատականն ասաց. «Ինչո՞ւ ես հակադրվում ասածս կամքին։ Ես քեզ ասում եմ. վեցերորդ ժողովն[520] ի չարս եղավ, երբ թագավորես, մերժի՛ր այն և քո թագավորությունը ամուր ու երկարամյա կլինի»։ Նա երդվեց այնպես անել։ Երբ Լեոնտիոսին փոխարինեց Հուստինիանոսը, Ֆիլիպպիկոսն անապատականի մոտ գնաց։ Վերջինս ասաց. «Անհոգ մնա, դա կլինի»։ Երբ Ապսիմարոսը թագավորեց, Ֆիլիպպիկոսը դարձյալ նրա մոտ գնաց և նա կրկին ասաց. «Անհոգ մնա, այն սպասում է քեզ»։ Ֆիլիպպիկոսն իր ընկերներից մեկին վստահեց այդ գաղտնիքը, բայց նա գնաց հայտնեց Ապսիմարոսին։ Վերջինս Ֆիլիպպիկոսին գանակոծեց, խուզեց և շղթայակապ Կեֆալոնիա աքսորեց։ Հուստինիանոսն իր երկրորդ թագավորության ժամանակ նրան ետ կանչեց։ Ֆիլիպպիկոսը, համաձայն սուտանուն անապատական աբբայի պահանջի, եպիսկոպոսների ստահոդ ժողով գումարեց և մերժեց սուրբ և տիեզերական վեցերորդ ժողովը։ Բայց հենց այդ նույն տարին էլ տիմարը կուրացվեց[521]։ Նա պալատում գըտած լինելով երկար տարիների ընթացքում նախկին կայսրերի կողմից բռնագրավումների միջոցով և տարբեր պատրվակներով, հատկապես հիշյալ Հուստինիանոսի կողմից կուտակված բազում դրամ ու փառահեղ ունեցվածք, անհոգ կյանք էր վարում, ամբողջությամբ անխնա ու ապարդյուն ցրիվ տալիս։ Թեև զարգացած ու խոհեմ մարդու համարում

ուներ նա, բայց կյանքում անամոթ ու ապիկար, ամեն ինչում անճարակ էր։ Ի վերա ամենայնի նա հերետիկոս էր և շնացող։ Նա Կյուրոս պատրիարքին հեռացրեց և նրա աթոռին իր համակիր, իր պես հերձվածող Հովհաննեսին[522] նստեցրեց։

[A. M. 6204]

Աշխարհի արարչագործության 6204 թ.	Քրիստոսի մարդեղության 704 թ.	Հռոմայեցիների Ֆիլիպպիկոս կայսեր 2-ամյա թագավորության 1-ին տարին
Արաբների առաջնորդ Վալիդի 9-ամյա իշխանության 7-րդ տարին	Կոստանդնուպոլսի Հովհաննես ամյա 1-ին տարին	Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի 30-ամյա աթոռակալության 7-րդ տարին

Այդ տարի Ֆիլիպպիկոսը արտաքսեց հայերին իր երկրից և ստիպեց բնակվել Մելիտենեում և Զորրորդ Հայքում[523]։ Մասլաման գրավեց Ամասիան ու այլ բերդեր և ձեռք բերեց բազում գերիներ։ Ամասիայի Գեորգ եպիսկոպոսը տեղափոխվեց Մարտիրուպոլիս։ Ֆիլիպպիկոսն առանց ամաչելու մոլեգնորեն հանդես եկավ սուրբ և տիեզերական վեցերորդ ժողովի դեմ, ջանալով չեղյալ հայտարարել նրա հաստատած աստվածային դրույթները։ Իրեն համախոհ նա գտավ ի դեմս Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի (նրան ինքն էր պատրիարք նշանակել, հեռացնելով Կյուրոս պատրիարքին, որին արգելափակեց Խորայի վանքում)[524]։ Իր համախոհների թվում էին նաև Կյուզիկոսի Գերմանոս եպիսկոպոսը, որ հետագայում Կոստանդնուպոլսի պատրիարք դարձավ, Կրետեի Անդրեաս եպիսկոպոսը, Նիկոլայոսը, որը կավկոդիակոնից[525] բժշկագիտության մասնագետ դարձավ, իսկ այն ժամանակ քվեստոր էր, Մեծ եկեղեցու սարկավագ Էլպիդիոսը, խարտոֆիլաքս Անտիոքոսը և սրանց նմանները, որոնք գրավոր նզովեցին վեցերորդ սուրբ ժողովը։ Բուլղարները Ֆիլեայի[526] վրայով գաղտագողի խուժեցին Ստենոնը, մեծ ջարդ տվեցին, արշավեցին մինչև քաղաք, բնակիչներին գտան քաղաքից դուրս եկած՝ ճոխ ու հարուստ հարսանյաց հանդեսներով, առատ սեղաններով զբաղված, սեղաններ, որոնց վրա կային արծաթյա և այլ տեսակի սպասներ, և հասան մինչև Ոսկե դուռը, գերեվարեցին բովանդակ Թրակիան, անհամար անասուններ քշելով վերադարձան իրենց երկիրը։ Արաբները նույնպես արշավեցին, Միսթիան ու այլ բերդեր գրավեցին, բազում ընտանիքների գերի տարան և անհամար քանակությամբ անասուններ քշեցին։

[A. M. 6205]

[Հռոմայեցիների Ֆիլիպպիկոս կայսեր] 2-րդ տարին	[Արաբների առաջնորդ Վալիդի] 8-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի] 2-րդ տարին	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարի Աբասն արշավեց Ռոմանիայի վրա, Պիսիդիայի Անտիոքը գրավեց և բազում գերիներ վերցնելով վերադարձավ։ Պերիտիոս[527] ամսի 28-ին Ասորիքում ուժեղ երկրաշարժ եղավ։ Այդ միջոցին լրացավ Ֆիլիպպիկոսի թագավորության երկրորդ տարին և տարեդարձի առթիվ ձիարշավական մրցումներ էին տեղի ունենում, որտեղ պրասինոսները հաղթանակ տարան։ Կայսրը որոշեց Պենտեկոստեի շաբաթ օրը ձի նստած, շքախմբով, երաժշտությամբ գնալ լոգանք ընդունել Զևքսիպպոսի հանրային բաղանիքում և ապա մեծատոհմիկ քաղաքացիների հետ ճաշել։ Միջօրեին, սակայն, երբ նա հանգստանում էր, Օպսիկիոնի կոմես Գեորգ պատրիկի՝ Բուրաֆոս մականվանյալի, ինչպես և Թեոդորոս Միակիս պատրիկի դրդմամբ Թրակիա բանակաթեմի տաքսատոսներով Ոսկե դռնից հանկարծակի ներս մտավ Օպսիկիոնի պրոտոստրատոր Ռուֆոսը, խուժեց պալատ, Ֆիլիպպիկոսին գտավ կեսօրվա հանգիստն առնելիս, և բռնելով նրան, տարավ պրասինոսների օրնատորիոնը[528] և այնտեղ կուրացրեց. այդ մասին ոչ ոք էլ չիմացավ։ Հաջորդ, այն է Պենտեկոստեի օրը, երբ ժողովուրդը խռնվել էր Մեծ եկեղեցում, Արտեմիոս պրոտոասեկրետը, վերանվանվելով Անաստասիոս[529], կայսր թագադրվեց։ Պենտեկոստեի հաջորդ շաբաթ օրը կուրացվեց Թեոդորոս Միակիսը, իսկ երկրորդ շաբաթ օրը՝ Գեորգ Բուրաֆոսը[530], և Թեսաղոնիկե աքսորվեցին։

[A. M. 6206]

Աշխարհի արարչագործության 6206 թ.	Քրիստոսի մարդեղության 706 թ.	Հռոմայեցիների Արտեմիոս կայսեր 2-ամյա թագավորության 1-ին տարին
Արաբների առաջնորդ Վալիդի 9-ամյա իշխանության 9-րդ տարին	Կոստանդնուպոլսի Հովհաննես պատրիարքի 3-ամյա աթոռակալության 3-րդ տարին	Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի 30-ամյա աթոռակալության 9-րդ տարին

Այդ տարի Մասլաման Ռոմանիայում ասպատակ սփռեց, ավարառեց Գալատիան և բազում գերիներով ու թալանով վերադարձավ։ Արտեմիոսը հեծելազորի վրա խիստ կարող զորավարներ նշանակեց, շատ խոհեմ մարդկանց՝ քաղաքական գործերում, ինքն էլ անգործ նստեց։ Իմանալով, որ արաբները Ռոմանիայի դեմ ցամաքով ու ծովով արշավելու նախապատրաստություն են տեսնում, Ասորիք՝ Վալիդի մոտ իշխաններ ուղարկեց՝ Դանիել Սինոպցուն՝ Սինոպ քաղաքի պատրիկին և էպարքոսին, առերես խաղաղության շուրջ բանակցելու, բայց իրականում հանձնարարելով ճշգրիտ հետախուզել և իմանալ նրանց ուժի և Ռոմանիայի վրա շարժվելու մանրամասնությունների մասին։ Նա գնաց և վերադառնալով կայսեր զեկուցեց մայրաքաղաքի վրա արշավելու համար նրանց ծովային ու ցամաքային վիթխարի ռազմական նախապատրաստության մասին։ [Կայսրը հրամայեց], որ [Կոստանդնուպոլսի] յուրաքանչյուր բնակիչ իրեն երեք տարվա պարենով ապահովի, ով ի վիճակի չէ այդ անել, քաղաքից հեռանա։ Նա վերակացուներ նշանակեց և սկսեց հրակիր դրոմոններ ու դիերաներ շինել, հսկայական տրիերաներ, վերանորոգեց [քաղաքի] ծովափնյա պարիսպները, նմանապես և ցամաքայինները, աշտարակների վրա տեղադրեց նետարձակ, քարարձակ և այլ մեքենաներ։ Իր հնարավորությունների սահմաններում քաղաքն ամրացնելուց հետո, նա բազում պարեն լցրեց թագավորական շտեմարանները և իրեն ապահովեց։

[A. M. 6207]

Արաբների առաջնորդ Սուլեյման[531]։ Իշխեց 3 տարի։ Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարք[532]։ Աթոռակալեց 15 տարի։

[Հռոմայեցիների Արտեմիոս կայսեր] 2-րդ տարին

[Արաբների առաջնորդ Սուլեյմանի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 1-ին տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 10-րդ տարին

Այդ տարի վախճանվեց Վալիդը և նրա իշխանությունը ժառանգեց Սուլեյմանը։ Այդ նույն Արտեմիոսի, որ և Անաստասիոս, թագավորության երկրորդ՝ ինդիկտիոնի 13-րդ տարին, օգոստոս ամսի 11-ին Կյուզիկոսի մետրոպոլիտ Գերմանոսը դարձավ Կոստանդնուպոլսի [պատրիարք]։ Այդ առթիվ կարդացվեց սեղափոխության ներքոհիշյալ հրովարտակը. «Ամենաբարեպաշտ երեցների, սարկավագների, բովանդակ

սուրբ կղերի, սրբազան սենատի և այս աստվածապահ մայրաքաղաքի քրիստոսասեր ժողովրդի վճռով ու ընտրությամբ, շնորհքն աստվածային, որ միշտ ամոքում է տկարին և լրացնում պակասը, Կյուզիկոսի թեմի սրբազնագույն մետրոպոլիտը և եպիսկոպոսը տեղափոխվում է այս աստվածապահ մայրաքաղաքի պատրիարքություն։ Սույն տեղափոխությունը կատարվեց առաքելական աթոռի սրբազնագույն երեց Միքայել ապոկրիսիարիոսի[533], մյուս քահանաների և եպիսկոպոսների ներկայությամբ, Արտեմիոս կայսեր թագավորության օրոք»։ Արտեմիոսը, տեղեկանալով, որ սարակինոսների նավատորմիղը Ալեքսանդրիայից նավել է Փյունիկե՝ նոճու ատաղձ կտրելու համար, իր նավատորմիղի արագընթաց նավերն ընտրելով և նրանց մեջ Օպսիկիոն բանակաթեմից տաքսատոններ նստեցնելով, հրամայեց բոլորին կենտրոնանալ Հռոդոսում։ Նրանց զորավար և գլխավոր նա նշանակեց Մեծ եկեղեցու սարկավագ Հովհաննեսին, մականունը տեր Հովհաննեսիկ, որն այն ժամանակ գենիկոնի լոգոթետն էր։ Երբ վերջինս Հռոդոս հասավ, նավերն էլ [նույն տեղում] հավաքվեցին, նա կարգադրեց հրամանատարներին նավեն դեպի Փյունիկե՝ հագարացիների փայտանյութն ու հանդերձանքը կրակի տալու համար։ Բոլորը սիրով ընդունեցին դա, բացի Օպսիկիոնի [զինվորներից]։ Նրանք կայսեր գահընկեց հայտարարեցին, իսկ Հովհաննես սարկավագին սրակոտոր արեցին։ Դրա վրա նավատորմիղը երկուսի բաժանված, յուրաքանչյուրն իր տեղը վերադարձավ։ Ոճրագործները շարժվեցին դեպի մայրաքաղաք, հասան Ադրամիտիոն[534], բայց չունենալով ղեկավար, Թեոդոսիոս անունով մի տեղացու, պետական հարկահավաքի, անբան ու հասարակ մի մարդու, դրդեցին կայսր դառնա։ Սակայն նա փախավ ու լեռան վրա թաքնվեց։ Նրան գտան ու բռնի կայսր հռչակեցին։ Արտեմիոսը, տեղեկանալով այդ մասին, քաղաքի տնօրինությունը թողեց իր մերձավորներին՝ պատրաստածը նավատորմիղով, զինեց նրանց, իսկ ինքը գնաց Նիկիա քաղաքն ու պատսպարվեց։ Խռովարարները ոտքի հանելով համայն Օպսիկիոն բանակաթեմը և գոթոգրեկներին[535], ձեռք են գցում բազմաթիվ մեծ ու փոքր առևտրանավեր և ցամաքով ու ծովով Խրիսուպոլսի վրա շարժվում։ Քաղաքի նավատորմիղը խարիսխ էր գցել սուրբ Մամասի նավահանգստում[536], վեց ամիս նրանք այնտեղ ամեն օր իրար դեմ կռիվ էին անում։ Երբ՝ քաղաքի նավատորմիղն այնուհետև գնաց խարիսխ գցեց քաղաքի Նեորիոն նավահանգիստը[537], Թեոդոսիոսն անցավ ու գրավեց Թրակիայի շրջանները։ [Ապստամբները] դավաճանության օգնությամբ Վլախեռնայի դարբասից մտան քաղաք և առան այն։ Իսկ Օպսիկիոնի անօրեն զինվորները, գոթոգրեկների հետ միասին գիշերով խուժեցին

քաղաքացիների բնակարանները և չտեսնված թալանեցին, ոչ ոքի չխնայելով։ Արտեմիոսի քաղաքում թողած ղեկավարներին և Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքին բռնելով, Նիկիա ուղարկեցին, որպեսզի Արտեմիոսն ու նրա հետ եղողները համոզվեն [կատարվածի մասին]։ Արտեմիոսը, տեսնելով նրանց, հուսաբեկ եղավ և անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստանալով, հանձնվեց ու վանականի սքեմը հագավ։ Թեոդոսիոսը նրան ձեռք չտվեց, այլ Թեսաղոնիկե աքսորեց։ Այսպիսով, Ֆիլիպպիկոսը թագավորեց 2 տարի և 9 ամիս, իսկ Արտեմիոսը 1 տարի և 3 ամիս։ Անատոլիկոն բանակաթեմի զորավար Լևոնը[538], որ Արտեմիոսին էր պաշտպանում, Թեոդոսիոսին չենթարկվեց։ Նրան համախոհ էր ու դաշնակից Արմենիակների բանակաթեմի զորավար հայազգի Արտավազդը[539], որին նա խոստացավ իր դստեր կնության տալ, ինչ որ արեց։

[A. M. 6208]

Աշխարհի արարչագործության 6208 թ.	Քրիստոսի մարդեղության 708 թ.	Հռոմայեցիների Թեոդոսիոս կայսեր 1-ամյա թագավորության 1-ին տարին
Արաբների առաջնորդ Սուլեյմանի 3-ամյա իշխանության 2-րդ տարին	Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի 15-ամյա աթոռակալության 2-րդ տարին	Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի 30-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Այդ տարի Մասլաման արշավեց Կոստանդնուպոլսի վրա[540], կանխավ ցամաքով Սուլեյմանի[541] գլխավորությամբ զորք ուղարկելով, իսկ Օմարին էլ՝ ծովով։ Ինքն էլ շարժվեց նրանց ետևից՝ պատերազմական մեծ պատրաստությամբ։ Սուլեյմանն ու Բաքրը, հասնելով Ամորիոն, Անատոլիկոն բանակաթեմի զորավար Լևոնին նամակ են գրում. «Մեր համոզմամբ դու ես արժանի հռոմայեցիների կայսր դառնալու։ Արդ, եկ մեզ մոտ, որ խաղաղության շուրջ բանակցենք»։ Սուլեյմանը, տեսնելով, որ Ամորիոնը զորք չունի, որ [քաղաքը] զորավար [Լևոնի] հանդեպ թշնամաբար է տրամադրված վերջինիս Արտեմիոսի դաշնակիցը լինելու պատճառով, պաշարեց այն, ուղենալով Մասլամային էլ այնտեղ ընդունել։ Երբ [Սուլեյմանը] մոտեցավ քաղաքին, սարակինոսներն սկսեցին Լևոնին կայսր ներբողել, կոչ անելով [քաղաքացիներին] նույն բանն անել։ Ամորիոնի [բնակիչները], տեսնելով, որ սարակինոսները սիրով [Լևոնին] են ներբողում, իրենք էլ նույն բանն արեցին։ Զորավար [Լևոնը], իմանալով, որ առանց տաքսատոսների ու հրամանատարների Ամո-

րիոնը կընկնի, հայտնում է Սուլեյմանին. «Եթե դու ցանկանում ես, որ ես քո մոտ գամ խաղաղության շուրջ բանակցելու, ապա ինչո՞ւ ես քաղաքը պաշարման ենթարկել»։ Նա պատասխանեց. «Դու եկ, և ես կգնամ»։ Զորավարը, նրանից խոսք վերցնելով, երեք հարյուր հեծյալներով նրա մոտ գնաց։ Հագարացիք, տեսնելով նրան, հագան իրենց զրահներն ու լանջակալները և նրան ընդառաջ գնացին, բանակեցին իրենց հիմնական զորքից կես մղոն հեռու։ [Լևոնը] երեք օր գնաց եկավ նրանց մոտ, բանակցեց խաղաղության և [արաբների] քաղաքից հեռանալու հարցի շուրջը, բայց նրանք պատասխանում էին. «Նախ դու հաշտությունը կնքիր, իսկ մենք դրանից հետո կգնանք»։ Զորավարն իմանալով, որ ուզում են իրեն բռնեն, երևելի սարակինոսներից շատերին ընթրիքի հրավիրեց։ Նրանց ընթրելու միջոցին Սուլեյմանը երեք հազար զրահակիր սարակինոսների ուղարկեց նրան շրջապատելու և չթողնելու, որ փախչի։ Պահակախումբը իմացավ դա և նրան հայտնեց. «Մեզ բազում հեծյալ սարակինոսներ են շրջապատած»։ Զուբեր անունով մի հեծյալ ներկայացավ [Լևոնին] և ասաց. «Ինչ որ ստրուկ ահագին դրամ գողանալով փախել է, դրա համար է, որ մենք ձի հեծանք»։ Զորավարը կռահեց նրանց խորամանկությունը և ասաց. «Անհոգ եղեք, մեր բերդերից որ մեկում էլ նա գնա, կգտնենք նրան»։ Բայց անհանգստացած այնուամենայնիվ կարողացավ իր մարդու միջոցով ծածուկ հայտնել Ամորիոնի բնակիչներին. «Աստծո սիրույն, չհանձնվենք, զգույշ, շուտով Մասլաման էլ կհասնի»։ [Քաղաքի] եպիսկոպոսը գնում է [Լևոնի] մոտ, իսկ վերջինս նրան նույն բանն է ասում։ Սուլեյմանն իմանալով, որ եպիսկոպոսը գնացել է նրա մոտ, դիմում է զորավարին. «Մեզ հանձնիր եպիսկոպոսին»։ Բայց նա թաքցրեց նրան և իր մարդկանցից մեկին կարգադրեց. «Մեր զրույցի միջոցին դու նրան այլ զգեստ հագցրու և փայտ կամ ջուր բերելու պատրվակով սարերն ուղարկիր»։ Երբ սարակինոսները համառում էին եպիսկոպոսի հարցում, զորավարն ասաց. «Նա այստեղ չէ։ Արդ, դուք ամիրայի մոտ գնացեք, ձեր ետևից ես էլ կգամ և ամեն ինչի շուրջ կխոսենք»։ Նրանք, մտածելով, որ երբ նա ամիրայի մոտ գա կշրջապատեն և կբռնեն, թողեցին նրան։ [Լևոնը] իր երկու հարյուր մարդկանց հետ ձի նստեց և որսի գնալու պատրվակի տակ, թեքվեց դեպի ձախ։ Նրա հետ եղող սարակինոսների հարցին, թե «Ո՞ր ես գնում», նա պատասխանեց. «Հովիտը, ուզում եմ բանակատեղիս փոխեմ»։ Նրանք ասացին. «Միտքդ ծուռ է, մենք քո հետ չենք գա»։ Դրա վրա զորավարը դիմելով իր մարդկանց, ասաց. «Մեզ խոսք տվեցին, բայց մտադիր էին մեզ բռնել և մեր միջոցով քրիստոնյաներին կոտորել։ Նրանք մեր մարդկանցից և մեզ մնացած

ձիերից և ոչ մեկին ձեռք չեն գցի»։ Եվ տասը մղոն կտրելով, բանակեց։ Հաջորդ օրը նա [արաբների մոտ] ուղարկեց իր ստրատորների դոմեստիկոսին[542] և հայտնեց. «Թեև դուք ինձ խոսք տվեցիք, բայց մտադրել էիք ինձ նենգորեն բռնել։ Հենց դրա համար է, որ հեռացա»։ Մասլաման արդեն անցել էր Կլեյսուրները, բայց Սուլեյմանն այդ մասին տեղյակ չէր։ Ամիրան ու զինվորներն ըմբոստացան Սուլեյմանի դեմ և «Ինչո՞ւ ենք նստել այս պարիսպների տակ և չենք գնում Թալանի» ասելով, հավաքեցին իրենց վրաններն ու շարժվեցին։ Զորավարը Նիկեաս տուրմարխին 800 զինվորով Ամորիոն մտցրեց, դուրս բերեց կանանց ու երեխաների մեծ մասը, իսկ ինքը գնաց Պիսիդիա։ Երբ Մասլաման Կապադովկիա հասավ, կապադովկացիք հուսաբեկ դիմեցին նրան՝ հանձնվելու խնդրանքով։ Մասլաման, իմանալով Թեոդոսիոս կայսեր դեպի զորավարը տածող թշնամության մասին, ցանկացավ նրան իր կողմը քաշել, հաշտվել հետը և նրա միջոցով հպատակեցնել Ռոմանիան։ Նա նրանց ասաց. «Դուք զորավարի համախոհները չե՞ք»։ Նրանք պատասխանեցին, թե «Այո՛»։ Այնուհետև, թե. «Դուք նրա պես չե՞ք վարվում», թե «Այո՛»։ Դրա վրա նա ասաց. «Գնացե՛ք ձեր բերդերը և ոչ ոքից մի՛ վախեցեք»։ Նա իր զինվորներին կարգադրեց չթալանել զորավարին ենթակա բոլոր շրջանները։ Զորավարը, իմանալով այդ մասին և կռահելով, որ Սուլեյմանը հայտնած պիտի լինի Մասլամային, թե թույլ է տվել իրեն՝ զորավարին, գնալու, նամակ է գրում Մասլամային, թե «Ես ուզում էի՝ քո մոտ գալ, բայց երբ եղա Սուլեյմանի մոտ, նա ուզեց ինձ բռնել։ Դրա համար ես հիմա վախենում եմ քո մոտ գալ»։ Մասլաման ասում է զորավարի սուրհանդակին. «Գիտեմ, զորավարն ինձ խաբում է, որպեսզի նրա շրջաններին ձեռք չընտամ»։ Զորավարի սուրհանդակը պատասխանեց. «Ճիշտ չէ, [զորավարի] գրածը ստույգ է»։ Մասլամայի հարցին, թե «Ինչպիսի՞ն է Ամորիոնի դիրքը զորավարի նկատմամբ», նա պատասխանեց. «Լավ է, նրան է ենթարկվում»։ Մասլաման զայրացած, անպատվեց նրան ու ասաց. «Ինչո՞ւ ես ստում»։ Նա պատասխանեց. «Ամեն ինչ ասածիս պես է, [զորավարը] տուրմարխի գլխավորությամբ տաքսատոններ է մտցրել [քաղաք], իսկ ավելորդ ընտանիքներին հեռացրել այնտեղից»։ Մասլաման լսելով դա շատ տխրեց և վրդովված նրան վռնդեց։ Նա որոշել էր ամռանը գրավել այն, ապա վերցնել նավատորմիղը և իջնել Ասիա ու ձմեռել։ Նա դարձյալ կանչեց զորավարի սուրհանդակին և հարցաքննեց նրան։ Վերջինս երդվեց, թե «Ասածս ամբողջությամբ ճշմարտություն է. տուրմարխի գլխավորությամբ հազար զինվոր [քաղաք] են մտել, իսկ [զորավարը] բնակիչների ողջ ունեցվածքը, ապա և չքավոր ընտանիքներին [քաղա-

քից] հեռացրել է»։ Մասլաման դրա վրա զորավարին նամակ գրեց, թե «Ե՛կ իմ մոտ, ես քեզ հետ կհաշտվեմ ու ամեն ինչ քո ուզածի պես կանեմ»։ Զորավարը, տեսնելով, որ նա արդեն մոտեցել է Մասսալեոնին[543], որ հինգ օր հետո նա ոտք կդնի իր շրջանները, նրա մոտ երկու հյուպատոս[544] ուղարկեց և հայտնեց. «Քո նամակը ստացա, քո առաջարկությունն ընդունեցի և ահա քո մոտ եմ գալիս, բայց, հարկավ, գիտես, ես զորավար մարդ եմ, հետևաբար ինձ հետ կլինի գույք, դրամ և զորք։ Արդ, դու յուրաքանչյուրի համար երաշխիք ստուր։ Եթե իմ պահանջներին ընդառաջ գնաք, ես ողջ առողջ ու անվնաս վերադառնամ, լավ ու բարի»։ Հյուպատոսները նրան հանդիպեցին Թեոդոսիանա[545] [վայրում]։ Մասլաման ասաց. «Տեսնո՞ւմ եք, որ խաբում է ինձ ձեր զորավարը»։ Նրանք պատասխանեցին. «Աստված մի արասցե»։ [Մասլաման], տալով նրանց պահանջած երաշխիքները, ճամփեց։ Այդ միջոցին, երբ հյուպատոսները ստորագիր գրությամբ գնում էին զորավարի մոտ, Մասլաման չկարողանալով իր հսկայական զորքով մի տեղում մնալ, գալիս է Ակրոյինոն[546]։ Զորավարը, տեսնելով, որ [Մասլաման] արդեն ոտք է դրել իր շրջանները, քաշվեց Նիկոմեդիա։ Հանդիպելով Թեոդոսիոսի որդուն, բռնեց նրան ողջ թագավորական սպասավորությամբ ու պալատական պաշտոնեությամբ հանդերձ։ Մասլաման իջավ Ասիա, ձմեռեց այնտեղ, իսկ Օմարը՝ Կիլիկիայում։ Զորավարը, վերցնելով կայսեր որդուն և խորհրդակցելով իր մարդկանց հետ, եկավ Խրիսուպոլիս։ Թեոդոսիոսը, իմանալով կատարվածի մասին, խորհրդակցեց Գերմանոս պատրիարքի և սենատի հետ և Լևոնի կողմից նույն պատրիարքի միջոցով իր անձեռնմխելիության և եկեղեցու անսասանելիության մասին[547] երաշխիքներ ստանալով, գահը զիջեց նրան։ Թեոդոսիոսը իր որդու հետ կղերական դարձան և իրենց մնացած կյանքն անցկացրին խաղաղության մեջ։ Մասլաման գալով Պերգամոն, պաշարեց և աստծո թույլտվությամբ ու սատանայի ներգործությամբ առավ այն։ Քաղաքի բնակիչները մի ինչ-որ կախարդի խորհրդով ծննդաբերելու մոտ մի կնոջ փորը բացեցին և վերցնելով մանկան կաթսայի մեջ եփեցին։ Կուվել ցանկացող ամեն մեկը աստծուն խորշելի այս զոհաբերության արյունով ներկեցին իրենց աջ թևքը և այնուհետև թշնամիներին հանձնվեցին։

[A. M. 6209]

Հռոմայեցիների կայսր Լևոն Իսավրացի[548]։ Թագավորեց 24 տարի։

[Աշխարհի արարչագործության] 6209 թ.	[Քրիստոսի մարդեղության] 709 թ.	[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 1-ին տարին
[Արաբների առաջնորդ Սուլեյմանի] 3-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 3-րդ տարին	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 12-րդ տարին

Այդ տարի թագավորեց Լևոնը։ Նա ծագումով Գերմանիկիայից[549] էր, բայց իրականում՝ Իսավրիայից[550]։ Հուստինիանոս կայսեր առաջին թագավորության ժամանակ նա իր ծնողների հետ վերաբնակեցվել էր Թրակիայի Մեսեմբրիա [քաղաքում]։ [Հուստինիանոսի] երկրորդ թագավորության ժամանակ, երբ նա բուլղարների հետ իջավ, Լևոնը նրան ընդառաջ ելավ 500 ոչխարից բաղկացած նվերով։ Հուստինիանոսին դա դուր եկավ և նրան իսկույն սպաթարի կոչում շնորհեց ու մտերմացավ հետը։ Ոմանք նախանձից դրդված [Լևոնին] ամբաստանեցին, թե իր թագավորության վրա աչք ունի։ Սակայն երբ դրա շուրջ քննություն արվեց, նրանք խայտառակվեցին որպես զրպարտիչներ։ Այնուամենայնիվ այդ օրվանից շատերն սկսեցին այդ մասին խոսել։ Հուստինիանոսը թեև չէր ուզում նրան բացեիբաց վատություն անել, բայց կասկածի որդը մտավ իր մեջ և նա նրան դրամ տալով, Ալանիա ուղարկեց՝ ալաններին Աբազգիայի դեմ ոտքի հանելու համար (Աբազգիան, Լազիկան և Իբերիան սարակինոսների տիրապետության տակ էին գտնվում)[551]։ Նա գնաց Լազիկա, դրամը թողեց Ֆասիս[552] [քաղաքում], մի քանի տեղացիներով գնաց Ապսիլիա[553], անցավ Կովկասյան լեռներն ու եկավ Ալանիա։ Հուստինիանոսը, կամենալով նրա ոչնչացման համար պատրվակ ստեղծած լինել, մարդ ուղարկեց և Ֆասիսից առավ դրամը։ Ալանները սպաթարին մեծ պատիվներով ընդունեցին, նրա առաջարկներին ընդառաջ գնացին և ներխուժելով Աբազգիա, գերեվարեցին այն։ Աբազգների տերը հայտնում է ալաններին, թե «Հուստինիանոսը, երևի, սրանից ավելի խաբեբա մարդ չուներ, որ ուղարկեր և ձեզ մեր դեմ դրդեր՝ ձեր հարևանների։ Նա ձեզ դրամ խոստացավ, բայց խաբեց, քանզի Հուստինիանոսը մարդ ուղարկեց և այդ դրամն առավ։ Արդ, դուք մեզ հանձնեք նրան, մենք ձեզ երեք հազար դահեկան կտանք, մեր դարավոր բարեկամությունն էլ թող անխախտ մնա»։ Ալանները պատասխանեցին, թե «Մենք նրան ընդառաջ գնացինք ոչ թե դրամի սիրույն, այլ կայսեր հանդեպ տածած մեր սիրո»։ Աբազգները դարձյալ մարդ ուղարկեցին նրանց մոտ, ասելով, թե «Մեզ տվեք նրան, կտանք վեց հազար դահեկան»։ Ալանները, ցանկանալով հետախուզել աբազգների երկիրը, համաձայնվեցին վեց հազար դահե-

կանի դիմաց հանձնել սպաթարին։ Ալանները սպաթարին ամեն ինչի մասին տեղյակ պահեցին և ասացին. «Ինչպես տեսնում ես, Ռոմանիա տանող ճանապարհը փակ է, ինչպես պիտի գնաս հայտնի չէ։ Եկ դիմենք խորամանկության, ձևացնենք, որ հանձնում ենք քեզ, նրանց մարդկանց հետ մեր մարդկանց կուղարկենք, կհետախուզենք նրանց կլեյսուրները, ասպատակ կսփռենք և կավերենք նրանց երկիրը, որով կատարած կլինենք մեր ծառայությունը»։ Եվ ահա, ալանների դեսպանները գնում են Աբազգիա և հայտնում, թե համաձայն են հանձնել սպաթարին։ Այդ առթիվ նրանք [աբազգներից] շատ ընծաներ ստացան։ [Աբազգները] դարձյալ բազում դեսպաններ են ուղարկում որոշված գումարով, սպաթարին ստանալու համար։ Ալաններն ասում են սպաթարին. «Այս մարդիկ, ինչպես նախօրոք հայտնել ենք, եկել են քեզ տանելու, Աբազգիան ընդունում է քեզ։ Երբ մոտենանք նրանց, ապա որպեսզի մեր ծրագիրը չբացահայտվի (նրանց երկիրը գնացող վաճառականներ պակաս չեն), մենք քեզ բացահայտ կհանձնենք։ Երբ դուք շարժվեք առաջ, մենք ծածուկ ետևից կհարձակվենք, նրանց կսպանենք, իսկ քեզ կթաքցնենք, մինչև որ հավաքվի մեր զորքը և անակնկալ ներխուժենք նրանց երկիրը»։ Այդպես էլ եղավ։ Աբազգների դեսպանները ստանալով սպաթարին և վերջինիս մարդկանց, կապանքների մեջ առան ու ճանապարհ ընկան։ Ալանները իրենց տեր Իտաքսեսի գլխավորությամբ նրանց ետևից վրա հասնելով, սպանեցին աբազգներին, իսկ սպաթարին թաքցրին։ [Իտաքսեսը] զորք հավաքելով շարժվեց Աբազգիայի վրա և կլեյսուրների միջով անակընկալ մուտք գործելով, աբազգներին մեծ ջարդ տվեց ու բազում գերիներ քշեց, տարավ։ Հուստինիանոսը լսելով, որ իր ծրագիրն առանց դրամի էլ գլուխ եկավ, աբազգներին նամակ գրեց, որտեղ ասված էր. «Եթե դուք փրկեք մեր սպաթարին և թույլ տաք նրան անվնաս անցնել ձեր երկրով, ապա ձեր բոլոր զանցանքները կներենք»։ Նրանք ուրախությամբ ընդունեցին այդ առաջարկը և դարձյալ մարդ ուղարկեցին Ալանիա, ասելով, թե «Մեր երեխաներին ձեզ պատանդ կտանք, տվեք մեզ սպաթարին, որպեսզի նրան Հուստինիանոսին ուղարկենք»։ Սպաթարը չընդունեց դա և ասաց. «Աստված ինձ մի դուռ կբացի, որ դուրս գամ։ Ես Աբազգիայի վրայով գնացողը չեմ»։ Որոշ ժամանակ անց հռոմայեցիների և հայերի մի զորաբանակ Լազիկա մտավ և պաշարեց Արխայոպոլիսը[554], բայց լսելով սարակինոսների գալու մասին, թողեց հեռացավ։ Նրանից շուրջ երկու հարյուր հոգի առանձնանալով, ասպատակ սփռելով բարձրացան Ապսիլիայի շրջաններն ու Կովկասյան լեռները։ Երբ սարակինոսները հասան Լազիկա, հռոմայեցիների և հայերի զորքը վերադարձավ

Ֆասիս։ Երկու հարյուր հոգին մնաց Կովկասյան լեռներում և հուսաբեկ եղած սկսեց ավազակությամբ պարապել։ Ալանները, իմանալով այդ մասին, կարծեցին, որ Կովկասյան լեռներում հռոմայեցիների մեծաքանակ զորք կա, և ուրախացած ասացին սպաթարին. «Հռոմայեցիները մոտեցել են, նրանց մոտ գնա»։ Սպաթարը իր հետ առնելով հիսուն ալանների, մայիս ամսին, կլոր դահուկներով անցավ ձյունածածկ Կովկասյան լեռները, հանդիպեց նրանց և բերկրացած հարցրեց. «Զորքն ո՞ւր է»։ Նրանք պատասխանեցին. «Երբ սարակինոսները հարձակվեցին, նրանք թողեցին և վերադարձան Ռոմանիա, իսկ մենք, չկարողանալով Ռոմանիա վերադառնալ, շարժվեցինք դեպի Ալանիա», Սպաթարի հարցին՝ «Հիմա ի՞նչ անենք», նրանք պատասխանեցին. «Այդ երկրով մեզ անհնարին է անցնել»։ Սպաթարն ասաց. «Այլ ճանապարհով չենք կարող դուրս գալ»։ Այնտեղ մի բերդ կար, անունը Երկաթե [բերդ][553], որի բերդապահը սարակինոսներին հպատակ ոմն Փարեսման էր։ Նա հայերի հետ հաշտ էր ապրում։ Սպաթարը նրա մոտ մարդ ուղարկեց և ասաց. «Քանի որ հայերի հետ հաշտ ես ապրում, ապա ինձ հետ էլ հաշտվիր և ենթարկվիր կայսրության, օգնիր մեզ հասնել ծովափ և անցնել Տրապիզոն»։ Նա մերժեց։ Դրա վրա սպաթարը իր մարդկանցից հայերի էլ է ուղարկում, պատվիրում դարանակալել և կարգադրում. «Երբ որ նրանք բերդից դուրս գան աշխատանքի գնալու, նրանցից որքան կարող եք բռնեք, դրսից պահեք դռները, մինչև որ մենք էլ վրա հասնենք»։ Նրանք գնացին, դարանակալեցին և երբ [բերդի] մարդիկ դուրս եկան աշխատանքի, հանկարծակի հարձակվեցին, դարբասին տիրացան և շատերին գերեցին։ Բերդում մնաց Փարեսմանը՝ փոքրաթիվ մարդկանցով, երբ այդ միջոցին սպաթարն էլ վրա հասավ, որ դիմելով նրան, կոչ արեց խաղաղությամբ բացել դարբասները։ Նա մերժեց ու դիմեց կռվի։ Բերդն անառիկ էր, այդ պատճառով նրանք չկարողացան այն գրավել։ Ապսիլացիների առաջնորդ Մարինոսը իմանալով, որ բերդը օղակի մեջ է առնված, երկյուղի մեջ ընկավ, որովհետև ենթադրեց, թե սպաթարը մեծաթիվ զորք ունի։ Իր հետ երեք հարյուր հոգի վերցնելով, նա գնաց սպաթարի մոտ ու ասաց. «Ես քեզ ողջ առողջ ծովափ կհասցնեմ»։ Փարեսմանը, տեսնելով իրավիճակը, ասաց սպաթարին. «Իմ երեխան քեզ պատանդ, ես համաձայն եմ ծառայել կայսրությանը»։ Վերցնելով նրա երեխային, նա ասաց. «Բայց կայսրության ինչպիսի՞ ծառա ես դու քեզ համարում, երբ մեզ հետ ես խոսում [բերդում] փակված։ Առանց բերդին տիրանալու մենք այստեղից գնացողը չենք»։ Դրա վրա Փարեսմանն ասաց. «Ինձ երաշխիք տուր»։ Սպաթարը նրան անձեռնմխելիության մասին երաշխիք տվեց, խոստացավ բերդ մտնել

երեսուն հոգով միայն։ Բայց նա իր խոսքի տերը չեղավ և իր հետ ներս մտնող երեսուն հոգուն արեց հետևյալ կարգադրությունը. «Հենց որ ներս մտնենք, դուք բռնեք դարբասները, թող բոլորը ներս մտնեն»։ Երբ այդպես էլ եղավ, նա հրամայեց բերդը կրակի տալ։ Մեծ հրդեհ բռնկվեց, ընտանիքները իրենց ունեցվածքից ինչ որ կարող էին կրել, առնելով դուրս էին գալիս։ Սպաթարն այնտեղ մնաց երեք օր ևս և հիմնահատակ քանդելով նրա պարիսպները, շարժվեց իջավ Ապսիլիա՝ վերջինիս առաջնորդ Մարինոսի հետ, արժանանալով ապսիլացիների փառավոր ընդունելության։ Այնտեղից նա իջավ ծովափ ու [նավով] եկավ Հուստինիանոսի մոտ։ Հուստինիանոսի սպանությունից և Ֆիլիպպիկոսի կուրացումից հետո թագավորած Արտեմիոսը սպաթարին նշանակեց Անատոլիկոնի զորավար։ Երբ Թեոդոսիոսը գահ բարձրացավ, Արտեմիոսն էլ վտարվեց, երբ հռոմայեցիների պետությունը տակն ու վրա էր լինում բարբարոսների ներխուժումների, Հուստինիանոսի ոճրագործությունների և Ֆիլիպպիկոսի սրբապղծությունների պատճառով, հիշյալ Լևոնը պաշտպանում էր Արտեմիոսին՝ ընդդեմ Թեոդոսիոսի։ Նրան համախոհ էր ու դաշնակից Արմենիակների զորավար Արտավազդը, որին նա, գահին տիրանալուց հետո, կուրապաղատի տիտղոսը[556] շնորհեց և իր դստեր Աննային նրան կնության տվեց։

Մասլաման, որ Ասիայում[557] էր ձմեռել, ընդունեց Լևոնի խոստումները[558], սակայն Լևոնը խոստացածի և ոչ մեկը չկատարեց։ Մասլաման, տեսնելով, որ նրանից խաբվել է, եկավ Աբյուդոս, մեծաթիվ զորք անցկացրեց Թրակիա և շարժվեց մայրաքաղաքի վրա։ Ամիրապետ[559] Սուլեյմանին էլ գրեց օգնության հասնի իր նախապատրաստած նավատորմիղով։ Մասլաման ասպատակելով Թրակիայի բերդերը, օգոստոս ամսի 15-ին պաշարեց քաղաքը[560]։ Վերջինիս բնակիչները ամրացրել էին ցամաքային պարիսպը՝ մի մեծ խրամատ փորել, որի ետևում առանց շաղախի մի ցածր շրջապարիսպ կառուցել։ Ինդիկտիոնի 1-ին տարվա սեպտեմբեր ամսի 1-ին քրիստոսամարտ Սուլեյմանն ամիրաներով, 1800 վիթխարի նավերով, պատերազմական կառեներով[561] ու դրոմոններով տեղ հասավ ու խարիսխ գցեց Մագնավրայից[562] մինչև Կյուկլոբիոն[563]։ Երկու օր անց, երբ հարավային քամի փչեց, նրանք շարժվեցին ու մոտեցան քաղաքին։ Մի մասն անցավ Եվտրոպիոսի[564] և Անթեմիոսի[565] թաղամասերը, իսկ մյուսը՝ Թրակիայի ափերը, խարիսխ գցելով Գալատի բերդից[566] մինչև Բանալին[567]։ Հակայական բեռից ծանրաշարժ դարձած և [հռոմայեցիների] կողմից որսացվող մեծ նավերի պահպանության համար [արաբներն] առանձնացրին շուրջ 20 կատենա, որոնց յուրաքանչյուրի մեջ

կային 100 զրահակիր զինվորներ։ Երբ նրանք հոսանքի մեջ էին գտնվում, եղանակը պարզեց, իսկ Ստենոնից փչած թեթև քամին նրանց դեպի դուրս քշեց։ Ակրոպոլսում գտնվող բարեպաշտ կայսրը նրանց դեմ իսկույն հրակիր նավեր ուղարկեց, աստծո օգնությամբ նրանց հրո ճարակ դարձրեց։ Նրանց մի մասը բոցերով փաթաթված ծովափնյա պարիսպների մոտ շրջապատվեց, մյուսը՝ զինվորներով հանդերձ ջրասույզ եղավ։ Ուրիշ նավեր էլ հրաբորբոք քշվեցին մինչև Օքսիա և Պլատիա[568] կղզիները։ Այդ բանը քաղաքացիներին զոտեպնդեց, թշնամիներն էլ ճանաչելով հեղուկ կրակի մեծ ուժը, անչափ վհատվեցին։ Նրանք մտադիր էին այդ երեկո մոտենալ ծովափնյա պարիսպներին և աստիճաններ հենել ատամնաշարերին։ Բայց աստված, ամենասուրբ աստվածածնի միջնորդությամբ խափանեց նրանց ծրագիրը. նույն գիշերը բարեպաշտ կայսրը ծածուկ կերպով Գալատից շղթան քաշեց[569]։ Թշնամիները, ենթադրելով, որ կայսրը [շղթան] հանեց նենգորեն՝ իրենց ներս քաշելու մտադրությամբ, չհամարձակվեցին ներս մտնել և խարիսխ գցել Գալատից ներս, նրանք նավեցին Սոսթենիոսի ծոցը[570] և իրենց նավերը այնտեղ պատսպարեցին։ Հոկտեմբեր ամսի 8-ին նրանց առաջնորդ Սուլեյմանը վախճանվեց և ամիրապետ դարձավ Օմարը[571]։ Իսկ Թրակիայում սաստիկ ձմեռ արեց, գետինը 100 օր ծածկված մնաց սառույց կտրած ձյունով, թշնամիների բաղում ձիեր, ուղտեր և այլ անասուններ սատակեցին։ Գարնանը Սուֆիամն եկավ՝ Եգիպտոսում պատրաստված նավատորմիղով։ Նա ուներ ցորենակիր 400 կատենաներ և դրոմոններ։ Իմանալով հունական հրո տեսած գործի մասին, նա Բյութանիայի ափերով նավեց, անցավ դիմացի ափը և Կալոս Ագրոսի[572] նավահանգստում խարիսխ գցեց։ Փոքր անց տեղ հասավ և եզիպտ՝ Աֆրիկայում պատրաստված մի այլ նավատորմիղով։ Նա իր տրրամադրության տակ ուներ 360 կատենա, զենք ու պարեն։ Նա ևս իմանալով հեղուկ հրո մասին, խարիսխ գցեց Սատյուրոսում, Բրիայում՝ մինչև Կարտալիմեն[573]։ Այս երկու տորմիղներում ծառայող եգիպտացիք[574] ծածուկ համաձայնության գալով, գիշեր ժամանակ բարձրացրին կատենաների խարիսխները և փախան քաղաք՝ կայսեր ներբողելով։ Հիերիայից սկսած մինչև քաղաքը, ծովը նավերով ծածկվեց։ Կայսրը նրանցից տեղեկացավ ծոցում թաքնված երկու տորմիղների մասին և պատրաստելով հրակիր սիֆոններ, դրանք տեղադրեց դրոմոնների ու դիերանների վրա և այդ երկու տորմիղների դեմ ուղարկեց։ Անբիծ աստվածածնի միջնորդությամբ աստված սատար կանգնեց և թշնամիները տեղն ու տեղը ջրասույզ եղան։ Մերոնք ավարով ու նրանց պարենով բերկրությամբ ու հաղթանակով վերադարձան։ Լիվոսում և Սոֆոնում[575] մարդայիտների

նման դարանակալած կայսերական իշխանավորներն անակնկալ կերպով հետևակազորը նետեցին Պյուլեից[576] մինչև Նիկիա և Նիկոմեդիա արաբական զորքով ասպատակ սփռող Մարդասանի վրա և նրա զորքը բաժան-բաժան անելով, ստիպեցին հեռանալ այնտեղից։ Երբ Պերատիկա՛յի ափը մի փոքր շունչ քաշեց, խելանդիոնները կարողացան քաղաքից դուրս գալ և առատ պարեն բերել։ Զկնորսանավերը նույնպես առանց որևէ դժվարության կարողանում էին կղզիների և [քաղաքի] ծովափնյա պարիսպների մոտ ձուկ որսալ։ Իսկ երբ արաբների մեջ սաստիկ սով եղավ, նրանք ստիպված սկսեցին իրենց սատակած անասուններն ուտել՝ ձիերին, ավանակներին և ուղտերին։ Պատմում են, որ նրանք ուտում էին անգամ մեռածների դիակները, իրենց աղբը՝ շաղելով և փռում եփելով։ Նրանց մեջ բռնկվեց նաև համաճարակ, որն անթիվ զոհեր տարավ։ Ի վերա ամենայնի նրանց դեմ կռվի ելավ նաև բուլղարների ազգը, որն, ինչպես ասում են տեղյակ մարդիկ, 22 հազար արաբ կոտորեց[577]։ Այդ ընթացքում նրանց գլխին բազում այլ փորձանքներ էլ եկան, և նրանք համոզվեցին, որ աստված և ամենասուրբ կույս աստվածամայրն են այդ քաղաքի և քրիստոնեից թագավորության պահապանները, որ աստված երբեք չի լքում իրեն մաքուր սրտով դիմողներին (թեպետև կարճ ժամանակով տառապում ենք մեր գործած մեղքերի պատճառով)։

[A. M. 6210]

Արաբների առաջնորդ Օմար։ Իշխեց 2 տարի։

[Աշխարհի արարչագործության] 6210 թ.	[Քրիստոսի մարդեղության] 710 թ.	[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 2-րդ տարին
[Արաբների առաջնորդ Օմարի] 1-ին տարին	[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 4-րդ տարին	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 13-րդ տարին

Այդ տարի Սիկիլիայի զորավար Սերգիոս պրոտոսպաթարը[578], լսելով, որ սարակինոսները պաշարել են մայրաքաղաքը, [Սիկիլիայում] իր մարդկանցից մեկին՝ Վասիլ Կոստանդնուպոլսեցուն՝ Գրիգոր Օնոմագուլոսի որդուն սեփական կայսր թագադրեց, վերանվանելով Տիբերիոս։ Վերջինս հիշյալ Սերգիոսի խորհրդով իր համար նոր մարդկանց նշանակեց և սեփական իշխանավորներին։ Կայսրը, լսելով այդ մասին, իր խարտուլար Պավղոսին նշանակելով պատրիկ և Սիկիլիայի զորավար, այնտեղ ուղարկեց, որպես օգնական տալով երկու սպաթար և փոքրաթիվ

մարդկանց, ինչպես և արևմտական կողմերի իշխանավորներին ուղղված կարգադրություններ և ժողովրդին ուղղված կայսերական հրովարտակ[579], Նրանք գիշերով մտան մի թիավոր դրոմոնի մեջ, դուրս եկան Կյուզիկոսի կողմերը և վայրից վայր, ցամաքով ու ծովով առաջ գնալով, հանկարծակի հասան Սիկիլիա։ Երբ նրանք Սիրակուսա մտան և Սերգիոսն իմացավ այդ մասին, իրարանցման մեջ ընկավ, և կռահելով, որ նրանք իր համար են եկել, փախավ Կալաբրիային սահմանակից լոնգոբարդների մոտ։ Երբ ժողովուրդն հավաքվեց և հրովարտակն ընթերցվեց, նրան պարզ դարձավ, որ թագավորությունն էլ է կանգուն, թշնամիների դեմ մղվող պայքարում մայրաքաղաքի բնակչության ոգին էլ բարձր։ Երբ նրանց պատմեցին նաև երկու տորմիղների հետ տեղի ունեցած դեպքերի մասին, ժողովուրդը Լևոնին կայսր ներբողեց, իսկ Վասիլ Օնոմագուլոսին և նրա նշանակած իշխանավորներին շղթայակապ զորավարի ձեռքը հանձնեց։ Վերջինս Վասիլին և նրա մոնոստրատեգոսին[580] գլխատեց և նրանց զմռսած գլուխները սպաթարների միջոցով կայսեր ուղարկեց։ Մնացածներին էլ գանակոծեց, խուզեց, ոմանց քիթը կտրեց ու աքսորեց։ Ահա այդ ճանապարհով արևմտականների մեջ կատաղյալ կարգուկանոն հաստատվեց։ Ինչ վերաբերում է վերոհիշյալ Սերգիոսին, ապա նա զորավարից անձեռնմխելիության երաշխիքներ խնդրելով և ստանալով, նրա մոտ գնաց։ Այդպիսով արևմտական բոլոր շրջանները խաղաղվեցին։

Իսկ Օմարը, ստանալով արաբների գերագույն իշխանությունը, Մասլամային կարգադրեց վերադառնալ։ Եվ ահա հագարացիք օգոստոս ամսի 15-ին կատարյալ խայտառակ եղած ճամփա ընկան։ Նահանջի ժամանակ աստված աստվածամոր միջնորդությամբ նրանց նավատորմիղի գլխին փոթորիկ թափեց և նրանց նավերը ցիրուցան արեց, ոմանց Պրոկոնիսոսի[581] և այլ կղզիների մոտ ջրասույզ արեց, ոմանց էլ Ապոստրոֆներում և այլ ափերում։ Վերապրածների վրա էգեական ծովով նավարկելիս հանկարծակի աստծո սարսափելի պատիժը թափվեց՝ հրե կարկուտ, որը ծովը եռացրեց, [նավերի] ձյութը հալեցրեց և նավերը զինվորներով հանդերձ ջրասույզ եղան։ Տասը նավ միայն փրկվեց, այն էլ աստծո նախախնամությամբ, որպեսզի մեզ և արաբներին հայտնի դարձնեն աստծո մեծագործությունները, որոնք տեղի ունեցան նրանց նկատմամբ։ Այդ տասը նավից հինգը մերոնց ձեռքն ընկան, մնացած հինգը փրկվեցին Ասորիք և հաղորդեցին աստծո զորության մասին։

Այն պատճառով, որ նույն տարին Ասորիքում ուժեղ երկրաշարժ էլ եղավ, Օմարն արգելեց գինու գործածությունը քաղաքներում, քրիստոն-

յաներին ստիպում էր հավատափոխ լինել։ Հավատափոխ եղողներին նա ազատում էր հարկերից, իսկ չեղողներին՝ սպանում. նա շատերին մարտիրոսական մահվան արժանացրեց։ Նա օրենք հրապարակեց, համաձայն որի քրիստոնյան իրավունք չունի վկայություն տալ ընդդեմ սարակինոսի։ Նա դավանական բնույթի նամակ էլ գրեց Լևոնին, մտադիր լինելով նրան համոզել հավատափոխ լինել[582]։

[A. M. 6211]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 3-րդ տարին

[Արաբների առաջնորդ Օմարի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 5-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 14-րդ տարին

Այդ տարի ամբարիշտ Լևոն կայսրը իրենից առավել ամբարիշտ որդի ունեցավ Կոստանդնին[583]՝ Նեռի կարապետին։ Իսկ դեկտեմբեր ամսի 25-ին [Լևոնի] կին Մարիան թագադրվեց Ավգուստեոնի ս.րիկլինում[584] և շքախմբով, մենակ, առանց ամուսնու գնաց Մեծ եկեղեցին և աղոթելով մեծ խորանի մուտքի առջև, անցավ մեծ մկրտարանը։ Իրենից առաջ փոքրաթիվ հարազատներով այնտեղ էր եկել իր ամուսինը։ Երբ Գերմանոս պատրիարքը մկրտում էր շարության և նրանց թագավորության ժառանգ Կոստանդնին, վերջինս դեռ հենց մանուկ հասակում բացահայտեց իր վատության ու գարշահոտության ապացույցները. իսկական ականատեսները պատմում են, որ նա սուրբ ավազանի մեջ կեղտոտեց, որի առթիվ սրբազնագույն Գերմանոս պատրիարքը մարգարեաբար ասաց, թե «Դա նշան է այն բանի, որ քրիստոնյաների ու եկեղեցու գլխին նա մեծ փորձություններ է բերելու»։ Բանակաթեմերի և սենատի մեծերը մկրտությունից հետո ընդունեցին նրան։ Սուրբ պատարագից հետո ավգուստա Մարիան իր մկրտված որդու հետ շքախմբով վերադարձավ, եկեղեցուց մինչև պալատի խալկե դարբասը փող ցրիվ տալով։

Նույն տարին Նիկետաս Քսիլինիտեսը Թեսաղոնիկեում գտնվող Արտեմիոսին նամակ է գրում, կոչ անելով գնալ Տերվելիսի մոտ և բուլղարական օգնական զորքով գալ ընդդեմ Լևոնի։ Նա համաձայնվեց ու գնաց։ [Բուլղարները] նրան տվեցին զորք և 50 կենտինար ոսկի[585], որոնցով նա շարժվեց Կոստանդնուպոլսի վրա։ Երբ քաղաքացիները [Արտեմիոսին] չընդունեցին, բուլղարները նրան Լևոնին հանձնեցին և նրանից նվերներ ստանալով վերադարձան։ Կայսրը նրան և Քսիլինիտեսին մահա-

պատժի ենթարկեց, Քսիլինիտեսի ունեցվածքը բռնագրավեց (լինելով մագիստրոս[586], նա շատ հարուստ էր)։ Բուլղարներն իրենց հերթին, որպես Արտեմիոսի համախոհների, գլխատեցին Միսինիոս պատրիկին, մականունը՝ Հոենգակես[587], իսկ Թեսաղոնիկեի արքեպիսկոպոսին կայսեր հանձնեցին, որը Արտեմիոսի հետ գլխատվեց։ [Լևոնը], որպես [Արտեմիոսի] ընկերների և համախոհների, մահապատժի ենթարկեց նաև Օպսիկիոն բանակաթեմի կոմես Իսոես պատրիկին[588], պրոտոասեկրետ Թեոկտիստոսին, նաև պարիսպների [պաշտպանության] պետ[589] Նիկետաս Անթրաքսին։ Մնացածների քիթը կտրելով և ունեցվածքը բռնագրավելով, աքսորեց։

[A. M. 6212]

Աշխարհի արարչագործության 6212 թ.	Քրիստոսի մարդեղության 712 թ.	Հռոմայեցիների Լևոն կայսեր 24-ամյա թագավորության 4-րդ տարին
Արաբների առաջնորդ Եզիդի 4-ամյա իշխանության 1-ին տարին	Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի 15-ամյա աթոռակալության 6-րդ տարին	Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի 30-ամյա աթոռակալության 15-րդ տարին

Այդ տարի, ինդիկտիոնի 3-րդ տարին, Զատկի օրը տասներեքն ակուբիտների տրիբունալիոնում[590] Կոստանդինը իր հայր Լևոնի կողմից թագադրվեց. ընդունված մաղթանքները հղեց երանելի Գերմանոս պատրիարքը։

Նույն տարին վախճանվեց արաբների ամիրապետ Օմարը, իշխելով 2 տարի և 4 ամիս։ Ամիրապետ դարձավ Եզիդը[591]։ Պարսկաստանում նրա դեմ ապստամբում է նույն Եզիդ անունով մեկը, մականունը՝ Մուալաբի[592]։ Պարսկաստանում շատերը սրա կողմն անցան։ Եզիդը նրա դեմ Մասլամային ուղարկեց, սպանեց նրան և Պարսկաստանը հպատակեցրեց։

[A. M. 6213]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 5-րդ տարին	[Արաբների առաջնորդ Եզիդի] 2-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 7-րդ տարին	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 16-րդ տարին

Այդ տարի ինչ-որ ասորի սուտ Քրիստոս երևաց։ Նա հրեաներին մոլորեցրեց ասելով, թե հենց ինքն է Քրիստոսը, որդին աստծու։

[A. M. 6214]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 6-րդ տարին

[Արաբների առաջնորդ Եզիդի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 8-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 17-րդ տարին

Այդ տարի կայսրը հրեաներին և մոնտանյաններին[593] ստիպեց մկրտվել։ Հրեաներն ակամա մկրտվում էին, բայց հետո լվանում հանում [մեռոնը], հաղորդվում էին կերած՝ պղծում հավատքը։ Իսկ մոնտանյանները գուշակություն անելով, օր նշանակեցին և մտնելով իրենց մոլորության կանխավ նշած [աղոթա]տները, իրենց ողջակեզ արեցին։

[A. M. 6215]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 7-րդ տարին

[Արաբների առաջնորդ Եզիդի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 9-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 18-րդ տարին

Այդ տարի ծագումով Փյունիկեի ծովափնյա Լավոդիկիայից մի հրեա կախարդ Եզիդի մոտ եկավ և գուշակեց, որ նա արաբների վրա կիշխի 40 տարի, եթե նա, Եզիդը, իր համայն տիրապետության մեջ գտնվող քրիստոնյաների եկեղեցիներից վերացնի սրբապատկերները։ Տխմար Եզիդը հավատաց նրան և սուրբ ու նվիրական պատկերների դեմ[594] համընդհանուր օրենք հրապարակեց։ Բայց մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի շնորհիվ և նրա անարատ մոր ու բոլոր սրբերի միջնորդությամբ հենց նույն տարին էլ Եզիդը մեռավ։ Շատերը նրա սադայելական օրենքի մասին լսեցին անգամ։ Բայց այդ դառն ու անօրեն ամբարշտությունը Լևոն կայսրն ընդունեց և մեր գլխին բազում փորձանքներ բերեց[595]։ Նա այդ տխմարության համախոհ գտավ ի դեմս ինչ-որ Բշիրի[596], Ասորիքում գերի ընկած նախկին մի քրիստոնյայի, որը քրիստոնեությունն ուրանալով, ընդունեց արաբների կրոնը։ Նա մի փոքր առաջ ազատվելով [արաբական] ստրր-

կությունից, հռոմայեցիների պետությունը եկավ և որպես մարմնով հզոր և չարափառության համախոհ Լևոնի կողմից մեծ պատվով ընդունվեց։ Նա կայսեր սատարը դարձավ այդ կարգի մեծ ամբարիշտ գործում։ [Լևոնի] համախոհներից էր նաև ամենայն աղտեղությամբ լի Նակոլիայի[597] անկիրթ եպիսկոպոսը։

[A. M. 6216]

Արաբների առաջնորդ Հիշամ[598]։ Իշխեց 19 տարի։

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 8-րդ տարին	[Արաբների առաջնորդ Հիշամի] 1-ին տարին
[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 10-րդ տարին	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 19-րդ տարին

Ես այժմ կպատմեմ, թե ինչպես Հռոմի երանելի Ստեփանոս պապը[599] փախուստի դիմեց Ֆրանկների երկիրը և փրկվեց։

Այս երանելի Ստեփանոսը լոնգոբարդների ռեքս Աստուլֆոսի[600] կողմից բազում փորձությունների հանդիպելով, Պիպինոսի[601], Ֆրանկ ազգի մայորդոմի և գերագույն կառավարչի օրոք Ֆրանկների մոտ փախավ։ Նրանց մոտ տիրող, այսինքն ռեքսի իշխանությունը ժառանգական է։ Ռեքսերը ոչինչ չեն անում, չեն կառավարում, սոսկ չափից ավելի ուտում են ու խմում, մնում տանը, իսկ մայիս ամսի մեկին ողջ ժողովրդի ներկայության գահին են բազմում, երկրպագում ժողովրդին և արժանանում վերջինիս երկրպագության, ընդունված կարգի համաձայն նվերներ ստանում և փոխհատուցում, որից հետո մինչև հաջորդ մայիս ամիսը ինքնամփոփ անցկացնում։ Մայորդոմը իր և ժողովրդի անունից ամեն ինչ վարող մեկն ունի։ Մայորդոմի տոհմից սերողները կոչվում էին կրիստատներ, որ թարգմանաբար նշանակում է «մազոտ կռնակ ունեցողներ»[602], քանզի նրանց կռնակը խոզի մեջքի պես մազոտ է լինում։ Արդ, Աստուլֆոսի դաժանությունից ու անմտությունից ստիպված, բայց և նրա թույլտվությամբ, Ստեփանոսը գնաց Ֆրանկիա, Աստուլֆոսից նախօրոք իրավունք ստանալով դործել իր հայեցողությամբ։ Տեղ հասնելով նա ձեռնադրում է այնտեղ մեծ համբավ վայելող և ռեքսի կողմից պետության վերակացու նշանակված Պիպինոսին։ Նա անցյալում մարտնչել էր Աֆրիկայից Իսպանիա անցած և մինչև օրս այդ երկրին տիրող արաբների դեմ, որոնք փորձել էին Ֆրանկների դեմ էլ մարտնչել։ Բազում զորքով նրանց դեմ դուրս եկած Պիպինոսը Էրիդանոս գետի[603] ափին

սպանում է այդ ազգի առաջնորդ Աբդուռահմանին, ինչպես նաև մեծ թվով արաբների, և դառնում ֆրանկ ժողովրդի հիացմունքի և սիրո առարկան, և ոչ միայն սրա պատճառով, այլև իր այլ առաքինությունների։ Նա առաջինն էր, որ դարձավ [ֆրանկ] ժողովրդի առաջնորդը ոչ ըստ ծագման. նույն այդ Ստեփանոսը քավեց Պիպինոսի՝ ռեքսի հանդեպ ցուցաբերած երդմնազանցության մեղքը։ Պիպինոսը խուզելով իրենից առաջ իշխող ռեքսին, առոք փառոք վանքում արգելափակեց, ապահովելով նրա անդորրը։ Այս Պիպինոսը երկու որդի ունեցավ՝ Կարուլոսին և Կարուլոմագնոսին[604]։

Նույն տարին վախճանվեց Եզիդը, որն արաբների վրա ամիրայացավ 4 տարի։ Ամիրապետ դարձավ նրա եղբայր Հիշամը, որն սկսեց գյուղերում և քաղաքներում ապարանքներ կառուցել, պարտեզներ ու այգիներ տնկել, ջրանցքներ անցկացնել։ Նա Ռոմանիայի վրա արշավեց, բայց իր զինվորներից շատերին կորցնելով, վերադարձավ։

Հռոմի Ստեփանոս պապը ֆրանկների մոտ փախավ։

[A. M. 6217]

Հռոմի Գրիգոր պապ[605]։ Աթոռակալեց ինն տարի։

[Հռոմայեցիների կայսեր] Լևոն 9-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 2-րդ տարին

[Հռոմի Գրիգոր պապի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 11-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 20-րդ տարին

Այդ տարի ամբարիշտ Լևոն կայսրը առաջին անգամ լինելով, խոսք բացեց սուրբ ու նվիրական պատկերների վերացման մասին[606]։ Հռոմի Գրիգոր պապը, իմանալով այդ մասին, վար դրեց Իտալիայի և Հռոմի հարկերը, Լևոնին դավանական բնույթի նամակ գրեց, թե կայսրը իրավասու չէ հավատքի հարցերով զբաղվելու, փոփոխելու սուրբ հայրերի հաստատած եկեղեցու վաղեմի կարգուկանոնը։

Նույն այդ տարին հորդած ուղիը ողողեց Եդեսիա քաղաքը և շատերին քշեց տարավ կորցրեց։

[A. M. 6218]

[Հռոմայեցիների կայսեր] Լևոն 10-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 3-րդ տարին

[Հռոմի Գրիգոր պապի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 12-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 21-րդ տարին

Այդ տարի Մասլաման արշավեց Կապադովկիայի Կեսարիայի վրա և առավ այն։ Ասորիքում մահ տարաժամ եղավ։ Ամիրապետի ուղտերը հրոճարակ դարձան սուրբ Եղիայում[607]։ Հիշամի որդի Մուավիան Ռոմանիայի վրա արշավեց և երկիրը ոտնատակ անելով, վերադարձավ։

Նույն թվականին, ինդիկտիոնի 9-րդ տարին, ամառ ժամանակ Թերա և Թերասիա կղզիների[608] միջև ծովի խորքից մի քանի օր գոլորշիներ բարձրացան՝ կարծես կրակարանից, որ վառվելով աստիճանաբար ըստվարացան ու քարացան, ողջ ծուխը կրակի տեսք ստացավ։ Երկրային նյութը այնքան ստվար էր, որ ժայթքած պեմզայի բլրաչափ կտորներ շպրտվեցին համայն Փոքր Ասիայի, Լեսբոսի, Աբյուդոսի, ափամերձ Մակեդոնիայի վրա. այդ ծովի ամբողջ երեսը լողացող պեմզայի բեկորներով ծածկվեց։ Հրաբխի տեղում նախկինում գոյություն չունեցող կղզի առաջացավ, որ Հիերա կոչվող կղզուն միացավ։ Վերոհիշյալ Թերա և Թերասիա կղզիները, ինչպես այս մեկը՝ աստվածամարտ Լևոնի օրոք, ժամանակին հենց այդպես ջրից են դուրս եկել։ [Լևոնն] իր անձի դեմ աստծո ցուցաբերած այս ցասումը հօգուտ իրեն կատարված համարելով, առավել լկտիությամբ սկսեց պատերազմել սուրբ ու նվիրական պատկերների դեմ[609], դաշնակից ունենալով աստվածուրաց Բշիրին, իր տիմարության պաշտպանին. երկուսն էլ բացարձակապես անուսում էին, լի տգիտությամբ, որը և բազում դժբախտությունների աղբյուրն է։ Մայրաքաղաքի բնակիչները այդ նոր վարդապետությունից հույժ դժգոհ, մտադրել էին կայսեր դեմ ապստամբություն բարձրացնել։ Նրանք խալկե մեծ դարբասի վրայից Տիրոջ պատկերն իջեցրած մի քանի կայսերական պաշտոնյաների սպանեցին, որի համար շատերն իրենց բարեպաշտության սիրույն խեղման ենթարկվեցին՝ անդամահատման, խարազանման, աքսորի, ունեցվածքի կորստյան, հատկապես տոհմիկ և կրթյալ մարդիկ։ Սարակինոսամիտ այս Լևոնը փակեց ուսումնարանները, սուրբ Կոստանդնից մինչև օրս ծաղկող բարեպաշտության ուսուցումը արգելեց, բազում այլ լավ բաներ բնաջինջ արեց։ Այդ միջոցին Հելլադայի և Կիկլադյան կղզիների բնակիչները, աստվածային նախանձախնդրությամբ դրդված[610], համաձայնության եկան և նրա դեմ խոշոր տորմիղ հանեցին։ Նրանց հարեց և ոմն Կոզմաս՝ գահի թեկնածու։ Բանակը գլխավորում էին Հելլադայի տուրմարխ Ագալլիանոսը և Ստեփանոսը, որոնք մայրաքաղաքին մոտենալով, ինդիկտիոնի 10-րդ տարվա ապրիլ ամսի 18-ին բախվեցին բյուզանդացիներին[611] և պարտվեցին. նրանց նավերը հեղուկ կրակի ճարակ դարձան։ Ապստամբների մի մասը ջրասույզ եղավ փոսի մոտ, այդ թվում և Ագալլիանոսը, որ սպառազինությամբ հանդերձ իրեն

ջուրը գցեց։ Վերապրողները կայսեր կողմն անցան։ Կոզմասն ու Ստեփանոսը գլխատվեցին։ Ամբարիշտ Լևոնն ու նրա համախոհները բորբոքված չարությամբ սաստկացրին բարեպաշտության հալածանքը։ Ինդիկտիոնի այդ նույն 10-րդ տարվա ամռանը յուրայինների դեմ տարված վատթար հաղթանակից հետո, երկու սարակինոս ամիրաների զորաբանակներ հարձակվում են Բյութանիայի Նիկիա քաղաքի վրա՝ Ամերը[612] 15 հազար թեթևազեններով, որ պաշարեց անպատրաստի վիճակում գտնվող քաղաքը, և նրա ետևից ութուկես բյուր զինվորներով եկող Մուավիան։ Բայց երկարատև պաշարումից, պարիսպների մասնակի քանդումից հետո էլ, այնտեղ գտնվող պաշտելի սուրբ հայրերի տաճարի, ինչպես և նրանց աստծուն ընդունելի աղոթքների պատճառով, նրանց չհաջողվեց գրավել քաղաքը։ Այս տաճարի պատերից էին կախված նրանց նվիրական սրբապատկերները, որոնք մինչև օրս պաշտելի են իրենց՝ սուրբ հայրերի համախոհներին։ Արտավազդի[613] ստրատոր ոմն Կոստանդին, տեսնելով պատից կախված աստվածածնի պատկերը, մի քար վերցրեց և շպրտեց նրա վրա, ջարդ ու փշուր արեց այն և ցած գրցելով տրորեց։ Տիրուհին գալով նրա երազում ասաց. «Այդ ինչ մեծ սխրանք գործեցիր իմ դեմ։ Բայց ճշմարիտ այդ [քարը] քո գլխին գրցած եղար»։ Հաջորդ օրը, երբ սարակինոսները պարսպի վրա գրոհեցին և մարտն սկսվեց, այս Կոստանդինը որպես քաջ զինվոր շտապեց դեպի պարիսպը, բայց բաբանից նետված մի քար փշրեց Թշվառականի գանգն ու երեսը, նա իր ամբարշտության արժանի հատուցում ստացավ։ [Արաբները] բազում գերիներով ու ավարով վերադարձան։ Այս դեպքում էլ աստված ամբարիշտ Լևոնին ցույց տվեց, որ այդպես եղավ ոչ թե ցեղակիցների բարեպաշտության պատճառով, ինչպես նա կարծում էր, այլ ինչ-որ աստվածային, անճառելի վճռով. սուրբ հայրերի միջնորդությամբ և այդ քաղաքում պաշտվող նրանց նվիրական պատկերների օգնությամբ արաբների այդպիսի զորությունը նրանց քաղաքի վրա դեմ առավ, ի պարսավումն, հանդիջում դատապարտումն բրոնակալի, և ի հաստատումն բարեպաշտների։ Այդ ամբարիշտը մեղանչում էր ոչ միայն սրբապատկերների պաշտամունքի հարցում, այլև ամենասուրբ աստվածածնի ու բոլոր սրբերի միջնորդության. ամենապիղծը իր ուսուցիչների՝ արաբների նման խորշում էր նրանց մասունքներից։ Նա այս ժամանակից սկսեց անպատկառորեն ընդհարվել Կոստանդնուպոլսի երանելի Գերմանոս պատրիարքի հետ, նախատել իրենից առաջ թագավորած բոլոր կայսրերին, պատրիարքներին ու քրիստոնյա ժողովուրդներին, նրանց կռապաշտ համարելով, քանզի երկբր-

պագել էին սուրբ ու նվիրական պատկերները։ Նա այն աստիճան անհավատ էր ու տխմար, որ չէր հասկանում, որ խոսքը հարաբերական երկրպագության[614] մասին է։

[A. M. 6219]

[Հռոմայեցիների կայսեր] 11-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 4-րդ տարին

[Հռոմի Գրիգոր պապի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 13-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 22-րդ տարին

Այդ տարի Մուավիան[615] առավ Ատեուս բերդը[616] և վերադարձավ։

[A. M. 6220]

[Հռոմայեցիների կայսեր] 12-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 5-րդ տարին

[Հռոմի Գրիգոր պապի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 14-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 23-րդ տարին

Այդ տարի Մարաստանի և Հայաստանի վրա արշավեց Խաղարիայի խաքանի որդին և արաբների զորավար Գարախին Հայաստանում հանդիպելով, նրա զորքի հետ միասին կոտորեց։ Ավարի առնելով հայոց և մարաց աշխարհը, նա վերադարձավ, արաբների մեջ մեծ սարսափ տարածելով[617]։

[A. M. 6221]

[Հռոմայեցիների կայսեր] 13-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 6-րդ տարին

[Հռոմի Գրիգոր պապի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի] 15-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 24-րդ տարին

Այդ տարի Մասլաման Թուրքաց երկրի[618] վրա արշավեց, պատերազմ տեղի ունեցավ և երկու կողմից էլ սպանվողներ եղան։ Մասլաման վեհերոտելով փախուստի դիմեց և Խաղարիայի լեռների վրայով վերադարձավ։

Այդ նույն տարին ուղղափառ հավատքի դեմ մոլեգնած անօրեն Լևոն կայսրը սուրբ Գերմանոսին կանչեց և փորձեց քաղցր խոսքով գայթակղեցնել։ Երանելի պատրիարքն ասաց նրան. «Լսել էինք, որ սուրբ ու նվիրական պատկերների վերացում պիտի լինի, սակայն ոչ քո թագավորության օրոք»։ Երբ Լևոնն ստիպեց նրան հայտնել, թե «Ո՞ւմ թագավորության օրոք», պատրիարքը պատասխանեց. «Կոնոնի ժամանակ»։ Կայսրն ասաց. «Ավազանի անունս հենց Կոնոն է»։ Պատրիարքն ասաց. «Մի՛ արասցե, տեր, որ այս փորձությունը քո ձեռքով իրականանա, քանզի այդ իրականացնողը Նեռի կարապետն է և մարմնացյալ սուրբ տնօրինության տապալողը»։ Այդ խոսքերի վրա կայսրը զայրացավ երանելու վրա, ինչպես ժամանակին Հերովդեսը՝ Հովհաննես Կարապետի։ Պատրիարքը Լևոնին հիշեցրեց այն պայմանների մասին, որ նա՝ կայսրը, ընդունել էր գահ բարձրանալիս՝ աստծուն խոսք տվել ոչ մի հարցում շսասանել Քրիստոսի եկեղեցին իր առաքելական ու աստվածատուր դրույթներից։ Բայց թշվառականը դրանից էլ չամաչեց։ Նա ջանում էր տարբեր պատրվակներ առաջ քաշել, որպեսզի պատրիարքին իր թագավորության դեմ ոտնձգություններ կատարելու մեջ մեղադրելու հիմքեր ստեղծի, որպեսզի նրան որպես դավադրի և ոչ խոստովանողի հեռացնի պատրիարքությունից։ Այդ գործում նրան սատարող էր ու գործակից [Գերմանոսի] աշակերտ ու սինկելլոս Անաստասիոսը, որին, որպես ամբարշտության կողմնակցի, կայսրը ապօրինաբար խոստացել էր պատրիարքական աթոռը։ Երանելի Գերմանոսը թեև գիտեր, որ Անաստասիոսը խոտորվել է, նմանվելով Տիրոջ, իմաստուն ու հեզ կերպով հիշեցնում էր նրան՝ նոր Հուդային, դավաճանության մասին։ Նա ի վերջո համոզվեց, որ [Անաստասիոսը] անդարձ մոլորվել է։ Երբ Գերմանոսը մի անգամ կայսեր մոտ գնալիս, Անաստասիոսը տրորեց իր ոգեստի ծայրը, նա ասաց. «Մի՛ շտապիր, դեռ կհասցնես մտնել դիիպիոն»[619]։ Նա, ինչպես և այդ խոսքը լսողները, շփոթվեցին։ Նա չգիտեր, թե ինչ գուշակություն է դա։ Այն իրականացավ 15 տարի անց, ինդիկտիոնի 12-րդ տարին, Կոստանդին հալածչի[620] թագավորության երրորդ տարին։ Ամենքը համոզվեցին, որ Գերմանոսը աստվածուստ է ստացել այդ ապերախտի մասին մարգարեանալու շնորհը։ Հարցը հետևյալն է. Կոստանդինը, երբ ճնշելով իր փեսա Արտավազդի խռովությունը, իր ձեռքն առավ թագավորության սանձերը, այս Անաստասիոսին և իր՝ կայսեր, այլ ոսոխների դանակոծեց, Անաստասիոսին՝ որպես իր թշնամիների հետ միասին իրեն գահընկեց հայտարարած և Արտավազդին թագադրած (այդ մասին իր տեղում կասվի)

դիպիոնի միջով դուրս բերեց ձիարշավարան և մերկ, ավանակի վրա հակառակ նստեցրած, ծանակեց։ Ահա բարեպաշտ դավանանքի առաջամարտիկը Բյուզանդիոնում այս սուրբ ու աստվածային Գերմանոսն էր, նա էր գազանանուն[621] Լևոնի և նրա պաշտպանների դեմ գազանամարտիկ, իսկ ավագ Հռոմում՝ սրբազնագույն առաքելական այր Գրիգորը, ծայրագույն առաքյալ Պետրոսի սինթրոնոսը, որ փայլում էր բանիվ ու գործով։ Նա էր, որ հանեց Հռոմը, Իտալիան և համայն արևմուտքը Լևոնի և նրա թագավորության քաղաքական ու եկեղեցական հպատակության տակից։ Ասորիքի Դամասկոսում իր կենցաղավարությամբ ու խոսքով փայլում էր երեց ու վանական, հոյակապ վարդապետ Հովհաննես Ոսկեհոսը[622], Մանսուրի [թոռը]։ Լևոնը Գերմանոսին, որպես իրեն ենթակա մարդու կարողացավ հեռացնել պատրիարքական աթոռից։ Բայց Գրիգոր պապը նամակներով բացահայտ քննադատում էր նրան, նամակներ, որոնք շատերին է հայտնի, իսկ Հովհաննեսը արևելքի եպիսկոպոսներով ամբարշտին նզովքի ենթարկեց։ Ինդիկտիոնի 13-րդ տարվա հունվար ամսի 7-ին, շաբաթվա 3-րդ օրը, ամբարիշտ Լևոնը տասնինն ակուբիտների տրիբունալիոնում ժողով գումարեց[623]՝ ընդդեմ սուրբ ու նվիրական պատկերների, որին մասնակցելու հրավիրեց և սրբազնագույն Գերմանոս պատրիարքին, ենթադրելով, որ իրեն կհաջողվի համոզել ստորագրել սուրբ-պատկերների դեմ ընդունած որոշման տակ։ Բայց աստծո քաջարի ծառան նրա պիղծ չարափառության առջև ամենևին չերերաց և պաշտպանելով ուղղափառությունը, հանձնեց եմիփորոնը, հրաժարվեց պատրիարքությունից և բաղում հորդորական խոսքերից հետո ասաց. «Եթե ես Հովնանն եմ, ինձ ծովը գցեք[624]. առանց տիեզերական ժողովի, ո՞վ կայսր, ես չեմ կարող դավանանքի մեջ նորամուծություններ կատարել»։ Նա թողեց, հեռացավ Պլատանիոս կոչվող տեղը, իր հայրենի տունը և դադար առավ, պատրիարքական աթոռին նստելով 14 տարի, 5 ամիս և 7 օր։ Նույն հունվար ամսի 22-ին երանելի Գերմանոսի սուտանուն աշակերտ և սինկելլոս Անաստասիոսը, որ իր աշխարհական իշխանասիրությամբ Լևոնի չարափառության կողմնակիցը դարձավ, ձեռնադրվեց Կոստանդնուպոլսի սուտ պատրիարք։ Իսկ Հռոմի սրբազան Գրիգոր պապը, ինչպես նախապես ասացի, մերժեց Անաստասիոսին և լիբելլները[625], Լևոնին նամակներով մեղադրեց ամբարշտության մեջ և Հռոմը, համայն Իտալիան հանեց նրա թագավորության ենթակայությունից։ Դրա վրա բռնակալը էլ ավելի գազազած, սաստկացրեց գոտեմարտը սրբապատկերների դեմ։ Բազում կղերական-

ներ ու վանականներ, բարեպաշտ աշխարհականներ ուղղափառության պաշտպան կանգնելով, մարտիրոսական պսակին արժանացան։

[A. M. 6222]

Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարք[626]։ Աթոռակալեց 24 տարի։

[Հռոմայեցիների կայսեր] 14-րդ տարին	[Արաբների առաջնորդ Հիշամի] 7-րդ տարին	[Հռոմի Գրիգոր պապի] 6-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 1-ին տարին	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 25-րդ տարին	

Այդ տարի Մասլաման արշավեց Ռոմանիայի վրա և գալով Կապադովկիա, նենգությամբ առավ Խարսիանոն բերդը[627]։

[A. M. 6223]

[Հռոմայեցիների կայսեր] 15-րդ տարին	[Արաբների առաջնորդ Հիշամի] 8-րդ տարին	[Հռոմի Գրիգոր պապի] 7-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 2-րդ տարին	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 26-րդ տարին	

Այդ տարի Մասլաման արշավեց Թուրքիայի [628] վրա և հասնելով Կասպից դռները, վերադարձավ։

[A. M. 6224]

[Հռոմայեցիների կայսեր] 16-րդ տարին	[Արաբների առաջնորդ Հիշամի] 9-րդ տարին	[Հռոմի Գրիգոր պապի] 8-րդ տարին
[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 3-րդ տարին	[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 27-րդ տարին	

Այդ տարի Լևոն կայսրն իր որդի Կոստանդնին ամուսնացրեց սրկությունների[629] խաքանի դստեր հետ, որին քրիստոնյա մկրտեց և անվանեց Իրենե[630]։ Սա սուրբ գիրքը սերտելով, իր բարեպաշտությամբ աչքի ընկավ, նա խարազանում էր նրանց ամբարշտությունը։ Հիշամի որդի Մուավիան Ռոմանիայի վրա արշավեց և հասնելով Պափլագոնիա, բա-

զում գերիներով ետ դարձավ։ Իսկ կայսրը պապի դեմ մոլեգնած, ինչպես և Հռոմի ու Իտալիայի անջատման պատճառով, մի մեծ նավատորմիզ հանդերձեց և Կիբիրեոտների զորավար Մանիի գլխավորությամբ նրանց դեմ ուղարկեց։ Բայց տխմար [Լևոնը] խայտառակվեց, քանզի նավատորմիզը Ադրիական ծովում ջրասույզ եղավ։ Դրա վրա աստվածամարտն առավել ևս մոլեգնած, արաբական մտածելակերպով էլ զինված, Կալաբրիայի և Սիկիլիայի բնակչության երրորդ մասի վրա գլխահարկ նշանակեց[631]։ Ինչ վերաբերում է ավագ Հռոմում պատվող սուրբ և ծայրագույն առաքյալների պատրիմոնիաներին[632], երեք ու կես տաղանդ չափով ոսկուն, որ դեռ հին ժամանակներից եկեղեցուն էր վճարվում, կայսրը կարգադրեց պետական գանձարանը մուծել։ Նա հրամայեց վերահսկողություն սահմանել և ցուցակագրել արական սեռի նորածիններին, ինչպես ժամանակին արեց փարավոնը հրեաների [նորածինների] առնչությամբ, մի բան, որ [Լևոնի] ուսուցիչներ արաբներն անգամ չհանդգնեցին անել արևելքի քրիստոնյաների նկատմամբ։

[A. M. 6225]

[Հռոմայեցիների կայսեր] 17-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 10-րդ տարին

[Հռոմի Գրիգոր պապի] 9-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 4-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 28-րդ տարին

Այդ տարի Ասորիքում մահ տարաժամ եղավ և շատերը մեռան։

[A. M. 6226]

Հռոմի պապ Զաքարիա[633]։ Աթոռակալեց 21 տարի։

[Հռոմայեցիների կայսեր] 18-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 11-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 5-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 29-րդ տարին

Այդ տարի Մանսուրի որդի Թեոդորոսը անապատի շրջաններն աքսորվեց, երկնքում լուսավոր հրո նշան երևաց, Մուավիան Ասիան ասպատակեց։

[A. M. 6227]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 19-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 12-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 6-րդ տարին

[Երուսաղեմի Հովհաննես պատրիարքի] 30-րդ տարին

Այդ տարի Հիշամի որդի Սուլեյմանը[634] արշավեց Հայոց աշխարհ, բայց ոչինչ չարեց։

[A. M. 6228]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 20-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 13-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի Մուավիան արշավեց Ռոմանիայի վրա և վերադարձից մի քանի օր անց ձիուց գլորվեց ու մեռավ։

[A. M. 6229]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 21-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 14-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարի Հիշամի որդի Սուլեյմանը Ասիայում շատերին գերեվարեց, այդ թվում և ոմն պերգամացու, որ պնդում էր, թե ինքը Հուստինիանոսի որդի Տիբերիոսն է։ Հիշամը սրան հարազատ որդու պես պատվեց, կայսրերին սարսափեցնելու համար կայսերավայել՝ զորքով ու գայիսոնով, դրոշներով Երուսաղեմ ուղարկեց, հրաման տալով համայն Ասորիքով մեկ փառք ու պատվով ման ածեն, ի տես և ի զարմանս բոլորի։

[A. M. 6230]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 22-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 15-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարի Հիշամի որդի Սուլեյմանը արշավեց Ռոմանիայի վրա, գրոհով առավ Երկաթե բերդը[635] և Մարիանոս պատրիկի[636] որդի Եվստաթիոսին գերի վերցրեց։

[A. M. 6231]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 23-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 16-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 6-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 10-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 8-րդ տարվա մայիս ամսին Սուլեյմանը 9 բյուր զորքով, 4 զորավարներով, որոնց գլխավորում էր Գամերը, Ռոմանիայի դեմ արշավանք կազմակերպեց։ Գամերը բյուր թեթևազեններով մարտընչում էր Ասիական երկրի շրջաններում, նրան ենթակա Մելիքն ու Բատալը՝ երկու բյուր հեծյալներով՝ Ակրոյինոնի[637], իսկ Սուլեյմանը վեց բյուրով՝ Կապադովկիայի Տիանայի։ Ասիայում ու Կապադովկիայում մարտնչողները տղամարդկանց ու կանանց մեծաթիվ գերիներով ու անասուններով անվնաս վերադարձան, բայց Մելիքի[638] ու Բատալի[639] զորքերը Ակրոյինոնում Լևոնի և Կոստանդնի հետ մարտի բռնվելով, վերջիններիս կողմից պարտություն կրեցին. շատերը սպանվեցին, այդ թվում և նրանց երկու հրամանատարները։ Նրանցից ութ հարյուր մարտիկ, հանդիպելով վեց հազար հոգու դիմադրության, փախուստի դիմեցին և փրկվեցին Սինադայում[640] և միանալով Սուլեյմանին, վերադարձան Ասորիք։ Նույն տարի սրանցից շատերն էլ Աֆրիկայում սպանվեցին՝ իրենց զորավար Դամասկացու հետ միասին։

[Ա. Մ. 6232]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 24-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 17-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 7-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 11-րդ տարին

Այդ՝ բռնակալ և ամենաանօրեն Լևոն Ասորու[641] թագավորության 24-րդ տարում հիերակիտները[642] Դամասկոսում շուկաներ կրակի տվեցին։ Նրանց կախաղան հանեցին։ Պերիտիոս[643] ամսի 28-ին ուղիղ Եդեսիան ողողեց։

Նույն տարվա հոկտեմբեր ամսի 26-ին, ինդիկտիոնի 9-րդ տարին, շորեքշաբթի օր, ժամը 8-ին Կոստանդնուպոլսում սաստիկ ու սոսկալի երկրաշարժ եղավ։ Եկեղեցիներ ու վանքեր փլվեցին, բազում ժողովուրդ սպանվեց։ Տապալվեց նաև Ատալոսի դռան վրա կանգնած Մեծ Կոստանդնի անդրին, Ատալոսի [անդրու] հետ միասին, նաև Քսերոլոֆոսում սյան վրա կանգնած Արկադիոսի անդրին, Ոսկե դռան վրա գտնվող Թեոդոսիոս Մեծի անդրին, քաղաքի ցամաքային պարիսպները, Թրակիայում՝ քաղաքներ ու գյուղեր ավերակ դարձան, Բյութանիայում՝ Նիկոմեդիան, Պրենետոսը, Նիկիան, ուր մեկ եկեղեցի միայն փրկվեց[644]։ Երկրաշարժը տևեց 12 ամիս։ Առանձին տեղերում ծովը հեռացավ իր ափերից։ Կայսրը, տեսնելով քաղաքի փլված պարիսպները, դիմեց ժողովրդին ու ասաց. «Դուք պարիսպները կառուցելու միջոցներ չունեք, այդ պատճառով մենք այդ գործը հանձնարարեցինք գործավարներին։ Նրանք ընդունված կարգի համաձայն յուրաքանչյուր օլոկոտինից մեկ միլիարեսիոն[645] են պահանջում։ Պետությունն այդ գումարն առնելով կկառուցի պարիսպները»։ Ահա այստեղից սկիզբ առավ գործավարներին երկու կերատ վճարելու սովորությունը[646]։ Հռոմայեցիների տոմարով աշխարհի արարչագործության՝ Ադամի 6248 թվականն էր, եգիպտացվոց, այն է ալեքսանդրացվոց տոմարով՝ 6232 թվականը, Փիլիպոս Մակեդոնացու՝ 1063[647]։ Լևոնն իշխեց 24 տարի, 2 ամիս և 25 օր, ինդիկտիոնի 15-րդ տարվա մարտ ամսի 25-ից մինչև ինդիկտիոնի 9-րդ տարվա հունիս ամսի 18-ը։ Նմանապես և նրա որդին, իր ամբարշտության ու թագավորության ժառանգորդ Կոստանդինը, աստծո թույլտվությամբ իշխեց 34 տարի, 3 ամիս և 2 օր՝ նույն ինդիկտիոնի 9-րդ տարվա հունիս ամսի 18-ից, մինչև ինդիկտիոնի 14-րդ տարվա սեպտեմբեր ամիսը։ Ահա այսպես, ինչպես ասացինք, ինդիկտիոնի նույն 9-րդ տարին, հունիս ամսի 18-ին Լևոնը բացի հոգևոր

մահից, ունեցավ նաև մարմնական վախճան։ Միահեծան թագավորում է նրա որդի Կոստանդինը։ Նախորդ գլուխներում ես համառոտակի պատմեցի, թե քրիստոնյաների գլխին ինչքան փորձանք եկավ ամբարիշտ Լևոնի թագավորության օրոք, ինչպես ուղղափառ հավատքի հարցերում, այնպես էլ շարաշահումների ու արծաթասիրության հետ կապված՝ Սիկիլիայում, Կալաբրիայում, Կրետեում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններում։ Ես նկատի ունեմ նրա չարափառության պատճառով Իտալիայի անջատման, երկրաշարժների, մահ տարաժամների, սովի, այլազգիների ապստամբությունների մասին։ Արդ, այսուհետև անհրաժեշտ է շարադրել նրա ամբարշտագույն և ամենաթշվառական որդու անօրեն գործերի մասին, որոնք ավելի պիղծ են և աստծուն ատելի։ Բայց, հիրավի, վերադիտող, վերատեսուչ և ամենատես աստվածը թողեց, որ այդ բոլորը կատարվեն՝ պարզապես հօգուտ հետագա սերունդների, հօգուտ այդ ամենաանօրենի պիղծ չարափառության մոլորության մեջ դեգերող թշվառական ու ամբարիշտ մարդուկների, մոլորություն, որ սկիզբ առավ ինդիկտիոնի 10-րդ՝ նրա թագավորության առաջին տարին< և ամբարշտորեն տևեց մինչև 14-րդ ինդիկտիոնը՝ նրա կորստյան տարին>[648]։ Քանզի այդ ամեն ինչ ավերող, խելակորույս, արյունռուշտ և ամենավայրենի գազանը, ավելի շուտ բռնատիրելով, քան օրինականորեն կառավարելով, նախ հանդես եկավ մեր աստծո և փրկչի Հիսուսի Քրիստոսի, նրա ամենասուրբ և անբիծ մոր և բոլոր սրբերի դեմ, մոգությամբ, անառակությամբ ու արյունոտ զոհաբերությամբ[649], գոմաղբի, աղբի և մեղի վրա խաբեպատիր գուշակություններ կատարեց, տարվեց արվամոլությամբ ու դիվակոչությամբ։ Մի խոսքով երիտասարդ հասակից պարապեց մարդու հոգին ավերող ամեն ինչով։ Երբ հոր իշխանության հետ միասին նա ստացավ նաև նրա չարափառությունը, ապա կարիք կա՞ ասել, թե այդ ամենապիղծը հենց սկզբից ինչպիսի չարիք հղացավ, որը բացահայտորեն բոցավառեց։ Այդ բանին ականատես եղած քրիստոնյաները անչափ տագնապ ապրեցին, հենց սկզբից ատեցին նրան իր լկտիության համար և անցան նրա փեսայի՝ իր քրոջ Աննային կնության առած Օպսիկիոնի կոմես Արտավազդ կուրապաղատի[650] կողմը, վճռելով որպես ուղղափառի նրան տալ թագավորությունը։

Նույն տարի արաբների առաջնորդ Հիշամը իրեն ենթակա բոլոր քաղաքներում գտնվող քրիստոնյա ռազմագերիներին մահապատժի ենթարկեց։ Նրանց թվում էր նաև անվանի Մարիանոս պատրիկի երանելի որդի Եվստաթիոսը։ Նրան թեև շատ ստիպեցին, բայց նա չուրացավ իր ճշմարիտ հավատքը և մարտիրոսացավ Միջագետքի նշանավոր խառան քա-

դաքում։ Այնտեղ գտնվող նրա սուրբ ու նվիրական մասունքները շնորհոքն աստծո բուժում են ամեն մի ախտ։ Շատ ուրիշներ էլ իրենց արյունը թափեցին հանուն Քրիստոսի ու մարտիրոսացան։

[A. M. 6233]

Աշխարհի արարչագործության 6233 թ.	*Քրիստոսի մարդեղության 733 թ.*	*Հռոմայեցիների Կոստանդին կայսեր 35-ամյա թագավորության 1-ին տարին*
Արաբների առաջնորդ Հիշամի 19-ամյա իշխանության 18-րդ տարին	*Հռոմի Զաքարիա պապի 21-ամյա աթոռակալության 8-րդ տարին*	*Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի 24-ամյա աթոռակալության 12-րդ տարին*

Այդ տարի մեր առ աստված կատարած մեղքերի և բազում զանցանքների համար թագավորեց Կոստանդինը, հալածիչը հայրենավանդ օրենքների։ Ինդիկտիոնի հաջորդ՝ 10-րդ տարվա հունիս ամսի 27-ին կայսրը գնաց Օպսիկիոնի շրջանները՝ ընդդեմ արաբների և եկավ Կրասոս[651] *կոչվող [քաղաքը]։ Հիշյալ Արտավազդը Օպսիկիոնի զորքով գրտնըվում էր Դորիլեոնում*[652]*։ Նրանց մեջ փոխադարձ կասկած կար։ Կոստանդինը նրա մոտ մարդ ուղարկեց, խնդրելով իրեն առաքեն նրա՝ Արտավազդի որդիներին, այն է իր, Կոստանդնի, զարմիկներին, քանզի նրանց տեսնելու ցանկություն ուներ, բայց նպատակը նրանց բռնելն ու հսկողության տակ պահելն էր։ Արտավազդը կռահեց նենգությունը և գիտենալով [կայսեր] անսահման խորամանկությունը, հուսաբեկ եղավ։ Նա դիմեց զինվորներին և համոզելով նրանց, բոլորով միասին նրա վրա հարձակվեց։ Ընդդիմակայած սարակինոսամիտ Բշիր*[653] *պատրիկին նա սրի քաշեց։ Կոստանդինը պահեստի մի թամբած ձի գտնելով, հեծավ ու փախավ Ամորիոն, ապա անցնելով Անատոլիկոն բանակաթեմը (նրա զորավարն այն ժամանակ Լանգինոսն էր), փրկվեց, բանակաթեմի զորքերին իր կողմը գրավեց, տալով մեծ խոստումներ։ Այնուհետև նա Թրակեսիոն բանակաթեմի զորավար Սիսիննակիոսի մոտ մարդ ուղարկեց և այդ բանակաթեմի զինվորներին համոզեց դաշնակցեն իրեն։ Սկիզբ են առնում սարսափելի կռիվներ, ստորադասների միջև զինված ընդհարումներ, որոնց մի մասը կայսր էր հայտարարում [Կոստանդնին], մյուսը՝ [Արտավազդին]։ Արտավազդը իրադրության մասին գրում է քաղաք, իր փոխանորդ պատրիկ և մագիստրոս Թեոփանեսին, և գրածն ուղարկում*

Աթանասիոս սիլենտիարիոսի միջոցով։ Արտավազդին համախոհ Թեոփանեսը ժողովրդին հավաքեց Մեծ եկեղեցու կատեխումենայում և Արտավազդի նամակների և վերոհիշյալ Աթանասիոսի միջոցով բոլորին հավաստիացրեց, թե կայսրը մահացել է, որ բանակաթեմերը կայսր են հռչակել Արտավազդին։ Դրա վրա ողջ ժողովուրդը սուտանուն պատրիարք Անաստասիոսի հետ միասին անեծքի ու նզովքի ենթարկեցին Կոստանդինին, որպես ամբարիշտի ու անաստվածի, բերկրությամբ ընկալեցին նրա սպանության լուրը՝ մեծագույն չարիքից փրկվելը։ Նրանք Արտավազդին որպես ուղղափառ և աստվածային վարդապետության պաշտպան մարդու կայսր հռչակեցին[654]։ Մոնոտեսն իսկույն դիմեց Թրակիա, իր հարազատ որդի Նիկեփորին՝ Թրակիայի զորավարին, որպեսզի նա այնտեղի զորքի գլուխն անցած շարժվի քաղաքի պաշտպանության։ Մոնոտեսը փակեց պարիսպների դարբասները և պահակակետեր հաստատեց, ձերբակալեց Կոստանդնի համախոհներին, որոնց գանակոծեց, խուզեց ու բանտ նետեց։ Այն պահին, երբ Արտավազդը Օպսիկիոնի զորաբանակով մտավ քաղաք, Կոստանդինը երկու բանակաթեմերի՝ Թրակեսիոնի և Անատոլիկոնի զորքերով հասավ Խրիսուպոլիս, բայց ոչինչ չկարողանալով անել, վերադարձավ և ձմեռեց Ամորիոնում։ Արտավազդը ամբողջ քաղաքում կանգնեցնել տվեց սրբապատկերները։ Արաբները, իմանալով այդ երկուսի միջև գնացող պայքարի մասին, Սուլեյմանի հրամանատարությամբ Ռոմանիայից շատերին գերի քշեցին։ Իսկ սուտանուն պատրիարք Անաստասիոսը, ձեռքը դնելով սուրբ ու կենարար [խաչա]փայտի վրա, երդվեց ժողովրդին, թե «Երդվում եմ հանուն այս [փայտի] վրա գամված, որ Կոստանդինն ինձ այսպես ասաց. Մարիամի աշխարհ բերածին, Քրիստոս կոչեցյալին, աստծո որդի չհամարես, այլ սովորական մարդ, քանզի Մարիամը նրան աշխարհ բերեց այնպես, ինչպես ինձ իմ մայր Մարիամը»։ Ժողովուրդը, լսելով դա, [Կոստանդնին] գահընկեց հայտարարեց։

[A. M. 6234]

Անտիոքի պատրիարք Ստեփանոս[655], Աթոռակալեց 2 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 2-րդ տարին

[Արաբների առաջնորդ Հիշամի] 19-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 9-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 13-րդ տարին

[Անտիոքի Ստեփանոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի մեռավ արաբների առաջնորդ Հիշամը։ Սա Ստեփանոս անունով մտերիմ մի ասորի վանական ուներ, որ, ճիշտ է, մի քիչ անուսում էր, բայց բարեպաշտ։ Անտիոքի եկեղեցու աթոռը 40 տարի թափուր էր, որովհետև արաբները չէին թույլատրում այնտեղ պատրիարք նստի։ Հիշամն ասաց, որ եթե արևելքի քրիստոնյաները ցանկանում են իրենց թույլ տրվի պատրիարք ունենալ, թող այս Ստեփանոսին ընտրեն։ Անտիոքացիք համարելով, որ դա աստվածուստ է, Թեուպոլսի[656] պատրիարք ձեռնադրեցին նրան և այդ ժամանակից մինչև օրս պատրիարքությունն անխափան գոյություն ունի։

Այդ տարի արաբների իշխանությանը տիրացավ Հիշամի որդի Վալիդը[657]։ Կոստանդինը նրա մոտ Անդրեաս սպաթարին ուղարկեց, իսկ Արտավազդը՝ Գրիգոր լոգոթետին. երկուսն էլ դաշնակցություն էին խնդրում։ [Այդ տարին] չորային էր, տեղ-տեղ երկրաշարժեր եղան, մինչև իսկ Սաբայի[658] անապատում լեռներն իրար միացան, գյուղեր գետնի տակ կուլ գնացին։ Նույն տարին Ալեքսանդրիայի Կոզմաս պատրիարքը վերացրեց Հերակլիոսի ժամանակ Ալեքսանդրիայի պատրիարք եղած Կյուրոսից ըսկիզբ առած միակամականների շարափառությունը և քաղաքում ուղղափառությունը հաստատվեց։ Գամերը բազում արաբներով Ռոմանիայի վրա արշավեց և բազում գերիներով վերադարձավ։ Հունիս ամսին երկնքի հյուսիսային մասում նշան երևաց։ Վալիդը հրամայեց Դամասկոսի սրբազնագույն մետրոպոլիտ Պետրոսի լեզուն կտրել, քանզի նա բացեիբաց խարազանում էր արաբների և մանիքեցիների ամբարշտությունը։ Նրան նա աքսորեց Երջանիկ Արաբիա, ուր և մարտիրոսացավ հանուն Քրիստոսի. նա պարզ ու հստակ կատարեց սուրբ պատարագը, ինչպես այդ մասին պատմում են ականջալուր մարդիկ։ Այդ նույն ժամանակները հանուն Քրիստոսի կամովին նահատակվեց և նրա նման փութեռանդ ու անվանակից Մայումայի[659] [մետրոպոլիտ] Պետրոսը։ Երբ նա հիվանդացավ, իր մտերիմ արաբ իշխանավորներին կանչեց (ինքը պետական հարկերի խարտուլարի պաշտոնն էր վարում) և ասաց նրանց. «Ձեր՝ ինձ արած այցելության վարձը, թեև անհավատ բարեկամներ եք, աստծուց կստանաք։ Ես ցանկանում եմ, որ դուք լինեք վկաներն իմ կտակի, որը հետևյալն է. ով չի հավատում հանուն Հոր և Որդվո և Հոգվույն սրբո, միացած համագո և կենարար Երրորդության, նա կույր է հոգով և հավիտենական դժոխքին արժանի։ Այդպիսին է նաև ձեր սուտանուն մարգարե Մոհամմեդը, կարապետը Նեռի։ Հավատացեք իմ խոսքերին, որոնց վկա են այսօր երկինք ու երկիր, ձեռք քաշեք նրա ցնդաբանությունից։ Ես ձեր լավն եմ ուզում, որպեսզի դուք նրա հետ դժոխք չգնաք»։ Լսելով նրա նման և այլ

բազում աստվածաբանական բովանդակությամբ խոսքերը, նրանք բար կտրեցին, գաղազեցին, բայց մեծահոգություն ցուցաբերեցին, քանզի կարծեցին, որ նա հիվանդության ազդեցության տակ գառանցում է։ Բայց երբ նա ապաքինվեց, սկսեց ավելի բարձր գոչել, թե «Նզովք Մոհամմեդին և նրա ցնդաբանությանը, բոլոր նրանց, ովքեր հավատում են այդ ցնդաբանության»։ Նա սրի քաշվեց ու մարտիրոսացավ։ Սրան մեր սուրբ հայր Հովհաննեսը, (որին իր խոսքի և կենցաղի մեջ փթթող հոգու ոսկեցոլ շնորհքի համար իրավամբ տրվեց Ոսկեհոս[660] մականունը), ներբողյաններով մեծարեց։ Եկեղեցու այս նոր վարդապետին, եկեղեցու այս նոր ուսուցչին, իր անշափ ուղղափառության համար ամբարիշտ Կոստանդին կայսրը ամեն տարի նզովքի էր ենթարկում և նրա պապի Մանսուր անվան փոխարեն, որ փրկյալ է նշանակում, հրեական ձևով Մանզիր էր անվանում։ Նույն տարի Վալիդը կիպրացիներին Ասորիքում վերաբնակեցրեց։

Իսկ Արտավազդը իր որդի Նիկետասին մոնոսարաստեգոս նշանակելով, Արմենիակների բանակաթեմն ուղարկեց, իր որդի Նիկեփորին էլ [կայսերակից] թագադրեց՝ ձեռամբ Անաստասիոս պատրիարքի։ Նույն տարվա մայիս ամսին Արտավազդը գնաց Օպսիկիոնի կողմերը, զորահավաք կազմակերպեց, մուտք գործեց Ասիա և սկսեց նրա նվաճումը։ Կոստանդինը, իմանալով դա, նրա վրա շարժվեց, նրան հասավ Սարդիսի[661] կողմերում (նա Կելբիանոսից[662] էր բարձրանում), մարտ տվեց, պարտություն մատնեց և հալածական արեց մինչև Կյուզիկոս։ [Արտավազդը] Կյուզիկոս հասնելով, դրոմոն նստավ և նավելով փրկվեց քաղաքում[663]։ Ինդիկտիոնի նույն 11-րդ տարվա օգոստոս ամսին Արտավազդի որդի Նիկետաս մոնոսարատեգոսը Կոստանդնին մարտ տվեց, բայց պարտություն կրելով փախուստի դիմեց դեպի Մոդրենե[664]։ Անվանի այլ իշխանավորների շարքին սպանվեց քաջարի զինվորական հայազգի Տիրիդատես պատրիկը, Արտավազդի հորեղբորորդին[665]։ Երկու կողմից էլ շատերն ընկան. հայերն ու Արմենիակները[666] պատերազմեցին Կոստանդնի պաշտպաններ Անատոլիկոն և Թրակեսիոն [բանակաթեմերի] զորքերի դեմ։ Այս ժամանակները նախաշար բանսարկուն քրիստոնյաների մեջ այնպիսի մոլեգնություն սերմանեց, իրար մորթելու դրդեց, որ անգամ դավակները ծնողներին, եղբայրները եղբայրներին էին անողոքաբար կոտորում, միմյանց կայքն ու տներն անխնա հրո ճարակ դարձնում։

[A. M. 6235]

Արաբների առաջնորդ Վալիդ։ Իշխեց 1 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 3-րդ տարին

[Արաբների առաջնորդ Վալիդի] 1-ին տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 10-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 14-րդ տարին

[Անտիոքի Ստեփանոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի հյուսիսում նշան երևաց, տեղ-տեղ փոշի թափվեց, իսկ Կասպից դռներում՝ երկրաշարժ եղավ։ Ապրիլ ամսի 16-ին, հինգշաբթի օր արաբները սպանեցին Վալիդին[667]։ Նա 1 տարի տիրակալեց։ Իշխանության է տիրանում Եզիդ Լիպսոսը[668]։ Սա բազում դրամ ծախսելով, տիրեց Դամասկոսին և Դամասկոսի, Պարսկաստանի և Եգիպտոսի արաբներից իշխելու հավանություն ստացավ։ Հայաստանի կառավարիչ Մրվանը[669], Մոհամմեդի որդին, լսելով այդ մասին, շտապեց Միջագետք, ձևացնելով, որ հանդես է գալիս Վալիդի որդիների պաշտպանի դերում՝ ընդդեմ Եզիդի։ 5 ամիս անց Եզիդը մահանում է, ի վերա Դամասկոսի ժառանգորդ թողնելով իր եղբայր Աբրայիմին, որի դեմ է հանդես գալիս Մրվանը։ Նա Միջագետքի զորքով գալիս է Եդեսիա, իսկ այնտեղից Գարիս[670] կոչվող դաշտը՝ Դամասկոսի ու Անտիլիբանանի[671] շրջաններում։ Այստեղ Լիտա, այսինքն Վատ կոչվող գետի ափին նա Սուլեյմանին ճակատամարտ է տալիս, պարտության մատնում նրան և 20 հազար հոգու կոտորում։ Միայն Սուլեյմանը փոքրաթիվ մարդկանցով կարողացավ Դամասկոս փախուստի դիմել ու փրկվել։ Մտնելով այդ քաղաքը, նա սպանեց Վալիդի որդիներին, որոնց իբրև թե պաշտպան էր կանգնել Մրվանը, և յուրացնելով մեծ քանակությամբ դրամ, Դամասկոսից դուրս եկավ։ Մրվանը, մտնելով Դամասկոս, բազում մեծամեծների կոտորեց, նաև Վալիդի և նրա որդիների սպանությանը մասնակից եղողներին[672], ուրիշներին խեղեց, բոլոր դրամներն ու գանձերն էլ Միջագետքի Խառան քաղաքը տեղափոխեց։

Ինդիկտիոնի 12-րդ տարվա սեպտեմբեր ամսին Կոստանդինն իջավ Քաղկեդոնի կողմերը և այնտեղից անցավ դիմացը՝ Թրակիայի շրջանները, իսկ Թրակեսիոն բանակաթեմի զորավար Սիսինիոսը Աբյուդոսի վրայով գնաց կանգ առավ ցամաքային պարսպի առաջ։ Նա Խարսիոսի դռնից մինչև Ոսկե դուռը գնաց, եկավ, իրեն ամբոխներին ցույց տալով, ապա վերադարձավ ու բանակեց սուրբ Մամասում։ Քաղաքի բնակիչներն ըսկըսեցին պարենի պակաս զգալ։ [Արտավազդը] ասեկրետ[673] Աթանասիոսին և իր դոմեստիկոս Արտավազդին նավերով ուղարկեց պարեն հայ-

թայթելու, բայց Աբյուդոսից դուրս նրանց Կիբիրեոտների նավատորմիղը հանդիպեց և բռնելով կայսեր մոտ բերեց։ Ձեռք բերված հացահատիկը կայսրն իր զինվորներին նվիրեց, իսկ Աթանասիոսին ու դոմեստիկոս Արտավազդին իսկույն կուրացրեց։ Արտավազդն այնուհետև փորձեց բացել ցամաքային պարսպի դռները և Կոստանդնին ճակատամարտ տալ։ Ընդհարման ժամանակ Արտավազդի կողմնակիցները պարտություն կրեցին, շատերն սպանվեցին, այդ թվում և Մոնոտեսը։ Արտավազդը հրակիր նավեր պատրաստելով, սուրբ Մամաս ուղարկեց՝ ընդդեմ Կիբիրեոտների նավատորմիղի։ Կիբիրեոտները նրանց փախուստի մատնեցին։ Քաղաքում սաստիկ սով եղավ, մեկ մոդ[674] գարին 12 դահեկանով վաճառվեց, իսկ ընդեղենի մոդը՝ 19, կորեկի և լյուպինի մոդը 8 դահեկանով, ձիթայուղի 5 լիտրը[675] մեկ դահեկանով, մեկ քսեստես[676] գինին մեկ սեմիսիոնով[677]։ Երբ ժողովուրդն սկսեց սովամահ լինել, Արտավազդն ստիպված թույլ տվեց նրանց քաղաքից հեռանալ։ Նա դուրս եկողներին մեկ-մեկ ստուգում էր և ոմանց թույլ չտվեց, այդ իսկ պատճառով ոմանք ծածկում էին իրենց դեմքը, կանացի զգեստներ հագնում, ուրիշներն էլ վանականի սքեմ և մազե շորեր։ Այդ ճանապարհով ահա նրանք կարողանում էին ճողոպրել ու դուրս գալ։ Մոնոստրատեգոս Նիկետասը, հավաքելով Մոդրենեում ցրված իր զորքը, եկավ մինչև Խրիսուպոլիս։ Վերադարձին նրան կայսրը հետապընդեց և հասավ Նիկոմեդիայում ու բռնեց նախկին եպիսկոպոս կուրատոր Մարկելլինոսի հետ, որին տեղն ու տեղը գլխատել հրամայեց, իսկ կապյալ մոնոստրատեգոսին բերեց և պարսպից [Արտավազդին], նրա հորն էր ցույց տալիս։ Նոյեմբեր ամսի 2- երեկոյան նա հանկարծակի ցամաքային պարսպի վրա գրոհեց և գրավեց քաղաքը։ Արտավազդը պատրիկ Բակտանգիոսի հետ խելանդիոն մտավ, նախ գնաց Օպսիկիոն ու ապաստանեց Պուզանեի[678] բերդում։ Կայսրը բռնեց նրանց, Արտավազդին և նրա երկու որդիներին կուրացրեց[679], իսկ Բակտանգիոսին Կյունեգիոնում գլխատեց։ Նրա գլուխը երեք օր ցուցադրեց Միլիոնում[680]։ 30 տարի անց այդ ոխակալ ու անգութ կայսրը [Բակտանգիոսի] կնոջը հրամայեց գնալ Խորայի վանքը (Բակտանգիոսն այնտեղ էր թաղված), գերեզմանից հանել [ամուսնու] ոսկորները ու իր զգեստի մեջ փաթաթած տանել Պելագիոսի կոչվող գերեզմանատունը և գցել բռնի մահով վախճանվածների գերեզմանների մեջ[680]։ Ո՜վ տմարդություն։ Նա մահապատժի ենթարկեց Արտավազդին դաշնակցած բազում այլ մեծամեծների, անհամար մարդկանց կուրացրեց, ուրիշների ձեռքերն ու ոտքերը կտրեց։ Իր հետ քաղաք մուտք գործող դրսեցի իշխանավորներին նա թույլատրեց

բնակարանները մտնել և քաղաքացիների ունեցվածքը թալանել։ Նա բազում, անհամար այլ փորձանքներ բերեց քաղաքացիների գլխին։ Նա ձիարշավական մրցություններ կազմակերպեց և դիիպիոնի միջով այնտեղ բերեց կապյալ Արտավազդին, նրա որդիներին ու ընկերներին, հրապարակայնորեն գանակոծված սուտանուն պատրիարք Անաստասիոսին, որին հակառակ կողմից էշ հեծած ձիարշավարան մտցրեց և հրապարակայնորեն ծանակեց։ Բայց որպես իր համախոհի, նրա մեջ երկյուղ սերմանելով ու խեղճացնելով, [դարձյալ] նստեցրեց պատրիարքական աթոռին։ Թրակեսիոնի զորավար Սիսինիոս պատրիկին, իր հորեղբորորդուն, որն իրեն մեծապես աջակցել էր և իր հետ մարտնչել, 40 օր անց սաստիկ արդար դատաստանով կուրացրեց. համաձայն [սուրբ] գրոց, ամբարիշտին օգնողը, նրա ճանկն էլ կընկնի։

[A. M. 6236]

Աշխարհի արարչագործության 6236 թ.

Քրիստոսի մարդեղության 736 թ.

Հռոմայեցիների Կոստանդին կայսեր 35-ամյա թագավորության 4-րդ տարին

Արաբների առաջնորդ Մրվանի[681] 6-ամյա իշխանության 1-ին տարին

Հռոմի Զաքարիա պապի 21-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի 24-ամյա աթոռակալության 15-րդ տարին

Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի[682] 7-ամյա աթոռակալության 1-ին տարին

Այդ տարի Ասորիքում մի մեծ գիսավոր աստղ երևաց։ Թեբիտն[683] ու արուրիտների[684] իշխան Դախակը Մրվանի դեմ ապստամբեցին։ Մրվանը նրանց բռնեց և 12 հազար ռազմիկների հետ Եմեսայի սահմաններում մահապատժի ենթարկեց։ [Մրվանը] նույն տարին արևելքի քրիստոնյաների խնդրանքով թույլ տվեց եդեսացի Թեոփիլակտոս երեցին Անտիոքի պատրիարք ձեռնադրել (Ստեփանոսը ննջել էր), ընդհանրական թղթեր հրապարակեց, որտեղ արաբներին հրամայվում էր ակնածանքով վերաբերվել նրան, այդ հոգևոր շնորհքով լի, մեծախոհ մարդուն։ [Մրվանը] Եմեսայում կախեց 120 խալբենոսների[685], իսկ շատ ու շատ քրիստոնյաների արյունը հեղած, բազմաթիվ բնակավայրեր ավերած ու գերեվարած Աբասին բանտում սպանեց։ Մահապատիժն իրականացնելու համար Մրվանը մի եթովպացու ուղարկեց, որը եռացող կրով լի տոպրակով

նրա մոտ մտավ, այդ կիրը լցրեց նրա գլխին ու քթին և խեղդամահ արեց։ Այդ կախարդի համար նա արդար պատիժ հորինեց, քանզի [Աբասը] կախարդությամբ ու դիվակոչությամբ քրիստոնյաների գլխին բազում փորձանքներ էր բերել։ Նա մասնակից էր և Վալիդի[686] սպանության։

[A. M. 6237]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 5-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մրվանի] 2-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 12-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 16-րդ տարին

[Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի Սուլեյմանը, հավաքելով իր զորքերը, դարձյալ հարձակվեց Մրվանի վրա, բայց պարտվեց և իր զինվորներից 7 հազար հոգի կորցրեց։ Փախուստի դիմելով նա Պալմիրայում փրկվեց, որտեղից անցավ Պարսկաստան։ Ապստամբություն բարձրացրին նաև եմեսացիք, հելիոպոլսեցիք և դամասկացիք, որոնք Մրվանի առջև փակեցին իրենց քաղաքների դռները։ Վերջինս իր որդուն Դախակի դեմ ուղարկեց, իսկ ինքը գալով Եմեսա, շորս ամիս հետո առավ այն։ Դախակը Պարսկաստանից էր գալիս մեծ զորքով։ Միջագետքում Մրվանը նրա վրա հարձակվեց, շատ զոհեր տվեց, բայց վերջը նրան բռնեց ու սպանեց։ Այդ միջոցին Կոստանդինը, օգտվելով արաբների միջցեղային պատերազմից, արշավեց Ասորիքի և Դուլիխիայի[687] վրա և գրավեց Գերմանիկիան։ [Կայսրը] հիշյալ քաղաքների արաբ բնակչության անձեռնմխելիության մասին երաշխիքներ տալով, թույլ տվեց առանց զենքի հեռանան, իսկ իր մոր ազգականներին Բյուզանդիոն վերաբնակեցրեց, այդ թվում և բազմաթիվ ասորի միաբնակ աղանդավորների, որոնցից շատերը, որ Թրակիայում են բնակվում[688], մինչև օրս երեքսրբյան աղոթքում խաչում են երրորդությունը ըստ Պետրոս Թափիչի[689]։ Օգոստոս ամսի տասից մինչև տասնհինգը մառախլապատ խավար տարածվեց։ Այդ ժամանակ Մրվանը հաղթանակ տանելով և գրավելով Եմեսան, Հիշամի բոլոր ազգականներին ու ազատություն ստացած ստրուկներին կոտորեց, Հելիոպոլսի, Դամասկոսի և Երուսաղեմի պարիսպները խորտակեց, բազում դինատների[690] մահապատժի ենթարկեց, այդ քաղաքներում կենդանի մնացածներին խեղանդամ դարձրեց։

[A. M. 6238]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 6-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մրվանի] 3-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 13-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 17-րդ տարին

[Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի, հունվար ամսի 18-ին, ժամը 4-ին Պաղեստինում, Հորդանանում և համայն Ասորիքում ուժեղ երկրաշարժ եղավ, բազում, անթիվ բյուր մարդիկ իրենց մահկանացուն կնքեցին, եկեղեցիներ ու վանքեր փլվեցին, հատկապես սուրբ քաղաքի անապատում։

Այդ նույն տարի մահ տարաժամ եղավ, որն սկիզբ առնելով Սիկիլիայից ու Կալաբրիայից, կրակի պես տարածվեց հասավ Մոնեմվասիա[691], Հելլադա[692] և մերձակա կղզիները։ Ինդիկտիոնի ամբողջ 14-րդ տարին համաճարակը կանխավ խարազանում էր ամբարիշտ Կոստանդինին, և թեև ստիպում մեղմացնել սուրբ եկեղեցիների ու սրբապատկերների դեմ նրա կատաղությունը, այդուհանդերձ նա մնաց անուղղելի, ինչպես փարավոնը հնում։ Ժանտախտը ինդիկտիոնի 15-րդ[693] տարին հասավ նաև մայրաքաղաք։ Նա սկսեց աննշմարելի մուտք գործել մարդկանց հագուստների, եկեղեցական սրբազան հանդերձների, վարագույրների, խաչերի ու բազում կանթեղների մեջ։ Մարդիկ շատ վշտացան ու մռայլվեցին, բանզի չկարողացան այդ նշանին բացատրություն տալ։ Աստծո պատուհասը սկսեց անողոքաբար կոտորել ոչ միայն քաղաքի բնակիչներին, այլև նրա համայն շրջակայքի։ Շատերի աչքին ուրվականներ էին երևում, նրանք էքստազի մեջ էին ընկնում, նրանց թվում էր, թե տարօրինակ ու խոժոռադեմ մարդկանց հետ են քայլում, որոնք իրենց հանդիպողներին ձայն են տալիս որպես բարեկամների և խոսակցում նրանց հետ։ Այդ մարդիկ գրի էին առնում դրանց ասածը, որն այնուհետև մեկնաբանում էին։ Տեսնում էին, թե ինչպես նրանք տներն են մտնում, այդ տան մարդկանց ոմանց սպանում, ոմանց էլ սրով խոցում։ Պատահում էր, որ մարդկանց աչքին երևացածի ու նրանց լսածի մեծ մասն իրականություն էր դառնում։ Ինդիկտիոնի 1-ին տարվա գարնանը ժանտախտն ավելի սաստկացավ, իսկ ամռանը՝ կրակ կտրեց։ Բազում ընտանիքներ մինչև վերջին մարդը ոչնչացան, մեռելներին թաղող չկար։ Այդ շատ դժվարին պայմաններում մարդիկ մտածեցին թամբած անասունների վրա հյուպոտետրականթիլ տախտակներ[694] դնել և նրանց վրա դուրս բերել

վախճանվածների դիակները, ինչպես նաև սայլերի վրա՝ իրար դարսած։ Երբ քաղաքի ներսում և արվարձաններում գտնվող գերեզմանատները լցվեցին, սկսեցին հորեր, փոսեր և բազում խաղողի այգիներ փորել մարդկանց թաղելու համար։ Հին պարիսպներից ներս գտնվող պարտեզներում անգամ մարդկանց դիակները թաղեցին և մի կերպ կարողացան լուծել այդ հարցը։ Եվ երբ սրբապատկերների դեմ իշխանությունների ձեռնարկած հալածանքի պատճառով բոլոր ընտանիքները նահատակվեցին, դրա վրա բարդվեց հագարացիների նավատորմիղը, որ Ալեքսանդրիայից Կիպրոս հասավ, հռոմեական նավատորմիղի գտնված տեղը։ Կերամեայի նավահանգստում Կիբիրեոտների զորավարը[695] նրանց նավատորմիղի վրա անսպասելի հարձակում գործեց, փակեց նավահանգիստը և, ինչպես պատմում են, [արաբների] հազար դրոմոններից միայն երեքը փրկվեցին։

[A. M. 6239]

[Հռոմայեցիների կոստանդին կայսեր] 7-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մրվանի] 4-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 14-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 18-րդ տարին

[Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի արուրիտներն սպանեցին Գրիգորին, իսկ արաբների առաջնորդ Մրվանը, ինչպես ասացի վերևում, հաղթանակ տարավ։

[A. M. 6240]

[Հռոմայեցիների կոստանդին կայսեր] 8-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մրվանի] 5-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 15-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 19-րդ տարին

[Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Պարսկաստանի ամենաարևելյան կողմերից խորասանցի մավրոֆորներ[696] կոչվող մարդիկ[697] Մրվանի դեմ շարժվեցին՝ սուտանուն մարգարե Մոհամմեդից մինչև այս Մրվանը իշխած տոհմի, այսինքն Ումայիա կոչվող տոհմի դեմ[698], երբ Վալիդի սպանությունից հետո արաբների մեջ կռիվ ծագեց և նրանք այդ կռվով էին զբաղված, Եխիմի[699]

և Ալիմի որդիներ կոչվածները (որոնք նույնպես սուտանուն մարդարեի ազգականներն էին և փախել էին ու թաքնվել Փոքր Արաբիայում), հավաքվեցին Աբրայիմի շուրջը, Աբումուսլիմ[700] անունը կրող ազատություն ստացած իրենց մի ստրկին Խորասան՝ այնտեղի իշխանավորներից ոմանց մոտ ուղարկեցին, խնդրելով դաշնակցել ընդդեմ Մրվանի։ Նրանք հավաքվեցին ոմն Խակտաբայի[701] մոտ և խորհուրդ անելով, ստրուկներին իրենց տերերի դեմ ոտքի հանեցին, մի դիշերվա մեջ շատերին կոտորեցին, ապա տիրանալով նրանց զենքերին, ձիերին ու դրամին, հզորացան։ Նրանք երկու ցեղի են բաժանված, կայիսիններիի և իմանիտներիի։ Աբումուսլիմը, տեսնելով, որ իմանիտներն ավելի հզոր են, կայիսինների դեմ հանեց, կոտորեց նրանց, ապա Խակտաբայի հետ եկավ Պարսկաստան և պատերազմելով Իբնդարայի[702] դեմ, հաղթանակ տարավ, նրա [զինվորներին]՝ շուրջ 100 հազար հոգու իրեն ենթարկեց, ապա հարձակվեց Իբնուբեյրայի[703] վրա, որ 200 հազար հոգով էր բանակել և նրան էլ ջարդելով, Զաբ գետի ափին հասավ Մրվանին։ Մրվանը 300 հազարանոց բանակ ուներ, Աբումուսլիմը պատերազմեց նրա դեմ և անհամար բազմություն կոտորեց։ Տեսնելու բան էր, թե ինչպես սուրբ Գրքի ասածի պես, «հալածեսցէ մի զհազարս, և երկուք շարժեսցեն զբիւրս»[704]։ Մրվանը ականատես լինելով [հակառակորդների] փայլուն հաղթանակին, գալիս է Խառան, անցնում գետը, ջարդում նավակամուրջը, և վերցնելով իր բոլոր գանձերն ու ընտանիքը և 3 հազար ցեղակից տղամարդկանց, փախչում է Եգիպտոս։

[A. M. 6241]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 9-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մրվանի] 6-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 16-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 20-րդ տարին

[Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի մավրոֆորները, հետապնդելով Մրվանին, նրան ձեռք գրեցին ու սպանեցին[705]. տեղի ունեցավ շատ արյունահեղ ճակատամարտ։ Մավրոֆորների հրամանատարն էր Ալիմի որդի Սալիմը, Աբումուսլիմի [Խորասան] ուղարկած վերոհիշյալ փախստականներից մեկը։ Մնացածները, հավաքվելով Սամարիայում ու Տրախոնիտիս[706] երկրում, իրենց առաջնորդ ընտրեցին Աբուլաբասին[707], նրա հաջորդ՝ նրա եղբայր Աբդա-

լային[708], նրանից էլ հետո՝ Իսե իբն Մուսեին։ Ասորիքի կառավարիչ նշանակեցին Աբդալային՝ Սալիմի եղբոր ու Ալիմի որդուն, Եգիպտոսի իշխանությունը տվեցին հենց այդ Սալիմին, իսկ Աբուլաբասի եղբայր Աբդալային, [օրինական] ժառանգին, նշանակեցին Միջագետքի կառավարիչ։ Գլխավոր առաջնորդ Աբուլաբասը հաստատվեց Պարսկաստանում։ Նա, և իրեն դաշնակցած պարսիկները իշխանության մայրաքաղաքը Դամասկոսից տեղափոխեցին, ինչպես և Մրվանից խլված բոլոր գանձերը։ Մրվանի վերապրած որդիներն ու ազգականները Եգիպտոսից գնացին Աֆրիկա[709], այնտեղից էլ Լիբիան ու Եվրոպան բաժանող Ովկիանոսի Սեպտե[710] կոչվող նեղուցի վրայով անցան դիմացի ափը և Եվրոպայի Սպանիկե[711] կոչվող երկրում բնակություն հաստատեցին. նրանք մինչև օրս էլ այնտեղ են։ Իրենցից առաջ այնտեղ էին հաստատվել Մուավիայի կողմից նավով այնտեղ ափ նետվածները, որոնք իրենց ազգականներն էին ու հավատակիցները։ Մրվանի ժամանակ սկիզբ առած տակնուվրայությունները տևեցին 6 տարի[712]։ Այդ ընթացքում Ասորիքի բոլոր երևելի քաղաքների պարիսպները հիմնահատակ կործանվեցին, բացի Անտիոքի պարիսպներից, քանզի Մրվանը որոշել էր այն իր ապաստարանը դարձնել։ Նրա կողմից անթիվ արաբներ կոտորվեցին (պատերազմական գործերում նա շատ էր հմուտ)։ Նա պատկանում էր էպիկուրյանների, այսինքն ավտոմատիստների[713] աղանդին և ամբարշտությանը հաղորդակից էր դարձել խառանում բնակվող հեթանոսների միջոցով։

Ինդիկտիոնի նույն 3-րդ տարվա հունվար ամսի 25-ին Կոստանդին կայսրը խազարիայի խաքանի դստրից որդի ունեցավ, որին Լևոն անվանեց։ Նույն տարի Ասորիքում երկրաշարժ եղավ, շատ մեծ, սարսափելի ավերածություններ, քաղաքների մի մասն ամբողջությամբ հիմնահատակ կործանվեց, ոմանք կիսով չափ, ուրիշներն էլ իրենց պարիսպներով և տներով հանդերձ լեռնային տեղերից անվնաս կերպով, վեց կամ մի քիչ պակաս մղոն տարածություն սողացին դեպի դաշտավայրերը։ Ականատեսները պատմում են, որ Միջագետքի հողագետինը երկու մղոն տարածության վրա ճեղքվեց և նրա խորքերից դուրս եկավ այլ տեսակի՝ շատ սպիտակ ու ավազոտ հող։ Այդ ճեղքի միջից, ինչպես ասում են, դուրս եկավ առանց բծերի ջորու նման մի կենդանի, որ մարդկային լեզվով խոսում էր, նախագուշակելով անապատի ցեղերի արաբների վրա արշավելու մասին, ինչ որ եղավ։ Հաջորդ՝ Ինդիկտիոնի 4-րդ տարին, սուրբ Հոգեգալստյան տոնին, ամբարիշտ Կոստանդին կայսրը իր որդի Լևոնին կայսր թագադրեց[714], ձեռամբ սուտանուն պատրիարք Անաստասիոսի, իր համախոհի։

[A. M. 6242]

Արաբների առաջնորդ Մոհամմեդ[715]։ Իշխեց 5 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 10-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 1-ին տարին	[Հռոմի Զաքարիա պապի] 17-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 21-րդ տարին	[Անտիոքի Թեոփիլակտոս պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի խալիֆացիք մավրոֆոր պարսիկների դեմ ապստամբություն բարձրացրին։ Եմեսայի սահմաններում նրանց ձեռքով 4 հազար հոգի սպանվեց։ Նույն պարսիկները այդպես վարվեցին նաև կայսինների հետ, Արաբիայում։ Երբ Մրվանի զմռսված գլուխը տեղ հասավ, ապստամբությունները մեծամասամբ վերջ գտան։ Նույն տարվա Դեսիոս[716] ամսի 29-ին ննջեց Անտիոքի սրբազնագույն պատրիարք Թեոփիլակտոսը։

[A. M. 6243]

Անտիոքի Թեոդորոս պատրիարք[717]։ Աթոռակալեց 6 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 11-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 2-րդ տարին	[Հռոմի Զաքարիա պապի] 18-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 22-րդ տարին	[Անտիոքի Թեոդորոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի իշխանության նոր տիրացած [արաբները] ննջությամբ ձերբակալեցին և Պաղեստինի Անտիպատրիս [քաղաքում] սպանեցին քրիստոնյաներից շատերին, որպես նախկին տիրողների ազգականների։ Նույն տարին Կոստանդինը Թեոդոսուպոլիսն ու Մելիտենեն առավ և հայերին գերի վերցրեց[718]։ Վիկարիոսի որդի Թեոդորոսը, ծագումով Փոքր Արաբիայից, Անտիոքի պատրիարք ձեռնադրվեց։

[A. M. 6244]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 12-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 3-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 19-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 23-րդ տարին

[Անտիոքի Թեոդորոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի ամբարիշտ Կոստանդինն իր խելքը կորցնելով, ծրագրեց եկեղեցու և ուղղափառ հավատքի գլխին բազում փորձանքներ բերել։ Նա ամեն օր ժողովներ էր գումարում և ժողովրդին նենգորեն համոզում սեփական հայացքներին հետևել, իր կատարյալ ամբարշտության համար ճանապարհ էր հարթում։

[A. M. 6245]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 13-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 4-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 20-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Անաստասիոս պատրիարքի] 24-րդ տարին

[Անտիոքի Թեոդորոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի Կոստանդնուպոլսի պատրիարքի աթոռն ամբարշտորեն վարած և արդեն հոգով վախճանված Անաստասիոսը վախճանվեց նաև մարմնով, խորդապսոս կոչվող [աղիքային] շատ ծանր հիվանդությունից։ Նա կղկղանք փսխեց՝ աստծո և իր ուսուցիչ [Գերմանոսի][719] հանդեպ ցուցաբերած հանդգնության համար արժանի պատիժ կրեց։ Այդ նույն տարին ամբարիշտ Կոստանդինը Եփեսոսի եպիսկոպոս Թեոդոսիոսի՝ Ապսիմարոսի որդու և Պերգեի եպիսկոպոս Պաստիլլասի գլխավորությամբ Հիերիայի պալատում սուրբ և նվիրական պատկերների դեմ 348 եպիսկոպոսների ապօրինի ատյան գումարեց[720], որտեղ նրանք հաստատեցին իրենց հայացքները։ Տիեզերական աթոռներից (ես նկատի ունեմ Հռոմի, Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի) ոչ մեկը չմասնակցեց։ [Ատյանը] տևեց այդ նույն ինդիկտիոնի 7-րդ տարվա փետրվար ամսի 10-ից մինչև օգոստոսի 8-ը։ Այդ ընթացքում աստվածածնի ոսոխներն եկան Վլախեռնա, որտեղ Կոստանդինը Սիլեռնի նախկին եպիսկոպոս վանական Կոստանդնին ձեռքից բռնած ամբիոն բարձրացավ, աղոթեց, ապա բարձրաձայն ասաց. «Բազում տարիներ կեցցե տիեզերական

պատրիարք Կոստանդինը»։ Նույն ամսի 27-ին կայսրը չսրբագործված պատրիարք Կոստանդնի և մյուս եպիսկոպոսների հետ բարձրացավ Ֆորում, որտեղ համայն ժողովրդի ներկայության հրապարակեցին իրենց չարափառ հերձվածը, նզովեցին սրբազնագույն պատրիարք Գերմանոսին, Գեորգ Կիպրացուն, Հովհաննես Ոսկեհոս Դամասկացուն՝ Մանսուրին՝ սուրբ այրերի ու արգո վարդապետների[720]»։

[A. M. 6246]

Կոստանդնուպոլսի պատրիարք Կոստանդին[721], Աթոռակալեց 12 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 14-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 5-րդ տարին

[Հռոմի Զաքարիա պապի] 21-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 1-ին տարին

[Անտիոքի Թեոդորոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի մեռավ Մոհամմեդը, որ և Աբուլաբաս, իշխելով 5 տարի։ Նրա եղբայր Աբդալան Մեքքայում էր գտնվում, իրենց աստվածանարգության վայրում։ Նա Պարսկաստանում գտնվող Աբումուսլիմին նամակ գրեց՝ պահպանել իշխանության գահն իրեն՝ Աբդալային, ժառանգական իրավունքի համաձայն։ Աբումուսլիմը, իմանալով, որ Ալիմի որդի, Ասորիքի մոնոստրատեգոս Աբդալան, Սալիմի եղբայրը մտադիր է յուրացնել իշխանությունը, որ գալիս է Պարսկաստանի վրա տիրելու, որ նա թշնամաբար էր տրամադրված Պարսկաստանի [արաբներին] և բարեկամաբար՝ Ասորիքի [արաբներին]՝ իր դաշնակիցներին, իր կողմնակից զորքերին ոտքի հանելով, Մծբինում նրան ճակատամարտ է տալիս, հաղթում նրան և շատերին կոտորում։ Նրանցից շատերը սկլավներ[722] էին և անտիոքացիք։ Փրկվում է միայն Աբդալան, որը մի քանի օր անց շտապ կարգով Մեքքայից Պարսկաստան եկած մյուս Աբդալայից, Մոհամմեդի եղբորից անձեռնմխելիության մասին երաշխիքներ խնդրեց։ [Մոհամմեդի եղբայր] Աբդալան [Ալիմի որդի Աբդալային] արգելափակեց մի խարխուլ տնակում, ապա կարգադրեց թաքուն կերպով բրել տնակի հիմքերը և այդ ձևով նրան սպանեց։ Իսկ Աբումուսլիմը Ասորիքի արաբների վրա գազազել էր, քանզի նրանք մավրոֆորների դեմ ապստամբություն էին բարձրացրել, նրանցից շատերին Պաղեստինում, Եմեսայում և ժողովափում կոտորել։ Ահա այդ պատճառով նա որոշեց զորքերով նրանց

վրա արշավել, բայց [Մոհամմեդի եղբայր Աբդալան] չթողեց։ Դրան վրա [Աբումուսլիմը] զայրացած իր զորքով շարժվեց դեպի խորին Պարսկաստան։ [Աբդալան] դրանից շատ վախեցավ, խնդրեց, երդվեց իրենց իշխանության պիղծ սիմվոլներով (խոսքը սուտ մարգարե Մոհամմեդի գավազանի և սանդալների մասին է), համոզեց նրան, որ նա մեկ օրվա ճանապարհ կտրելով, իր մոտ գա, քանզի ուզում է նրան, իր հարազատ հորն արժանավայել շնորհակալիք հայտնել։ [Աբումուսլիմը] խաբվեց, 100 հազար հեծյալներով [Աբդալայի] մոտ գնաց և երբ անձամբ նրան հանդիպեց, [Աբդալան] իր իսկ ձեռքով սպանեց նրան[723]։ Զորքը նույն օրն էլ ցրվեց, բազում նվերներ ստանալով։ Ահա այս ձևով Աբդալան տիրացավ իշխանության։

[A. M. 6247]

Արաբների առաջնորդ Աբդալա[724]։ Իշխեց 21 տարի։
Հռոմի Պավղոս պապ[725]։ Աթոռակալեց 7 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 15-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 1-ին տարին

[Հռոմի Պավղոս պապի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 2-րդ տարին

[Անտիոքի Թեոդորոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Հելիոպոլսի [եպիսկոպոս] Նիկետասը համայն եկեղեցու կողմից նզովվեց։ Կոստանդին կայսրը Թեոդոսուպոլսից ու Մելիտենեից գաղթեցրած ասորիներին ու հայերին Թրակիայում վերաբնակեցրեց[726]։ Նրանցից ընդարձակվեց պավլիկյանների աղանդը[727]։ Այդ պատճառով, որ քաղաքի[728] բնակչությունը համաճարակի հետևանքով նոսրացել էր, նա նույն ձևով կողմերից, Հելլադայից և Կատոտիկա[729] շրջաններից ընտանիքներ բերեց, բնակեցրեց և խտացրեց քաղաքի բնակչությունը։ Նույն տարի բուլղարները կառուցված բերդերի համար պախտ պահանջեցին։ Կայսրը նրանց դեսպանին անպատվեց, դրա վրա բուլղարները զինված հարձակում գործելով, հասան մինչև Երկար պարիսպը ու գրոհեցին մայրաքաղաքի վրա։ Նրանք բաղում ավարով ու գերիներով անվնաս իրենց երկիրը վերադարձան։

[A. M. 6248]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 16-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 2-րդ տարին

[Հռոմի Պավղոս պապի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարվա մարտ ամսի 9-ին Պաղեստինում և Ասորիքում ուժեղ երկրաշարժ եղավ։ Արաբների նախանձի առարկա Անտիոքի Թեոդորոս պատրիարքը իրենց գաղտնիքները հաճախակի նամակներով կայսեր հայտնելու մեջ մեղադրելով, աքսորվեց։ Հիշյալ Սալիմը այնուհետև նրան իր հայրենի Մոաբիտ երկիրն[730] աքսորեց։ Նույն Սալիմը կարգադրեց նոր եկեղեցիներ չկառուցել, ոչ մի տեղում խաչ չերևա, քրիստոնյաները արաբների հետ կրոնի շուրջ չվիճեն։ Նա 80 հազար զորքով արշավեց Ռոմանիայի վրա, եկավ Կապադովկիա, և լսելով, որ Կոստանդինն իր դեմ է զինվում, վախեցած, ոչ մի ավարառություն չգործած, ձեռնունայն վերադարձավ։ Սոսկ իր կողմն անցած փոքրաթիվ հայերի առավ եկավ։

[A. M.6249]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 17-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 3-րդ տարին

[Հռոմի Պավղոս պապի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Աբդալան ընդլայնեց հարկադրվող քրիստոնյաների շրջանները, հարկադրեց աստվածահաճ կյանք վարող բոլոր վանականներին, ճգնավորներին ու սյունակյացներին, կնքեց եկեղեցիների գանձատները, հրավիրեց հրեաներին, որ վաճառեն գանձերը. ազատություն ստացած ստրուկները գնեցին դրանք։

[A. M. 6250]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 18-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 4-րդ տարին

[Հռոմի Պավղոս պապի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի Կոստանդինը Մակեդոնիայի Սկլավինիաները[731] գերեվարեց, իսկ մնացած [սկլավներին] հպատակեցրեց։

Նույն տարի մոգերի դավանանքին պատկանող մավրոֆոր պարսիկներից ոմանք սատանայի ազդեցության տակ իրենց ունեցվածքը ծախեցին, մերկացած պարիսպների վրա բարձրացան և այնտեղից իրենց ցած գցեցին, կարծելով, որ երկինք պիտի թռչեն։ Բայց [երկնքի] ժառանգության անմասն լինելով, երկիր էին վերադառնում, ջարդ ու փշուր անելով իրենց մարմինը։ Այդ մոլորության պարագլուխներին, թվով 16 հոգու, Աբդալան Սալիմի ձեռքով Բերիայում[732] և Խալկիսում մահապատժի ենթարկեց։

[A. M. 6251]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 19-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 5-րդ տարին

[Հռոմի Պավղոս պապի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի արաբները նախանձից դրդված կարճ ժամանակով հեռացրին քրիստոնյաներին պետական դիվանատներից, բայց ստիպված եղան դարձյալ նրանց վերադարձնել, քանզի իրենք ի վիճակի չէին թվանշաններ գրել։ Նրանք արշավեցին Ռոմանիայի վրա, շատերին գերեվարեցին, Մելաս գետի[733] ափին մարտ տվեցին և սպանեցին Արմենիակների զորավար Պավղոսին՝ բաղում զինվորներով, 42 երևելի մարդկանց շղթայակապ տարան, ինչպես և շատերի գլուխները։ Կայսրը արշավեց Բուլղարիայի վրա, եկավ Բերեգաբայի կլեյսուրը, որտեղ նրան ընդդիմակայեցին բուլղարները, որոնք նրա զինվորներից շատերին սպանեցին, այդ թվում նաև Թրակեսիոնի զորավար Լևոն պատրիկին, մի ուրիշ Լևոնի՝ դրոմոսի լոգոթետին[734], և շատ զինվորների, տիրացան նրանց զենքերին։ Դրանից հետո [հռոմայեցիները] անփառունակ վերադարձան։

[A. M. 6252]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 20-րդ տարին

[Արաբների առաջնորդ Արդալայի] 6-րդ տարին

[Հռոմի Պավղոս պապի] 6-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի ծռաղատիկ եղավ, արևելքի ուղղափառները Զատիկ արեցին ապրիլի 6-ին, իսկ մոլորված հերետիկոսները՝ 13-ին։

Նույն տարի սուրբ Հովհաննես Կարապետ Մկրտչի գանգը Քարայրի վանքից[735] եմեսացվոց քաղաքի նրա անվան նշանավոր տաճարը փոխադրվեց։ Այնտեղ կառուցվեց տապան, որը մինչև օրս հավատացյալները երկրպագում են, պատվում նյութական ու հոգևոր անուշահոտություններով, բոլոր հավատացյալներն այստեղ ապաքինում են ստանում։ Նույն տարին արևելքում 10 օր, իսկ արևմուտքում՝ 21 օր դոկիտես[736] շատ փայլուն աստղն երևաց։ Թեոդորոս անունով մի լիբանանցի ասորի, Լիբանանի Հելիոպոլիս քաղաքի շրջակայքում արաբների դեմ ապստամբություն բարձրացրեց, պատերազմ եղավ և երկու կողմից շատերն ընկան։ Ի վերջո պարտվելով, նա փախուստի դիմեց, իսկ իր բոլոր լիբանանցի կողմնակիցները մահապատժի ենթարկվեցին։ Տակնուվրայություններ և պատերազմներ տեղի ունեցան նաև Աֆրիկայում։ Օգոստոս ամսի 15-ին, շաբաթվա 6-րդ օրը, ժամը 10-ին արևի խավարում եղավ։ Դաբեկում[737] հանդես եկան մավրոֆորներից ոմանք, որոնք ամիրապետի որդուն, իրենց տնուցողին, ասված կոչեցին և նման դավանանքի սկիզբ դրեցին։ Մավրոֆորները մտան իրենց մոլորության տունը և բանալեպաններին՝ 60 հոգու սպանեցին։ Նրանցից ոմանք գնացին Բասրասոս[738], շատերին գերեվարեցին և բազում դրամ ձեռք բերեցին։

[A. M. 6253]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 21-րդ տարին

[Արաբների առաջնորդ Արդալայի] 7-րդ տարին

[Հռոմի Պավղոս պապի] 7-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարի կասիոտները մավրոֆորների դեմ ընդվզեցին. պատճառը կանայք էին։ [Մավրոֆորներից] ոմանք բնակվում էին մի տան մեջ, որտեղ ապրում էին երեք եղբայր։ Ահա սրանց կանանց նրանք ուզեցին բռնաբարել։ Երեք եղբայրները հարձակվեցին նրանց վրա, սպանեցին ու թաղեցին։ [Կասիոտները] եկան ու սպանեցին մնացած [մավրոֆորներին]։ Սելիխը ծածուկ նրանց դեմ զորք ուղարկեց, բռնեց ու կախեց երեք եղբայրներին, շատերին էլ կոտորեց։ Զատկի տոնին [Սելիխը] մտավ մայր եկեղեցին և երբ սուրբ պատարագի ժամանակ մետրոպոլիտն ասաց. «Ժողովուրդը քո և եկեղեցին քո պաղատում են քեզ» ասույթը, նրան դուրս հանեցին և բանտ նետեցին։ Սուրբ պատարագը մի ուրիշն ավարտեց։ Մեծ ահ տիրեց և եթե մետրոպոլիտը չհանդարտեցներ [Սելիխին] հեզ ու խոնարհ խոսքերով, մեծ փորձանք էր գալու։ Նա երանելի Անաստասիոսն էր։

Նույն տարին հալածիչ Կոստանդինը Վլախեռնայում՝ սուրբ Մամասի ձիարշավարանում գանահարությամբ սպանեց արգելի վանական Անդրեաս Կալիբիտեսին[739], քանզի նա դատափետում էր նրա ամբարշտությունը, նրան կոչում Նոր Վաղես և Հուլիանոս։ Կայսրը հրամայեց նրա դին ուղխը գցել, բայց նրա քույրերը կարողացան այն առնել և թաղել Լևկադիոսի էմպորիոնում։

[A. M. 6254]

Հռոմի Կոստանդին պապ[740]։ Աթոռակալեց 5 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 22-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 8-րդ տարին

[Հռոմի Կոստանդին պապի] 1-ին տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարի արևելյան կողմում դոկիտես աստղն երևաց, Ֆաթիմայի որդին սպանվեց, իսկ բուլղարները ապստամբելով, իրենց տոհմիկ տերերին[741] կոտորեցին և իրենց տեր կարգեցին Տելեցես[742] անունով երեսուն տարեկան մի չարաբարո մարդու։ Բազում սկլավներ փախուստի դիմելով, կայսեր կողմն անցան։ Վերջինս նրանց Արտանասի վրա[743] բնակեցրեց։ Հունիս ամսվա 16-ին կայսրը դուրս եկավ դեպի Թրակիա, միաժամանակ Եվքսինյան Պոնտոսի վրայով նավատորմիզ ուղարկեց՝ մոտ 800 խելանդիոն, որոնց յուրաքանչյուրի վրա 12-ական ձի կար։ Տելեցե-

սը, լսելով ցամաքով ու ծովով իր դեմ կատարված արշավանքի մասին, մերձակա այլազգիներից որպես դաշնակից առնելով 20 հազար հոգու, նրանց ամրություններում հաստատեց և իրեն ապահովեց։ Կայսրը տեղ հասնելով, բանակեց Անքիալոսի դաշտում։ Ինդիկտիոնի 1-ին տարվա հունիս ամսի 30-ին, հինգշաբթի օր, այլազգիների բազմությամբ երևաց և Տելեցեսը։ Ճակատամարտ տեղի ունեցավ, երկար ժամանակ երկու կողմից էլ շատերը կոտորվեցին։ Տելեցեսը պարտություն կրած փախավ։ Ճակատամարտը տևեց ժամը 5-ից մինչև ուշ ժամանակ, որի ընթացքում բազմաթիվ բուլղարներ սպանվեցին, մեծաթիվ ժողովուրդ գերի ընկավ, ուրիշներն էլ անցան [կայսեր] կողմը։ Կայսրը տարած հաղթանակից ոգևորված, այդ առթիվ քաղաքում շքերթ կազմակերպեց, նա զինված քաղաք մտավ զորքով, արժանանալով դեմոսների փառաբանության։ Գերված բուլղարներին քսիլոպանդուրաներով[744] քարշ տվեց, քաղաքացիներին հրամայեց Ոսկե դռնից դուրս գլխատեն։ Բուլղարները Տելեցեսի դեմ ապստամբեցին, նրան ու նրա իշխանավորներին սպանելով, իշխանությունը տվեցին Սաբինոսին[745], իրենց նախկին տեր Կորմեսիոսի փեսային։ Սաբինոսն իսկույն խաղաղության առաջարկով դիմեց կայսեր, բայց բուլղարները ժողով գումարելով, վճռականապես ընդդիմացան Սաբինոսին ու ասացին. «Դու Բուլղարիան հռոմայեցիների ստրուկն ես դարձնում»։ Ապստամբություն բռնկվեց, Սաբինոսը Մեսեմբրիայի բերդը փախչելով, անցավ կայսեր կողմը[746]։ Բուլղարներն իրենց ուրիշ տեր կարգեցին՝ Պագանոս[747] անունով մեկին։

[A. M. 6255]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 23-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 9-րդ տարին

[Հռոմի Կոստանդին պապի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 10-րդ տարին

Այդ տարի անապատի և Բասրաթոնի[748] բնակիչները երկու եղբայրների գլխավորությամբ Աբդալայի դեմ ապստամբեցին։ Աբդալան սպանել տվեց նրանց՝ 80.000 զինվորներով հանդերձ։ Նույն տարին թուրքերը[749] Կասպից դռներից դուրս գալով, Հայաստանում մեծ կոտորած սարքեցին և բազում գերիներ վերցնելով, վերադարձան։ Ասորիքի Ապամիային մերձակա Եպիփանիայի Կոմանացի մականվանյալ ոմն Կոզմաս եպիսկոպո-

սի դեմ Եպիփանիայի քաղաքացիները Անտիոքի Թեոդորոս պատրիարքին բողոք գրեցին՝ եկեղեցու սրբազան սպասքի պակասելու առթիվ։ Կոզմասը, չկարողանալով դրանք տեղը դնել, ուրացավ ուղղափառ դավանանքը և Կոստանդնի՝ սրբապատկերների դեմ ուղղված հերձվածի համախոհ դարձավ։ Անտիոքի պատրիարք Թեոդորոսը, Երուսաղեմի Թեոդորոսը և Ալեքսանդրիայի Կոզմասը իրենց ենթակա եպիսկոպոսներով, յուրաքանչյուրն իր քաղաքում, սուրբ Հոգեգալստյան օրը, սուրբ ավետարանի ընթերցումից հետո ժողովրդի հավանությամբ միահամուռ կերպով նզովեցին նրան։

Նույն տարին հոկտեմբեր ամսի սկզբից սաստիկ ու դժնդակ սառնամանիք արեց, ոչ միայն մեր երկրում, այլև ավելի սաստիկ արևելքում, հյուսիսում և արևմուտքում, այն աստիճան, որ Պոնտոսի հյուսիսային ափը 100 մղոն երկարությամբ, 30 կանգուն խորությամբ սառցակալեց։ Նույնը տեղի ունեցավ նաև Զիգբիայից[750] մինչև Դանուբ, սառցակալեցին Կուֆի գետը, նաև Դանաստրիսն ու Դանապրիսը, Նեկրոպելեն և մնացած ափը՝ մինչև Մեսեմբրիա և Մեդիա[751]։ Այդ սառույցը ևս 20 կանգուն ըստվարացավ տեղացած ձյունով, այնպես որ ծովը ցամաք դարձավ, նրա վրայով Խազարիայից, Բուլղարիայից, շրջակա մյուս երկրներից մարդիկ, վայրի ու ընտանի անասուններ կարողանում էին քայլել։ Ինդիկտիոնի նույն՝ երկրորդ տարվա փետրվար ամսին այդ սառույցը աստծո հրամանով տրոհվեց բազում լեռանման բեկորների, որոնք քամու ուժով քշվեցին, բերվեցին Դաֆնուսիա և Հիերոն, ապա Ստենոնով հասան քաղաք մինչև Պրոպոնտիս, կղզիներն ու Աբիդոս և ողողեցին ողջ ծովափը։ Դրա ականատեսը մենք էլ եղանք. իմ հասակակից 30 երեխաներով մենք բարձրացանք նրանց մեկի վրա ու խաղ էինք անում։ [Սառցաբեկորների] վրա կարելի էր տեսնել վայրի և ընտանի կենդանիների սատակները։ Ցանկացողը կարող էր ոտքով, առանց դժվարության Սոֆիանեից քաղաք գալ, Խրիսուպոլսից՝ սուրբ Մամաս ու Գալատես, կարծես ցամաքի վրայով։ [Սառցաբեկորներից] մեկը, հարվելով Ակրոպոլսի[752] աստիճանին, ջարդուփշուր արեց այն, հսկայական չափերի մի ուրիշը հարվեց պարապին, ուժգին սասանեց այն, անգամ ներսի կողմում գտնվող տները ցնցվեցին։ Այն ջարդվեց և երեք մասի բաժանվելով քաղաքը Մանգանոնից մինչև Բոսպոր գոտևորեց։ Բեկորներից մեկի բարձրությունը գերազանցում էր քաղաքի պարիսպները։ Քաղաքի բոլոր տղամարդիկ, կանայք ու երեխաները անգուլ դիտում էին դա և լաց ու կոծով տուն վերադառնում, ի վիճակի չլինելով, որոշել, թե ինչի նշան է դա։ Նույն տարվա մարտ ամսին երկնքից բազում աստղեր էին ցած ընկնում, բոլոր ակա-

նատեսներն սկսեցին ենթադրել, թե աշխարհի վերջն է եկել։ Սաստիկ երաշտ էլ եղավ, այն աստիճան, որ աղբյուրներն անգամ ցամաքեցին։ Կայսրը կանչելով պատրիարքին, ասաց. «Արդ, մեզ ի՞նչ վնաս դրանից, եթե աստվածածնին անվանենք քրիստոսածին»։ Նա փաթաթվելով կայսեր ասաց. «Ողորմյա՛ տեր, մտքովդ անգամ չանցնի նման բան։ Դու չե՞ս տեսնում ինչքան է խարազանվում ու նզովվում Նեստորիոսը[753] համայն եկեղեցու կողմից»։ Կայսրը պատասխանեց. «Ես հարցրի, որ իմանամ։ Քո խոսքն է կարևոր»։

[A. M. 6256]

Աշխարհի արարչագործության 6256 թ.

Քրիստոսի մարդեղության 756 թ.

Հռոմայեցիների Կոստանդին կայսեր 35-ամյա թագավորության 24-րդ տարին

Արաբների առաջնորդ Աբդալայի 21-ամյա իշխանության 10-րդ տարին

Հռոմի Կոստանդին պապի 5-ամյա աթոռակալության 3-րդ տարին

Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի 12-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Այդ տարի թուրքերը դարձյալ Կասպից դռներով մտան Իբերիա և պատերազմելով արաբների դեմ, երկու կողմից էլ շատերն սպանվեցին։ Իսկ Աբդալան այսպիսի խորամանկությամբ տապալեց Իսե իբն Մուսեին, որին, ինչպես վերևում ասվեց, ընկել էր իրենից հետո իշխելու երրորդ վիճակը։ Աբդալան, տեսնելով, որ նա տանջվում է գլխացավից, որ նրա աչքերը խավարում են, համոզեց, որ կբուժվի, եթե քթին փչվի ինչ-որ փոշտացուցիչ, որը պատրաստում է իր բժիշկը, Մովսես անունով մեկը՝ Անտիոքի եկեղեցու սարկավագը։ Վերջինիս նա արդեն կաշառել էր ու համոզել դեղը շատ թունդ պատրաստել, բացի այդ, շատ էլ թմրեցուցիչ։ Իսեն հավատաց Աբդալայի խոսքերին, հակառակ որ [վախենալով] նենգությունից, խուսափում էր նրա հետ ճաշել, ընդունեց քթադեղը։ Նրա գլխի բոլոր զգայարանները դադարեցին գործելուց, նա զրկվեց մտածելու ընդունակությունից և անձայն փռվեց գետին։ Աբդալան հրավիրելով ցեղապետներին ու իշխանավորներին, ասաց. «Դուք ի՞նչ կարծիքի եք ձեր ապագա թագավորի մասին»։ Բոլորը միահամուռ կերպով մերժեցին նրան և հավանություն տվեցին նույն Աբդալայի որդուն՝ Մոհամմեդին, Մահդի մականվանյալին[754]։ Իսկ զգայազուրկ Իսեին տարան իր տունը։ Երբ երեք օր անց նա ուշքի եկավ, Աբդալան շինծու պատճառաբանու-

թյուններով մխիթարեց, 100 տաղանդ ոսկով խայտառակությունը փոխհատուցեց։

Նույն տարի Բուլղարիայի տեր Պագանոսը կայսեր նամակ գրեց, խնդրելով անձնական տեսակցություն։ Հավանություն ստանալով, նա իր բոյարներով գնաց դեպի կայսրը։ Վերջինս գահին բազմած, իր կողքին Սաբինոսին նստեցրած, ընդունեց, պախարակեց նրանց անկարգությունը, Սաբինոսի դեմ տածած ատելությունը։ Նրանք առերես հաշտվեցին[755]։ Կայսրը Բուլղարիա թաքուն մարդ ուղարկեց և բռնել տվեց սեբրոսների իշխան Սկլավունոսին, որը Թրակիայում բազում ավերածություններ էր գործել, բռնեց նաև սկամարների[756] առաջնորդ Խրիստիանոսին, որն ուրացել էր քրիստոնեությունը և կրոնափոխ եղել։ Սուրբ Թովմայի ծովապատնեշի մոտ նրա ձեռքերն ու ոտքերը կտրեցին, ապա բժիշկներին կանչեցին, որոնք նրան դեռևս կենդանի աճուկից մինչև կրծքավանդակը հերձեցին, իմանալու համար մարդու կազմությունը։ Որից հետո նրան կրակը գցեցին։ Կայսրը անակնկալ կերպով քաղաքից դուրս եկավ և ընդարմացնող խաղաղության պատճառով կլեյսուրները անպաշտպան գտնելով, մուտք գործեց Բուլղարիա, հասնելով մինչև Ցիկաս[757]։ Հանդիպածը դղյակները[758] նա կրակի տվեց, բայց երկյուղ ըզգալով վերադարձավ, ոչ մի սխրանք չգործած։

[A. M. 6257]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 25-րդ տարին

[Արաբների առաջնորդ Արդալայի] 11-րդ տարին

[Հռոմի Կոստանդին պապի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Կոստանդին պատրիարքի] 12-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 4-րդ տարվա նոյեմբեր ամսի 20-ին ամբարիշտ ու պիղծ կայսրը, բոլոր աստվածավախների դեմ գազազած, հրամայեց Դամատրի[759] լեռան մոտ գտնվող սուրբ Ավքսենտիոսի վանքում ճգնող նորավկա Ստեփանոսին[760] քարշ տան։ Ոսոխները՝ նրա բթամտության կողմնակիցներ ու համախոհներ սխոլարիոսներն ու մնացած զինվորականները[761], պարանով կապելով ոտքը, նրան Պրետորիոնից մինչև Պելագիոս քարշ տվեցին, ուր և կտոր կտոր անելուց հետո, նրա նվիրական նշխարները բռնի մահով վախճանվածների փոսը գցեցին[762]։ Պատճառն այն էր, որ Ստեփանոսը շատերին հորդորում էր վանք մտնել,

համոզում արհամարհել թագավորական աստիճաններն ու գանձերը։ Այս մարդը բոլորին մեծ հարգանք էր ներշնչում, քանզի շուրջ 60 տարի ճրագնավորական կյանք էր վարել, աչքի ընկել իր բազում առաքինություններով։ Կայսրը սրբապատկերները պաշտելու մեջ մեղադրված բազում զորահրամանատարների ու զինվորների տարբեր պատիժների ու սարսափելի խոշտանգումների ենթարկեց։ Նա իր թագավորության բոլոր հպատակներից երդում պահանջեց սրբապատկերները չերկրպագելու վերաբերյալ։ Բացի այդ, նա սուտանուն պատրիարք Կոստանդնին ամբիոն հանեց, բարձրացնել տվեց նվիրական ու կենարար խաչափայտը ու երդվել, թե ինքը սրբապատկերները երկրպագողներին չի պատկանում, միաժամանակ նրան համոզեց հրաժարվի մենակյացությունից ու կուսակրոնությունից, միս ուտի և հանդուրժի կիթառերգությունը կայսերական սեղանին։ Բայց արդար դատաստանը նրան երկար չթողեց ոճրագործի ձեռքում։ Ինդիկտիոնի 4-րդ տարվա հունվար ամսի 21-ին կայսրը բուլղարների դեմ շարժվեց, նա Աքելոոս[763] ուղարկեց 2600 խելանդիոն՝ բոլոր բանակաթեմերի զորքերով։ Բայց երբ նավերը ծովափում խարիսխ գցեցին, հյուսիսային քամի փչեց և քիչ մնաց, որ բոլորը ջարդուփշուր լինեին։ Բազում զորք ծովահեղձ եղավ, կայսրը ստիպված հրամայեց ցանցեր գցել, հավաքել խեղդվածների մարմինները և հողին հանձնել։ Հուլիս ամսի 17-ին նա անփառունակ քաղաք մտավ։ Ինդիկտիոնի նույն 4-րդ տարվա օգոստոս ամսի 21-ին ձիարշավարանում նա խարազանեց ու անարգեց մենակյացների սքեմը, հրամայեց յուրաքանչյուր աբբային մի կնոջ ձեռքից բռնած անցնել ձիարշավարանի միջով՝ ողջ ժողովրդի թքակոծության ու լուտանքների տակ։ Նույն ամսի 25-ին ձիարշավարան բերվեցին ու ծաղրուծանակի ենթարկվեցին կայսեր դեմ ոտնձգություններ կատարած լինելու մեջ մեղադրված 19 բարձրաստիճան իշխանավորներ։ Պատճառը սակայն իրականում նախանձն էր, քանզի նրանք գեղադեմ էին, թիկնեղ ու բոլորի կողմից փառաբանված։ Սրանցից ոմանց նա անգամ սպանեց՝ իրենց բարեպաշտության համար. նրանք վերոհիշյալ ճգնավոր Ստեփանոսի մոտ էին լինում և ներբողում նրա շարշարանքները։ Տուժողների գլխավորներն էին՝ Կոստանդին պատրիկը, նախկինում դրոմոսի լոգոթետ (կայսրը սրան Պոդոպագուրոս էր անվանում), սրա եղբայր էքսկուբիտորների դոմեստիկոս Ստրատեգիոս սպաթարը[764], նախկինում դրոմոսի լոգոթետ և Սիկիլիայի զորավար Անտիոքոսը, Օպսիկիոնի կոմես Դավիթ սպաթարը, Թրակիայի զորավար պրոտոսպաթար Թեոփիլակտոս Իկոնիատեսը, Հիմերիոս պատրիկի սպաթար Խրիստոֆորոսը, Վարդան պատրիկի որդի կայսերական պրոտոստրատոր

Կոստանդին սպաթարը, Մարինակիսի կանդիդատ[765] Թեոփիլակտոսը և ուրիշներ։ Զիարշավարանում ծաղրուծանակի ենթարկելուց, համայն ժողովրդի կողմից թքակոծ անելուց ու նզովելուց հետո, կայսրը վճիռ արձակեց. երկու եղբայրներին՝ Կոստանդնին ու Ստրատեգիոսին Կյունեգիոնում գլխատել։ Ողջ ժողովուրդը մեծապես ողբաց նրանց։ Երբ կայսրն իմացավ այդ մասին, զայրացավ, էպարքոս Պրոկոպիոսին ձաղկեց ու պաշտոնանկ արեց, որպես նման բան թույլ տված։ Մնացած բոլորին կուրացրեց ու աքսորեց։ Անգութն ամեն տարի աքսորյալների մոտ մարդ էր ուղարկում, նրանց խարազանի 100-ական հարված հասցնելու համար։ Նույն՝ 4-րդ ինդիկտիոնի նույն օգոստոս ամսի 30-ին գարշանունը[766] մոլեգնեց իր անվանակից ու համախոհ պատրիարքի դեմ։ Նա իրեն համախոհ ու բարեկամ մի քանի կղերականների, վանականների ու աշխարհականների կազմակերպեց ասեն, թե «լսել ենք պատրիարքի ու Պոդոպագուրոսի խոսակցությունը ընդդեմ կայսեր»։ Նրանց նա պատրիարքարան ուղարկեց պատրիարքին բանադատելու։ Երբ նա մեղադրանքը չընդունեց, կայսրը նրանց նվիրական խաչափայտի վրա երդվել տվեց, թե «Պատրիարքից ենք լսել նման զրախոսությունը»։ Դրա վրա կայսրը մարդ ուղարկեց ու կնքեց պատրիարքարանը, իսկ պատրիարքին աքսորեց Հիերիա, ապա Պրինկիպոս[767]։

[A. M. 6258]

Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկետաս[768]։ Աթոռակալեց 14 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 26-րդ տարին	[Արաբների առաջնորդ Աբդալայի] 12-րդ տարին
[Հռոմի Կոստանդին պապի] 5-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի մեռավ Աբդալա իբն Ալին. նրա վրա աշտարակը փուլ եկավ, որի մեջ նա անվտանգ էր զգում։ Իր ամիրապետության օրոք Աբդալան, իր տիրապետության տակ ապրող քրիստոնյաների գլխին բազում փորձանքներ բերեց։ Նա հանել տվեց եկեղեցիների խաչերը, արգելեց հսկելը, իրենց լեզուն[769] սովորելը։ Իրենց կողմից արուրիտ կոչվածները, որ թարգմանաբար նշանակում է «ջերմեռանդներ», Պալմիրայի անապատում ապստամբություն բարձրացրին։ [Արաբների], որպես անհավատների, ատելությունն աստծո եկեղեցիների դեմ հասկանալի է։ Քրիստոն-

յանների կայսրը, սակայն, դուցե աստծո հանդեպ մեր անասելի մեղքերի պատճառով (ինչպես Իսրայելի մոլեգին Աքաաբը)[770], իր թագավորության սահմաններում ապրող ուղղափառ եպիսկոպոսների, վանականների, աշխարհականների, իշխանավորների ու հպատակների գլխին ավելի շատ փորձանքներ բերեց, քան մոլեգին արաբները։ Նա ամենուրեք գրավոր ու բանավոր, որպես անօգուտ, մերժեց սուրբ կույս աստվածածնի և բոլոր սրբերի մեզ համար օգնության աղբյուր հանդիսացող միջնորդությունը, գերեզմաններից փորում հանում ու ցրիվ էր տալիս [սրբերի] սուրբ նշխարքները, երբ իմանում էր, որ բարեպաշտ մարդիկ, ըստ սովորության երկրպագում են դրանք՝ հոգու ու մարմնի ապաքինման համար։ Երկրպագողներին, որպես ամբարիշտների, սպառնում էին մահապատժի ենթարկել, գույքը բռնագրավել, աքսորել ու խոշտանգել։ Աստվածաշնորհ մասունքը, որն իր տիրոջ համար գանձ էր, հափշտակվում էր ու այնուհետև անհայտացվում։ Պիղծ կայսրը հենց այդպես վարվեց նաև փառաբանյալ վկա Եվփեմիայի[771] ամենանվիրական մասունքի հետ, տապանի հետ միասին այն ծովը գցելով, քանզի նա չէր կարող տեսնել, թե ինչպես այդ մասունքներից ժողովրդի համար մեռոն էր բխում, պարսավում սրբերի միջնորդության վերաբերյալ նրա տխմարությունները։ Բայց աստված, որ ըստ սուրբ գրոց պահպանում է աստվածասեր մարդկանց ոսկորները, անվնաս պահպանեց նրա մասունքը և Լեմնոս կղզում լույս աշխարհ բերեց. նա մարդկանց երազում երևաց և հրամայեց վերցնել այն ու պահել։ Բարեպաշտ կայսր Կոստանդնի և Իրենեի օրոք[772], ինդիկտիոնի 4-րդ տարին Եվփեմիայի աճյունը պատշաճ հարգ ու պատվով վերստին բերվեց իր՝ սրբուհու տաճարը, որը եկեղեցիների թշնամին զինանոցի ու զուգարանի էր վերածել։ [Կոստանդինն ու Իրենեն] մաքրեցին այն, վերստին սրբագործեցին՝ ի պարսավումն նրա անաստվածության և ի հաստատումն իրենց աստվածապաշտության։ Մենք վերոհիշյալ ամենաբարեպաշտ կայսրերի և սրբազնագույն Տարասիոս պատրիարքի[773] հետ ականատեսը եղանք այդ զարմանալի և արժանահիշատակ հրաշքի, որ կատարվեց անօրենի մահվանից 22 տարի անց։ Նրանց հետ մենք ևս, անարժաններս մեծ շնորհքի արժանացած, համբուրեցինք մասունքները։ Նույն՝ ինդիկտիոնի 5-րդ տարվա նոյեմբեր ամսի 16-ին կայսեր վճռի համաձայն ապօրինաբար Կոստանդնուպոլսի պատրիարք ձեռնադրվեց սկլավական ծագում ունեցող ներքինի Նիկետասը։ Չորային եղանակ եղավ, երկնքից ցող անգամ չթափվեց, քաղաքից ջուրը կատարելապես վերացավ։ Ջրամբարներն ու ավազանները դատարկվեցին, մշտահոս աղբյուրներն անգամ ցամաքեցին։ Կայսրը տեսնելով դա, սկսեց նորոգել

Վալերիանոսի ջրմուղը, որը գործել էր մինչև Հերակլիոսի ժամանակ և ավերվել ավարների կողմից։ Նա տարբեր տեղերից վարպետներ բերեց, Ասիայից և Պոնտոսից 1000 հյուսն և 200 ծեփագործ, Հելլադայից և կղզիներից՝ 500 աղյուսագործ, իսկ Թրակիայից՝ 5000 բանվոր և 200 կղմինդրագործ։ Նրանց վրա նա կարգեց վերակացուներ և մեկ պատրիկ։ Գործի ավարտումից հետո ահա ջուրը հոսեց քաղաք։ Նույն՝ ինդիկտիոնի 5-րդ տարին նա զորավար նշանակեց իր համախոհներին, իր չարափառ ծրագրերի արժանի իրականացնողներին։ Անատոլիկոն բանակաթեմի զորավար նշանակեց Միքայել Մելիսսենոսին, Թրակեսիոնի զորավար՝ Միքայել Լախանոդրակոնին[774], Բուկելլարների զորավար՝ Մանիին[775], չար Մանիի անվանակցին։ Մարդ կարո՞ղ է մեկ առ մեկ պատմել սրանց գործած սրբապղծությունների մասին, որոնց մենք մասամբ կանդրադառնանք իր տեղում։ Չէ՞ որ ավետարանի խոսքերով ասած, համայն աշխարհն անգամ փոքր կգա կայսեր սիրույն սրանց գործած արարքների մասին հանգամանորեն գրված գրքերն ամփոփելու համար։

[A. M. 6259]

Հռոմի պապ Ստեփանոս[776]։ Աթոռակալեց 3 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 27-րդ տարին	[Արաբների առաջնորդ Արդալայի] 13-րդ տարին
[Հռոմի Ստեփանոս պապի] 1-ին տարին	[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 6-րդ տարվա հոկտեմբեր ամսի 6-ին սուտանուն պատրիարք Կոստանդինը Պրինկիպոս կղզուց քաղաք բերվեց։ Բռնակալ Կոստանդինը այն աստիճան ծեծեց նրան, որ նա քայլել չէր կարող։ Կայսրը հրամայեց նրան դեսպակի վրա տանել և նստեցնել Մեծ եկեղեցու սոլեայում[777]։ Նրա հետ էր մի ասեկրետ՝ թղթի գլան բռնած, ուր գրված էին նրա զանցանքները։ Կայսերական հրամանով այնտեղ հավաքված համայն ժողովրդին բարձրաձայն ընթերցվեց թուղթը։ Ասեկրետը սինթրոնոնում բաղմած Նիկետաս պատրիարքի ներկայության յուրաքանչյուր կետի ընթերցումից հետո ուղղակում էր Կոստանդինին։ Այնուհետև նրան ամբիոն բարձրացրին ու կանգնեցրին, իսկ Նիկետասն առավ թուղթը, եպիսկոպոսներ ուղարկեց, վերցրեց նրա եմիֆորոնը և նզովեց նրան։ Նրան «խավարամիտ» անունը տալով, եկեղեցու ետևի դռնից դուրս հանեցին։ Հաջորդ՝ ձիարշավական մրցումների օրը նրա մո-

լուքը, գլուխն ու հոնքերը ածիլեցին, մետաքսե, անթև մի կարճ շոր հագցրին, թամբած ավանակի վրա հակառակ կողմից նստեցրին, ավանակի պոչը ձեռքը տվեցին և դիիպիոնով ձիարշավարան մտցրին, որտեղ համայն ժողովուրդն ու դեմոսը նզովեց ու թքակոծ արեց նրան։ Ավանակին քաշում էր նրա եղբորորդի[778] Կոստանդինը, որի քիթն էին կտրել։ Երբ նա հասավ դեմոսներին, վերջիններս իջան[779], նրան թքակոծ արեցին, գլխին հող թափեցին։ Բերելով ստամա[780], նրան ավանակից ցած գլորեցին և նրա պարանոցին կոխեցին։ Ապա նստեցրին դեմոսների դիմաց և նա մինչև ձիարշավական մրցումների ավարտը լսում էր նրանց ծանակող խոսքերը։ Նույն ամսի 15-ին [կայսրը] նրա մոտ պատրիկներին ուղարկեց ու ասաց. «Ի՞նչ կարծիքի ես մեր հավատքի և մեր գումարած ժողովի մասին»։ Նա խելակորույս, ցանկանալով այդ ձևով սիրաշահել նրան, ասաց, թե «Ճշմարիտ է հավատքդ և հրավիրածդ ժողովը»։ [Պատրիկները] առանց այլևայլի պատասխանեցին և ասացին. «Քո պիղծ բերանից մենք հենց այդ էինք ուզում լսել։ Այս օրվանից գնա ի խավար և ի նրզովք»։ Նա դատապարտվեց ու գլխատվեց Կյունեգիոնում։ Նրա գլուխն ականջներից կապեցին և Միլիոնում երեք օր կախած պահեցին ի տես ժողովրդյան, իսկ մարմինը ոտից պարանով կապելով, Մեսե պողոտայով քարշ տվեցին տարան Պելագիոսի գերեզմանատունը[781] և բռնի մահով վախճանվածների [փոսը] գցեցին։ Երեք օր հետո էլ գլուխը բերեցին և նույն տեղը գցեցին։ Ո՜վ վայրի գազանի խելացնորություն, դաժանություն ու անողորմություն։ Թշվառականը չպատկառե՞ց սուրբ ավազանից, չ՞է որ իր երրորդ կնոջից ծնված երկու երեխաներին նա էր մկրտել։ Նա միշտ էլ գազանաբարո ու վայրենի էր։ Այդ տարվանից սկսած սուրբ եկեղեցիների դեմ նա ավելի մեծ մոլեգնություն ցուցաբերեց։ Նրա հրամանով սյունից ցած իջեցրին փառավորյալ Պետրոս սյունակյացին, որին, իր դոգմաները չընդունելու պատճառով, ոտքերից կապել տվեց ու հրամայեց կենդանի կենդանի քարշ տան Մեսե պողոտայով և նրան էլ Պելագիոսում նետեն։ Ուրիշներին պարկերի մեջ էր գցում, պարկերին քարեր կապում ու հրամայում ծովը նետել։ Նա մարդկանց կուրացնում էր, քթերը կտրում, խարազանում, բարեպաշտներին շարշարելու բազմապիսի ձևեր հորինում։ Քաղաքում ահա ինքն անձամբ և իր համախոհների հետ էր գործում, ես նկատի ունեմ սխոլերի դոմեստիկոս Անտոնիոս պատրիկին, Պետրոս մագիստրոսին, տագմաների իր դասալքարակած դինվորներին, իսկ դրսի բանակաթեմերում՝ վերոհիշյալ զորավարների։ Ինքը զվարճանում էր նվագով ու կերուխումով, իր շրջապատի մարդկանց զազրախոսություն ու պարել սովորեցնում։ Եթե մեկը հանկարծ ցած ընկ-

նելիս կամ ցավ ղգալով քրիստոնյաների համար սովորական «Աստված ծածին օգնյա՛» ասեր, կամ հսկեր, եկեղեցի հաճախեր, բարեպաշտ կյանք վարեր, տեղի անտեղի երդում չաներ, նա, որպես կայսեր թշնամի, անգթորեն պատժվում էր և «ամնեմոնևտոս»[782] անունն ստանում։ Աստծուն փառավորելու համար ստեղծված և մեղքերից փրկվելու համար ապաստարան վանքերն իր համախոհ զինվորների սովորական զորանոցների էր վերածում։ Բյուզանդիոնի ամենահին՝ Դալմատոսի վանքը նա զինվորների բնակության տրամադրեց, Կալլիստրատոսի կոչվող վանքը, նաև Դիոսի և Մաքսիմինոսի վանքերը, վանականների այլ սուրբ մենաստաններ ու կուսանոցներ հիմնահատակ կործանեց։ Վանական դառնալու ցանկություն հայտնած զինվորական ու քաղաքական հայտնի գործիչներին, հատկապես իր նախկին մտերիմներին ու համախոհներին, որոնք իր գաղրագործություններին ու խայտառակություններին մասնակից էին դարձել, հենց նրանց էր մահվան դատապարտում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանք կարող են հայտնել իրենց իմացածը և իրեն խայտառակ անեն։ Հենց այդ նկատառումներով նա դավադրության մեջ մեղադրեց Պողոպագուրոսի եղբայր Ստրատեգիոսին և սուրբ Ավքսենտիոսի վանքի ճգնավոր երանելի Ստեփանոսի հետ սպանեց։ Ստրատեգիոսը գեղեցիկ մարդ էր, կայսրը սիրում էր մտերմանալ նմանների հետ իր գաղրագործությունների համար, բայց տեսավ, որ նա խորշում է իր անօրեն արվամոլությունից և որ այդ մասին տեղեկացնում երանելի Ստեփանոսին, որից փրկարար սպեղանի ստանում։ Այդ տարի կայսրը միջոցներ ձեռք առավ և քաղաքում մթերքների էժանություն եղավ, քանզի նոր Միդաս[783] դառնալով, ոսկի կուտակեց, երկրագործներին կատարելապես աղքատացրեց, նրանք հարկերը վճարելու համար ստիպված սկսեցին ասուծո պարգևած բերքը էժան վաճառել։ Նույն տարի սուտանուն պատրիարք Նիկետասը քերեց հանեց պատրիարքարանի փոքր սեկրետի խճանկար սրբապատկերները, մեծ սեկրետի փայտի վրա նկարված սրբապատկերները ցած առավ, մնացած սրբապատկերների դեմքերը ներկով ծածկեց։ Նա նույնն արեց նաև Աբրամիեոնում։

[A. M. 6260]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 28-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 14-րդ տարին

[Հռոմի Ստեփանոս պապի] 2-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 3-րդ տարին

Ինդիկտիոնի 7-րդ տարվա ապրիլ ամսի 1-ին, շաբաթ օրը, 19 ակուբիտների տրիբունալիոնում երրորդ անգամ ամուսնացած կայսրը իր երրորդ կնոջ Եվդոկիային ավգուստա թագադրեց, իսկ հաջորդ օրը, այն է ապրիլ ամսի 2-ին, սուրբ Զատկի կիրակի օրը նույն տրիբունալիոնում նրանից ծնված իր երկու որդիներ Խրիստոֆորոսին ու Նիկեփորին կեսար հռչակեց։ Արարողությունը կատարեց պատրիարքը, իսկ կայսրը նրանց վրա գցեց խլենաները[784] և հագցրեց կեսարի գլխապանները։ Նույն ձևով նա Նոբելիսսիմոս[785] հռչակեց նրանց ամենակրտսեր եղբայր Նիկետասին, որի վրա գցեց ոսկեթել խլենա, իսկ գլխին պսակ դրեց։ Դրանից հետո կայսրերն անցան գնացին, ճանապարհին մինչև Մեծ եկեղեցին դրամ ցրիվ տալով՝ տրիմիսիա, սեմիսիա և նոր հատած դահեկաններ[786]։

[A. M. 6261]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 29-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 15-րդ տարին

[Հռոմի Ստեփանոս պապի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Ասորիքում գերիների փոխանակություն կատարվեց՝ տղամարդ տղամարդու[787] դիմաց, կին՝ կնոջ, երեխա՝ երեխայի։ Աբդալան թույլատրեց [արաբներին] մորուքն ածիլել, հագնել մեկուկես կանգունանոց կամելավկիա[788]։ Աբդալան 80 հազարանոց զորքով ամբողջ ամառն ապարդյուն պաշարեց Կամախը և խայտառակ եղած վերադարձավ։ Ինդիկտիոնի 8-րդ տարվա սեպտեմբեր ամսի 1-ին Աթենքից ժամանած Իրենեն մետաքսյա պալլիոններով[789] զարդարված բազում դրոշմոններով ու խելանդիոններով Հիերիայից թագավորանիստ քաղաքը մտավ։ Նրան դիմավորեցին և ուղեկցեցին քաղաքի մեծամեծներն իրենց կանանցով հանդերձ։ Նույն սեպտեմբեր ամսի 3-ին պատրիարքը եկավ պալատ և Փարոսի եկեղեցում կատարվեց այդ Իրենեի և Լևոն կայսեր նշանադրության արարողությունը։ Դեկտեմբեր ամսի 17-ին Ավգուստեոնի տրիկլինում Իրենեն կայսրուհի թագադրվեց և գնալով Դափնեի սուրբ Ստեփանոսի աղոթարանը, Կոստանդնի որդի Լևոն կայսեր[790] հետ ամուսնական պսակներն ստացավ։

[A. M. 6262]

Հռոմի պապ Ադրիանոս[791]*։ Աթոռակալեց 27 տարի։*

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 30-րդ տարին	*[Արաբների առաջնորդ Աբդալայի] 16-րդ տարին*
[Հռոմի Ադրիանոս պապի] 1-ին տարին	*[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 5-րդ տարին*

Այդ տարի Բանակասն[792] *արշավեց Ռոմանիայի վրա և բազում ժողովուրդ գերեվարեց։ Հռոմայեցիները մտան Չորրորդ Հայք և թալանեցին այն։ Մեռավ Սալեխը*[793]*, Գերմանիկիան մտավ Պաղեստինի կազմի մեջ։*

Նույն տարի Լախանոդրակոնը[794]*, ընթանալով իր ուսուցչի*[795] *հետքերով, Թրակեսիոն բանակաթեմի բոլոր վանականներին ու միանձնուհիներին Եփեսոս հավաքեց և բերելով Ցուկանիստերիոն*[796] *կոչվող դաշտը, ասաց նրանց. «Ով ուզում է հնազանդ լինել կայսեր և մեզ, թող ըսպիտակ հանդերձներ հագնի և հենց հիմա ամուսնանա։ Հակառակվողը կկուրացվի և Կիպրոս կաքսորվի»։ Ասածն էլ արեց. այդ օրը շատերը նահատակվեցին, բայց շատերն էլ դասալիք լինելով [հոգով] կորան։ [Լախանո] դրակոնը սրանց մտերմացավ։ Նույն՝ ինդիկտիոնի 9-րդ տարվա հունվար ամսի 14-ին Լևոն կայսրն ու Իրենեն որդի ունեցան, որին, թե՛ նրա պապ Կոստանդինը դեռ կենդանի էր, Կոստանդին անվանեցին*[797]*։*

[A. M. 6263]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 31-րդ տարին	*[Արաբների առաջնորդ Աբդալայի] 17-րդ տարին*
[Հռոմի Ադրիանոս պապի] 2-րդ տարին	*[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 6-րդ տարին*

Այդ տարի Բանակասը Ռոմանիայի վրա արշավեց և Իսավրիայից իջնելով Սիկեի բերդը, պաշարեց այն։ Կայսրը, լսելով դա, Անատոլիկոնի զորավար Միքայելին, Բուկելլարների՝ Մանիին և Արմենիակների Վարդանին նամակ գրեց։ Նրանք եկան և բռնեցին նրանց նահանջի ճանապարհը՝ շատ դժվարանցանելի մի կլեյսուր։ Կիբիրեոտների նավատոր-

միշն էլ [բանակաթեմի] զորավար պրոտոսպաթար Պետրոնասի գլխավորությամբ խարիսխ գցեց բերդի նավահանգստում։ Բանակասը, տեսնելով դա, հուսաբեկ եղավ, բայց հորդորելով գոտեպնդեց իր զորքերին, մեծագոչ աղաղակով [հռոմայեցիների] հեծելազորի վրա հարձակվեց, այն պարտության մատնեց, շատերին կոտորեց և գերեվարելով ամբողջ շրջանները, բազում ավարով վերադարձավ։

Նույն տարին Թրակեսիոնի զորավար Միքայել Լախանոդրակոնն իր նոտար Լևոնին, մականունը Կուլուկես, և նախկին աբբա Լևոն Կուցոդակտիլոսին ուղարկեց և նրանց միջոցով վաճառքի հանեց տղամարդկանց ու կանանց բոլոր մենաստանները, ամբողջ սուրբ սպասքը, գրքերը, անասունները, նրանց ողջ սեփականությունը, եկամուտը տալով կայսեր։ Իսկ ինչքան որ վանականների կամ սուրբ հայրերի գրած գրքեր գտավ, դրանք էլ կրակի տվեց, նմանապես և մարդկանց մոտ որպես հմայեկ պահվող որևէ սրբի մասունքները, իսկ կրողին էլ որպես ամբարշտի պատժեց։ Բազում վանականների խարազանի հարվածների տակ սպանեց, ոմանց սրի քաշեց, անթիվ մարդկանց էլ կուրացրեց։ Ոմանց մորուքներին մոմից ու ձեթից պատրաստված քսուկ էր քսում և այն կրակի տալով, վառում նրանց դեմքն ու գլուխը, ուրիշներին էլ բազում տանջանքների ենթարկելով, աքսոր ուղարկում։ Իրեն ենթակա բանակաթեմում նա վանականի սքեմ հագած մարդ չթողեց։ Բարին ատեցող կայսրը, իմանալով այդ մասին, նրան շնորհակալական նամակ գրեց, թե «Դու ինձ հոգեհարազատ մարդ ես, իմ բոլոր ցանկությունները կատարող»։ Ահա մնացած [բանակաթեմերի զորավարները] սրա հետքերով գնացին և նույն բանն արեցին։

[A. M. 6264]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 32-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 18-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 3-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկետաս։ պատրիարքի] 7-րդ տարին

Այդ տարի Աբդալան Մուալաբիտին մեծ զորքով Աֆրիկա ուղարկեց։ Ալֆաղար Բաղինարը Ռոմանիա ներխուժեց և հինգ հարյուր հոգի գերի քշեց։ Մոպսուեստացիք հանդիպելով նրան և մարտ տալով, հազար արաբ սպանեցին։ Աբդալան Երուսաղեմ գնաց ու ծոմ պահեց։ Նա կարգադրեց քրիստոնյաների և հրեաների ձեռքին գրել[798]։ Դրա վրա բազում քրիստոն-

յաներ ծովով Ռոմանիա փախաւ։ Սիկեից դուրս Սերգիոս Կուրիկոսը բռնվեց, իսկ Կիպրոսում՝ Սերգիոս Լախերբաֆոսը՝ տեղացիների ներկայացուցիչը։

[A. M. 6265]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 33-րդ տարին

[Արաբների առաջնորդ Արդալայի] 19-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 4-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 12-րդ տարվա մայիս ամսին Կոստանդինը Բուլղարիայի դեմ հանեց 2000 խելանդիոնից բաղկացած նավատորմիզ։ Ինքը կարմիր խելանդիոններով շարժվեց մուտք գործելու համար Դանուբ գետը, հեծելազորի հրամանատարներին թողեց կլեյսուրներից դուրս, որպեսզի երբ բուլղարներն իրենով զբաղված լինեն, նրանք ներխուժեն Բուլղարիա։ Հասնելով Վառնա, նա երկյուղեց և մտադիր էր վերադառնալ։ Բուլղարները, տեսնելով նրան, վախեցան և նրա մոտ մի բոյար և Ցիգատոսին[799] ուղարկեցին հաշտություն աղերսելով։ Կայսրը, տեսնելով նրանց, շատ ուրախացավ ու հաշտություն կնքեց։ Նրանք փոխադարձաբար երդվեցին, որ ոչ բուլղարները Ռոմանիա ոտք դնեն, ոչ էլ կայսրը փորձ անի Բուլղարիա մտնել։ Այդ առթիվ փաստաթղթեր փոխանակվեցին։ Կայսրը վերադառնալով քաղաք, բոլոր բանակաթեմերից կայազորներ հաստատեց նաև իր կառուցած բերդերում։ Ինդիկտիոնի 11-րդ տարվա հոկտեմբեր ամսին, կայսրը Բուլղարիայի իր հետախույզներից տեղեկացավ, որ Բուլղարիայի տերը[800] Բերդիտիան[801] գրավելու և նրա բնակչությունը Բուլղարիա գաղթեցնելու նպատակով 12 հազարանոց զորք և բոյարների է ուղարկում։ Կայսրը շուզենալով բացահայտել Բուլղարիայի վրա արշավելու իր մտադրությունը (Բուլղարիայի տիրոջ դեսպանները իր մոտ էին ժամանել), դեռ նրանց քաղաքում գտնվելու ժամանակ ձևացրեց, թե արաբների դեմ պիտի արշավի։ [Նրանց ներկայության] անցան դրոշակակիրներն ու ծառայող անձնակազմը։ Այն բանից հետո, երբ նա բաց թողեց դեսպաններին, իսկ հետախույզներից էլ իմացավ նրանց [քաղաքից] դուրս գալու մասին, անցնելով զորքի գլուխը, շտապ կարգով շարժվեց առաջ· նու մի տեղ կենտրոնացնելով բանակաթեմերի տաքսատոսներին, ինչպես և թրակեսիոնցիներին, տագմաներին միացնելով օպտիմատոսներին[802], կազմեց 80 հազարանոց մի բանակ։ Մտնե-

լով Լիթոսորիա[803] կոչվող վայրը, առանց փող հնչեցնելու խոյացավ [բուլղարների] վրա և պարտության մատնելով, փայլուն հաղթանակ տարավ։ Նա մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով վերադարձավ ու քաղաքում հաղթական շքերթ կազմակերպեց։ Այս պատերազմը նա ազնիվ անվանեց, քանզի ոչ ոք իրեն դիմադրություն չցուցաբերեց, քրիստոնյա չսպանվեց, քրիստոնյայի արյուն չթափվեց[804]։

[A. M. 6266]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 34-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 20-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 9-րդ տարին

Այդ տարի Աֆրիկայից 280 [մարդու] գլուխ բերվեց և Ասորիքում հրապարակայնորեն ցուցադրվեց։ Կայսրը բուլղարների հետ կնքած հաշտությունը խախտած լինելով, դարձյալ մեծ նավատորմիղ պատրաստեց։ Նրա մեջ 12 հազար հեծյալ նստեցրեց և բոլոր ծովակալների հետ ճամփու դրեց։ Ինքը վախեցավ նավ նստել և հեծելազորի մոտ մնաց։ Երբ նավատորմիղը հասավ Մեսեմբրիա, հյուսիսային սաստիկ քամի փչեց, շատերը կորան, քիչ էր մնացել, որ բոլոր [նավերը] խորտակվեին։ Կայսրը վերադարձավ ձեռնունայն։ Բուլղարիայի տեր Տելերիգոսը իմանալով, որ իր գաղտնիքները կայսեր են հայտնում իր շրջապատի մարդիկ, նրան նամակ է գրում, ասելով, թե «Որոշել եմ քո մոտ փախչել, դու ինձ անձեռնմխելիության մասին երաշխիքներ ուղարկիր, հաղորդիր նաև, թե ովքեր են քո մարդիկ այստեղ, որպեսզի վստահեմ նրանց և նրանց օգնության դիմեմ»։ Կայսրը հիմարաբար գրեց, և նա ինչ պետքն էր իմանալով, թե ովքեր են կայսեր գործակալները, բոլորին կոտորեց։ Կոստանդինը, լսելով դա, շատ փնտեց իր սպիտակած մազերը։

[A. M. 6267]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 35-րդ տարին

[Արաբների առաջնորդ Աբդալայի] 21-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 6-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 10-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 13-րդ տարվա օգոստոս ամսին Կոստանդին կայսրը արշավեց բուլղարների դեմ։ Աստծո ցասմամբ նրա աճուկը սաստիկ ածխացավ, նա հիվանդացավ բժիշկներին անծանոթ հիվանդությամբ, ունեցավ շատ բարձր ջերմություն, որից նեղվելով ստիպված զինվորների ուսերի վրա դրված պատգարակով վերադարձավ Արկադիուպոլիս[805]։ Այնտեղից նա եկավ Սիլիմվրիա[806], նավ նստեց և ինդիկտիոնի 14-րդ տարվա սեպտեմբեր ամսի 13-ին, հասնելով Ստրոնգիլոս բերդը[807], խելանդիոնի մեջ շարաշար մահվամբ վախճանվեց, աղաղակելով ու ասելով, թե «Դեռ կենդանի անմար հրո մատնվեցի»։ Նա խնդրում էր [աստվածամոր] ներբողեն, սուրբ կույսի ու աստվածածնի այդ անհաշտ թշնամին։ Նա իր հոր մահից հետո միահեծան թագավորեց 34 տարի, 2 ամիս և 26 օր։ Բազում քրիստոնյաների, վանականների արյամբ պղծըված, դիվակոչությամբ ու զոհամատուցմամբ պարապածը, սուրբ եկեղեցիները, ուղիղ ու ճշմարիտ հավատքը հալածածը, վանքերն ապականածը, գործած ամեն տեսակի ոճիրներով Դիոկլետիանոսից ու անցյալի բռնակալներից ավելի աչքի ընկածը, ահա այդպես հոգին ավանդեց։ Նույն ամսին մեռավ և արաբների առաջնորդ Աբդալան[808]։ Ահա այդ երկու ամենասարսափելի գազանները, որոնք բազում տարիներ նույն ձևով հոշոտում էին մարդկությունը, մեռան նախախնամությամբն աստծո։ Իշխանությունն անցնում է այդ երկուսի որդիներին՝ Լևոնին[809] և Մահդիին[810]։ Հենց այդ նույն տարին լոնգոբարդների ռեքս Թեոդոտոսը[811] քաղաք ժամանեց և կայսեր մոտ ապաստանեց։

[A. M. 6268]

Աշխարհի արարչագործության 6268 թ.	Քրիստոսի մարդեղության 768 թ.	Հռոմայեցիների Լևոն կայսեր 5-ամյա թագավորության 1-ին տարին
Արաբների առաջնորդ Մահդիի 9-ամյա իշխանության 1-ին տարին	Հռոմի Ադրիանոս պապի 27-ամյա աթոռակալության 7-րդ տարին	Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի 14-ամյա աթոռակալության 11-րդ տարին

Այդ տարի Մահդին մեծ զորքով Ռոմանիա ուղարկեց Աբասվալիին[812], որը ծխի օգնությամբ բացել տվեց Կասիս կոչվող քարայրը և այնտեղ գտնվողներին գերելով, վերադարձավ։ Լևոն կայսրն սկսեց ծախսել հոր թողած դրամները, որոնցով նա սիրաշահեց ժողովրդին և քաղաքի բնակչության։ Նա կարճ ժամանակ իրեն բարեպաշտ ձևացրեց, աստվածածնին ու վանականներին հարգող։ Նա աբբաներից մետրոպոլիտներ կարգեց և

ամենագլխավոր աթոռներին հաստատեց, յուրաքանչյուր բանակաթեմում մեծաթիվ զորքեր հավաքագրեց, բազմացրեց տագմաներում ծառայողների քանակը։ Դրա վրա բանակաթեմերի զորավարները մեծ բազմությամբ մտան քաղաք, խնդրելով նրա որդի Կոստանդնին կայսր [թագադրել]։ Լևոնը, ինչպես ընդունված է կայսրերին, դրա դեմ դուրս եկավ, ասելով, թե «Նա իմ միակ որդին է, ես վախենում եմ ձեզ ընդառաջ գընալ, քանզի եթե հանկարծ ես վախճանվեմ, դուք նրան կսպանեք, չէ՞ որ նա դեռ մանուկ է, և մի ուրիշին [կայսր] կհռչակեք»։ Նրանք երդումներով խոսք տվեցին, որ բացի իր որդուց ոչ ոք չի թագավորի, եթե անգամ ասուված իր մահը ցանկանա։ Երբ ժողովուրդը Ծաղկազարդի կիրակիից մինչև ավագ հինգշաբթի օրը, հավաքվելով Ձիարշավարանում և խնդրելով իրեն տաղտկալի դարձավ, [կայսրը] ավագ ուրբաթ օրը հրամայեց նրանց երդվել։ Համայն ժողովուրդը՝ բանակաթեմերի զինվորները, սենատորները, ներքին տագմաների զինվորները, բոլոր քաղաքացիներն ու արհեստանոցների աշխատողները[813] նվիրական ու կենարար խաչափայտի վրա երդվեցին, որ իրենք Լևոնից ու Կոստանդնից բացի, նրանց զավակներից դուրս ոչ ոքի կայսր չեն ճանաչի և իրենց երդումը սեփական ձեռքով արձանագրեցին։ Հաջորդ օրը, որ ավագ շաբաթ էր, կայսրը գնաց 19 ակուբիտների տրիբունալիոնը և իր եղբայր Եվդոկիմոսին նոբելիսսիմոսի տիտղոսը տվեց (Անթիմոսին նոբելիսսիմոս էր հռչակել դեռ հայրը՝ իր կենդանության օրոք)։ Կայսրը երկու կեսարների, երեք նոբելիսսիմոսների, ինչպես և նոր Կոստանդնի[814] հետ Մեծ եկեղեցին եկավ, կայսրերի սովորության համաձայն փոխեց իր հանդերձանքը և իր որդու ու պատրիարքի հետ ամբիոն բարձրացավ։ Համայն ժողովուրդը ներս մտավ և իր գրավոր [երդումը] դրեց սուրբ սեղանին։ Կայսրը դիմեց նրանց հետևյալ խոսքերով. «Ահա, եղբայրներ, ես կատարում եմ ձեր խնդրանքը և ձեզ պարգևում իմ կայսր որդուն։ Ահա դուք ստանում եք նրան եկեղեցուց և ձեռքից Քրիստոսի»։ Ժողովուրդը բարձրագոչ աղաղակեց. «Արձագանքի՛ր մեզ, Հրդին աստծո, թե քո ձեռքից ենք որպես կայսր ստանում տեր Կոստանդնին, մենք կպահպանենք նրան, նրա սիրույն մեր կյանքը կզոհենք»։ Հաջորդ օրը, որ Զատկի ավագ կիրակին էր, ինդիկտիոնի 14-րդ տարվա ապրիլ ամսի 24-ը, վաղ արշալույսին, կայսրը պատրիարքի հետ գնաց Ձիարշավարան։ Երբ բերվեց սուրբ սեղանը, պատրիարքը համայն ժողովրդի ներկայության աղոթքն արեց, իսկ կայսրը թագադրեց իր որդուն։ Այնուհետև երկու կայսրերը, երկու կեսարների և երեք նոբելիսսիմոսների հետ գնացին Մեծ եկեղեցին։ Կայսրերից հետո գնաց նաև կայսրուհի Իրենեն՝ գավազաններ բռնած սիսլերի դոմես-

տիկոսների ուղեկցությամբ և խալկեի աստիճանով բարձրացավ եկեղեցու վերնատունը, դուրս չգալով էմբոլոնի[815] մեջտեղը։ Նույն ինդիկտիոնի մայիս ամսին կայսեր եղբայր կեսար Նիկեփորը մի քանի սպաթարների, ստրատորների և այլ կայսերական մարդկանց հետ կայսեր դեմ դավադրություն նյութելու մեջ ամբաստանվեց։ Կայսրը Մագնավրայում ժողով հրավիրեց և ժողովրդին տեղյակ պահեց Նիկեփորի դեմ արված ամբաստանության մասին։ Ժողովուրդը միահամուռ կերպով աղաղակեց երկուսին էլ հրապարակից հեռացնել, հավիտյանս ուխտադրուժները մոռացան նրանց հոր տված իրենց երդումը, թե նրա մահից հետո թույլ չեն տա նրա որդիների նկատմամբ անարդարություն կատարվի։ Կայսրը դավադիրներին դանահարելուց և խուզելուց հետո, խերսոն ու նրա շրջաններն աքսորեց՝ պահնորդությամբ ու հսկողությամբ։

[A. M. 6269]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 2-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մահդիի] 2-րդ տարին
[Հռոմի Ադրիանոս պապի] 8-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 12-րդ տարին

Այդ տարի Վակայի որդի Թումաման Ռոմանիա ներխուժեց և գերիներով վերադարձավ։ Բուլղարների տեր Տելերիգոսը կայսեր մոտ ապաստանեց։ Կայսրը նրան պատրիկի տիտղոս շնորհեց և ամուսնացրեց իր կնոջ՝ Իրենեի հորեղբոր դստեր հետ։ Տելերիգոսը համաձայնվեց մկրտվել սուրբ ավազանում, որից հետո կայսրը նրան պատվեց ու սիրեց։

[A. M. 6270]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 3-րդ տարին	[Արաբների առաջնորդ Մահդիի] 3-րդ տարին
[Հռոմի Ադրիանոս պապի] 9-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 13-րդ տարին

Այդ տարի Թումաման հաստատվելով Դարեկոնում[816], ապստամբություն բարձրացրեց։ Լևոն կայսրը հռոմայեցիների զորքերն ուղարկեց. Ասորիք մտան 100 հազար հոգի, որոնց գլխավորում էին Թրակեսիոնի զորավար Միքայել Լախանոդրակոնը, Անատոլիկոնի զորավար Հայ-

ազգի Արտավազդը, Բուկելլարների՝ Տաճատը, Արմենիակների՝ Վարազտիրոցը[817] և Օպսիկիոնի՝ Մուսուլակի[818] որդի Գրիգորը։ Նրանք պաշարեցին Գերմանիկիան[819], այնտեղ էր գտնվում Մահդիի հորեղբայր Իսե իբն Ալին[820], ձեռք գցեցին նրա բոլոր ուղտերին և Գերմանիկիան գրավվելու վրա էր, երբ Իսե իբն Ալին նվերներով համոզեց Լախանոդրակոնին թողնել հեռանալ բերդից։ Նա գնաց երկիրն ավարի առնելու։ Գերի վերցնելով հերձվածող ասորի հակոբիկներին, նա դարձյալ բերդը վերադարձավ։ Թումման Դարեկոնից զորք ուղարկեց, ամիրաների, որոնք պատերազմեցին հռոմայեցիների դեմ։ Պատմում են, որ մարտի դաշտում ընկան հինգ ամիրա և երկու հազար արաբ։ Նրանք ուրբաթ օրը վերադարձան։ Մուտք էին գործել կիրակի օրը։ Կայսրը Սոֆիանեում[821] իր որդու հետ գահին բազմած տոնեց մայիսը։ Նրանց առջևով անցան հաղթական զորավարները[822]։ Կայսրը ասորի հերձվածողներին[823] Թրակիա տեղափոխեց և այնտեղ բնակեցրեց[824]։

[A. M. 6271]

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 4-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մահդիի] 4-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 10-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկետաս պատրիարքի] 14-րդ տարին

Այդ տարի արաբների առաջնորդ Մահդին զայրացած [Ռոմանիա] ուղարկեց Հասանին՝ մավրոֆորներից ու Ասորիքի և Միջագետքի ռազմիկներից բաղկացած մեծաթիվ զորքերով։ Նա իջավ մինչև Դորիլեոն։ Կայսրը զորավարներին կարգադրեց ճակատամարտ չտալ, այլ միայն ապահովել բերդերի անառիկությունը, պաշտպանության համար զորք մտցնել այնտեղ։ Նա յուրաքանչյուր բերդը բարձրաստիճան հրամանատարներ ուղարկեց։ [Զորավարներին] նա կարգադրեց, որ յուրաքանչյուրը երեք հազար ընտիր զինվորներով հետևեն, որ արաբները ապատակ չափռեն, կրակի տան անասունների արոտները և հանդիպած պարենը։ Արաբները Դորիլեոնի շուրջը բանակեցին 15 օր, բայց երբ իրենց պարենը պակասեց, և անասունները սոված մնացին, նրանց մեջ մեծ անկում եղավ։ Արաբները վերադարձին մեկ օր կանգ առան Ամորիոնի առջև, բայց տեսնելով անառիկությունն ու բավականաչափ զորք ունենալը, ոչինչ գլուխ չբերած իրենց երկիրը վերադարձան։

[A. M. 6272]

Կոստանդնուպոլսի պատրիարք Պավղոս[825]։ Աթոռակալեց 5 տարի։

[Հռոմայեցիների Լևոն կայսեր] 5-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մահդիի] 5-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 11-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի արաբների առաջնորդ Մահդին մեծ զորքով ու պատրաստությամբ եկավ Դաբեկոն, իր որդի Ահարոնին[826] Ռոմանիա ուղարկեց, իսկ ինքը վերադարձավ սուրբ քաղաքը[827]։ Նա Մուքեսիասին, մականունը Զելոտես, լիազորեց կազմակերպել քրիստոնյաներին պատկանող ստրուկների փախուստը, ամայացնել սուրբ եկեղեցիները։ Նա եկավ Եմեսա, հայտարարեց, որ ինքը ոչ ոքի խղճի վրա չի բռնանում, միայն անհավատներին է ուզում [մահմեդականացնել], որպեսզի հայտնի դառնան ովքեր են հրեադավան, ովքեր քրիստոնյա, որից հետո նա առանց հապաղելու սկսեց այնպես անաստված կերպով մարդկանց լլկել, ինչպես ո՛չ Լիսիասը, ո՛չ էլ Ագրիկոլաոսը[828] երբևիցե արել էին։ Նա շատերին սպանեց։ Բայց մեր աստծո՝ Քրիստոսի շնորհիվ նրա մոլեգնությունը կանայք հաղթահարեցին, այն էլ նորահավատներ, Եմեսայի սարկավագապետի և Եսայիասի որդու կանայք, որոնք թեև բազում տանջանքների ենթարկվեցին, բայց ամբարշտության առաջ տեղի չտվեցին։ Նրանք խարազանի հազարական հարված ստացան, բազում այլ խոշտանգումների ենթարկվեցին և ի վերջո Քրիստոսից հաղթական պսակին արժանացան։ [Մուքեսիասը] հասավ մինչև Դամասկոս և, քամահրելով արաբների՝ քրիստոնյաներին տված խոստումը, բազում եկեղեցիներ ամայացրեց։ Ինդիկտիոնի 3-րդ տարվա փետրվար ամսի 6-ին Պանրուտյաց[829] կիրակի օրը, մեռավ Կոստանդնուպոլսի պատրիարք Ներքինի Նիկետասը, ծագումով սկլավ։ Պասեքի երկրորդ կիրակին ծագումով կիպրացի, բանիվ ու գործով փառավոր արգո Պավղոս դպիրը, մեծ հարկադրանքի տակ Կոստանդնուպոլսի պատրիարք ձեռնադրվեց. երկրում տիրող հերձվածի պատճառով, նա երկար ժամանակ հրաժարվում էր։ Պասեքի մեջտեղի շաբաթը ձերբակալվեցին նաև Հակոբ պրոտոսպաթարը[830], կուբիկուլարիոսներ ու պարակիմոմենոսներ Պապիասը[831], Ստրատեգիոսը և Թեոփանեսը, նույնպես կուբիկուլարիոսներ Լևոնն ու Թոմման, ինչպես և ուրիշ բարեպաշտ մարդիկ որպես նվիրական սրբապատկերները եր-

կըրպագող։ [Կոստանդին] հալածչի որդի Լևոնը ահա այս ժամանակ լույս աշխարհ հանեց թաքուն պահած իր շարությունը. նա անգթորեն բրածեծ արեց նրանց, մազերը խուզեց և շղթայակապ Մեսե պողոտայով ծանակելուց հետո, Պրետորիոնում բանտարկեց։ Այստեղ իր մահկանացուն կնքեց վերոհիշյալ Թեոփանեսը, որ խոստովանող դարձավ և մարտիրոսի պսակին արժանացավ։ Մյուս բոլորը սրա վախճանից հետո իսկական վանականներ դարձան։ Իսկ Ահարոնը[832] ներխուժելով Արմենիակների բանակաթեմը, ամբողջ ամառը բանակեց Սեմալուոս[833] բերդի առջև, որը գրավեց սեպտեմբեր ամսին՝ պաշտպաններին երաշխիքներ տալով։ Նա Թումամային 50 հազարանոց զորքով Ասիա[834] էր ուղարկել։ Միքայել Լախանոդրակոնը հանդիպեց նրա ասպատակությամբ զբաղված [զորքը] և կարճատև մարտում սպանեց Թումամայի եղբոր։ Ինդիկտիոնի 4-րդ տարվա սեպտեմբեր ամսի 8-ին վախճանվեց Կոստանդնի որդի Լևոնը հետևյալ կերպ։ Լինելով թանկագին քարերի մոլեգին սիրահար, կաթոգին ցանկացավ Մեծ եկեղեցու թագը, որը վերցրեց ու հագավ։ Նրա գլխին կայծուռուցքներ ելան, ունեցավ բարձր ջերմություն և մեռավ, թագավորելով հինգ տարուց վեց օր պակաս։

[A. M. 6273]

Աշխարհի արարչագործության 6273 թ.	Քրիստոսի մարդեղության 773 թ.	Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր 10-ամյա թագավորության 1-ին տարին
Արաբների առաջնորդ Մահդիի 9-ամյա իշխանության 6-րդ տարին	Հռոմի Ադրիանոս պապի 27-ամյա աթոռակալության 12-րդ տարին	Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի 5-ամյա աթոռակալության 2-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 4-րդ տարվա սեպտեմբեր ամսի 8-ին արտասովոր կերպով և աստվածուստ ամենաբարեպաշտ Իրենեին և իր որդի Կոստանդնին թագավորությունն է ընձեռնվում, որպեսզի այս հարցում ևս մարդիկ ապշեն աստծո [նախախնամության] վրա, տեսնելով, թե ինչպես աստված վճռեց այրի կնոջ և որբ տղայի ձեռքով տապալել իր՝ աստծո, նրա սպասավորների և բոլոր եկեղեցիների դեմ ուղղված աստվածամարտ Կոստանդնի ամբարշտությունն ու բռնությունը, ինչպես անցյալում սատանայինը՝ տկար ու անգրագետ ձկնորսների ձեռքով[835], Իշխանության տիրանալուց 40 օր անց (նրա որդին դեռ տասը տարեկան էր)

մեծամեծներից ոմանք խորհուրդ արեցին և որոշեցին աքսորից բերել և կայսր հռչակել նախկին կեսար Նիկեփորին, բայց գործը բացվեց։ Ձերբակալվեցին դրոմոսի լոգոթետ Գրիգորը, Արմենիակների նախկին զորավար Վարդասը[836], էքսկուբիտորների դոմեստիկոս վիկարիոսի սպաթար Կոստանդինը, Դոգեկանեսի դրունգար՝ Ռանգաբեի որդի Թեոփիլակտոսը և շատ ուրիշներ։ [Կայսրուհին] նրանց բրածեծ անելուց և խուզելուց հետո աքսորեց տարբեր շրջաններ։ Իր ամուսնու եղբայրներ կեսարներին և նոբելիսիմոսներին նա խուզեց, բոնի հոգևորական արեց ու ըստիպեց Քրիստոսի ծննդյան տոնին ժողովրդին հաղորդություն տալ։ Նույն օրը կայսրուհին շքախմբով իր որդու հետ եկեղեցի բերեց իր ամուսնու այնտեղից վերցրած թագը՝ արդեն մարգարիտներով զարդարված։ Նա էլպիդիոս պատրիկին Սիկիլիայի զորավար նշանակեց (անցյալում նա այնտեղ զորավարել էր) և փետրվար ամսին ճամփու դրեց։ Ապրիլ ամսի 15-ին նույն էլպիդիոսը կեսարներին համախոհ լինելու մեջ ամբաստանվեց։ Կայսրուհին Թեոփիլոս սպաթարին [Սիկիլիա] ուղարկեց, հանձնարարելով անհապաղ ձերբակալել նրան և իր մոտ բերել։ Բայց սիկիլիացիք հրաժարվեցին հանձնել նրան։ Դրա վրա կայսրուհին զանակոծեց և խուզեց [էլպիդիոսի] կնոջ ու որդիներին և Պրեսորիոնում արգելափակեց։ Հունիս ամսին նա ուղարկեց բոլոր պերատիկա զորքերը՝ հսկելու կլեյսուրները, ուշադիր հետևելու արաբների ռազմերթի դուրս գալը։ Նա զորքերի ընդհանուր հրամանատար նշանակեց ներքինի Հովհաննես սակելլարիոսին, իր մտերիմին։ Իսկ Մահդին Կեբիրի գլխավորությամբ մեծաթիվ զորք ուղարկեց։ Նրանք հանդիպեցին միմյանց Մելոն[837] կոչվող վայրում։ Ճակատամարտում արաբները պարտվում են, նրանցից շատերը սպանվում, իսկ մնացածները խայտառակ եղած վերադառնում։ Այս ժամանակ բարեպաշտներն արդեն համարձակ դարձան, աստծո խոսքը՝ լսելի, փրկվել ցանկացողները կարող էին անարգել հրաժարվել աշխարհիկ կյանքից, աստծո փառաբանությունը երկինք բարձրացավ, վանքերը ոտքի կանգնեցին և ամեն մի բարիք լույս աշխարհ եկավ։ Քանզի մի մարդ Թրակիայի Երկար պարիսպների մոտ գետինը փորելիս, մի տապան գտավ, որը մաքրելուց հետո նրա մեջ պառկած մի մարդ տեսավ։ Տապանի վրա փորագրված էին հետևյալ խոսքերը. «Քրիստոսը կույս Մարիամից է ծնվելու։ Ես հավատում եմ նրան։ Կոստանդին և Իրենե կայսրերի օրոք, ո՜վ արեգակ, դու ինձ դարձյալ կտեսնես»[838]։

[A. M. 6274]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 2-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մահդիի] 7-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 13-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 3-րդ տարին

Այդ տարի Իրենեն ֆրանկների ռեքս Կարուլոսի[839] մոտ Կոնստանս սակելլարիոսին[840] և Մամալոս պրիմիկերիոսին[841] ուղարկեց, որպեսզի [Կարուլոսի] Էրիթրո[842] անունով դատեր կնության խնդրի իր որդի Կոստանդին կայսեր համար։ Համաձայնության գալուց և փոխադարձաբար երդումներ անելուց հետո, այնտեղ թողեցին ներքինի Ելիսայոս նոտարին, որպեսզի նա [Էրիթրոյին] հունարեն գիրն ու լեզուն[843], Հռոմեական կայսրության նիստն ու կացը սովորեցնի։ [Կայսրուհին] մեծ նավատորմիզ զինելով և բանակաթեմերից ընտիր զորքեր ու կարող հրամանատարներ հավաքագրելով, ներքինի Թեոդորոս պատրիկի՝ շատ գործունյա մի մարդու գլխավորությամբ Սիկիլիա ուղարկեց՝ ընդդեմ Էլպիդիոսի։ Բազմաթիվ ճակատամարտերում հաղթող եղան Թեոդորոսի զորքերը, իսկ Էլպիդիոսը դրանից սարսափած, վերցնելով ունեցած գրամները Նիկեփոր դուքսի հետ փոխադրվեց Աֆրիկա։ Անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստանալով, նա անցավ Ալրաբների կողմը, որոնք ընդունելով նրան, նրա հանդեպ վերաբերվում էին ինչպես հռոմայեցիների կայսեր, ստից թագադրեցին նրան՝ կարմիր կոշիկներ հագցրին, գլխին էլ թագ դրեցին։ Երբ հռոմայեցիների զորքը դրանով էր զբաղված, Մահդիի որդի Ահարոնը, մավրոֆորներից, համայն Ասորիքից ու Միջագետքից, անապատից հավաքագրված հսկայական զորքով ու պատրաստությամբ հասավ Խրիսուպոլիս, թողնելով Բունուսոսին Նակոլիան[844] պաշարելու և ապահովելու իր թիկունքը։ Նա 30 հազարանոց զորքով Ասիա ուղարկեց Բուրնիխեին, որը Դարենոս[845] կոչվող վայրում Լախանոդրակոնի գլխավորած Թրակեսիոն բանակաթեմի զորքերին ճակատամարտ տվեց և նրա նույնպես 30 հազար հոգուց բաղկացած զորքից 15 հազարին կոտորեց։ Կայսրուհին Անտոնիոս դոմեստիկոսի գլխավորությամբ տագմաներն ուղարկելով, բռնեց Բանենը[846], ուր և պաշարեց [արաբներին]։ Վերջիններիս մոտ ապաստանեց Բուկելլարների զորավար Տաճատը, քանզի նա ատելությամբ էր լցված դրոմոսի լոգոթետ ներքինի Ստավրակիոս պատրիկի դեմ, որն այն ժամանակ գերա-

գույն հրամանատարն էր և ամեն ինչի տնօրինողը։ [Տաճատի] խորհրդով արաբները հաշտություն խնդրեցին։ Այդ հարցով արաբների մոտ գնացին Ստավրակիոսը, Պետրոս մագիստրոսը և Անտոնիոս դոմեստիկոսը, առանց լրջորեն մտածելու նախապես անձեռնմխելիության երաշխիքներ և նրանց մեծամեծների երեխաներին որպես պատանդ առնելու։ Ահա, առանց ծանր ու թեթև անելու գնալով, նրանք բռնվեցին [արաբների] կողմից ու կապանքների մեջ առնվեցին։ Երկու կողմերն էլ ստիպված հաշտություն կնքեցին, Ավգուստան[847] և Ահարոնը բաղում նվերներ փոխանակեցին և իմիջի այլոց որոշեցին [հռոմայեցիները արաբներին] հարկ վճարեն։ Հաշտության կնքումից հետո [արաբները] հեռացան, թողնելով նաև Նակոլիայի բերդը։ Իսկ Տաճատը ետ ստացավ կնոջ և իր ողջ ունեցվածքը[848]։

[A. M. 6275]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 3-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մահդիի] 8-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 14-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Իրենեն, արաբների հետ հաշտություն կնքելով, հնարավորություն ունեցավ օքսեոս դրոմոսի լոգոթետ[849] Ստավրակիոս պատրիկին մեծ ուժով սկլավական ցեղերի դեմ ուղարկել։ Վերջինս իջավ Թեսաղոնիկե և Հելլադա, բոլորին հնազանդեցրեց ու կայսրության հարկատու դարձրեց։ Նա մուտք գործեց նաև Պելոպոնես և հռոմայեցիների կայսրություն բաղում գերիներ ու ավար բերեց։

[A. M. 6276]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 4-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մահդիի] 9-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 15-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Պավղոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 7-րդ տարվա հունվար ամսին վերոհիշյալ Ստավրակիոսը սկլավների դեմ կատարած արշավանքից վերադարձավ և

ձիարշավարանում հաղթական շքերթ կազմակերպեց։ Նույն՝ ինդիկտիոնի 7-րդ տարվա մայիս ամսին կայսրուհի Իրենէն իր որդու հետ զինական մեծ ուժով գնաց Թրակիա։ Նա իր հետ տարավ գործիքներ ու մոզայիկներ, հասավ մինչև Բերիա[850], հրամայեց [քաղաքը] կառուցել[851] և վերանվանեց Իրենուպոլիս։ Նա միանգամայն անվնաս իջավ մինչև Ֆիլիպպուպոլիս[852] և հանգիստ վերադարձավ, նախապես կառուցելով և Անքիալոսը[853]։ Հենց այդ տարին մեռավ արաբների առաջնորդ Մահդին, որ և Մոհամմեդ։ Իշխանությունն անցավ նրա որդի Մոսեի[854] ձեռքը։ Նույն՝ ինդիկտիոնի 7-րդ տարվա օգոստոս ամսի 31-ին սուրբ և սրբազնագույն պատրիարք Պավղոսը հիվանդության պատճառով հրաժարվեց աթոռից և իջնելով Ֆլորոսի վանքը, վանականի սքեմը հագավ, առանց կայսրուհուն այդ մասին տեղյակ պահելու։ Կայսրուհին, իմանալով դա, տխրագին, իր որդու հետ նրա մոտ գնաց ու բարձրագոչ ասաց. «Ինչո՞ւ այդպես արեցիր»։ Նա արտասվալից պատասխանեց. «Երանի երբեք չնստեի հոգևոր գահին, երբ աստծո եկեղեցին բռնատիրված է, տիեզերական մյուս գահերից բաժանված ու նզովվում է»։ [Իրենէն] հրավիրելով պատրիկներին ու սենատի գլխավորներին, նրանց Պավղոսի մոտ ուղարկեց նրա ասածները լսելու։ Պավղոսն ասաց նրանց. «Քանի չի գումարվել տիեզերական ժողովը և չի ուղղվել ձեր դավանած սխալը, դուք փրկություն չունեք»։ Նրանց հարցին «Զեռնադրության ժամանակ դու ինչո՞ւ ստորագրեցիր սրբապատկերները չերկրպագելու մասին վավերագիրը», նա պատասխանեց. «Հենց դրա համար եմ ողբում ու ապաշխարում, աղաչում աստծուն ինձ չըպատժի որպես հոգևորականի, որ մինչև օրս լռել է, ձեր կատաղությունից սարսափած ճշմարտությունը չի վարդապետել»։ Դրա վրա նա խաղաղությամբ հոգին ավանդեց, կայսրուհուն և քաղաքի բարեպաշտ մարդկանց մեծ սգի մեջ սուզելով։ Քանզի նա արգո այր էր, արտակարգ գթացող, ամենայն ակնածանքի արժանի։ Ե՛վ պետությունը, և՛ կայսրուհին մեծ վստահություն էին տածում դեպի նա։ Այդ օրվանից ահա բոլորը բացահայտ կերպով սկսեցին խոսել սուրբ ու նվիրական պատկերների մասին, տարակուսանք հայտնել նրանց [արգելման] ճշտության շուրջը։

[A. M. 6277]

Արաբների առաջնորդ Մոսե։ Իշխեց 1 տարի։

Կոստանդնուպոլսի պատրիարք Տարասիոս[855]։ Աթոռակալեց 21 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 5-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մոսեի] 1-ին տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 16-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 1-ին տարին

Այդ տարի Իրենե կայսրուհին համայն ժողովրդին Մագնավրայում հավաքելով, ասաց. «Եղբայրներ, գիտե՞ք ինչ արեց Պավղոս պատրիարքը։ Եթե նա կենդանի լիներ, մենք չէինք թողնի նրան հրաժարվել քահանայապետությունից, նկատի ունենալով անգամ այն, թե նա վանականի սքեմն է հագել։ Արդ, քանի որ նա աստծո հաճությամբ վախճանվել է, մի մարդ ընտրենք, որ կարողանա մեզ հովվություն անել, վարդապետական քարոզչությամբ ամրապնդել աստծո եկեղեցին»։ Բոլորը միահամուռ կերպով ասացին, որ այդպիսին լինի միայն ու միայն Տարասիոս ասեկրետը։ Կայսրուհին ասաց նրանց. «Մենք էլ ենք այդպես գտնում, բայց նա հրաժարվում է։ Արդ, թող նա բացատրի, ինչո՞ւ է հակառակվում կայսրուհու և համայն ժողովրդի ընտրության»։ [Տարասիոսը] այսպես արդարացավ ժողովրդին. «Մեր՝ քրիստոնյաներիս ճշմարիտ հավատքի պահապան ու նախանձախնդիր՝ ի փառս աստծո մեր հավատացյալ կայսրերը, մտահոգված լինելով անել այն, ինչ հաճելի է աստծուն և մեր օգտին է, բայց առավել ևս եկեղեցու օգտին, այժմ խելամտորեն կշռադատելով բարեպաշտորեն որոշել են իրենց այս մայրաքաղաքում քահանայապետ առաջադրել ինձ, և հրամայեցին իրենց որոշումը ինձ հայտնել։ Երբ ես ինձ այդ բանին անարժան համարելով և գտնելով, որ ի վիճակի չեմ կրելու, տանելու այդ ծանր լուծը կտրականապես մերժեցի, ինձ հրամայեցին անձնապես ձեր առջև հանդես գամ, քանզի դուք համերաշխ եք այդ որոշման։ Արդ, ո՞վ աստվածավախ, աստծուն հանապազ ձեր սրտում ունեցող, Քրիստոսի՝ մեր ճշմարիտ աստծո անունը կրող քրիստոնյաներ, լսեցե՛ք նվաստիս ու տրուպիս պաշտպանողական կարճ խոսքը։ Ես, ինչպես արդեն ասել եմ մեր բարեպաշտ ու ամեն ինչում ուղղափառ կայսրերին, ձեզ էլ եմ պատճառաբանում, որ վախենում եմ հավանություն տալ ձեր վճռին, աստծուց երկյուղում եմ առանց ծանր ու թեթև անելու ընդառաջ գնալ, որպեսզի մեծ մեղքի մեջ չընկնեմ։ Եթե աստծո ձայնը լսած, երկինքը դպրոց ունեցած, դրախտին ականատես եղած, անճառելի խոսքեր լսած, աստծո անունը հեթանոսների և թագավորների առաջ պաշտպա-

նած աստվածային Պողոս առաքյալը կորնթացիներին գրելով ասաց. «Զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքն անպիտան գտանիցիմ»[856], ապա ես, այս աշխարհում ապրող աշխարհականս, կայսերական պաշտոնյաս, ինչպե՞ս կարող եմ առանց զննելու, լրջորեն կշռադատելու, թռիչք կատարել պատրիարքական բարձունքը։ Ես շատ փոքր եմ այդ սարսափելի ու հանդուգն քայլի համար։ Իսկ վախենալուս և մերժելուս պատճառը հետևյալն է. տեսնում եմ Քրիստոսի, մեր աստծո վեմի[857] վրա հիմնարկված եկեղեցին բաժան-բաժան ու տրոհված, տեսնում եմ, թե ինչպես դուք այսօր մի բան եք ասում, վաղը՝ մի այլ, ինչպես են մեզ հակադրվում արևելքի մեր հավատակից քրիստոնյաները, որոնց համախոհ են արևմտականները, թե ինչպես մենք նրանց բոլորից օտարացել ենք և դարձել նրանց մշտական նզովքի առարկան։ Նզովքը սարսափելի բան է, նա հեռացնում է աստծուց, երկնից թագավորությունից, տանում դեպի խավարն արտաքին[858]։ Եկեղեցու օրենքն ու կանոնը կապ ու կռիվ չգիտե, և ինչպես որ նա խոստովանում է մեկ մկրտություն, մեկ հավատք[859], ապա և եկեղեցական գործերում միահամուռություն պիտի լինի։ Աստծո համար չկա ավելի հաճելի և ընդունելի բան, քան մեր միությունը մեկ ընդհանրական եկեղեցու մեջ, ինչպես որ մենք, եղբայրներ, այդ բանը խոստովանում ենք նաև մեր ճշմարիտ հավատո հանգանակում։ Արդ, խնդրում եմ, և համոզված եմ, որ դուք ևս այդպես եք մտածում, քանզի գիտեմ, որ աստվածավախ մարդիկ եք, ամենաբարեպաշտ և ուղղափառ մեր կայսրերին տիեզերական ժողով գումարել, որպեսզի մեկ աստծո արարածներս միանանք, երրորդություն պաշտողներս նրա նման միացած, միաբան ու հավասար լիննենք, մեր գլխի՝ Քրիստոսի ներդաշնակ ու համերաշխ մարմինը, սուրբ հոգին դավանողներս ոչ թե իրար դեմ, այլ միասին լիննենք, ճշմարտության կողմնակիցներս՝ լիննենք համախոհ ու միաբան, մեր միջև վեճ ու թշնամություն չլինի, որպեսզի ամեն մի բանականությունից բարձր գերազանցվող խաղաղությունն աստծո պահպանի մեզ։ Այսպիսով, եթե ուղղափառության պաշտպան մեր կայսրերը հրամայում են ընդունել իմ խնդրանքը, ես կտամ իմ համաձայնությունը, կկատարեմ նրանց հրամանը, ձեր ընտրության ընդառաջ կգնամ։ Հակառակ դեպքում ես հրաժարվում եմ, քանզի չեմ ուզում նզովքի ենթարկվել և դատապարտվել մեր տիրոջ Հիսուսի Քրիստոսի՝ արդար դատավորի դատաստանի օրը, երբ ո՛չ թագավորը, ո՛չ իշխանները, ո՛չ էլ բաղմությունը մարդկանց չեն կարող ինձ փրկել։ Ինչպես որ ձեզ հաճելի է, եղբայրներ, իմ պաշտպանողականին, ավելի ճիշտ՝ իմ խնդրանքին պատասխան տվեք»։ Բոլորը

սիրով ունկնդրեցին և համաձայնվեցին ժողով գումարել։ Տարասիոսը վերստին դիմեց ժողովրդին ու ասաց. «Լևոն կայսրը[860] բնաջնջեց սրբապատկերները, իսկ ժողովը[861], երբ այն գումարվեց, սրբապատկերները բնաջնջված գտավ։ Արդ, քանի որ նրանք կայսեր ձեռքով ոչնչացվեցին, դարձյալ քննության ենթակա հարց է, նրանք վճռեցին, ինչպես կարծում էին, ոչնչացնել եկեղեցու հնուց եկող մի կարգը։ Ինչպես առաքյալն է ասում, «Բանն աստուծոյ ոչ եթէ կապեալ իցէ»[862]։ Նույն՝ ինդիկտիոնի 8-րդ տարվա դեկտեմբեր ամսի 25-ին մեր սուրբ Հայր Տարասիոսը Կոստանդնուպոլսի պատրիարք ձեռնադրվեց։ Նա իր քաղկեդոնականությունը հաստատող փաստաթղթերը և իր հավատքի լիբելլոսը Հռոմ ուղարկեց և Ադրիանոս պապի հավանությանն արժանացավ։ Կայսրուհին էլ իր կողմից պապին գրեց և խնդրեց նամակ ուղարկի և ներկայացուցիչներ՝ ժողովին ներկա լինելու համար։ Պապը իր եկեղեցու տնտես Պետրոսին և սուրբ Սաբայի վանքի վանահայր Պետրոսին ուղարկեց, արգո, բոլոր առաքինություններով օժտված մարդկանց։ Կայսրուհին ու պատրիարքը մարդիկ ուղարկեց նաև Ալեքսանդրիայի ու Անտիոքի [պատրիարքներին] (արաբների հետ հենց նոր կնքված հաշտությունը դեռ ուժի մեջ էր)։ Անտիոքից բերեցին պատրիարքի նախկին սինկելլոս Հովհաննեսին, գործով ու խոսքով ականավոր ու հռչակավոր մի մարդու, սրբությամբ լի, իսկ Ալեքսանդրիայից՝ Թովմային, ջերմեռանդ ու ամենաբարեպաշտ մի մարդու, որ հետագայում դառնալով Իլլիրիկոնի մեծաքաղաք Թեսաղոնիկեի արքեպիսկոպոսը, իր գործունեությամբ աչքի ընկավ։

[A. M. 6278]

Արաբների առաջնորդ Ահարոն[863]։ Իշխեց 23 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 6-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 1-ին տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 17-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 2-րդ տարին

Այդ տարի մեռավ արաբների առաջնորդ Մոսեն[864]. նրա իշխանությունն անցավ եղբոր՝ Ահարոնի ձեռքը։ Սա քրիստոնյաների գլխին բազում փորձանքներ բերեց։

Նույն այդ տարին կայսրերը հրավիրեցին իրենց տիրապետության տակ գտնվող բոլոր եպիսկոպոսներին։ Ինչպես ասվեց վերևում, տեղ հասան և Հռոմի Ադրիանոս պապի ուղարկած թղթերն ու ներկայացուցիչները, ինչպես և Անտիոքի ու Ալեքսանդրիայի պատրիարքների։ Ինդիկտիոնի 9-րդ տարվա օգոստոս ամսի 7-ին մայրաքաղաքի Սուրբ առաքելոց տաճարում ժողով գումարվեց[865]. սկսեցին ընթերցել սուրբ գրքերը, համեմատել իրար։ Կայսրերը դիտողի դերում էին կատեխումենայում[866]։ Սխոլարների, էքսկուբիտորների և մյուս տագմաների զինվորները իրենց հրամանատարների դրդմամբ, իրենց չար ուսուցչի վարդապետությամբ հափշտակված, մերկացնելով սրերը հարձակվեցին նրանց վրա ու սպառնացին սպանել քահանայապետին, ուղղափառ եպիսկոպոսներին և վանահայրերին։ Կայսրուհին իր մոտ կանգնած հավատարիմ մարդկանց օգնությամբ փորձեց նրանց դուրս հանել, բայց ապարդյուն, դեռ ավելին, նրանք սկսեցին անպատվել։ Պատրիարքը տեղից բարձրանալով ուղղափառ եպիսկոպոսների ու վանականների հետ մտավ խորանը, իսկ շարափառության կողմնակից եպիսկոպոսները նրանց վրա տալով գոչեցին «Մենք հաղթեցինք»-ը[867]։ Բայց աստծո շնորհիվ այդ կատաղածներն ու տմարդները ոչ ոքի վնաս չհասցրին։ Ահա այդպես ժողովը ցրվեց և յուրաքանչյուրն իր տեղը գնաց։

[A. M. 6279]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 7-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 2-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 18-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 3-րդ տարին

Ինդիկտիոնի 10-րդ տարվա սկզբին՝ սեպտեմբեր ամսին կայսրուհին դրոմոսի լոգոթետ Ստավրակիոս պատրիկին Թրակիա ուղարկեց, այդ պահին այնտեղ գտնվող պերատիկա զորքերի մոտ, և համոզեց այդ պահին այնտեղ գտնվող պերատիկա զորքերի մոտ, և համոզեց աջակցել իրեն, Իրենեին, ոճրագործ Կոստանդնի զինվորագրած և դասատիարակած ամբարիշտ մարտիկներին քաղաքից դուրս հանելու համար։ Կայսրուհին, ձևացնելով, որ իբր արշավանք է կազմակերպում արևելյան շրջանները ներխուժած արաբների դեմ, համայն կայսերական սպասավորությունն ու կոհորտը քաղաքից դուրս հանեց մինչև Մալագինա[868]։ Դրա վրա պերատիկա զորքերը մտան քաղաք ու գրավեցին այն, իսկ

կայսրուհին [դուրս եկած զորքերին] դիմելով, ասաց. «Ուղարկեք ինձ ձեր զենքերը, քանզի ձեր կարիքն այլևս չունեմ»։ Ասված նրանց խելքը առավ և նրանք հանձնեցին զենքերը։ Ահա դրանից հետո կայսրուհին նրանց ընտանիքներին նավ նստեցնելով քաղաքից արտաքսեց, հրամայելով յուրաքանչյուրին գնալ իր ծննդավայրը։ Սեփական զորք հավաքագրելով և նրանց վրա կարգելով իրեն հավատարիմ հրամանատարների, նա մայիս ամսին երկրի բոլոր շրջանները մարդիկ ուղարկեց և եպիսկոպոսներին Բյութանիայի Նիկիա քաղաքը ժողովի հրավիրեց։ Ամբողջ ամառվա ընթացքում բոլորը հավաքվեցին Նիկիայում։ Կայսրուհին Հռոմի և արևելքի [պատրիարքների] ներկայացուցիչներին ետ չէր ուղարկել[869], նրանք քաղաքում էին գտնվում։ Ինդիկտիոնի 11-րդ տարվա սեպտեմբեր ամսի 9-ին, կիրակի օր, օրվա 5-րդ ժամին սուրբ պատարագի ժամանակ արևի ամբողջական խավարում եղավ։

[A. M. 6280]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 8-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 3-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 19-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 4-րդ տարին

Այդ տարի Կոստանդնուպոլսի սրբազնագույն Տարասիոս պատրիարքը գնաց Նիկեացվոց քաղաքը, որտեղ գումարվեց 350 եպիսկոպոսների 7-րդ սուրբ և տիեզերական ժողովը[870]։ Ընդհանրական եկեղեցին վերստացավ իր վաղեմի փայլը։ Ժողովը դավանանքի մեջ ոչ մի նորամուծություն չկատարեց, այլ աներեր պահպանեց սուրբ և երանելի հայրերի դրույթները, մերժեց նոր հերձվածը, իսկ երեք սուտանուն պատրիարքներին՝ Անաստասիոսին, Կոստանդնին ու Նիկետասին, նրանց բոլոր համախոհներին նզովեց։ Եպիսկոպոսների առաջին համաժողովն ու նիստը կայացավ ինդիկտիոնի 11-րդ տարվա հոկտեմբեր ամսի 11-ին, Նիկիայի սուրբ Սոֆիայի մայր տաճարում։ Նոյեմբեր ամսին բոլորը եկան մայրաքաղաք։ Կայսրերը եպիսկոպոսների հետ Մագնավրայում բաղմած, ընթերցվեց որոշումը[871], նրա տակ ստորագրեցին կայսրն ու նրա մայրը, որով նրանք հաստատեցին ուղղափառությունն ու սուրբ հայրերի հինավուրց դրույթները, ապա պատվասիրելով հոգևորականներին, ճամփու դրեցին։ Աստծո եկեղեցին խաղաղվեց, թեպետև բանսար-

կուն իր գործավորների միջոցով չի դադարում որոմ սերմանելուց։ Աստծո եկեղեցին, սակայն, իր դեմ մղվող պայքարում միշտ հաղթող է։

[A. M. 6281]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 9-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 4-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 20-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարվա սեպտեմբեր ամսին արաբները ավարառության ելան Ռոմանիայի դեմ և ներխուժեցին Անատոլիկոն բանակաթեմը՝ Կոպիդնադոն[872] կոչվող վայրը։ Հռոմայեցիների զորավարներն հավաքվելով, մարտնչեցին նրանց դեմ, բայց պարտվեցին։ Շատերն ընկան, այդ թվում և [քաղաքից] արտաքսված բազմաթիվ սխոլարիոսներ։ Սպանվեցին նաև Անատոլիկոնի նշանավոր տուրմարխ Դիոգենեսը[873], Օպսիկիոնի հրամանատարներ։ Կայսրուհի Իրենեն ֆրանկների հետ կնքած ամուսնական պայմանագիրը չեղյալ հայտարարելով, Թեոփանես պրոտոսպաթարին ուղարկեց և Արմենիակների [բանակաթեմի] Ամնիա [վայրից] աղջիկ բերեց, անունը Մարիա, որին իր որդի Կոստանդին կայսեր հետ ամուսնացրեց։ Վերջինս իր նախկին նշանած՝ ֆրանկների ռեքս Կարուլոսի դստեր նկատմամբ տածած սիրո պատճառով չէր ուզում և շատ տխրեց։ Հարսանյաց հանդեսը կայացավ ինդիկտիոնի 12-րդ տարվա նոյեմբեր ամսին։ Թրակիայի զորավար Ֆիլետոսը գնաց Ստրիմոն[874], բայց առանց ժամապահություն հաստատելու բանակելով, ենթարկվեց բուլղարների անակնկալ հարձակման և սպանվեց ուրիշ շատերի հետ միասին։ Իրենեն ստրատիոտիկոնի լոգոթետ[875] Հովհաննես սակելլարիոսին Մեծ Լոնգոբարդիայի նախկին ռեքս Թեոդոտոսի[876] հետ Լոնգոբարդիա ուղարկեց, հնարավորության դեպքում Կարուլոսի դեմ կռվելու և նրանից ոմանց անջատելու։ Նրանց միացավ Սիկիլիայի զորավար Թեոդորոս պատրիկը։ Հովհաննեսը պատերազմում ֆրանկների ձեռքը գերի ընկավ և չարաչար սպանվեց։

[A. M. 6282]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր և նրա մոր] 10-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 5-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 21-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 6-րդ տարին

Այդ տարի կայսրերի բարեպաշտության դեմ նախանձով լցված սատանան նենգ մարդկանց միջոցով մոր ու որդու միջև թշնամություն սերմանեցին։ Նրանք մորը հավատացրին, թե իրենք իբր գուշակության միջոցով իմացել են, որ «Աստված որդուդ չի սահմանել թագավորության տիրանալ, այն քոնն է, աստվածուստ քեզ տրված»։ Կինարմատը խաբվեց, բացի այդ լինելով իշխանատենչ, հավատաց, որ իսկապես այդպես է։ Նա չհասկացավ, որ նրանք այդ քայլին դիմեցին, քանզի իրենք էին ցանկանում իշխանության տիրանալ։ Կայսեր քսան տարին արդեն լրացել էր, նա թիկնեղ, շատ կարող մարդ էր, բայց տեսնում էր, որ իր ձեռքում ոչ մի իշխանություն չկա։ Նա վշտանում էր տեսնելով, որ ամեն ինչ լոգոթետ Ստավրակիոս պատրիկի ձեռքում է, որ բոլորը նրան են դիմում, իսկ կայսեր մոտ հաճախել ոչ ոք չի խիզախում։ Խորհրդակցելով իր փոքրաթիվ մտերիմների, այդ թվում Պետրոս մագիստրոսի, Թեոդորոս Կամուլիանոս պատրիկի և Դամիանոս պատրիկի հետ, նա որոշեց ձերբակալել [Ստավրակիոսին], աքսորել Սիկիլիա և մոր հետ տիրել թագավորության։ Ինդիկտիոնի 13-րդ տարվա փետրվար ամսի 9-ին զարհուրելի երկրաշարժ եղավ, ոմանք չէին համարձակվում տանը գիշերել, բոլորը պարտեզներում և բացօթյա տեղերում վրաններ խփելով, այնտեղ էին մնում։ Կայսրուհին իր որդու հետ սուրբ Մամաս[877] գնաց։ Երբ այդ մասին Ստավրակիոսին տեղյակ պահեցին, նա Ավգուստային որդու դեմ դրդեց։ Կայսրուհին ձերբակալելով կայսեր մտերիմներին, բոլորին դանահարեց ու խուզեց և նրա պայլ[878] Հովհաննես պրոտոսպաթարի հետ, մականունը Պիկրիդիոս, կատոտիկա[879] շրջանները՝ մինչև Սիկիլիա աքսորեց, Պետրոս մագիստրոսին ծանակելուց հետո տնային կալանքի մեջ պահեց։ Նմանապես և Թեոդորոս Կամուլիանոս պատրիկին։ Իսկ Դամիանոս պատրիկին դանահարելուց ու խուզելուց հետո աքսորեց Ապոլլոնիաս[880] բերդը։ Նա բրածեծ արեց նաև որդուն [Կոստանդնին], գլխին բաղում լուտանքներ թափեց ու բաղում օրեր թույլ չտվեց տեղից շարժվել։ Նա զինվորներից երդում պահանջեց, թե

«Քանի դու կենդանի ես, մենք չենք ընդունի որդուդ իշխանությունը»։ Բոլորն էլ այդպես երդվեցին, քանզի ոչ ոք չէր համարձակվում ընդհանրապես հակաճառել։ Արաբների նավատորմիղը շարժվեց Կիպրոսի վրա։ Կայսրուհին այդ մասին նախօրոք տեղյակ, ինքը ևս ի մի հավաքեց հռոմեական բոլոր նավերը և նրանց դեմ ուղարկեց։ Երկու զորավարներն էլ գալով մինչև Մյուրա, շրջանցեցին Խելիդոնիոնների թերակղզին և մտան Ատալիայի ծոցը։ Արաբները շարժվելով Կիպրոսից, հանդիպեցին պարզ [անհողմ] եղանակի և բաց ծովում դեգերում էին։ Երբ ցամաք ելան, զորավարները նկատեցին նրանց և ճակատ կազմելով մարտի պատրաստվեցին։ Կիբիրեոտների զորավար Թեոփիլոսը, մի աժդահա և շատ կարող մարդ, խիզախեց բոլորից առաջ դուրս գալ։ Կռվի բռնվելով, նա ընկավ [թշնամիների] ձեռքը, որոնք Ահարոնի մոտ տարան։ Վերջինս նրան առաջարկեց դավաճան լինել և արժանանալ անցողիկ պարգևների։ Թեոփիլոսը մերժեց, նրան է՛լ ավելի ստիպեցին, բայց երբ նա դարձյալ տեղի չտվեց, սրի քաշվեց ու դարձավ փառապանծ նահատակ։

[A. M. 6283]

Աշխարհի արարչագործության 6283 թ.	Քրիստոսի մարդեղության 783 թ.	Հռոմայեցիների Կոստանդին կայսեր 7-ամյա թագավորության 1-ին տարին
Արաբների առաջնորդ Ահարոնի 23-ամյա իշխանության 6-րդ տարին	Հռոմի Ադրիանոս պապի 27-ամյա աթոռակալության 22-րդ տարին	Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի 21-ամյա աթոռակալության 7-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 14-րդ տարվա սեպտեմբեր ամսին երդվեցնողները հասան Արմենիակների բանակաթեմը, բայց այդ բանակաթեմի զորքերը մերժեցին երդում տալ և ասել. «Քանի դու կենդանի ես, քո որդին մեր վրա չի թագավորի», ոչ էլ «Իրենե անունն ենք հիշում Կոստանդնից առաջ», այլ ասում ենք այնպես, ինչպես սկզբից ընդունեցինք՝ «Կոստանդնի և Իրենեի»։ Կայսրուհին ուղարկեց վիգլայի դրունգար Ալեքսիոս սպաթարին՝ մականունը Մուսուլեմ[881], ձերբակալելու նրանց, բայց [արմենիակները] նրան բռնեցին և առաջնորդ հռչակեցին, իսկ իրենց զորավար Նիկեփոր պատրիկին հսկողության տակ առնելով, կայսր ճանաչեցին միմիայն Կոստանդնին։ Երբ այդ մասին իմացան մընացած բանակաթեմերի զորքերը, իրենց զորավարներին քշեցին և նրանք ևս միակ կայսր հռչակեցին Կոստանդնին։ Ոհ, նենգ սատանայի

նենգագործություն։ Ինչպե՞ս է նա բազում հնարքներով ջանում կործանել մարդկությունը։ Նրանք ովքեր 15 տարի առաջ գրավոր այդ սարսափելի երդումն էին տվել և այդ փաստաթուղթը դրել սուրբ սեղանին, թե Իրենեի կենդանության օրոք չեն ընդունի նրա որդու իշխանությունը, այժմ մոռանալով այդ մասին, Կոստանդնին էին ինքնակալ հայտարարում, չհասկանալով թշվառականները, որ չպետք է երդումը փոխել, քանզի որպես կանոն երդմնափոխությունից երդմնազանցությունն է հետևում, իսկ երդմնազանցությունը ուրացումն է աստծու։ Ինդիկտիոնի 14-րդ տարվա հոկտեմբեր ամսին բանակաթեմերի [զորքերը] հավաքվեցին Ատրոյայում[882] և միահամուռ կերպով պահանջեցին Կոստանդին կայսեր, որի քսան տարին էր ընթանում։ Իրենեն ժողովրդի պոռթկումից սարսափած, արձակեց Կոստանդնին, որին ինքնակալ հռչակեցին, իսկ նրա մորը՝ գահընկեց հայտարարեցին։ Կայսրը Միքայել Լախանոդրակոնին և իր պայլ Հովհաննես պրոտոսպաթարին անհապաղ ուղարկեց և Արմենիակների [զորքերին] երդվեցրեց իր մոր Իրենեին չճանաչել կայսրուհի։ Նա [Արմենիակների] զորավարի պաշտոնում հաստատեց Ալեքսիոսին։ Կայսրը դեկտեմբեր ամսին քաղաք վերադառնալով, բրածեծ արեց ու խուզեց Ստավրակիոսին և նրան Արմենիակների բանակաթեմն աքսորեց՝ ի բավարարումն նրանց։ Կայսրն աքսորեց նաև իր մոր մտերիմ ներքինի Աետիոս պրոտոսպաթարին, ինչպես և նրա բոլոր առտնին ներքինիներին, իսկ զգայաղուրկ մորը արգելափակեց իր, Իրենեի, կառուցած Էլեֆթերիոսի պալատում, որտեղ նա թաքցրած ուներ բազում դրամ։ Նույն ամսին հրդեհ ծագեց և պատրիարքարանի Թոմայիտես կոչվող տրիկլինը, Քվեստորիոնը և բազում այլ շենքեր՝ մինչև Միլիոն հրո ճարակ դարձան։ Ապրիլ ամսին Կոստանդինը բուլղարների դեմ արշավեց, եկավ Պրոբատոն[883] կոչվող բերդը, սուրբ Գեորգի առվակը և հանդիպելով Բուլղարիայի տեր Կարդամին[884], երեկոյան մոտ փոքր ճակատամարտ տեղի ունեցավ, հռոմայեցիները վեհերոտեցին, դիշերով փախուստի դիմեցին և անփառունակ վերադարձան։ Բուլղարներն էլ վախեցած վերադարձան։

[A. M. 6284]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 2-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 7-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 23-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարվա սեպտեմբեր ամսին կայսրը արաբների դեմ արշավեց, Ամորիոնից ելավ գնաց Կիլիկիայի Տարսոն [քաղաքը]։ Հասնելով Ջրաղուրկ աշտարակները[885], դարձյալ ձեռնունայն վերադարձավ՝ ինդիկտիոնի 15-րդ տարվա հոկտեմբեր ամսին։ Հունվար ամսի 15-ին կայսրը իր մոր և պաշտոնավոր բազում մարդկանց խնդրանքով [Իրենեին] կայսրուհի հռչակեց և նրա անունը հիշեց իր անվան հետ միասին, ինչպես անցյալում՝ «Կոստանդնի և Իրենեի»։ Բոլորը ենթարկվեցին, բացի Արմենիակների բանակաթեմի զորքերից, որոնք հակառակվելով ապստամբում են, պահանջում Ալեքսիոսին, որը մի փոքր առաջ իրենց զորավարն էր դարձել։ Տվյալ պահին կայսրը նրան խոսք տալով իր մոտ էր կանչել, պատրիկի պատվաստիճանը շնորհել, բայց և իր մոտ պահել։ Կայսրը նկատի ունենալով այդպիսի համառ պահանջը, ինչպես և Ալեքսիոսի մասին տարածված որոշ ասեկոսներ, թե նա կայսր կդառնա, բրածեծ անելով և մազերը խուզելով, Պրետորիոն նետեց։ Հուլիս ամսին նա բուլղարների դեմ արշավեց, կառուցեց Մարկելլոն բերդը[886]։ Հուլիս ամսի քսանին Բուլղարիայի տեր Կարդամը հավաքեց իր համայն զորքը և եկավ ամրությունները։ Կայսրը եռանդով լցված և սուտ գուշակների խոսքին հավատացած, թե ինքը կհաղթի, հախուռն ու անկանոն կերպով կռվի բռնվեց, գլխովին տանուլ տվեց և փախուստի դիմելով քաղաք վերադարձավ։ Նա շատերին կորցրեց, ոչ միայն շարքային զինվորների, այլև հրամանատարական կազմից, այդ թվում մագիստրոս Միքայել Լախանոդրակոնին, Վարդաս պատրիկին, Ստեփանոս Խամեաս պրոտոսպաթարին, նաև զորավարներ Նիկետասին և Թեոգնոստոսին, բազում վասիլիկոսների և սուտ գուշակ ու աստեղաբաշխ Բագարատին[887]։ Հենց սա էր գուշակել, թե նա կհաղթի։ Բուլղարները ձեռք գցեցին նաև նրանց տուլգոնը, դրամն ու ձիերին, ինչպես և կայսեր վրանները՝ կայսերական ողջ սպասավորությամբ հանդերձ։ Տագմանները հավաքվելով քաղաքում, որոշեցին կայսր հռչակել նախկին կեսար Նիկեփորին։ Կոստանդինը, իմանալով այդ մասին, իր պապ Կոստանդնի երկու որդիներին էլ սուրբ Մամաս բերեց, Նիկեփորին կուրացրեց, իսկ Խրիստոֆորի, Նիկետասի, Անթիմոսի և Եվդոկիմոսի լեզուն կտրեց։ Նա կուրացրեց նաև վերասացյալ Ալեքսիոս[888] պատրիկին, հավատ ընծայելով մոր, ինչպես և վերոնշյալ Ստավրակիոս պատրիկի խորհուրդներին, որ եթե չկուրացնեն, նրան կայսր կհռչակեն։ Դատավճիռը կայացավ ինդիկտիոնի 15-րդ տարվա օգոստոս ամսին, շաբաթ օրը, 9-րդ ժամին։ Բայց աստծո դատաստանը անպատիժ չթողեց այդ անիրավ արարքը.

հինգ տարի անց, նույն ամսին, նույն շաբաթ օրը, նույն այդ Կոստանդինը կուրացվում է իր հարազատ մոր կողմից։

[A. M. 6285]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 3-րդ տարին	*[Արաբների առաջնորդ Ահարոնի] 8-րդ տարին*
[Հռոմի Ադրիանոս պապի] 24-րդ տարին	*[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 9-րդ տարին*

Այդ տարի արմենիակները[889]*, լսելով Ալեքսիոս պատրիկի կուրացվելու մասին, իրենց զորավար Թեոդորոս Կամուլիանոս պատրիկին բանտ նետեցին։ Կայսրը, իմանալով դա, Կոստանդին Արտաշիր պրոտոսպաթարին, ինչպես և Բուկելլարների զորավար Խրիսոխերին մյուս բանակաթեմերի զորքերով ուղարկեց նրանց հնազանդեցնելու։ Արմենիակները մարտ տվեցին և բռնելով նրանց երկուսին էլ կուրացրին։ Երկու կողմից էլ շատերն սպանվեցին։ Դա տեղի ունեցավ ինդիկտիոնի 1-ին տարվա նոյեմբեր ամսին, իսկ դեկտեմբեր ամսի 25-ին, գիշերվա երկրորդ ժամին երկինքը որոտաց, կայծակ ընկավ ու հրդեհեց ոսկեասեղնագործների կայսերական արհեստանոցը։ Սուրբ Զատկից հետո կայսրը մյուս բոլոր բանակաթեմերի զորքերով արշավեց արմենիակների դեմ։ Ինդիկտիոնի 1-ին տարվա մայիս ամսի 26-ին, Հոգեգալստյան կիրակի օրը, նա մարտ տվեց։ [Արմենիակների] հետ եղած հայերի*[890] *դավաճանության պատճառով կայսրը հաղթանակ տարավ, ձերբակալեց նրանց, մահապատժի ենթարկեց նրանց տուրմարխ Անդրոնիկոս սպաթարին, տուրմարխ Թեոփիլոսին և Սինոպի եպիսկոպոս Գրիգորին, իսկ մնացածներին տարբեր պատիժների ենթարկեց ու գույքը բռնագրավեց։ Հուլիս ամսի 24-ին, երկուշաբթի օրը նրանց բերդից շղթայակապ բերված հազար հոգու Վլախեռնայի դարբասով քաղաք մտցրեց և նրանց դեմքին թանաքով «ենենգ արմենիակոս» բառերը դաջելով, ցրիվ տվեց Սիկիլիա և մյուս կղզիները։ Արմենիակներին դավաճանած հայերը, շարժանանալով կայսեր որևէ շնորհքին, կամախ բերդը արաբներին հանձնեցին։*

[A. M. 6286]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 4-րդ տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 9-րդ տարին
[Հռոմի Ադրիանոս պապի] 25-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 10-րդ տարին

Այս՝ ինդիկտիոնի 2-րդ տարվա հոկտեմբեր ամսին արաբները երաշխիքներով առան Թեբասա բերդը[891] և ըստ իրենց խոստման թույլ տվեցին նրա հրամանատարներին իրենց երկիրը գնալ։

[A. M. 6287]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 5-րդ տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 10-րդ տարին
[Հռոմի Ադրիանոս պապի] 26-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 11-րդ տարին

Այդ տարի կայսեր իշխանության ձգտող մայրը կայսրին ժողովրդի աչքից գցելու համար նրան իր կնոջ դեմ լարեց, և ինդիկտիոնի 3-րդ տարվա հունվար ամսին նա նրան բռնի միանձնուհի դարձրեց։ Ապրիլ ամսին կայսրը արաբների դեմ արշավեց, իսկ մայիս ամսի 8-ին Անուսան կոչվող վայրում նրանց մի զորամասի հետ կռվի բռնվեց, հաղթանակ տարավ և մինչև գետը հալածական արեց։ Ապա իջավ Եփեսոս, աղոթեց [Հովհան] Աստվածաբանի [տաճարում], իսկ տարեկան տոնակատարության առթիվ հարյուր լիտր ոսկու չափով տաճարի վճարած կոմմերկիոնը[892] վերացրեց՝ սուրբ առաքյալ, ավետարանիչ Հովհաննեսի տաճարի կարիքները հոգալու համար։ Օգոստոս ամսին կայսրը կուբիկուլարեա Թեոդոտեին ավգուստա թագադրեց և ապօրինի կերպով նշանվեց նրա հետ։

[A. M. 6288]

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 6-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 11-րդ տարին

[Հռոմի Ադրիանոս պապի] 27-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 12-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 4-րդ տարվա սեպտեմբեր ամսին կայսրը սուրբ Մամասի պալատում ամուսնացավ Թեոդոտեի հետ։ 40 օր հարսանիք արեցին։ Իսկ նույն՝ ինդիկտիոնի 4-րդ տարվա ապրիլ ամսին, շաբաթվա 7-րդ օրը, գիշեր ժամանակ Կրետե կղզում ամենասարսափելի երկրաշարժ եղավ։ Մայիս ամսի 4-ին շատ սոսկալի երկրաշարժ եղավ նաև Կոստանդնուպոլսում։ Բուլղարիայի տեր Կարդամը կայսեր հայտնեց, թէ «Ինձ պախտ վճարիր, թե չէ կգամ մինչև Ոսկե դուռը և կամայացնեմ Թրակիան»։ Կայսրը մի թաշկինակի մեջ ձիու աղբ լցրեց և նրան ուղարկեց, ասելով. «Ինչ պախտի որ դու արժանի ես, ուղարկեցի։ Մեր մարդ ես, չեմ ուզում, որ նեղություն քաշես մինչև այստեղ գալու։ Ես ինքս կգամ մինչև Մարկելլոն, դու դուրս արի, թող կատարվի այն, ինչ ասված է կամենում»։ Կայսրը հրաման արձակեց և պերատիկա բանակաթեմերից հավաքելով իր զորքերը, եկավ մինչև Վերսինիկիա, իսկ Կարդամը՝ մինչև անտառավետ Աբրոլեբա[893], բայց վեհերոտեց ու մնաց ծմակում։ Կայսրը, գոտեպնդելով իր զինվորներին, գնաց մինչև անփայտ Աբրոլեբան և 17 օր Կարդամին էր կանչում։ Բայց նա չհամարձակվեց գնալ և փախուստի դիմելով, վերադարձավ իր տեղը։ Նույն տարին արաբներն էլ եկան մինչև Ամորիոն, բայց ապարդյուն, միայն շրջակայքից գերիներ քշելով, վերադարձան։

Նույն տարին Սակկուդիոնի վանահայր Պլատոնը հրաժարվեց հաղորդվել Տարասիոս պատրիարքի հետ, քանզի վերջինս կայսեր հաղորդություն էր տվել, թույլատրել էր վարդապետին կայսեր կնոջ՝ Մարիային միանձնուհի դարձնել, իսկ Կաթարոսների վանահայր աբբա Հովսեփին կայսեր Թեոդոտեի հետ պսակել։ Իմանալով դա, կայսրը, սխոլերի դոմեստիկոս Վարդան պատրիկի և Օպսիկիոնի կոմես Հովհաննեսի միջոցով Պլատոնին քաղաք բերեց ու պալատի հրեշտակապետի տաճարի խուցում արգելափակեց, իսկ մնացած վանականներին՝ նրա եղբորորդիներով[894] հանդերձ բրածեծ անելով, Թեսաղոնիկե աքսորեց։ Կայսեր

մայրը տուժածներին էր պաշտպանում, քանզի նրանք իր որդուն էին հակադրվում և նրան խայտառակում։

[A. M. 6289]

Հռոմի Լևոն պապ[895]։ Աթոռակալեց 8 տարի։

[Հռոմայեցիների Կոստանդին կայսեր] 7-րդ տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 12-րդ տարին
[Հռոմի Լևոն պապի] 1-ին տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 13-րդ տարին

Այդ տարվա սեպտեմբեր ամսին կայսրը իր մոր հետ գնաց Պրուսայի ջերմուկները բուժվելու։ Ինդիկտիոնի 5-րդ տարվա հոկտեմբեր ամսի 7-ին կայսրը որդի ունեցավ, որին Լևոն կոչեց։ Կայսրը [որդու ծննդյան] լուրն առաջին պես, մորը ջերմուկներում թողնելով, կայսերական ամբողջ սպասավորությամբ ու իշխանավորներով հապճեպ քաղաք վերադարձավ։ Կայսեր մայրը հարմար առիթ ձեռք գցելով, բանակցություններ մեջ մտավ տագմաների զորահրամանատարների հետ, խոստումներով ու նվերներով կաշառեց նրանց՝ տապալելու համար իր որդուն, որպեսզի միահեծան ինքը թագավորի։ Մի մասին անձամբ ինքը համոզեց, մյուս մասին՝ իր մարդիկ և այդպես բոլորին իր կողմը ձգելով, հարմար առիթի էր սպասում։ Հռոմում վախճանված Ադրիանոս պապի տեղ ձեռնադրվում է Լևոնը, շատ պատվական ու հարգարժան մի անձնավորություն։ Մարտ ամսին կայսրը արաբների դեմ դուրս եկավ, իր հետ ունենալով Ստավրակիոս պատրիկին և իր մոր մնացած մտերիմներին, ինչպես նաև երկու բանակաթեմերից 20 հազար ընտիր թեթևազեն զինվորներ։ Ստավրակիոսի մարդիկ, տեսնելով զորքի ու կայսեր եռանդը, վեհերոտեցին, քանզի պատերազմում հաղթելու դեպքում կայսեր դեմ նյութված դավադրությունը հօդս կցնդեր։ Նրանք պահակատեղիի զինվորներին կաշառելով համոզեցին ստել ու ասել, որ իբր սարակինոսները հեռացել են։ Կայսրը այդ առթիվ շատ տխրեց ու ձեռնունայն մտավ քաղաք։ Մայիս ամսի 1-ին մեռավ նրա որդի Լևոնը, որին կայսրը շատ ողբաց։ Ինդիկտիոնի 5-րդ տարվա հունիս ամսի 17-ին, հինգերորդ օրը, ձիարշավական մրցումներից վերադառնալիս, սուրբ Մամասի մոտ տագմաների վերոհիշյալ [հրամանատարները] կայսեր վրա շարժվեցին՝ ձերբակալելու համար։ Կայսրը իմանալով այդ մա-

սին, մտավ իր խելանդիոնը, անցավ Պյուլե, նպատակ ունենալով ապաստանել Անատոլիկոն բանակաթեմում։ Իր հետ էին նաև մոր մտերիմները, որոնց սակայն [կայսրը] չգիտեր։ Կայսեր կինն էլ դուրս եկավ մինչև Տրիտոն։ Կայսեր մոտ գտնվող մոր մտերիմները խորհուրդ արեցին ու ասացին. «Եթե նրա շուրջը զորք հավաքվի, մենք չենք կարողանա նրան ձեռք գցել, իսկ մեզ էլ հնարավոր չի լինի նրանից թաքնվել և նա մեզ կոչնչացնի»։ Կայսեր մայրն իր հերթին էլեֆթերիոսի պալատում հավաքեց տագմաների զորահրամանատարներին, որոնց հետ ինքը նախապես պայմանավորվել էր, ապա ինքն էլ եկավ պալատ։ Իմանալով զորքի՝ կայսեր սատար կանգնելու մասին, շատ վեհերոտեց, մինչև անգամ մտածեց որդու մոտ եպիսկոպոսներ ուղարկել և նրանից երաշխիքներ ստանալով, մի կողմ քաշվել[896]։ Նա ծածուկ նամակ էլ գրեց կայսեր մոտ գտնվող իր մտերիմներին, թե «Եթե դուք որևէ ձևով ինձ չըհանձնեք նրան, ապա ես ինձ հետ ունեցած ձեր պայմանավորվածության մասին կայսեր կհայտնեմ»։ Նրանք վախեցած, աղոթելու պահին նրան բռնեցին, խելանդիոն նստեցնելով շաբաթ առավոտյան, օգոստոս ամսի 15-ին քաղաք բերեցին և բանտարկեցին Ծիրանի դահլիճում[897], որտեղ ծնվել էր նա։ Ժամը 9-ի մոտ իր մոր և վերջինիս խորհրդատուների վճռի համաձայն նրան սարսափելի ու անբուժելի ձևով կուրացրին, մեռցնելու միտումով։ 18 օր արևը խավարեց, չշողացին նրա ճառագայթները, որի պատճառով նավերը մոլորված դես ու դեն էին դեգերում։ Բոլորն ասում էին ու խոստովանում, որ արեգակը չի լուսավորում՝ կայսեր լույսը խավարելու պատճառով։ Ահա այս ճանապարհով իշխանությունը ձեռք է գցում նրա մայր Իրենեն։

Նույն տարին Հռոմում էլ երանելի Ադրիանոս պապի ազգականները ժողովրդին Լևոն պապի դեմ ոտքի հանեցին և բռնելով նրան՝ կուրացրին։ Բայց չկարողացան կատարելապես խավարեցնել նրա աչքի լույսը, քանզի կուրացնողները մարդասեր լինելով, խնայեցին նրան։ Լևոն պապն ապաստանեց ֆրանկների ռեքս Կարուլոսի մոտ, որը դաժանորեն պատժեց նրա ոսոխներին և վերականգնեց նրան իր աթոռին։ Այդ ժամանակվանից սկսած Հռոմն անցավ ֆրանկների գերիշխանության ներքո։ Իսկ պապը փոխհատուցելով Կարուլոսին, նրան Պետրոս առաքյալի տաճարում հռոմայեցիների կայսր թագադրեց[898], գլխից մինչև ոտքերը յուղով օծեց, թագավորական ծիրանին ու թագը հագցրեց՝ ինդիկտիոնի 9-րդ տարվա դեկտեմբեր ամսի 25-ին։

[A. M. 6290]

Հռոմայեցիների Իրենե կայսրուհու երկրորդ թագավորություն[899], թագավորեց 5 տարի։

[Հռոմայեցիների Իրենե կայսրուհու] 1-ին տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 13-րդ տարին
[Հռոմի Լևոն պապի] 2-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 14-րդ տարին

Այդ տարի Իրենեն տիրանալով իշխանության, խրիսուպոլսի վանահայր Դորոթեոսին և Մեծ եկեղեցու խարտոֆիլաքս Կոստանդնին անհապաղ Կապադովկիան ու Գալատիան ասպատակող Աբիմելեքի մոտ ուղարկեց, հաշտության շուրջը բանակցություններ վարելու, բայց ապարդյուն։ Հոկտեմբեր ամսին մի քանի խռովարարներ համոզում են աստվածամարտ Կոստանդնի[900] Թերապիայի պալատում[901] բանտարկված որդիներին փախչել Մեծ եկեղեցին, իբրև թե իրենց կյանքի ապահովության երաշխիքներ խնդրեն։ Նրանք մտադիր էին այդ պատրվակով մեկն ու մեկին կայսր հռչակել։ Եկեղեցում բազում ժողովուրդ հավաքվեց, բայց ներքինի Աետիոս պատրիկը վրա հասավ, նրանց խոսք տալով դուրս հանեց, բայց խոսքը չհարգելով, Աթենք աքսորեց։ Կայսրուհու մտերիմներ Ստավրակիոս և Աետիոս պատրիկները հակառակվեցին միմյանց, այն աստիճան, որ չէին թաքցնում իրենց թշնամությունը. երկուսն էլ մտադիր էին կայսրուհու մահից հետո իշխանությունն իրենց ազգականներին տալ։

[A. M. 6291]

[Հռոմայեցիների Իրենե կայսրուհու] 2-րդ տարին	[Արաբների առաջնորդ Ահարոնի] 14-րդ տարին
[Հռոմի Լևոն պապի] 3-րդ տարին	[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 15-րդ տարին

Այդ տարի Աբիմելեքը Ռոմանիայի վրա արշավեց, նա մի թեթևազեն ավազակախումբ ուղարկեց, որն իջավ մինչև Մալագինա[902] և ձեռք գցելով Ստավրակիոսի ախոռներում գտնվող ձիերը, կայսերական հանդերձանքը, անվնաս վերադարձավ։ Մնացած արաբները իջան մինչև Լյուդիա և բազում գերիներ տարան։ Նրանց մի այլ ավազակախումբ էլ հարձակվեց Օպսիկիոնի կոմես Պավլոս պատրիկի, նրա համայն զորքի

ու օպտիմատների[903] վրա և մեծ ջարդ տվեց, վերցրեց նաև նրանց տուլ-
գոնն ու վերադարձավ։ Ինդիկտիոնի 7-րդ տարվա մարտ ամսին Բել-
զետիայի[904] սկլավենների իշխան Ակամերոսը, հելլադացիների դրդմամբ
ուզեց ազատել Կոստանդնի որդիներին և նրանցից մեկն ու մեկին կայսր
հռչակել։ Երբ այդ մասին իմացավ Իրենե կայսրուհին, Կոստանդին Սա-
բանտապեխոս պատրիկի մոտ վերջինիս որդուն՝ Թեոփիլակտոս սպա-
թարիոսին ուղարկեց (որը նաև իր, Իրենեի, եղբորորդին էր)[905], նրա մի-
ջոցով բոլորին կուրացրեց և խափանեց նրանց՝ իր դեմ նյութված դավա-
դրությունը։ Սուրբ Զատկի երկրորդ օրը կայսրուհին չորս պատրիկների՝
Թրակեսիոն [բանակաթեմի] զորավար Վարդանի, Թրակիայի զորավար
Սիսիննիոսի, սխոլերի դոմեստիկոս Նիկետասի և Կոստանդին Բոյիլա-
սի[906] ուղեկցությամբ չորս սպիտակ ձիերով լծված կառքի վրա բազմած
սուրբ Առաքելոց տաճարից դուրս եկավ՝ առատ դրամ բաշխելով։ Մայիս
ամսին կայսրուհին շատ ծանր հիվանդացավ և ներքինիների գզվռտոցն
է՛լ ավելի սաստկացավ։ Աետիոսը, դաշնակցելով սխոլերի դոմեստիկոս
Նիկետաս պատրիկի հետ, ուժգին ընդդիմացավ Ստավրակիոսին, նրանք
հավատացնում էին կայսրուհուն, թե Ստավրակիոսը իշխանության վրա
աչք ունի։ Կայսրուհին գազազած, Հիերիոսի պալատում սաստիկ պար-
սավեց նրան, որակելով որպես խռովություններ ու ապստամբություն-
ներ նյութող, որ շուտով իր, Ստավրակիոսի, գլխին փորձանք է բերելու։
Ստավրակիոսը իրեն արդարացրեց և գլուխը փրկեց։ Բայց վերոհիշյալ
պատրիկների՝ Աետիոսի և Նիկետասի դեմ ոխ կապեց։

[A. M. 6292]

[Հոռոմայեցիների Իրենե կայսրուհու] 3-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 4-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 15-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 16-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 8-րդ տարվա փետրվար ամսին վերոհիշյալ Ստավ-
րակիոսը մայրաքաղաքում գտնվող սխոլարիոսներին ու էքսկուբիտոր-
ներին՝ հրամանատարներով հանդերձ դրամով ու նվերներով կաշառելով,
խռովության ու ապստամբության դրդեց։ Բարեպաշտ Իրենեն Հուստի-
նիանոսի տրիկլինում ժողով գումարեց և բոլոր զինվորականներին ար-
գելեց մերձենալ Ստավրակիոսին։ Այդպիսով նա փոքր մեղմեց իրավի-
ճակը։ Իսկ վերոհիշյալ Աետիոսն ու Նիկետասը ուրիշ մի քանի հոգու
հետ պայքարում էին Ստավրակիոսի դեմ, որը սրտի կաթված ունեցավ։

Նա փրփրացող արյուն փսխեց՝ կրծքավանդակից ու թոքերից հոսած։ Բժիշկները գտան, որ նա կմահանա։ Բայց շողոքորթ ու տխմար մարդիկ, այդ թվում և բժիշկներ ու մի քանի վայ վանականներ ու բանդագուշակներ, մինչև նրա վախճանի օրն անգամ (որը տեղի ունեցավ նույն ինդիկտիոնի 8-րդ տարվա հունիս ամսին, երեքշաբթի օր), երդումներով հավատացնում էին, թե կապրի ու կթագավորի։ Ստավրակիոսը դրա հուսով տարված, Կապադովկիայում[907] Աետիոսի դեմ ապստամբություն էլ կազմակերպեց, բայց որի բռնկման մասին կենդանությանը արժանի չեղավ լսել։ Այն բռնկվեց իր մեռնելուց երկու օր հետո։ Ապստամբները ձերբակալվեցին և աքսորի ու այլ պատիժների ենթարկվեցին։

[A. M. 6293]

[Հռոմայեցիների Իրենե կայսրուհու] 4-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 16-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 5-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 17-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 9-րդ տարվա դեկտեմբեր ամսի 25-ին ֆրանկների ռեքս Կարուլոսը թագադրվեց Լևոն պապի կողմից։ Նա որոշել էր Սիկիլիայի դեմ նավատորմիղ ուղարկել, բայց այդ մտքից հրաժարվեց, քանզի գտավ, որ նախընտրելի է Իրենեի հետ ամուսնանալ։ Այդ հարցով նա հաջորդ՝ ինդիկտիոնի 10-րդ տարին դեսպաններ ուղարկեց։ Ինդիկտիոնի 9-րդ տարվա մարտ ամսին Իրենե բարեպաշտը բյուզանդացիներին բաշխեց քաղաքային հարկերը, թեթևացրեց Աբիդոսի և Հիերոնի[908], այսպես կոչված, կոմմերկիոնները[909], բաղում այլ բարերարություններ կատարելու հաճույքն ունեցավ։

[A. M. 6294]

[Հռոմայեցիների Իրենե կայսրուհու] 5-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 17-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 6-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 18-րդ տարին

Այդ տարի Աետիոս պատրիկը ճողոպրելով Ստավրակիոսից և իրեն ապահով զգալով, ջանում էր իշխանությունն իր եղբոր ձեռքը տալ։ Նա

նրան Թրակիայի և Մակեդոնիայի մոնոստրատեգոս նշանակեց, իսկ ինքը՝ իր ղեկավարության տակ ուներ պերատիկա բանակաթեմերը՝ Անատոլիկոնն ու Օպսիկիոնը։ Նա այն աստիճան մեծամտացավ, որ իշխանավորներին քամահրում էր, նրանց բանի տեղ չէր դնում։ Վերջիններս շատ զայրացած, որոշեցին կայսրուհու դեմ ապստամբություն բարձրացնել և գործի անցան։ Այդ միջոցին Իրենեի մոտ ժամանեցին Կարուլոսի և Լևոն պապի դեսպանները, խնդրելով նրան ամուսնանալ Կարուլոսի հետ և այդ ձևով միավորել Արևելքն ու Արևմուտքը։ Իրենեն մտադիր էր ընդունել այդ առաջարկը, եթե դրան արգելք չկանգներ բազմից հիշատակված Աետիոսը. նա Իրենեի պարադինաստևոնն[910] էր և ծրագրում էր իշխանությունն իր եղբոր հաջողացնել[911]։

[A. M. 6295]

Հռոմայեցիների կայսր Նիկեփոր[912]։ Թագավորեց 9 տարի։

[Հռոմայեցիների Նիկեփոր կայսեր] 1-ին տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 18-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 7-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 19-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 11-րդ տարվա հոկտեմբեր ամսի 31-ին, գիշերվա 4-րդ ժամին, լույս երկուշաբթի օր, գենիկոնի լոգոթետ Նիկեփոր պատրիկը բռնակալեց ամենաբարեպաշտ Իրենե ավգուստայի դեմ։ Այդ բանը աստված թույլատրեց մեր անասելի ու անթիվ մեղքերի համար։ Նրան գործակցում էին սխոլերի դոմեստիկոս Նիկետաս պատրիկը, նրա եղբայր Սիսիննիոս պատրիկը՝ նենգամիտ ու երդմնադրուժ Տրիֆիլլիոսների ընտանիքից։ Նրանց հետ էին նաև Լևոն Սերանտապեխոս պատրիկը, Մուսուլակի որդի Գրիգոր պատրիկը, պատրիկ և քվեստոր Թեոկտիստոսը, Պետրոս պատրիկը, որոնք խաբեությամբ իրենց կողմը քաշեցին նաև տագմաների զորահրամանատարներից ոմանց։ Նրանք տիրեցին Խալկե կոչվող դռան, պահակներին հեշտությամբ խաբեցին ու հավատացրին, թե իրենց կայսրուհին է ուղարկել հենց այդ Նիկեփորին կայսր հռչակելու, քանզի Աետիոս պատրիկը ճնշում էր գործում իր վրա իր՝ Աետիոսի, եղբայր Լևոնին կայսր հռչակելու։ Պահակները հավատ ընծայեցին այդ ստին և իրենք էլ բռնակալին կայսր հռչակեցին։ Դրանից հետո նույն այդ պատրիկները եկան Մեծ պալատ, մտան ներս և այնտեղից մի քանի աննշան մարդկանց ու ստրուկների ամբողջ քաղաքով մեկ

ուղարկեցին և կես գիշերից առաջ հռչակումը հրապարակեցին։ Պատրիկները էլեֆթերիոսի պալատի վրա հսկողություն սահմանեցին, քանզի այդ պահին կայսրուհին այնտեղ էր գտնվում։ Վաղ առավոտյան նրանք մարդ ուղարկեցին, կայսրուհուն բերեցին և Մեծ պալատում արգելափակեցին, որից հետո գնացին Մեծ եկեղեցի՝ ստահակին թագադրելու։ Քաղաքի համայն բնակչությունը այնտեղ հավաքվեց, բոլորը կատարվածից դժգոհ էին, անիծում էին և՛ թագադրողին, և՛ թագադրվողին, և՛ այդ բանին հավանություն տվողներին։ Բարեպաշտ, աստծո ճանապարհով ընթացող մարդիկ ապշել էին աստծո վճռի վրա, թե ինչպես նա թույլ տվեց, որ ուղղափառության համար մաքառող ու մարտիրոսացած կնոջ գահընկեց անի ինչ որ խոզարած։ Իրենց արծաթասիրությունից դրդված Նիկեփորին էին միացել իր՝ կայսրուհու ամենամտերիմ մարդիկ,խոսքը ներքինի պատրիկ Լևոն Սինոպցի սակելլարիոսի, աստվածատյաց Տրիֆիլլիոսների և վերևում հիշված պատրիկների մասին է, որոնք հենց Իրենեի տված առատ նվերներից անչափ հարստացել էին։ Նրանք բաղում անգամներ կայսրուհու հետ ճաշի էին նստել, քծնել նրան, սարսափելի երդումներով հավաստիացրել, թե իրենց համար աշխարհի ամենակարևոր բանը նրա նկատմամբ իրենց տածած սերն է։ Ուրիշները կատարվածից ապշած, իրենց աչքերին չէին հավատում, կարծում էին, թե երազի մեջ են։ Իսկ իրազեկ մարդիկ երանի էին տալիս անցած լավ օրերին, ողբում բռնատիրության իրենց գլխին բերելիք փորձանքների համար, հատկապես նրանք, որոնք արդեն բռնակալի նենգամտության համը անցյալում մի քիչ առել էին։ Մի խոսքով, բոլորին համակել էր տրտմությունն ու անմխիթարական վհատությունը։ Չեմ ուզում տխուր բաներով խոսքս երկարացնել։ Այդ միջոցին տարօրինակ կերպով փոխվեց և եղանակը, այն դարձավ մռայլ ու խավար, աշուն ժամանակ սաստիկ ցուրտ արեց, որը պարզ վկայությունն էր Նիկեփորի ապագա բարբարության, նրա պատճառելիք անտանելի տառապանքների, հատկապես իրեն օգնածների նկատմամբ։ Հաջորդ օրը մի քանի պատրիկների հետ միասին նա գնաց կալանքի տակ առնված կայսրուհու մոտ, իրեն հատուկ կեղծավորությամբ նրան հավաստիացրեց օգտակար լինելու իր պատրաստակամությունը (որով նա շատերին էր խաբել), բացատրեց, թե իր կամքին հակառակ են իրեն գահ բարձրացրել, որ իբր ինքը ոչ մի ցանկություն չուներ իշխանության տիրանալու։ Նա անիծում էր իրեն թագավորեցնողներին, կայսրուհու դեմ դավադրություն կազմակերպողներին։ Նրանց նա մատնիչ Հուդային էր նմանեցնում, որն ընթրիքից հետո դավաճանեց Տիրոջ, ցույց տալիս, որ նրանք ամեն ինչում Հուդա-

16—949

յին են նմանվել։ Նա պնդում էր, թե սիրում է սև կոշիկներ հագնել, հակառակ կայսերական ընդունված կարգի[913]։ Նա նենգորեն հավատացնում էր Իրենին, երդվում, որ կատարելապես կապահովի նրա հանգիստը, ինչպես վայել է ստրկին տիրուհու հանդեպ, որ նրա գահընկեցությանը չի հաջորդելու որևէ փորձանք։ Նա խորհուրդ էր տալիս կայսերական գանձերից ոչ մի բան իրենից չթաքցնի, դատապարտում էր արծաթասիրության ախտը, որն իբր ինքը տանել չի կարող։ Բայց անհագը շատ էր տառապում այդ ախտից, իր ամբողջ հույսը հենց ոսկուն կապելով։ Իմաստուն և աստվածասեր Իրենեն, հակառակ որ կին լինելով անակնկալ փոփոխությունից պետք է ազդված լիներ, այդուհանդերձ դիմելով երեկվա երդմնազանց ստրկին և այսօրվա նենգ, խռովարար ու լպիրշ բռնակալին, արիաբար ու խոհեմաբար ասաց. «Ես, ա՜յ մարդ, աստծուն եմ պաշտում, որ ինձ, որբիս, բարձրացրեց, անարժանիս գահի արժանացրեց։ Իմ գահընկեցության պատճառը ես ինձ եմ համարում և իմ մեղքերը։ Ես աղաղակում եմ, թող ամեն ինչում և ամեն ձևով օրհնյալ լինի Տիրոջ անունը, անունը միակ արքայից արքայի, տեարց տիրոջ, հենց նրան եմ ես վերագրում քո հաջողությունը, քանզի հավատացած եմ առանց նրան ոչինչ չի լինում։ Ինչպես այժմ պարզվեց, քո դեմ եղած և ինձ հաճախ զեկուցված ամբաստանությունները քո մասին ճշմարիտ էին, դու այդ լավ գիտես, և եթե ես այդ առթիվ քո դեմ ատելությամբ լցվեի, ինձ դժվար չէր քեզ ոչնչացնել։ Բայց մի կողմից հավատալով քո երդումներին և մյուս կողմից քեզ խնայելով, իմ բազմաթիվ մտերիմների խոսքին ականջ չկախեցի, այն ժամանակ աստծուն ապավինեցի, աստծուն, որի միջոցով են թագավորում թագավորները և երկրի վրա տիրություն անում տերերը։ Արդ, ես երկրպագում եմ քեզ որպես բարեպաշտի և աստծո ընտրյալի, որպես կայսեր և խնդրում խնայել անզորիս, հատկացնել ինձ իմ կառուցած էլեֆթերիոսի տունը՝ ի մխիթարություն իմ անօրինակ դժբախտության»։ Նա պատասխանեց. «Եթե ուզում ես կատարվի քո ցանկությունը, ապա երդվիր ինձ հանուն համայն աստվածային զորության, որ կայսերական գանձերից և ոչ մի բան չես թաքցնելու և ես կկատարեմ քո խնդրանքը, քեզ համար կապահովեմ լիակատար հոգատարություն և անդորր»։ Նա երդվեց նվիրական ու կենարար խաչափայտի վրա ու ասաց. «Ես քեզանից չեմ թաքցնի մի օբոլոս[914] անգամ»։ Նա այդպես էլ արեց։ Նիկեփորը հասնելով իր նպատակին, նրան իսկույն Իշխանաց կղզին աքսորեց. իր՝ Իրենեի կառուցած վանքը։ Դա կատարվեց հենց այն ժամանակ, երբ քաղաքում էին գտնվում Կարուլոսի դեսպանները, նրանց աչքի առաջ։ Այդ ամեն ինչ լափո-

ղը իշխանության տիրանալով չկարողացավ մի քանի օր անգամ երկերեսանիորեն թաքցնել իր բնածին վատությունն ու արծաթասիրությունը։ Իբրև թե անիրավության առաջն առնել ջանալով, Մագնավրայում նենգ ու անիրավ դատարան գումարեց։ Բռնակալի նպատակը, ինչպես պարզվեց, ոչ թե աղքատներին արդարն հատուցելն էր, այլ այդ դատարանի միջոցով բոլոր իշխանավորներին պատվազրկելն ու ձերբակալելը, ամեն ինչ իր ձեռքում կենտրոնացնելը։ Նա այդպես էլ արեց։ Բայց տեսնելով, որ բոլորը իրենից դժգոհ են և երկյուղելով, որ նրանք հանկարծ հիշելով բարեպաշտ Իրենեի բարեգործությունները, իշխանությունը դարձյալ նրան կտան, անողորմը, նոյեմբեր ամսին, սաստիկ սառնամանիքի պայմաններում, անգթաբար Լեսբոս կղզին աքսորեց, խիստ հսկողության տակ դրեց, կարգադրեց, որ ոչ ոքի թույլ չտան եռբևիցե նրան տեսության գալու։ Ապրիլ ամսի 30-ին վախճանվեց Նիկետաս Տրիֆիլլիոսը. պատմում են, որ նրան Նիկեփորը թունավորեց։ Մայիս ամսի 4-ին, հինգշաբթի օրը, Նիկեփորը գնաց Քաղկեդոնի արվարձանը, մի շատ հեզիկ ու հանգիստ ձի նստեց, բայց աստծո նախախնամությամբ ձին իր վրայից նրան ցած գլորեց և աջ ոտքը ջարդվեց։ Հուլիս ամսի 19-ին, չորեքշաբթի օրը, ժամը 1-ին, Անատոլիկոնի զորավար Վարդան պատրիկը, մականունը Թուրք[915], պերատիկա բանակաթեմերի[916] կողմից կայսր հռչակվեց։ Նա թեև կտրականապես հրաժարվում էր ծիրանին հագնել, բայց նրանց վրա ազդել չկարողացավ։ Նա իջավ մինչև Խրիսուպոլիս[917], 8 օր շրջեց քաղաքի շուրջը[918], բայց քաղաքացիներից չընդունվելով, վերադարձավ Մալագինա։ Աստծուց վախենալով և շուշենալով իր պատճառով քրիստոնյաների կոտորած լինի, նա դիմեց Նիկեփորին և նրանից իր կյանքի անվտանգության ու գույքի ապահովության մասին գրավոր երաշխիքներ ստացավ, դրանց տակ ստորագրեցին նաև սրբազնագույն Տարասիոս պատրիարքը և բոլոր պատրիկները։ Ահա դրանից հետո նա իր բոլոր մտերիմներից գաղտնի, սեպտեմբեր ամսի 8-ին, կեսգիշերին փախավ, իջավ Բյութանիայի Կիոս [քաղաքը], Հերակլիոսի վանքը և գտնելով կայսեր ուղարկած խելանդիոնը, մազերը խուզեց, հագավ վանականի սքեմը և նավ նստելով, գնաց Պրոտե կոչվող կղզին, որտեղ ինքը վանք էր կառուցել։ Նա հավատացած էր, որ Նիկեփորը, այդ ուխտադրուժը, չի խախտի իր տված սարսափելի երդումը, իրեն ոչ մի վնաս չի հասցնի։ Սակայն կայսրը նախ գրավում է նրա ողջ ունեցվածքը, ապա պատրվակ գտնելով, ձերբակալում բանակաթեմերի բոլոր զորավարներին ու կալվածատերերին, ոմանց նաև մայրաքաղաքում, իսկ համայն բանակն էլ առանց ռոճիկի թողնում։ Ո՞վ կարող է ըստ արժանվույն պատմել մեր մեղքերի հա-

մար աստծո թույլտվությամբ այդ օրերում նրա գործած արարքների մասին։ Ինդիկտիոնի 11-րդ տարվա օգոստոս ամսի 9-ին Լեսբոսում աբսորի մեջ վախճանվեց կայսրուհի Իրենեն, որի մարմինը փոխադրվեց Իշխանաց կղզին և ամփոփվեց նրա կառուցած վանքում։

[A. M. 6296]

[Հռոմայեցիների Նիկեփոր կայսեր] 2-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 19-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 19-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 20-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 12-րդ տարվա դեկտեմբեր ամսին Նիկեփորը իր որդի Ստավրակիոսին Մեծ եկեղեցում ձեռամբ սրբազնագույն պատրիարք Տարասիոսի կայսր թագադրեց, թեև նա դեռևս նման պատվի արժանի չէր ո՛չ իր արտաքինով, ո՛չ իր ֆիզիկական ու մտավոր կարողություններով։ Ոչ մի ժամանակ և ոչ մի հարցում արդարությունը չհարգած Նիկեփորը իր համախոհ ու համախորհ մի քանի լիկառնացիների՝ ավելի ճիշտ գայլ-մարդկանց[919] հրամայեց գիշերով Պրոտե կղզին գնալ և որպես թե առանց իր գիտության, կուրացնեն Վարդանին, որից հետո ապաստանեն եկեղեցում[920]։ Հրամանը գործադրվեց, և այդ արարքը պատրիարքին ու սենատին, աստվածավախ բոլոր մարդկանց մեծ ցավ պատճառեց։ Իսկ անօրինագույն Նիկեփոր կայսրը ձևացնելով, որ ուզում է [ոճրագործ] լիկառնացիներից վրեժ լուծել, երդվեց սպանել նրանց, նա, ով ամեն ինչ և միշտ ցուցադրական էր անում, և ոչ ինչպես հաճելի է աստծուն։ Բոլոր ապօրինություններով հանդերձ այդպիսի հատկությամբ էլ էր օժտված, որով գահին տիրանալուց առաջ էլ շատերին խարդավանեց։ Բայց ովքեր քաջ գիտակ էին նրա գործելու այդ եղանակին, նրանց համար նա շատ ծիծաղելի էր։ Նա անչափ անամոթությամբ հավիտյանս մոայլված ամենապիղծ մռութը այդ դեպքի առթիվ ամբողջ յոթ օր դուրս չհանեց կայսերական ննջասենյակից, ուր կեղծավորաբար լաց էր լինում, թեև արդարև կնոջ պես լացկան էր։ Անպետք ու կեղծավոր մարդկանցից շատերը հենց այդպես լացկան են լինում։ Բայց շատերն իմացան նրա ինչ լինելը։ Օգոստոս ամսին նա արաբների դեմ արշավեց, նրանց Փոյուգիայի Կրասոսում[921] հանդիպեց և մարտ տալով, պարտվեց։ Նա մեծ կորուստներ ունեցավ, քիչ էր մնացել, որ ինքն էլ գերի ընկներ, եթե մի քանի քաջ հրամանատարներ մի կերպ չփրկեին նրան դժվար կացությունից։

[A. M. 6297]

[Հռոմայեցիների Նիկեփոր կայսեր] 3-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 20-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 9-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Տարասիոս պատրիարքի] 21-րդ տարին

Այդ տարի Պարսկաստանում ապստամբություն բռնկվեց և արաբների առաջնորդը գնաց ապստամբներին խաղաղեցնելու։ Իսկ Նիկեփորը հարմար առիթ գտնելով, վերականգնեց Գալատիայի Անկյուրան, Թեբասան և Անդրասոսը[922]։ Նա Ասորիք ավարառու զորք ուղարկեց, որը, սակայն, ոչինչ չկատարած վերադարձավ. ընդհակառակը, նա մեծ կորուստներ ունեցավ։

[A. M. 6298]

Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկեփոր[923], Աթոռակալեց 9 տարի։

[Հռոմայեցիների Նիկեփոր կայսեր] 4-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 21-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 10-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկեփոր պատրիարքի] 1-ին տարին

Այդ՝ ինդիկտիոնի 14-րդ տարվա փետրվար ամսի 18-ին Կոստանդնուպոլսի սրբազնագույն Տարասիոս պատրիարքը առոք փառոք վախճանվեց։ Նրա աճյունը փոխադրվեց Պոնտոսի Սուենոն և պասեքի առաջին շաբաթվա չորեքշաբթի օրը ամփոփվեց իր կողմից կառուցված վանքում։ Ապրիլ ամսի 12-ին, Զատկի մեծ կիրակի օրը համայն ժողովրդի, կղերի, ապա և կայսրերի ընտրությամբ նախկին ասեկրետ Նիկեփորը սրբազնագույն պատրիարք ձեռնադրվեց։ Ստուդիոսի վանքի[923*] վանահայրեր Պլատոնն ու Թեոդորոսը, սակայն, Նիկեփորի ձեռնադրության հավանություն չտվեցին, դեռ ավելին, նրանք համառությամբ նրա դեմ դուրս եկան, որոշելով պառակտում առաջացնել։ Նրանք պատճառաբանում էին, թե աշխարհականն իրավունք չունի իսկույն եպիսկոպոս դառնալ։ Նիկեփոր կայսրն ուզեց նրանց քաղաքից արտաքսել, բայց որոշ մարդկանց խորհրդով հրաժարվեց այդ մտքից։ Նրանք ասացին, թե պատրիարքի ձեռնադրությունը վերոհիշյալ մարդկանց կարգալուծության և Թեոդորոսին ենթակա շուրջ 700 վանականների վանքի լուծարքի գնով գովելի բան չէ։ Բայց իրականում եկեղեցու համար այդ ձեռնադրությունը օտա-

րոտի չէր, ոչ էլ նորահնար, անցյալում շատ ուրիշ նախկին աշխարհականներ արժանավայել կերպով եպիսկոպոսի[924] պաշտոնը վարեցին, ծառայելով աստծուն։

Նույն տարին արաբների առաջնորդ Ահարոնը մավրոֆորներից, Ասորիքից, Պաղեստինից և Լիբիայից հավաքագրված 300 հազարանոց մեծ զորքով արշավեց Ռոմանիայի վրա։ Գալով Տիանա, նա այնտեղ իր ամբարշտության տուն՝ [մզկիթ] կառուցեց։ Պաշարմամբ նա անառիկագույն Հերակլեսի բերդը[925] գրավեց, ինչպես և Թեբասան, Մալակոպեան[926], Սիդերոպալոսն[927] ու Անդրասոսը։ Նա 60 հազարանոց ավարառու զորք ուղարկեց, որն իջնելով Անկյուրա, թալանեց[928] այն ու վերադարձավ։ Նիկեփոր կայսրը վախով ու տարակուսանքով համակված, իրեն կորցրած արշավանքի գնաց՝ քաջագործություններ երկնելու։ Նա բազում հաղթանակներ տանելուց հետո, Ահարոնի մոտ [դեսպանություն] ուղարկեց՝ Սինադայի մետրոպոլիտին, Գուլեոնի վանահայր Պետրոսին և Ամաստրիսի [վանքի] տնտես Գրիգորին, հաշտություն առաջարկելով։ Նրանք երկար բանակցություններից հետո հաշտություն կնքեցին, որի համաձայն [կայսրությունն արաբներին] տարեկան 30 հազար դահեկան է վճարելու, դրան գումարած երեք դահեկան որպես գլխահարկ կայսեր համար և երեք էլ՝ իր որդու։ Ահարոնը, ստանալով դա, անչափ բերկրացավ ու հրճվեց, ավելի քան եթե նա բյուր տաղանդ [ոսկի] ստացած լիներ, քանզի գտնում էր, որ նա այդ ձևով իրեն ենթարկեց Հռոմեական կայսրությունը։ Նրանք համաձայնության եկան նաև չվերակառուցել իրենց գրավված բերդերը։ Բայց հենց որ արաբները վերադարձան, [Նիկեփորն] անհապաղ վերակառուցեց այդ բերդերը և ամրացրեց։ Ահարոնն իմանալով դա, վերստին զորք ուղարկեց և գրավեց Թեբասան, Կիպրոս նավատորմիղ ուղարկեց, քանդեց եկեղեցիները, կիպրացիներին էլ տեղահան արեց, բազում ավարառություն կատարեց և վերացրեց խաղաղությունը։

[A. M. 6299]

[Հռոմայեցիների Նիկեփոր կայսեր] 5-րդ տարին	*[Արաբների առաջնորդ Ահարոնի] 22-րդ տարին*
[Հռոմի Լևոն պապի] 11-րդ տարին	*[Կոստանդնուպոլսի Նիկեփոր պատրիարքի] 2-րդ տարին*

Այդ տարի Նիկեփորը բուլղարների դեմ արշավեց, բայց հասնելով Ադրիանուպոլիս, իմացավ, որ վասիլիկոսներն ու տագմաները իր դեմ

խռովություն են նյութում, դրա համար բան չարած վերադարձավ։ Միայն իր ցեղակիցներին պատժած լինելու համար շատերին ծեծի ու աքսորի ենթարկեց, նրանց գույքը բռնագրավեց։ Նա ուղարկեց սպաթար Վարդանին, մականունը Անեմաս, բռնել տվեց ամեն մի պրոսելիտի ու պարիկոսի[929] և տարավ Թրակիա բնակեցրեց, նրանցից գանձվելիք տարեկան հարկերից բազում ոսկի ակնկալելով։ Նա ամեն ինչի էր դիմում ոչ թե Քրիստոսի սիրույն, այլ պաշտածը ոսկու[930]։

[A. M. 6300]

[Հռոմայեցիների Նիկեփոր կայսեր] 6-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 12-րդ տարին

[Արաբների առաջնորդ Ահարոնի] 23-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկեփոր պատրիարքի] 3-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 1-ին տարվա սեպտեմբեր ամսին արաբների առաջնորդ Ահարոնը նավատորմիղով Հոռդոս ուղարկեց խումեյդին[931], որն անհապաղ նավելով գրավեց Հռոդոսը և մեծաթիվ գերիներ ձեռք բերեց։ Բայց [կղզու] բերդը մնաց անառիկ։ Վերադարձին սակայն նա ակնհայտ կերպով տանուլ տվեց հրաշագործ սուրբ Նիկողայոսին[932]. գալով Մյուրա[933], նա փորձեց նրա տապանը քարուքանդ անել, բայց [սխալմամբ] մոտիկ գտնվող մի ուրիշը ջարդեց։ Հանկարծ նավատորմիղն էլ փոթորկի ու ալեկոծության, կայծակ ու որոտի հանդիպեց, բազում նավեր խորտակվեցին։ Այդ բոլորը աստվածամարտ խումեյդին ստիպեցին ճանաչել սրբի զորությունը։ Նա հեղակարծորեն խուսափեց վտանգից։ Նիկեփորը իր որդի Ստավրակիոսին կնության առնելու համար համայն տերության սահմաններում աղջիկների ընտրություն կատարելով, կանգ առավ աթենուհի Թեոփանոյի վրա, երանելի Իրենեի ազգականուհու, որ նշանված էր արդեն և նշանածի հետ բազում անգամ կենակցել, նրանից բաժանեց և դեկտեմբերի քսանին թշվառական Ստավրակիոսի հետ ամուսնացրեց։ Եվ որպեսզի այստեղ ևս ցույց տա իր խայտառակ անօրինությունը, [Թեոփանոյի] հետ երկու ավելի գեղեցիկ կույս էլ ընտրեց և բացահայտորեն փչացրեց հարսանիքի այդ օրերին, բոլորի ծիծաղի առարկան դարձած այդ պիղծը։ Փետրվար ամսին բազում իշխանավորներ նրա դեմ խռովություն նյութեցին, որոշելով կայսր հռչակել քվեստոր Արշավիր պատրիկին, մի բարեպաշտ և գիտուն մարդու։ Բայց վարպետորդի Նիկեփորը իմանալով դա, նրան գանահարելով ու վանական խու-

զելով աքսորեց Բյութանիա, իսկ մնացածներին բրածեծ անելով, աքսոր ուղարկեց ու գույքը բռնագրավեց, ոչ միայն աշխարհական իշխանավորների, այլ սրբազան եպիսկոպոսների ու վանականների, Մեծ եկեղեցու կղերից սինկելլոսին, սակելլարիոսին և խարտոֆիլաքսին՝ անվանի ու հարգարժան մարդկանց։

[A. M. 6301]

Արաբների առաջնորդ Մոհամմեդ[934]։ Իշխեց 4 տարի։

[Հռոմայեցիների Նիկեփոր կայսեր] 7-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 1-ին տարին

[Հռոմի Լևոն պապի] 13-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկեփոր պատրիարքի] 4-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 2-րդ տարվա մարտ ամսին Խորին Պարսկաստանում, Խորասան կոչվող երկրում մեռավ արաբների առաջնորդ Ահարոնը։ Իշխանությունը ժառանգեց նրա որդի Մոհամմեդը, ամեն ինչում անընդունակ մի մարդ։ Նրա դեմ նույն Խորասանում, հոր զորքերի գլուխն անցած ապստամբություն բարձրացրեց եղբայրը՝ Աբդալան[935], որը պատճառ դարձավ արաբների մեջ եղբայրասպան պատերազմի բռնկման։ Ասորիքը, Եգիպտոսը, Լիբիան տրոհվեցին առանձին իշխանությունների, պետական գործերը քար ու քանդ արվեցին, նրանք իրար ու իրենց ենթակա քրիստոնյաներին ջարդեցին, միմյանց ունեցվածք հափշտակեցին և ամեն տեսակի անպատշաճություններ գործեցին։ Մեր աստծո Քրիստոսի սուրբ քաղաքում[936] եկեղեցիներ ավերվեցին, այդ թվում և երկու մեծ լավրաների[937] վանքերը՝ սուրբ Խարիտոնի ու Կիրակոսի և սուրբ Սաբբայի, ինչպես նաև սուրբ Եվթիմիոսի և սուրբ Թեոդոսի վանքերը։ Նման անիշխանությունն ու կոտորածը՝ ինչպես նրանց, այնպես էլ մեր, տևեց 5 տարի։ Ստուդիոսի վանահայր Թեոդորոսը[938] և նրա եղբայր՝ Թեսաղոնիկեի արքեպիսկոպոս Հովսեփը, ճգնավոր Պլատոնը և նրանց ենթակա մյուս վանականները հրաժարվեցին ընդունել սրբազնագույն պատրիարք Նիկեփորի հաղորդությունը։ Պատճառը տնտես Հովսեփն էր, որ ապօրինի կերպով պսակել էր Կոստանդնին և Թեոդոտեին։ Նիկեփոր կայսրը առիթից օգտվելով, բազում եպիսկոպոսների ու վանահայրերի հրավիրեց և հրամայեց նրանց դեմ ժողով գումարեն, որի որոշմամբ հիշյալ մարդիկ արտաքսվեցին վանքից ու քաղաքից և աքսոր ուղարկվեցին՝ ինդիկտիոնի 2-րդ տարվա հունվար ամսին։

Այդ նույն տարին Ստրիմոնում[939] զորքին ոռճիկ վճարելու պպհին բուլղարները վրա հասան և հափշտակեցին այն՝ 1100 լիտր ոսկի[940] և բազում զինվորների, զորավարների ու հրամանատարների կոտորեցին։ Այնտեղ մյուս բանակաթեմերից էլ բազմաթիվ տաքսատոսների հրամանատարներ կային, որոնք բոլորն էլ այնտեղ կորան։ Բուլղարները ձեռք գցելով նաև նրանց ողջ տուլդոնը, վերադարձան։ Նույն տարին, Զատկի տոնից առաջ, բուլղարների առաջնորդ Կրումը[941] հարձակվեց Սերդիկայի[942] վրա, նենգությամբ ու անձեռնմխելիության մասին խոսք տալով, գրավեց այն և հռոմայեցի 6 հազար զինվորների սրի քաշեց, չհաշված հասարակ ժողովուրդը։ Նիկեփորն իբրև թե նրա դեմ դուրս եկավ՝ ավագ շաբաթի երեքշաբթի օրը, բայց խոսքի արժանի ոչինչ չարեց։ Փախուստով փրկված հրամանատարներին, որոնք իրենից անձեռնմխելիության մասին երաշխիք խնդրեցին, կայսրը հրաժարվեց տալ, որի պատճառով նրանք ստիպված եղան թշնամու կողմն անցնելու։ Նրանց թվում էր և հմուտ մեխանիկոս Եվմաթիոս սպաթարը։ Նիկեփորն ի վերա ամենայնի մայրաքաղաքի բնակչությանը երդումով հաստատված սակրաներով ուզում էր հավատացնել, որ Զատկի տոնը ինքը Կրումի արքունիքում է նշել[943]։ Ուզենալով վերստին գրավված Սերդիկայի [պարիսպները] վերակառուցել, բայց երկյուղելով դրան ընդդիմակայող զինվորներից, իր զորավարներին ու արխոնտներին կարգադրեց համոզեն նրանց, դիմեն կայսեր վերակառուցման մասին խնդրանքով, բայց զինվորները հասկանալով, որ դա [կայսեր] չարամիտ դրդմամբ է կատարվում, վեցերորդ ժամին ապստամբում են նրա և սեփական հրամանատարների դեմ և վրա տալով պատառոտում նրանց վրանները։ Գալով կայսերական վրանի մոտ, նրանք բազում լուտանքներ ու անեծքներ թափեցին կայսեր գլխին, ասացին, որ այլևս ի վիճակի չեն տանելու նրա անսահման արծաթասիրությունն ու շարախոհությունը։ Կայսրը անակնկալ խռովությունից սաստիկ վեհերոտեց։ Նա սեղանից ելավ և նախ փորձեց Նիկեփոր ու Պետրոս պատրիկների միջոցով զինվորներին երդումներ տալով ու համոզելով հանդարտեցնել։ Նրանք մի փոքր խաղաղվեցին, բայց երիցս թշվառականները կարծես երկրաշարժ լիներ կամ երաշտ, «Տեր ողորմյա՜» աղաղակելով մի բլուր բարձրացան, հարմար առիթը ձեռքից բաց թողնելով։ Իսկ ամեն մի նենգագործության ընդունակ կայսրը գիշերով հրամանատարներից շատերին ծածուկ կաշառելով, հաջորդ օրը անձնապես հանդես եկավ զինվորների առջև, խոսեց ամենայն բարօրության մասին, ասածը սարսափելի երդումներով հաստատեց և հավաստիացրեց, թե նրանց դավակի պես է գուրգուրում, որից հետո փութանակի իրեն մայրաքաղաք գցեց,

տեղում թողնելով պրոմոսկրինիոս[944] Թեոդոսիոս պատրիկին, մականունը Սալիբարաս, լրտեսելու և իմանալու ապստամբների [անունները]։ Երբ զինվորները վերադարձան, նրանց ոռճիկ տալու պատրվակի տակ նա շատերին բռնեց և սուրբ Մամասում բրածեծ անելուց ու խուզելուց հետո, աքսորեց, մնացածներին էլ խրիսուպոլիս անցկացրեց, դրժելով իր տված սարսափելի երդումները։ Իսկ նրանք այդ փորձանքի համար Պերաման[945] «Հրո գետ» անվանեցին։

[A. M. 6302]

[Հռոմայեցիների Նիկեփոր կայսեր] 8-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 2-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 14-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկեփոր պատրիարքի] 5-րդ տարին

Այդ տարի, իր պատճառած այդ անաստված տվայտանքներից հետո, Նիկեփորն ուզենալով զինվորներին կատարելապես խեղճացնել, հրաման տվեց համայն բանակաթեմերից քրիստոնյաներ վերաբնակեցնել Սկլավինիա, իսկ նրանց ունեցվածքը վաճառքի հանել[946]։ Այդ բանը գերեվարության հավասար մի բան էր, շատերը խելակորույս անարգում էին [սրբությունները], աղաչում, որ թշնամիների արշավանք լինի, ուրիշները կոծում էին հայրական գերեզմանների վրա, երանի տալիս ննջեցյալներին։ Եղան և այնպիսիք, որոնք տառապանքներից խուսափելու համար իրենց կախեցին։ Նրանք ի վիճակի չէին իրենց հետ տանել դժվարաշարժ սեփականությունը, տեսնում էին, թե ինչպես է կործանվում հայրերի քրտինքով ստեղծված կայքը, բոլորին համակել էր տարակուսանքը՝ չքավորները ասված և դեռ ասվելիք տառապանքների պատճառով, իսկ ունևորները՝ նրանց պես տառապելու և որևէ օգնություն ցուցաբերելու անկարող լինելու պատճառով, ավելի ծանր փորձանքների ակնկալությամբ։ Այդ վիճակը սկիզբ առավ սեպտեմբեր ամսին և տևեց մինչև սուրբ Զատիկը։ Դրանից հետո նա դիմեց երկրորդ ոճրին, հրաման տվեց աղքատներին զինվորագրել, նրանց զինելու պարտականությունը դնելով համագյուղացիների վրա, որոնք միաժամանակ պետք է պետությանը յուրաքանչյուրի համար վճարեին տասնութ ու կես դահեկան, իսկ պետական հարկերը՝ համապարտ երաշխավորությամբ[947]։ Նրա երրորդ չարամտությունն այն էր, որ նա հաշվառման ենթարկեց բոլորի ունեցվածքը, նրանց վճարած հարկերը բարձրացրեց, նրանք պարտավոր էին նաև որպես

հարկացուցակներում արձանագրվելու հարկ վճարել 2-ական կերատիոն[948]։ Չորրորդ. նա հրամայեց բարձրացնել թեթևացված ամեն տեսակի հարկերը։ Հինգերորդ. նա պահանջեց բարեգործական հաստատությունների՝ որբանոցի, հյուրանոցների և ծերանոցների, եկեղեցիների ու կայսերական վանքերի պարիկոսների[949] ծխահարկը[950] գանձել իր բռնակալության առաջին տարվանից հաշված, կայսերական կուրատորիային[951] հանձնել լավագույն կալվածները, որոնց վճարելիք հարկը բարդել նույն բարեգործական հաստատությունների մնացած կալվածքների ու պարիկոսների վրա, այնպես որ շատերի հարկերը կրկնապատկվեցին, քանզի նրանց շենքերն ու կալվածները կրճատվեցին։ Վեցերորդ. նա զորավարներին կարգադրություն արեց հետևել և մեկից հարստացած աղքատներից դրամ պահանջել, համարելով, որ նրանք գանձ են հայտնաբերել։ Յոթերորդ. նա վերջին 20 տարվա ընթացքում որևէ կարաս կամ այլ սպասք հայտնաբերողներից փող պահանջեց։ Ութերորդ. պապերից կամ հայրերից նույն այդ անցած 20 տարվա ընթացքում բաժանված և նրանցից ժառանգություն ստացած աղքատներին հարկել, իսկ բացառյալ Աբիդոսից [այլ վայրերում], հատկապես Դոգեկանեսում գնված ստրուկների[952] համար գանձել 2-ական դահեկան։ Իններորդ. ծովափնյա շրջաններում, հատկապես Փոքր Ասիայի, ապրող և երբեք հողամշակությամբ չզբաղված նավատերերին ստիպեց իր հափշտակած կալվածքներից գնել՝ իր իսկ սահմանած գներով։ Տասներորդ. նա հավաքեց Կոստանդնուպոլսի երևելի նավատերերին և յուրաքանչյուրին տասներկուական լիտր ոսկի [վարկ] տվեց, դահեկանից չորս կերատիոն տոկոսով, չհաշված և սովորական կոմմերկիոնը[953]։ Ես շատից մի չնչին մասը միայն մեջբերեցի, որը վկայում է նրա բազմերանգ ագահությունը [հագեցնելու] ամեն տեսակի մեքենայությունների դիմելու մասին։ Ինչ վերաբերում է մայրաքաղաքի ժողովրդին, ապա անհնարին է շարադրել հարուստների, միջակների և չքավորների գլխին նրա բերած փորձանքի մասին։ Նա լրտեսում էր մի մասի անձնական կյանքը, դրդում այդ մարդկանց ստոր ծառաներին զրպարտել իրենց տերերին։ Սկզբում նա ձևացնում էր, թե չի հավատում նրանց խոսքին, բայց վերջը ընդունում էր զրպարտությունը։ Նա այդ կերպ էր վարվում և՛ երևելի, և՛ աննշան մարդկանց նկատմամբ, լավ զրպարտողներին պատիվների արժանացնում։ Շատ անվանի բնակիչների առաջին աստիճանի ազգականությունը դարձրեց երրորդ[954], հուսալով, որ նրանք շուտով հաշվից դուրս կրնկնեն և ժառանգությունն ինքը կստանա։ Անհրաժեշտ է որպես համեմունք կամ նրա գործելակերպի օրինակ հիշատակել և հետևյալ դեպքը։ Ֆորումում ապրում էր մի ինչ-որ կերուլա-

բիոս[955], որ ճակատի քրտինքով բավականին ունեցվածք էր դիզել։ Ամենակուլն ահա սրան իր մոտ կանչեց ու ասաց. «Զեռքդ դիր գլխիս ու երդվիր, ինչքա՞ն ոսկի ունես»։ Նա սկզբում պնդում էր, թե աննշան մարդ է, ոչինչ չունի, բայց երբ կայսրը նրան ստիպեց, խոստովանեց ու ասաց, թե ունեցածը 100 լիտր [ոսկի][956] է։ Կայսրը հրամայեց անհապաղ բերել այն, որից հետո ասաց. «Ինչ՞իդ է պետք այդ գլխացավանքը։ Ճաշի՛ր ինձ հետ, վերցրո՛ւ 100 դահեկան, բավարարվի՛ր դրանով ու գնա՛»։

[A. M. 6303]

[Հռոմայեցիների Նիկեփոր կայսեր] 9-րդ տարին

[Արաբների առաջնորդ Մոհամմեդի] 3-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 15-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկեփոր պատրիարքի] 6-րդ տարին

Նիկեփորն այդ տարի է՛լ ավելի սաստկացրեց քրիստոնյաների կեղեքումը, դաժան հսկողություն սահմանելով ամեն տեսակի ձիերի, եղջյուրավոր անասունների ու բերքի գնման վրա՝ անիրավորեն բռնագրավելով հարուստների ունեցվածքը և տուգանելով նրանց։ Նա, ով օրենք հրապարակեց՝ ընդդեմ վաշխառության, նավատերերից տոկոս էր պահանջում։ Նա բազում այլ չարիքներ հորինեց, որոնց մասնակի շարադրումն անգամ տաղտկալի է նրանց, ովքեր ուզում են կատարվածի մասին համառոտ գաղափար կազմել։ Հոկտեմբեր ամսի 1-ին, երեքշաբթի օր, վանականի սքեմ հագած մի անհայտ մարդ, զինվորներից մեկի սուրը քաշելով, խուժեց պալատ՝ Նիկեփորին սպանելու մտադրությամբ։ Այնտեղ կանգնած երկու հոգի նրա վրա նետվեցին, բայց նրանից ծանր վերքեր ստացան։ Նրան բռնեցին, սոսկալի լկանքների ենթարկեցին, բայց նա պատճառաբանելով, թե դիվահար է, ոչ ոքի չմատնեց։ Կայսրը նրան գժանոց նետեց։ Ժողովրդի մեծ մասն այդ բանը շատ վատ նշան համարեց և՛ իշխողների, և՛ հպատակների համար, ինչպես ամբարիշտ Նեստորիոսի դեպքում։ Կայսրը մանիքեցիների (նրանց այժմ պավլիկյան են կոչում)[957] ամենաջերմ բարեկամն էր, նաև Փռյուգիայում և Լիկաոնիայում ապրող աթինգանների՝[958] իր հարևանների, որոնց բանդագուշակություններից ու արարողություններից բերկրում էր։ Ի դեպ, երբ Վարդան պատրիկը իր դեմ ապստամբություն բարձրացրեց, Նիկեփորը հենց սրանց հրավիրեց և նրանց հմայություններով է, որ Վարդանին պարտության մատնեց։ Կայսրը գլուխը խոնարհած մի ցլի եղջյուրներից մի փոսի

մեջ ձողին կապեց և նրա բառաչելու ու գալարվելու ժամանակ փողոտեց, նրա մորթին հակառակ ուղղությամբ պտտվող աղացում աղաց և հմպյական խոսքեր արտասանելով, հաղթանակ տարավ։ Այդ բանն աստված թույլ տվեց մեր բազում մեղքերի համար։ [Աղանդավորները] նրա իշխանության օրոք սկսեցին աներկյուղ գործել[959] և թեթևամիտներից շատերը նրանց անօրեն վարդապետության զոհը դարձան[960]։ Հեքսակիոնիոնում[961] մի ոմն Նիկողայոս սուտանուն անապատական և նրա մարդիկ անարգում էին ուղղափառությունն ու սրբապատկերները, նրանց օժանդակում էր Նիկեփորը, վշտացնում պատրիարքին ու աստվածահաճ կյանք վարող բոլոր մարդկանց։ Պատրիարքը բազում անգամ դիմեց կայսեր՝ միջոցներ ձեռք առնի [աղանդավորների] դեմ, բայց հանդիպեց նրա զայրույթին. նա, լինելով աստվածային պատգամների կործանող, իրար հանդեպ թշնամություն տածող մարդկանց առթիվ սաստիկ հրճվում էր, ծաղր ու ծանակի ենթարկում բոլոր այն քրիստոնյաներին, որոնք սիրում էին մերձավորին[962]։ Նա ջանք էր թափում տեղի անտեղի բոլոր քրիստոնյաներին Մագնավրայի պատժիչ ատյանից անցկացնել, որպեսզի ոչ ոք չփորձի իր ամբարիշտ գործերի դեմ հանդես գալ։ Նրա կարգադրությամբ սպաներն իրավունք ունեին որպես ծառա օգտագործել եպիսկոպոսներին ու կղերականներին, եպիսկոպոսարաններում ու վանքերում իրենց տեր զգալ ու յուրացնել նրանց ունեցվածքը։ Նա ծանակում էր նրանց, ովքեր հնուց սկսած աստծուն ոսկե կամ արծաթե սպասք էին նվիրաբերել, ասում, որ եկեղեցու սպասքը պետք է հասարակաց սեփականությունը դարձնել, ինչպես Հուդան՝ մյուռոնը տերունական։ Իրենից առաջ թագավորած բոլոր կայսրերին ապիկար էր համարում, ամբողջապես մերժում [աստծո] նախախնամությունը, պնդում, թե կայսրից ավելի հզորը չկա, եթե նա իշխում է խոհեմաբար։ Բայց նա, աստված նրան կործանի, իր հաշիվների մեջ սխալվեց։ Նույն՝ ինդիկտիոնի 4-րդ տարվա փետրվար ամսին սուրբ պասեքի 1-ին շաբաթ օրը սարակինոսները Եվխայիտա[963] [վայրում] դիմադրության հանդիպեցին արմենիակների զորավար Լևոնի կողմից, բայց պարտության մատնելով նրան, խլեցին զորքի ոճիկը, բազում մարդկանց էլ գերի քշեցին։ Դա 13 տաղանդ [ոսկի] էր, այսինքն 1300 լիտր։ Հակառակ այդ բոլորին, Նիկեփորն իր ագահության վերջ չտվեց։ Այդ նոր Աքաաբը, Ֆալարիսից ու Միդասից ավելի ընչաքաղցը[964], բյուր այդ նշաններից էլ խելք չդրած, իր որդի Ստավրակիոսի հետ բուլղարների դեմ պատերազմի գնաց։ Նա մայրաքաղաքից դուրս եկավ մայիս ամսին[965], նախապես կարգադրելով դենիկոնի լոգոթետ Նիկետաս պատրիկին բարձրացնել եկեղեցիների ու վանքերի պետությա-

նը վճարած հարկերը, իսկ մեծատուններից գանձել անցած ութ տարիների համար հարկ[966], որի առթիվ մեծ վայնասուն բարձրացավ։ Իր մտերիմ դրանիկներից մեկի՝ պատրիկ Թեոդոսիոս Սալիբարասի հանդիմանության, թե «Տե՛ր, բոլորը բարձրագոչ բողոքում են մեր դեմ և փորձության ժամանակ ամենքը պիտի խնդան մեր անկման առթիվ», նա պատասխանեց. «Եթե աստված կարծրացրել է իմ սիրտը, ինչպես փարավոնի[967], էլ ի՞նչ լավ բան են ակնկալում իմ հպատակները։ Նիկեփորից, ո՞վ Թեոդոսիոս, տեսածիցդ տարբեր բան մի՛ սպասիր»։ Տերը վկա, Թեոդոսիոսն ինքն է ինձ պատմել այդ մասին։ Կայսրը ոչ միայն Թրակիայից, այլև պերատիկա բանակաթեմերից զորքեր հավաքագրելով, նաև բաղում շքավորների, որոնք անձնապես իրենք էին իրենց պարենը, պարսատիկներն ու գուրզերը ապահովել, և հակառակ այն բանի, որ նրանք հայհոյում էին [իրեն], զինվորներով հանդերձ բուլղարների դեմ տարավ։ Կրումը հակառակորդի մեծաքանակությունից վեհերոտած (նրանք արդեն Մարկելլոսում էին գտնվում) խաղաղություն խնդրեց, սակայն կայսրն իր շարամտությամբ և իրեն միաբան խորհրդականների խորհրդով մերժեց։ Եվ ահա բաղում շրջանցիկ դժվարանցանելի, վտանգներով լի ճանապարհներով հոխորտախոսը հուլիս ամսի 20-ին (այն ժամանակ ամեն ինչի ավերում գուշակող շնաստղը ծագեց) Բուլղարիա մտավ, հաճախակի կրկնելով «Ո՞ պատրեսցէ զԱքաաբ»[968] դարձվածքը, թե «Աստված է, թե սատանան մեկ է, նա քարշ է տալիս մարդուն նրա կամքից անկախ»։ Նրա նախքան [Բուլղարիա] ոտք դնելը, իր մտերիմ ծառա Բյուզանդիոսը, հափշտակելով կայսերական հանդերձանքը և 100 լիտր ոսկի, Մարկելլոսից Կրումի մոտ է փախչում։ Շատերը նրա փախուստը Նիկեփորի համար վատ նշան համարեցին։ Առաջին երեք օրվա ընդհարումների արդյունքները նա իր համար հաջող համարեց, բայց դրանց պատճառը նա վերագրում էր ոչ թե աստծուն, այլ Ստավրակիոսի բախտին ու խելքին։ Նա սպառնաց այն հրամանատարներին, որոնք դեմ էին [Բուլղարիա] ներխուժելուն։ Նա հրամայեց անգթորեն կոտորել անասուններին, երեխաներին, անխտիր բոլորին, սպանված յուրայինների մարմինները թողեց անթաղ, նրա միակ մտահոգությունը դիակապուտությունն էր, նա կողպեց ու կնքեց Կրումի գանձատունը՝ սեփականը համարելով։ Նա կտրեց ականջներն ու մարմնի այլ մասերը այն քրիստոնյաների, որոնք ձեռք էին տվել կապուտին, կրակի տվեց Կրումի, այսպես կոչված, ապարանքը[969] և նա սաստիկ խեղճացած ասաց. «Ահա, հաղթեցիր, դանկացածդ վերցրու և հեռացիր խաղաղությամբ»։ Բայց խաղաղության թշնամին չընդունեց դա, որի վրա Կրումը զայրա-

ցած փայտյա ամրություններով փակած երկրի մուտքերն ու ելքերը ամրացրեց։ Նիկեփորը տեղեկանալով այդ մասին, ապշահար եղավ, չգիտեր ինչ քայլի դիմի։ Իր մտերիմներին նա ասում էր կորստյան մասին, որ «Եթե անգամ թևավոր դառնանք, ոչ ոք հույս չուններ, թե կպրծնի կործանումից»։ Այդպիսին էր վիճակը երկու օր՝ հինգշաբթի և ուրբաթ։ Շաբաթ գիշեր իրարանցումները և Նիկեփորին ու նրա մարդկանց շրջապատած զինված ամբոխի մասին տարածված լուրերը բոլորին հավասարակշռությունից հանեցին և երբ նախքան լուսանալը բարբարոսները խուժեցին Նիկեփորի և նրա մտերիմ մեծամեծների վրաններին վրա, շարաշար խողխողեցին նրան[970], ինչպես և Աետիոս պատրիկին, Պետրոս պատրիկին, Սիսիննիոս Տրիֆիլլիոս պատրիկին, Թեոդոսիոս Մալիբարաս պատրիկին, ով շատ տանջեց ու վատություններ գործեց երանելի Իրենեին, էպարքոս պատրիկին[971], Անատոլիկոն [բանակաթեմի] զորավար Ռոմանոս պատրիկին և բազում այլ պրոտոսպաթարների ու սպաթարների, տագմաների հրամանատարների, էքսկուբիտորների դոմեստիկոսին, կայսերական վիգլայի դրունգարին, Թրակիայի [բանակաթեմի] զորավարին, բանակաթեմերի բազում զորավարների, անթիվ զինվորների։ Քրիստոնյաների ողջ ծաղիկը կոտորվեց, բոլոր զենքերը, կայսեր նշանակները կորան։ Քրիստոնյաները թող մի անգամ էլ չտեսնեն այդ օրվա ավելի քան ողբալի խայտառակությունը։ Այդ բանը տեղի ունեցավ ինդիկտիոնի 4-րդ տարվա հուլիս ամսի 26-ին[972]։ Կրումը Նիկեփորի գլուխը կտրեց և փայտի ծայրին բազում օրեր կախած պահեց՝ ի տես իր մոտ ժամանող այլազգիների և համոթ մեր[978]։ Այնուհետև գլխի ոսկրե մասը թողնելով և դրսից արծաթապատելով, պարծանքով նրանով գինի էր հյուրասիրում [իր մոտ ժամանած] սկլավենների մեծամեծներին։ Բազում [հռոմայեցիներ] մեկ օրում որբացան ու այրիացան, անդադրում ողբ տիրեց, միայն Նիկեփորի սպանությունը շատերի համար մխիթարություն դարձավ։ Փրկվածներից և ոչ ոք չկարողացավ ճշգրիտ պատմել նրա սպանության մանրամասնությունները։ Ոմանք պատմում են, որ երբ նա ընկավ, քրիստոնյաներն անգամ նրան հարվածեցին։ Իսկ նրա կնաբարո ծառաները, որոնց հետ նա կենակցում էր, մի մասը ցանկապատի կրակի, իսկ մյուսը նրա հետ սրի զոհը դարձան։ Քրիստոնյաները դժբախտություն չեն՞ ունեցել նրա թագավորությունից ավելի դաժանը ճաշակելու։ Իրենից առաջ թագավորած ադահ, անառակ. բարբարոսների պես դաժան բոլոր թագավորներին նա գերազանցեց։ Այդ մասին փոքրիշատե գրելն անգամ մեզ համար շատ դժվար է, ապագա սերունդներին դա անհավատալի կթվա։

Մի խոսքով, ինչպես առածն է ասում, «կերպասի որակը ծայրից է երևվում»։ Ողի աջ կողմում ծանր վերք ստացավ և Ստավրակիոսը՝ նրա որդին և մի կերպ մարտից ողջ դուրս գալով, ցավատանջ Ադրիանուպոլիս հասավ։ Սխոլերի դոմեստիկոս Ստեփանոս պատրիկը Թեոկտիստոս մագիստրոսի մասնակցությամբ Ստավրակիոսին կայսր հռչակեցին, որը դիմելով վերապրած զինվորներին, հոր դեմ խոսեց, մի բան, որ նրանց շատ դուր եկավ։ Անվնաս փրկվեց և Միքայել կուրապաղատը, որ հակառակ իր մտերիմների կաթոգին խնդրանքին իրեն կայսր հռչակեն, մերժեց՝ Նիկեփորին և Ստավրակիոսին տված երդումների պատճառով։ Ստեփանոս դոմեստիկոսը հակադրվեց նրան՝ Ստավրակիոսի վերապրելու մասին կասկած հայտնելով։ Թեոկտիստոս մագիստրոսը կողմնակից էր Միքայելի թագավորելուն։ Ստավրակիոսը առատ արյունամիզություն ունեցավ, նրա ազդրերն ու ոտքերը փայտացան և նրան Բյուզանդիոն բերեցին պատգարակով։ Նիկեփոր պատրիարքը, որ շատ լավ էր տրամադրված դեպի նա, նրան խորհուրդ էր տալիս իջեցնել աստծո բարկությունը՝ ամոքելով իր հոր կողմից տուժածներին, բայց հոր խելքի հարազատ ժառանգը պատասխանեց, թե երեք տաղանդ[ոսկուց][974] ավելի տալ չի կարող։ Այդ գումարը նրա հոր ապօրինության մի չնչին մասնիկն էր միայն։ Հակառակ դրան, նա խոստացածն էլ չէր ուզում կատարել, հուսալով, թե կապրի։ Իր մեջ կրելով հոր անհաշտոդին, նա ավելի հաճախակի էր անարգում Թեոկտիստոս մագիստրոսին, Ստեփանոս դոմեստիկոսին, Միքայել կուրապաղատին։ Նա միանգամայն խորշում էր Պրոկոպիայից՝ հարազատ քրոջից, ավգուստա Թեոփանոյի դրդմամբ իր դեմ ոտնձգություններ կատարած լինելու համար։ Այդ թշվառական [Պրոկոպիան] լինելով անզավակ, հույս ուներ սուրբ Իրենեի նման իշխանության սանձերը ձեռք գցել։ Իսկ Ստավրակիոսը ապաքինվելու հույսը կտրած, ջանում էր թագավորությունն իր կնոջ տալ, կամ էլ քրիստոնյաների արդեն ճաշակած չարիքների վրա մի նորը բարդել, իշխանությունը տալով դեմոսի ձեռքը։ Դրանից սարսափահար Նիկեփոր պատրիարքը, Թեոկտիստոս մագիստրոսը, Ստեփանոս դոմեստիկոսը, Միքայել կուրապաղատը, իրենց մեծ թշնամանքին վերջ տալով, ինդիկտիոնի 5-րդ տարվա սեպտեմբեր ամսի վերջին բարեկամացան։ Հոկտեմբեր ամսի 1-ին երեկոյան Ստավրակիոսը Ստեփանոս դոմեստիկոսին կանչեց և հարցրեց, ինչպես անել, որ կարողանան իր փեսա Միքայելին տնից բերեն ու կուրացնեն։ Ստեփանոսի պատասխանին, թե այս պահին դա անհնարին է՝ նրան պահպանող զորքի, ինչպես և նրա տունը ապահով վայրում գտնվելու պատճառով, Ստավրակիոսը

խնդրեց այդ խոսակցության մասին ոչ ոք չիմանա։ Իսկ [Ստեփանոսը] ճշմարտանման խոսքերով նրան օրորելով, ամբողջ գիշերվա ընթացքում ծածկած ձիարշավարանում կենտրոնացրեց տագմաների վերապրած զինվորներին՝ իրենց հրամանատարներով հանդերձ, հենց այդ Միքայելին կայսր հռչակելու համար։ Վաղ առավոտյան ողջ սենատը պալատ ժամանեց և նրան կայսր հռչակեց, ինչպես այդ մասին ստորև կասվի։ Նիկեփոր պատրիարքը Միքայելից պահանջեց [իր] ուղղափառ հավատքի, ձեռքերը քրիստոնյաների արյամբ չներկելու, նաև հոգևորականությունն ու վանականությունը, մի խոսքով կղերը հալածանքի չենթարկելու մասին սեփական ձեռքով գրված փաստաթուղթ։

[A. M. 6304]

Աշխարհի արարչագործության 6304 թ.	Քրիստոսի մարդեղության 804 թ.	Հռոմայեցիների Միքայել կայսեր 2-ամյա թագավորության 1-ին տարին
Արաբների առաջնորդ Մոհամմեդի 4-ամյա իշխանության 4-րդ տարին	Հռոմի Լևոն պապի 16-ամյա աթոռակալության 16-րդ տարին	Կոստանդնուպոլսի Նիկեփոր պատրիարքի 9-ամյա աթոռակալության 7-րդ տարին

Այդ՝ ինդիկտիոնի 5-րդ տարվա հոկտեմբեր ամսի 2-ին, հինգշաբթի օրը, 1-ին ժամին, ամենաբարեպաշտ Միքայել կուրապաղատը ձիարշավարանում ամբողջ սենատի և տագմաների կողմից հռոմայեցիների կայսր հռչակվեց[975]։ Ստավրակիոսը, լսելով նրա հռչակման մասին, անչափ պարսավեց պատրիարքին, ապա իր ազգական Սիմեոն վանականի ձեռքով տեղնուտեղը մազերը խուզեց և վանականի սքեմ հագավ։ Պատրիարքը Միքայել կայսեր և վերջինիս քրոջ հետ պալատ գալով, Ստավրակիոսին պաղատում էին եղածի վրա շտխրի, քանզի իրենք այդ քայլին դիմեցին ոչ թե դավադրաբար, այլ նրա վերապրելու մասին հուսաբեկ եղած։ Իսկ նա իր հորենական վատությամբ գաղազած, չընդունեց դա, ասելով նրան. «Ներանից լավ ընկեր դու չես գտնիս։ Ցերեկվա 4-րդ ժամին Մեծ եկեղեցու բեմում ձեռամբ Նիկեփոր պատրիարքի Միքայելը թագադրվեց և այդ առթիվ ընդհանուր բերկրություն եղավ։ [Միքայելը] պատրիարքին 50 լիտր ոսկի նվիրեց, իսկ կղերին[976] 25։ Լինելով մեծահոգի և անարծաթասեր մարդ, Նիկեփորի ընչաքաղցությունից տուժած բոլորի սիրտն առավ, նվերներով սիրաշահեց սենատն ու զինվորներին։ Նույն ամսի 12-ին Պրոկոպիան Ավգուստեոնի տրիկլինում

ավգուստա թագադրվեց։ Նա սենատին բազում նվերներ շնորհեց։ Բանակաթեմերի Բուլղարիայում զոհված զինվորների այրիներին 5 տաղանդ ոսկի նվիրեց, Թեոփանոյին, Ստավրակիոսի միանձնուհի դարձած կնոջ, Նիկեփորի օրոք ողբալի վիճակում գտնվող նրա ազգականներին մեծ հարստություն նվիրաբերեց, վանքի վերածելու համար նրան մի գեղեցիկ տուն շնորհեց՝ «Հրեական» կոչվողը, ուր թաղվեց Ստավրակիոսը։ Նա հարստացրեց բոլոր պատրիկներին ու սենատորներին, քահանայապետերին, քահանաներին ու վանականներին, զինվորներին ու աղքատներին՝ և՛ մայրաքաղաքում, և՛ բանակաթեմերում, մի քանի օրվա ընթացքում մեջտեղից վերացավ Նիկեփորի անափ արծաթասիրությունը, որը և նրա [Նիկեփորի] չարաչար կործանման պատճառ դարձավ։ Միքայելն իր այդ լավագույն գծերի հետ միասին, նաև բարեպաշտ և ուղղափառագույն լինելով, տխրում էր, երբ որևէ հիմնավոր կամ անհիմն պատճառով բաժանվում էին սուրբ եկեղեցուց։ Նա անդադար խնդրում էր սրբազնագույն պատրիարքին և կարող մարդկանց աջակցել հասարակաց անդորրն ապահովելու, այդ թվում և դժնդակ բանտերում արգելափակված Ստուդիոսի վանահայր Թեոդորոսին, Պլատոնին և Թեսաղոնիկեի արքեպիսկոպոս Հովսեփին՝ Թեոդորոսի եղբոր։ Նա ջանաց կապ հաստատել նրանց վանքի ղեկավարների հետ, ինչ որ արեց։ Բացի այդ, նա ֆրանկների թագավոր Կարուլոսի մոտ դեսպանություն ուղարկեց՝ խաղաղության և իր որդի Թեոփիլակտոսի հետ խնամիանալու համար, իսկ սրբազնագույն պատրիարք Նիկեփորը Հռոմի սրբազնագույն Լևոն պապին[977] ժողովական թղթեր հղեց։ Նախկինում Նիկեփոր կայսրը թույլ չէր տալիս նրան այդ բանն անել։ Ինդիկտիոնի 5-րդ տարվա դեկտեմբեր ամսի 25-ին, հինգշաբթի օր, ամենախաղաղասեր Միքայել կայսրն իր որդի Թեոփիլակտոսին, ձեռամբ Նիկեփոր պատրիարքի, Մեծ եկեղեցու բեմում կայսր թագադրեց, սուրբ սեղանին ընծայաբերեց թանկագին զարդեր՝ ոսկե, թանկագին քարերով ագուցված սկիհներ, նաև հին՝ ոսկով և ծիրանիով, փայլուն գործված, հրաշալի սրբապատկերներով զարդարված տետրավելներ[978]։ Իսկ պատրիարքին նվիրեց 25 լիտր ոսկի, սրբազան կղերին՝ 100 լիտր, դրանով ճոխացրեց սուրբ տոնն[979] ու որդու հռչակումը։ Ամենաբարեպաշտ կայսրը աստվածային մեծ ջերմեռանդությամբ ու սրբազնագույն պատրիարքի և ուրիշ բարեպաշտների խորհրդով[980] մղված, այժմ պավլիկյան կոչվող մանիքեցիներին, Փռյուգիայում և Լիկաոնիայում ապրող աթինգաններին մահապատիժ սահմանեց, բայց շարամիտ խորհրդականների միջամտությամբ, թե իբր նրանք կղջան, իր որոշումն իրականացնելուց

ետ կանգնեց, թեպետև այդ մոլորությամբ գերված մարդկանց համար անհնարին բան է ապաշխարելը։ Խորհրդականները տգիտորեն քարոզում էին, թե հոգևորականի համար անթույլատրելի է մահապատիժ առաջարկել ամբարիշտների համար, այդ հարցում նրանք իբր ամեն տեսակետից ոտնահարած են լինում սուրբ գիրքը։ Բայց չէ՞ որ ծայրագույն առաքյալ Պետրոսը մի ստի համար սպանեց Անանիային ու Սապփիրային[981], չէ՞ որ մեծ Պավղոսն աղաղակում է, թե «նման արարքներ գործողները մահվան են արժանի»[982], և այն էլ լոկ մարմնական մեղքի համար, էլ ինչպե՞ս հակադիր են սուրբ գրոց նրանք, ովքեր սրով փըրկում են հոգեկան ու մարմնական ամենայն աղտեղությամբ լի, գիվապաշտ մարդկանց։ Հակառակ բոլորին բարեպաշտ Միքայել կայսրն այնուամենայնիվ նրանցից շատերին կոտորեց[983]։ Ստացած ծանր վերքից Ստավրակիոսի մեջքը թարախակալեց, սաստիկ գարշահոտության պատճառով ոչ ոք չէր կարողանում նրան մոտենալ։ Ինդիկտիոնի 5-րդ տարվա հունվար ամսի 11-ին նա վախճանվեց, իբրև թե թագավորելով 2 ամիս ու 6 օր։ Մայիս ամսի 14-ին, շաբաթվա 6-րդ օրը արևի մեծ խավարում եղավ, որ երեքուկես ժամ տևեց, ժամը 8-ից մինչև ժամը 11-ը։ Հունիս ամսի 7-ին Միքայելը բուլղարների դեմ արշավեց։ Պրոկոպիան ուղեկցեց նրան մինչև Յուրուլու[984]։ Բուլղարների առաջնորդ Կրումը պաշարմամբ գրավեց Դեբելտոսը[985], որի [բնակչությունն] իր եպիսկոպոսի հետ միասին նրա կողմն անցան, նրանց նա վերաբնակեցրեց։ Կայսեր խորհրդականների բազում շարամտության պատճառով [զորքերը], հատկապես Օպսիկիոնի և Թրակեսիոնի, որոշեցին խռովության և անկարգությունների դիմել։ Միքայելը նվերներով ու հորդորներով հանգըստացրեց ու հանդարտեցրեց նրանց։ Բուլղարները, իմանալով զորքերի խռովության, նրանց պատերազմից վախենալու, տաքսատիոնին[986] շհնազանդվելու մասին, էլ ավելի ընդարձակեցին իրենց տիրապետությունը Թրակիայի և Մակեդոնիայի վրա։ Այն ժամանակ էր, որ քրիստոնյաները Անքիալոսն ու Բերիան թողեցին ու փախան, երբ իրենց ոչ ոք չէր հալածում, ապա և Նիկեան[987] ու Պրոբատոն բերդը և մի քանի այլ ամրություններ, նմանապես Ֆիլիպպուպոլիսն ու Ֆիլիպպեն[988], Ստրիմոնում հաստատված վերաբնակներն առիթից օգտվելով փախան, վերադարձան իրենց տեղերը։ Այդ բոլորը Նիկեփորի խելացնորությունը խարազանող աստծո ցասումն էր, որի պատճառով իր երևակայական հաջողությունները, որոնցով նա պարծենում էր, արագորեն փուլ եկան։ Մի կողմ թողած շատերի չարափառությունը, պավլիկյանների, աթինգանների, պատկերամարտների և տետրադիտների[989] վխտացող աղանդ-

ները, (էլ չեմ խոսում շնության ու պոռնկության, զազրագործության ու երդմնազանցության, եղբայրադավության ու ագահության և այլ անօրինությունների մասին), [անհավատները] սուրբ ու նվիրական պատկերների և վանական սքեմի դեմ էին հանդես գալիս, երանի տալով աստծուն խորշելի երիցս թշվառական Կոստանդնին[990], որպես բուլղարներին հաղթողի, մի բան, որ թշվառ ամբարիշտները համարում էին Կոստանդնի բարեպաշտ լինելու ապացույց։ Նրանք պատրաստվում էին հարձակվել մայրաքաղաքի վրա, տիեզերական ժողովով տապալելու ուղղափառ հավատքը, ցանկանում, հոգով կույրերը, կույրերին գահ բարձրացնել, ապրել առանց աստծու։ Նրանք վճռեցին գիշերով Պանորմոս կղզում[991] բանտարկված աստվածամարտ Կոստանդնի որդիներին ազատել և բանակ բերել։ Բայց Տերը նշավակեց նրանց, ի պաշտպանություն ուղղափառության ոտքի հանելով ամենաբարեպաշտ Միքայելին։ Նա անկեղծորեն հավատքի մասին պետք եղածն ասելով զինվորներին, մայրաքաղաք վերադարձավ։ Նա խոհեմորեն խռովարարներից շատերին թեթև պատիժներով ահաբեկեց, իսկ Կոստանդնի կույր որդիներին Աֆուսիա[992] աքսորեց։ Կախարդ Նիկոլայոս Հնքսակիոնիտի ընկեր մի սուտանուն անապատականի, որ մեծ եռանդ ցուցաբերելով քանդել էր ու անպատվել ամենասուրբ աստվածածնի պատկերը, լեզուն կտրեց, և հոգով մեռյալը, այժմ նաև մարմնական մահվան արժանացավ։ Սրա համախոհ Նիկոլայոսին, որ ապաշխարելու խոսք էր տվել, բոլորի ներկայությամբ ծանակեց և ստիպեց խոստովանել իր մեղքերը, որից հետո վանք ուղարկեց, որպեսզի նա հսկողության տակ լինի։ Մագնավրայում նա զորքի հետ հանդիպում ունեցավ և բացահայտեց իր աստվածահաճո ու բարեպաշտ դավանանքը։ Նա բռնագրավեց աթինգանների ունեցվածքը և Անատոլիկոն [բանակաթեմի] զորավար Լևոնի[993] միջոցով նրանց աքսորեց։ Ինդիկտիոնի 5-րդ տարվա օգոստոս ամսին Թեբիթը[994] քրիստոնյաների դեմ արշավեց։ Նրան մարտ տվեց ու հաղթեց Անատոլիկոն բանակաթեմի զորավար Լևոնը, որ երկու հաղար հոգու սրի քաշեց, ձեռք բերեց ձիեր ու զենք։ Ահարոնի ավագ որդի Մոհամմեդը, որի ձեռքում էր գտնվում աղգի իշխանությունը, ներքին Պարսկաստանում բախվեց իր եղբոր՝ Աբդալայի հետ, տանուլ տվեց և փախչելով Բաղդադ, տիրեց քաղաքին։ Դամասկոսը գրավեց մի այլ բռնակալ, իսկ [ուրիշ] երկուսը՝ Եգիպտոսն ու Աֆրիկան բաժանեցին. Պաղեստինին էլ մի ուրիշը ավազակաբար տիրեց։

[A. M. 6305]

[Աշխարհի արարչագործության] 6305 թ.

[Քրիստոսի մարդեղության] 805 թ.

[Հռոմայեցիների Միքայել կայսեր] 2-րդ տարին

[Հռոմի Լևոն պապի] 17-րդ տարին

[Կոստանդնուպոլսի Նիկեփոր պատրիարքի] 8-րդ տարին

Այդ տարի բուլղարների առաջնորդ Կրումը դեսպան Դարգամիրի միջոցով դարձյալ դիմեց Միքայել կայսեր խաղաղության հարցով, ջանալով [վերականգնել] Թեոդոսիոս Ադրամիտինոսի և պատրիարք Գերմանոսի կողմից այն ժամանակվա Բուլղարիայի տեր Կորմեսիոսի հետ կնքված հաշտության պայմանագիրը[995], որի համաձայն սահմանն ընկալվում էր Թրակիայի Մելեոնեից[996], [կայսրությունը Բուլղարիային] վճարում էր 30 լիտր ոսկու արժողությամբ հանդերձներ և կարմիր կաշիներ, նախատեսում երկու կողմի փախստականների փոխադարձ վերադարձում, նույնիսկ եթե նրանք դավադրություն են նյութել պետության դեմ, պահանջվում էր, որ երկու երկրներում էլ առևտուր անող վաճառականները ունենան սիգիլլիոններով ու կնիքներով հաստատված փաստաթղթեր, հակառակ դեպքում նրանց ունեցվածքը գրավել ու պետականացնել։ Կրումը կայսեր սպառնալիքներ էլ գրեց, որ «Եթե շտապես հաշտություն կնքել, մեղքը վզիդ, ես կհարձակվեմ Մեսեմբրիայի վրա»։ Կայսրը, ծանոթանալով պայմաններին, վատ խորհրդականների դրդմամբ մերժեց հաշտությունը։ Խորհրդականները կեղծ բարեպաշտությամբ, բայց իրականում տգիտությամբ, ի վնաս պետության, ասում էին, թե չպետք է փախստականներին վերադարձնել, իրենց ասածը հաստատում էին ավետարանում գրի առնված Տիրոջ խոսքերով, թե «Որ գայ առ իս՝ ոչ հանից արտաքս»[997]։ Հոկտեմբեր ամսի կեսերին Կրումը արշավեց Մեսեմբրիայի վրա, բաբաններով ու քաղաքավեր մեքենաներով, որոնց պատրաստելու եղանակն իմանալու պատճառը քրիստոնեությունը վերացնող Նիկեփորն եղավ։ Նա քրիստոնեությունն ընդունած մեխանիկայի մեջ շատ հմուտ մի արաբի էր ղինվորագրել և հաստատել Ադրիանուպոլսում, բայց նրան ոչ մի արժանի հատուցում կամ բարերարություն չէր կատարել, ընդհակառակը, նրա ռոճիկն էր կրճատել, և երբ նա բողոքել էր՝ սաստիկ գանահարել։ Դրա վրա նա գաղաղած բուլղարների մոտ փախավ և նրանց սովորեցրեց բաբան կառուցելու արվեստը։ Կրումը պաշարեց և պաշտպանների մեծ տխմարության պատճառով ամբողջ ամսվա ընթացքում չհանդիպելով որևէ

դիմադրության, առավ այն։ Կայսրը նոյեմբեր ամսի 1-ին ստիպված իր մոտ հրավիրեց պատրիարքին՝ խաղաղության շուրջ խորհրդակցելու։ Ներկա էին նաև Նիկիայի, Կյուզիկոսի մետրոպոլիտները, ինչպես և խորհրդականները՝ Ստուդիոսի վանահայր Թեոդորոսի հետ։ Պատրիարքը, մետրոպոլիտներն ու կայսրը կողմնակից էին հաշտության, բայց վատ խորհրդականները, Ստուդիոսի վանահայր Թեոդորոսի հետ դեմ էին դրան։ Նրանք պնդում էին, թե «չպետք է հաշտություն կնքել աստվածային պատգամի վերացման գնով, չէ՞ որ Տերն ասաց. «Որ գայ առ իս՝ ոչ հանից արտաքս»։ Նրանք չգիտեին ոչ իրենց ասածը, ոչ էլ թե իրենց պնդումներն ինչին են վերաբերում։ Նախ և առաջ նրանցից և ոչ ոք մեր կողմը չի անցնում, իսկ իրենց արքունիքում եղած մեր մարդկանց մենք ենք, որ մատնեցինք։ Եթե [բուլղարների] հետ մենք խաղաղության մեջ ապրեինք, ապա կփրկեինք նրանց։ Երկրորդ, թեկուզև մի քանի հոգի էլ անցել են մեր կողմը, մենք պետք էր ավելի շուտ շատերի ու հայրենակիցների փրկության մասին մտածենք, քան թե անորոշ ու վերացական բաներով օրորվենք։ Աստծուն ավելի հաճելի է շատերի փրկությունը, քան թե քչերի, փոքր օգուտի համար մեծ վնաս կրելը ամենամեծ տխմարությունն է։ «Իսկ եթէ որ իւրոց և մանաւանդ ընտանեաց խնամ ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է և չար ևս քան զանհաւատսն է»[998] ասում է Պողոս առաքյալը, էլ ո՞ւր մնաց ասույթը, թե «Ես խաղաղարար էի խաղաղությունն ատեցողների հետ»[999]։ Բայց գուցե նրանք Պողոսից ու Դավթից էլ ավելի իմաստուն են։ Այժմ ո՞վ է երիցս երանելի Գերմանոսից ավելի իմաստուն։ Գուցե ավերիչ մտայնությամբ խաղաղության գործը տապալող չար խորհրդականնե՞րը։ Ինչպես ասվեց, այդ բանը տեղի ունեցավ նոյեմբեր ամսի 1-ին, իսկ նույն ամսի 4-ին գիսավոր աստղ երևաց, երկու, իրար միացած մահիկների ձևով, որոնք այնուհետև բաժանվեցին իրարից և տարբեր ձևեր ընդունեցին, մինչև իսկ անգլուխ մարդու։ Հաջորդ օրը տեղ հասավ Մեսեմբրիայի առման մասին ողբալի լուրը։ Բոլորին երկյուղ պատեց՝ ավելի մեծ փորձանքներ ակնկալելով։ Թշնամիները Մեսեմբրիան գտնելով մարդկանց ապրելու համար անհրաժեշտ բոլոր պարագաներով լի, Դեբելտոսի հետ տիրացան նրան։ Նրանք քաղաքում գտան պղնձե 36 սիֆոն[1000], նրանցով արձակվող բաղում հեղուկ կրակ, շատ ոսկի և արծաթ։ Նույն տարին Պաղեստինի ու Ասորիքի բազմաթիվ քրիստոնյաներ, վանականներ ու աշխարհականներ, արաբների սաստիկ հալածանքներից խուսափելով, փախան ու ապաստանեցին Կիպրոսում։ Ասորիքում, Եգիպտոսում և Աֆրիկայում, արաբների հա-

մայն տիրապետության մեջ համընդհանուր անիշխանություն էր տիրում, գյուղերում ու քաղաքներում նրանց աստվածակործան ժողովրդի կողմից սպանություններ, հափշտակություններ, շնություններ, զազրագործություններ, ամեն տեսակի աստվածատյաց արարքներ էին կատարվում։ Պղծվեցին մեր աստծո սուրբ քաղաքի[1001] նվիրական վայրերը՝ սուրբ հարության, կառափելու վայրը[1002] և այլն, ավերակ դարձան սուրբ Խարիտոնի և սուրբ Սաբայի անապատում գտնվող հռչակավոր լավրաները, մնացած վանքերն ու եկեղեցիները, [քրիստոնյաների] մի մասը նահատակվեց, մյուսը՝ Կիպրոս գնաց, այնտեղից էլ Բյուզանդիոն։ Բարեպաշտ Միքայել կայսրը և սրբազնագույն Նիկեփոր պատրիարքը սիրալիր հյուրընկալություն ցույց տվեցին, քաղաք եկածներին մի երևելի վանք նվիրեցին, իսկ Կիպրոս մնացած վանականներին ու աշխարհականներին մեկ տաղանդ ոսկի ուղարկեցին և ամեն օժանդակություն ցուցաբերեցին։ Թեև Միքայելը բոլորի հանդեպ բարյացակամ էր ու սիրելի, պետական գործերում անընդունակ էր, նրան իրենց ափի մեջ էին առել Թեոկտիստոս մագիստրոսը և մնացած իշխանավորները։ Փետրվար ամսին Բուլղարիայից փախած երկու քրիստոնյաներ կայսեր հայտնեցին, թե Կրումը որոշել է հանկարծակի Թրակիայում գտնվող [զորքերի] վրա հարձակվել։ Կայսրը ամսի 15-ին քաղաքից դուրս եկավ, իսկ Կրումը աստծո նախախնամությամբ մեծ զոհեր տալով ձեռնունայն վերադարձավ։ Կայսրը, հասնելով Ադրիանուպոլիս և կարգավորելով քաղաքի գործերը, բերկրալից վերադարձավ։ Նա բարձրացավ սուրբ Տարասիոս պատրիարքի վանքը և ավգուստա Պրոկոպիայի հետ նրա հոգեհանգիստը կատարեց, նրա սուրբ դամբարանը 95 լիտր[1003] արժողությամբ արծաթե տախտակով[1004] փառավորեց։ Մեսեմբրիայի անկումից հետո կայսրը Կրումի հետ հաշտություն կնքելու հույսը կըտրած, բոլոր բանակաթեմերից զորք հավաքելով, հրամայեց գարունը չբացված Թրակիա անցնել, մի բան, որից բոլորը դժգոհեցին, հատկապես կապադովկացիք ու արմենիակները։ Մայիս ամսին կայսրը տագմաներով դուրս եկավ, ավգուստա Պրոկոպիան նրան դարձյալ ուղեկցեց՝ մինչև Հերակլիայի մոտ գտնվող Ակվեդուկը։ Զորքերը դրանից դժգոհ, սկսեցին վատաբանել ու ծանակել Միքայելին։ Մայիս ամսի 4-ին 8լի համաստեղության 12-րդ մասում, երբ արեգակը ծագում էր ժամադետում, խավարում եղավ, ամբոխներին մեծ սարսափ համակեց։ Իսկ կայսրը զորավարներով ու զինվորներով շրջում էր Թրակիայով մեկ, ո՛չ Մեսեմբրիայի դեմ էր գնում, ո՛չ էլ թշնամիներին վնասելու որևէ անհրաժեշտ քայլի դիմում։ Նա սոսկ ականջ էր կախում պատե-

բազմի փորձ չունեցող իր խորհրդականների դատարկ խոսքերին, թե թշնամին չի հանդգնի հարձակվել սեփական երկրում գտնվող կայսեր վրա։ Պարենի պակաս զգացող և հարձակումներով ու հափշտակությամբ պարապող ազգակից զինվորները տեղացիների համար ավելի մեծ փորձանք էին, քան բարբարոսների արշավանքները։ Հունիս ամսի սկիզբներին բուլղարների առաջնորդ Կրումը, ենթադրելով, որ քրիստոնյաները շատ շատ են, իր զորքերով ոտքի ելավ։ Նա բանակեց Վերսինիկիայում, կայսերական զորքից 30 մղոն հեռավորության վրա։ Անատոլիկոնի զորավար Լևոն պատրիկը, Մակեդոնիայի զորավար Հովհաննես պատրիկը՝ մականունը Ապլակես, նրանց դեմ կռվի դուրս գալու մեծ եռանդ հանդես բերեցին, բայց շարամիտ խորհրդականների դրդմամբ կայսրը թույլ չտվեց։ Իսկ [Կոստանդնուպոլսում] այն պահին, երբ քաղաքի բնակչությունը պատրիարքի գլխավորությամբ սուրբ Առաքելոց եկեղեցում պատարագ էր մատուցում, ամբոխի խռնված լինելու պատճառով աչքից հեռու մնացած աստվածատյաց Կոստանդնի[1005] հերձվածի կողմնակիցներից ամբարիշտ ոմանք ջարդում են կայսերական գերեզմանատան դարբասը և ինչ-որ դղրդյուն անելով, բացում այն, իբրև թե աստվածային հրաշքով։ Մտնելով ներս, նրանք այդ ստահակի դամբանի վրա ծնկաչոք կոչում են հասնի օգնության, նրան, և ոչ աստծուն, ասելով. «Ելի՛ր, փրկի՛ր կործանվող պետությունը»։ Նրանք լուր տարածեցին, որ նա, դևերի հետ տարտարոսում բնակվողը, իբր ձի հեծած վեր է կացել և գնում է բուլղարների դեմ պատերազմի[1006]։ Քաղաքի էպարքոսը ձերբակալեց նրանց, նրանք սկզբում ստախոսեցին, թե իբր գերեզմանատան դարբասը աստվածուստ, ինքնաբերաբար բացվեց, բայց երբ կանգնեցին էպարքոսի ատյանի առջև վկայություն տալու, պատուհասվելու վախի տակ հայտնեցին դարբասը ջարդելու մասին։ Էպարքոսը նրանց ըստ արժանվույն բրածեծ անելուց հետո, քաղաքով մեկ ծանակեց, պարտադրելով բարձրաձայն ասել իրենց պատժվելու պատճառը։ Ամենայն շարյաց գտիչ սատանան դինվորներին այնպես էր դայեկել, որ նրանք փորձության պատճառը ոչ թե իրենց մեղքերը համարեն, այլ ուղղափառ ու հայրենավանդ դավանանքը, վանականների սուրբ սքեմը, աստվածային իմաստասիրության ուսուցանումը։ Հայհոյիչներից շատերը անունով էին քրիստոնյա, իրականում նրանք պավլիկյաններ էին, որոնք ի վիճակի չլինելով իրենց պիղծ հայացքները հրապարակ հանել, նման քայլերի էին դիմում՝ տխմարներին խաբելու համար։ Նրանք երանի էին տալիս հրեամիտ Կոստանդնին, համարելով մարգարե և հաղթող, ընդունում նրա չարափառությունը՝ ի տապալումն

մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի մարմնացյալ տնօրինության։ Հունիս ամսի 22-ին հռոմայեցիներն ու բուլղարները Ադրիանուպոլսից ոչ հեռու բախվում են միմյանց։ Քրիստոնյաները ռազմավարական կոպիտ սխալ թույլ տալու պատճառով թշնամիներն այնքան գերազանցեցին, որ հռոմայեցիները դեռ առաջին ընդհարման չմասնակցած, գլխովին փախուստի դիմեցին, այն աստիճան, որ Կրումն ապշահար կարծեց, թե կատարվածը ռազմագիտական խորամանկություն է և միառժամանակ թույլ չէր տալիս իր զինվորներին փախստականներին հետապնդել։ Բայց երբ տեսավ, որ նրանք սանձակոտոր փախուստի են դիմում, հետապնդեց և մեծաթիվ զորք կոտորեց։ Բուլղարները ձեռք գցեցին նաև հռոմայեցիների տուլդոնը։ Կայսրը, փախչելով քաղաք, անիծելով զինվորներին ու նրանց հրամանատարներին, երդվեց հրաժարվել գահից։ Նա դիմեց Անատոլիկոնի զորավար Լևոն պատրիկին, որին համարում էր բարեպաշտ, քաջ և կայսերական իշխանությանը տիրելու միանգամայն արժանի մարդ։ Երբ Լևոնը կտրականապես հրաժարվեց, կայսրը նրան հանձնելով բանակաթեմային զորքերի հրամանատարությունը, հունիս ամսի 24-ին եկավ մայրաքաղաք, որոշած լինելով հրաժարվել իշխանությունից և մի ուրիշին կայսր հռչակել, մի բան, որին դեմ էին դուրս գալիս իր կինն ու իշխանության մոտիկ կանգնած մարդիկ։ Սրբազնագույն Նիկեփոր պատրիարքը այնպիսի ելք էր որոնում, որպեսզի ով էլ գահ բարձրանար, Միքայելի և նրա երեխաների կյանքին վտանգ չսպառնար։ Զորավարներն ու զորքերը, իմանալով, որ կայսրը քաղաք է փախել, նրա թագավորելուց հույսը կտրած, խորհուրդ արեցին ու Անատոլիկոնի զորավար Լևոն պատրիկին դիմեցին, խնդրելով սատար կանգնի ժողովրդին և պաշտպանի՝ քրիստոնյաների պետության։ Սկզբում նա կտրականապես մերժեց, գիտակցելով բեռի ծանրությունը, նաև աչքի առաջ ունենալով բարբարոսների հարձակումների անտանելիությունը, բացի այդ, նա չէր ուզում խախտած լինել կայսրերի հանդեպ ունեցած իր հավատարմությունն ու աննենգությունը։ Բայց երբ տեսավ, որ թշնամին սլանում է դեպի քաղաք, Նիկեփոր պատրիարքին իր ուղղափառությունը հաստատող գրավոր վկայություն ներկայացնելով, խնդրեց նրա օրհնությունն ու համաձայնությունը՝ իշխանությունն ստանալու համար։ Հասնելով քաղաքի առջև գտնվող տրիբունալիոնը, նա զորավարների ու զորքերի կողմից հռոմայեցիների օրինական կայսր հռչակվեց։ Կեսօրին Խարսիոսի դռնից նա ոտք դրեց Կոստանդնուպոլիս, ապա մուտք գործեց պալատ։ Միքայելը, լսելով նրա կայսր հռչակվելու մասին, Պրոկոպիայի և իրենց երեխաների հետ շտապեց Փարոսի աղոթա-

բանը։ Խուզելով իրենց մազերը, նրանք վանականի սքեմ հագան՝ ինդիկտիոնի 6-րդ տարվա հուլիս ամսի 11-ին, երկուշաբթի օր։ Հաջորդ օրը Լևոնը Մեծ եկեղեցու բեմում Նիկեփոր պատրիարքի կողմից թագադրվելուց հետո, հրաման տվեց օր ու գիշեր հսկողության մեջ պահել քաղաքի պարիսպները, իսկ ինքն անձամբ շրջում էր քաղաքով մեկ, բոլորին ոտքի հանում, հուսադրում, ասելով, որ աստված ամենաանբիծ աստվածածնի և բոլոր սրբերի միջնորդությամբ, շուտով հրաշք է գործելու, հակառակ մեր բազում մեղքերի ամենևին չի թողնելու ծաղր ու ծանակ լինենք։ Իսկ այն նոր Սենեքերիմ[1007] Կրումը, տարած հաղթանակից փքված, թողնելով եղբոր սեփական զորքով պաշարելու Ադրիանուպոլիսը, ինքը Լևոնի ինքնակալության 6-րդ օրը հետևակազորով ու հեծելազորով մայրաքաղաքի վրա շարժվեց։ Նա պարիսպների առաջով շրջում էր Վլախեռնայից մինչև Ոսկե դուռը, ցուցադրելով իր ուժը։ Ոսկե դռան ծովահայաց մարգագետնում նա ալիղծ ու դիվային զոհաբերություններ կատարեց, կայսրից պահանջեց իր նիզակը խրի Ոսկե դռան վրա, բայց մերժում ստանալով, իր վրանը վերադարձավ։ Նա ապշեց քաղաքի պարիսպների վեհության, կայսեր զորքի կարգապահության վրա, և համոզվելով, որ պաշարմամբ հաջողության չի հասնի, որոշեց հաշտություն կնքել և փորձեց բանակցությունների դիմել։ Կայսրը հարմար առիթից օգտվելով, ուզեց նրա դեմ որոգայթ լարել, բայց մեր բազում մեղքերի, ինչպես և իր սպասավորների ապիկարության պատճառով չկարողացավ այդ հաղթանշանը ձեռք գցել։ Ճիշտ է, Կրումին հարված հասցրին, բայց ոչ մահացու, որի վրա ոճրագործը գազազած, սուրբ Մամաս առապատակիչ հրաձակներ ուղարկեց, կրակի տվեց այնտեղի ապարանքը, սայլերի վրա բարձեց ձիարշավարանի պղնձե առյուծը, հիդրիոնի արջն ու վիշապը, ընտիր մարմարիոններ ու հեռացավ, [ճանապարհին] պաշարմամբ գրավելով Ադրիանուպոլիսը։